




Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ

Քաղաքացիական անհնազանդության իրավունքը մի շարք երկրների իրավական կարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում


Ուսումնասիրություն



«Անարդար օրենքն ինքնին բռնության տեսակ է: Այն խախտելու համար ազատագրկումը՝ ավելի մեծ բռնություն է:



Անձը, ով գիտակցորեն խախտում է օրենքը, որն իր խղճի համոզմամբ անարդար է, և անարդարության նկատմամբ հանրության խիղճն արթնացնելու նպատակով պատրաստակամորեն ընդունում է ազատագրկման ձևով պատիժը, իրականում դրսևորում է ամենախորը հարգանքն օրենքի նկատմամբ»



...իսկ ձեր թշնամիները, ձեր միակ թշնամիները դուք ինքներդ եք՝ ձեր հայրենասիրությամբ աջակցելով ձեզ իսկ ճնշող և ձեզ դժբախտացնող կառավարությանը:

Մույն ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել պրակտիկ և տեսաբան փաստաբանների, իրավաբանների, իրավաբանական ֆակուլտետի ուսանողների, հասարակության լայն շերտերի համար:

Բովանդակություն

1. Ներածություն	4
1. Քաղաքացիական անհնազանդության, քաղաքացիական անհնազանդության իրավունքի սահմանումը.....	6
3. Քաղաքացիական անհնազանդության հատկանիշները	17
4. Քաղաքացիական անհնազանդության հիմնավորումը	20
5. Պատասխանատվությունը	21
6. Ամփոփում.....	24
Հավելվածներ.....	26
Հավելված 1/ ՄԻԵԿ-ի / ՄԻԵԴ և ԵՄ	26
Հավելված 2/Բելգիա.....	35
Հավելված 3/Գերմանիա.....	51
Հավելված 4/Լեհաստան	60
Հավելված 5/Միացյալ Թագավորություն	75
Հավելվածներ	94
Հավելված 1.....	94
Հավելված 2.....	96
Հավելված 6/Ֆրանսիա	101
Հավելված 8/Ռուսաստանի Դաշնություն	132
Հավելված 9/Ճապոնիա	148
Հավելված 10/ Չինաստանի ժողովրդական հանրապետություն	154
Հավելված 11/ Հոնկոնգ	162
Հավելված 12/ Թաիլանդ.....	170
Հավելված 13/Ավստրալիա	189

1. Ներածություն

- նկատի առնելով, որ անհրաժեշտ է, որպեսզի մարդու իրավունքները պաշտպանվեն օրենքի ուժով, նպատակ ունենալով ապահովել, որպեսզի մարդը հարկադրված չլինի դիմելու բռնության ու ճնշման դեմ ուղղված ապստամբության՝ որպես վերջին միջոցի...

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր,

նախաբանի 3-րդ պարբերություն

Հենրի Թորոն իր «Դիմադրություն քաղաքացիական կառավարությանը» (Resistance to civil government), կամ այլ խոսքերով «Քաղաքացիական անհնազանդություն» էսսեյում¹ առաջիններից է անդրադարձել քաղաքացիական անհնազանդությանը, որպես կառավարության գործելակերպին արձագանքելու կամ կառավարության գործելակերպի վրա ազդելու հնարավորությանը: Իր գրեթե 20 էջանոց աշխատության մեջ Թորոն օրինակի հիման վրա նկարագրում է անձի և կառավարության միջև հարաբերությունների առանձնահատկությունները, ներկայացնում, թե ինչ է նշանակում հպատակվել կառավարությանը:

Բազմաթիվ մասնագետների կարծիքով Թորոնի այս վերլուծությունը ԱՄՆ քաղաքացու կողմից գրված ամենաազդեցիկ քաղաքական տրակտատներից է, որն ազդեցություն է թողել այնպիսի անձանց վրա, ինչպիսիք են Մահաթմա Գանդին և Մարթին Լյութեր Քինգ կրտսերը:

Հաշվի առնելով թե՛ աշխարհում, թե՛ Հայաստանում տեղի ունեցող զարգացումները, իշխանության կողմից որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների իրական մասնակցություն ունենալու ձգտումները, ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2014 թ. միջոցներ ձեռնարկվեցին ուսումնասիրել, թե որքանով են իրատեսական ներպետական կարգավորումների սահմաններում քաղաքացիական անհազանդության իրավունքի իրացման հնարավորությունները:

Այս հարցը ուսումնասիրելու նպատակով Կազմակերպությունն առաջին հերթին իր առջև խնդիր դրեց ուսումնասիրել այլ պետությունների իրավական փորձը: Այս նպատակով Pro Bono PILNet² ծրագրի շրջանակներում հաջողվեց կապ հաստատել արտասահմանյան իրավաբանական գրասենյակների հետ, որոնց կողմից իրականացվեց մի շարք երկրների

¹«Resistance to Civil Government», Henry David Thoreau

² <https://sniggle.net/TPL/index5.php?entry=rtcg>

² The Global Network for Public Interest Law

² <http://www.pilnet.org/>

իրավական դաշտի վերլուծություն: Գրասենյակների կողմից ուսումնասիրվել են Եվրոպական միության, ԱՊՀ անդամ երկրների, ասիական երկրների և Ավստրալիայի ներպետական, ինչպես նաև Եվրոպական Միության և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավակարգավորումները և իրավական պրակտիկան: Մասնավորապես ուսումնասիրությունը ներառել է հետևյալ երկրները.

Եվրոպական միության անդամ երկրներ.

1. Բելգիա
2. Գերմանիա
3. Լեհաստան
4. Միացյալ Թագավորություններ
5. Ֆրանսիա

ԱՊՀ անդամ երկրներ

6. Ղազախստան
7. Ռուսաստան

Ասիական երկրներ.

8. Ճապոնիա
9. Չինաստան, Հոնգ Կոնգ
10. Թաիլանդ

Այլ

11. Ավստրալիա

Ըստ Freedom House կազմակերպության ազատության ցուցանիշի³ նշված երկրներից 6-ը (Բելգիա, Գերմանիա, Լեհաստան, Միացյալ Թագավորություններ, Ֆրանսիա, Ճապոնիա, Ավստրալիա) հանդիսանում են ազատ և 4-ը (Ղազախստան, Ռուսաստան, Չինաստան, Թաիլանդ) ոչ ազատ երկրներ: Հայաստանը գնահատվում է մասնակի ազատ երկիր:

Ուսումնասիրության համար առաջադրվել են հետևյալ հարցերը.

1. Քաղաքացիական անհնազանդության որ դրսևորումներն են ճանաչվում օրենսդրությամբ (Սահմանադրությամբ և այլ օրենքներով): Ինչպե՞ս են նման դրսևորումները դիտարկվում նշված պետության օրենսդրության շրջանակներում:

2. Ճնշումներից և բռնապետությունից պաշտպանության սահմանադրական երաշխիքներ. ո՞րն է բողոքի խաղաղ ու բռնի ձևերի սահմանագիծը: Սահմանադրությամբ ամրագրված է արդյո՞ք բռնություն գործադրելու իրավունքը, և եթե այո՞, ապա ինչպե՞ս է այն կարգավորվում:

³ 2015 Freedom in the World.
Պ <https://freedomhouse.org/report-types/freedom-world#.VT87YNKeAXB>

3. Արդյո՞ք Սահմանադրությամբ կամ օրենքներով ճանաչվում է ապստամբելու իրավունքը, եթե տվյալ պետության կառավարությունը վերածվում է բռնապետության կամ ճնշումներ է գործադրում:

4. Ե՞րբ կարելի է խոսել բռնապետության և/կամ ճնշումների մասին: Ո՞րն է սահմանագիծը:

5. Քաղաքացիական անհնազանդության ո՞ր միջոցները կամ ձևերն են ընդունելի այն պարագայում, երբ փորձ է արվում փոխել սահմանադրական կարգը:

6. Ըստ համապատասխան օրենսդրության՝ ի՞նչ է իրենից ներկայացնում ժողովրդավարական երկրի սահմանադրական կարգը:

7. Եթե Սահմանադրությամբ նախատեսված են կառավարության՝ բռնապետության կամ ավտորիտար պետության վերածումը կանխելու համար անհրաժեշտ կառուցակարգերը (մեխանիզմները), ապա ինչպիսի՞ միջոցներ են ամրագրված Սահմանադրությամբ: Արդյո՞ք քաղաքացիական անհնազանդությունը որպես այդպիսին ընդունելի միջոց է, թե ոչ:

8. Արդյո՞ք անձինք իրավունք ունեն ունենալու, պահելու և գործածելու հրազեն և օգտագործելու այլ տեսակի զենք կամ այլ միջոցներ:⁴

Գրասենյակների կողմից իրականացված վերլուծությունների հայերեն թարգմանությունները ներկայացված են սույն ուսմնասիրության շրջանակներում՝ հավելվածների տեսքով:

Քաղաքացիական անհնազանդության թեման հանդիսացել է նաև ակադեմիական աշխատանքների առարկա, ուստի ուսումնասիրվել են մի շարք հետազոտական աշխատանքներ:

1. Քաղաքացիական անհնազանդության, քաղաքացիական անհնազանդության իրավունքի սահմանումը

Քիմբերլի Բրաունլին իր «Քաղաքացիական անհնազանդություն⁵» հոդվածի մեջ անդրադառնում է քաղաքացիական անհնազանդության իրավունքի իրացման այնպիսի կարևորագույն հարցերի, ինչպիսիք են. քաղաքացիական անհնազանդության հատկանիշները, քաղաքացիական անհնազանդության սահմանման դժվարությունները, քաղաքացիական անհնազանդությանը, որպես սոցիալական փոփոխության միջոցի դիմելու հիմնավորումները, պատասխանատվությունը:

Ըստ հեղինակի՝ պատմության ընթացքում քաղաքացիական անհնազանդության դեպքերը օգնել են վերագնահատել հասարակության բարոյական ցուցանիշները: «Բոստոնյան թեյախմությունը», սուֆրաժիստուհիների շարժումը, Մահաթմա Գանդիի

⁴ Բոլոր գրասենյակների կողմից իրականացված վերլուծությունները ներառում են տվյալ հարցերի շուրջ: Բացառություն են կազմում Ճապոնիայի, Չինաստանի Ժողովրդավարական հանրապետության, Հոնգ Կոնգի, Թաիլանդի, Ավստրալիայի վերաբերյալ օրենսդրական վերլուծությունները, քանի որ համապատասխան Գրասենյակը գտել է ոչ նպատակահարմար վերլուծություն տրամադրել ներակայացված հարցերի վերաբերյալ: Նրանց ներկայացվել են ցանկում ներառված բոլոր հարցերը բացառությամբ 1-ին հարցի:

⁵ Civil Disobedience (First published Thu Jan 4, 2007; substantive revision Fri Dec 20, 2013). Kimberley Brownlee <http://plato.stanford.edu/entries/civil-disobedience/>

կողմից ուղղորդված Հնդկաստանի՝ Բրիտանիայից անկախացման պայքարը, Մ. Լ. Քինգի կողմից առաջնորդվող ԱՄՆ քաղաքացիական իրավունքների շարժումը, Հարավային Աֆրիկայում ապարտեիդի դեմ տարվող պայքարը, Վիետնամական պատերազմի դեմ տարվող ուսանողների նստացույցերը, Բիրմայում հանուն ժողովրդավարության Աուն Սան Սու Չժին և այլն, այն օրինակներն են, որոնք ապացուցում են, որ քաղաքացիական անհնազանդությունը սոցիալական փոփոխությունների կարևոր միջոց է⁶: Հեղինակն առանձնացնում է նաև անհնազանդության և բողոքի այլ տեսակներ ևս, որոնցից անհրաժեշտ է տարբերակել քաղաքացիական անհնազանդությունը: Բողոքի այլ տեսակների շրջանակներում նա առանձնացնում է.

1. Իրավական կարգով բողոքարկումը,
2. Կանոնները խախտելը,
3. Խղճի ազատությունից բխող բողոքներ (Տե՛ս Մեջբերում 1),
4. Առավել վճռական բողոքի տեսակները,
5. Հեղափոխություն:

Մեջբերում 1

Բելգիա

Վերջերս Բելգիայի Սահմանադրական դատարան (Սահմանադրական դատարան) են դիմել իսլամ դավանող կանայք՝ հանրային վայրերում գլխաշոր կրելն արգելող (քրեական պատժամիջոցի սպառնալիքով) 2011թ. հունիսի 1-ի օրենքի («Գլխաշորի մասին օրենք») սահմանադրականությունը որոշելու խնդրանքով:⁷ Դատարան դիմած կանայք հայց են ներկայացրել «Գլխաշորի մասին օրենքը» կասեցնելու և չեղյալ հայտարարելու վերաբերյալ՝ պնդելով, որ նման օրենքը (և դրա հետ կապված քրեական պատժամիջոցը) սահմանափակում է նրանց դավանանքի ազատությունը՝ դրանով իսկ խախտելով նրանց սահմանադրական իրավունքները: Բելգիայի օրենսդրության համաձայն՝ Սահմանադրական դատարանը կարող է կասեցնել այն օրենքների կատարումը, որոնք առերևույթ հակասահմանադրական են թվում: Նման իրավիճակում դատարանը պետք է, ի թիվս այլ հարցերի, որոշի, թե արդյոք վիճարկվող օրենքի կիրառումը կարող է անդառնալի վնաս հասցնել հայցվորներին: Տվյալ գործով Սահմանադրական դատարանը եզրակացրել է, որ անդառնալի վնասի որևէ սպառնալիք չկա: Ենթադրելով, որ օրենքին չենթարկվելուց հետո կանանց դեմ քրեական գործ կհարուցվի, Սահմանադրական դատարանը գտել է, որ կանայք դեռևս հնարավորություն կունենան դիմելու քրեական գործերով դատավորին նախքան դատարանում գործի քննությունը լուծման ենթակա հարցը (ֆրանս.՝ «question préjudicielle հարց է préjudicielle») Սահմանադրական դատարան ուղղելու խնդրանքով, իսկ դատարանն այնուհետև նախնական որոշում կկայացնի «Գլխաշորի մասին» օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանելու վերաբերյալ:¹⁵⁸ Որոշ իրավագետների կարծիքով՝ տվյալ գործով

⁶ Civil Disobedience (First published Thu Jan 4, 2007; substantive revision Fri Dec 20, 2013). Kimberley Brownlee <http://plato.stanford.edu/entries/civil-disobedience/#ModAct>

⁷ 2011թ. հունիսի 1-ի օրենք visant à interdire le port de tout vêtement cachant totalement ou de manière principale le visage, M.B., 13 juillet 2011:

⁸ Սահմանադրական դատարան, 2011թ. հոկտեմբերի 5, J.T., 2011, liv. 6452, 709:

դատարանի բերած փոքր-ինչ զարմանալի փաստարկները կարելի է մեկնաբանել որպես օրենքը վիճարկելու նպատակով քաղաքացիական անհնազանդություն դրսևորելու կոչ:⁹

Մ. Բազլայը նշում է, որ դաշնային իշխանությունների վրա ազդելու մեխանիզմների բացակայության դեպքում, քաղաքացիները ստիպված են պայքարել այդ իշխանությունների կողմից ազգային ինքնիշխանության խախտման դեմ հանրային ցույցերի միջոցով, իսկ անտեսման դեպքում՝ քաղաքացիական անհնազանդության միջոցով: Այդպիսով «կարտահայտվի հետևյալ կանոնը, որը նախատեսված է հենց Սահմանադրությամբ¹⁰ և առհասարակ օրենքով. կառավարման սահմանադրական ձևի ցանկացած մերժում հոգուտ գաղափարային նպատակահարմարության հանդիսանում է հեղաշրջում, որը հիմք է նախապատրաստում ժողովրդի համար իրացնելու դիմադրելու իր իրավունքը»:¹¹

Հերրովի Ֆրիմենը, իր «Բողոքելու իրավունքը և քաղաքացիական անհնազանդությունը աշխատության մեջ¹²» նշում է, որ քաղաքացիական անհնազանդությունը հանդիսանում է քաղաքացիական ոչ բռնի դիմադրություն կամ հարկադրանք, ճիշտ այնպես, ինչպես մենք խոսում ենք քաղաքացիական պատերազմի մասին: Հեղինակը առանձնացնում է որոշումների կայացմանն ազդելու ոչ բռնի միջոցների 7 տեսակ՝

1. Պացիֆիզմը, որպես ակտիվ բարյացկամություն և հաշտություն,
2. Դիմադրության բացակայություն,
3. Satyagraha¹³ ոչ բռնի ուղղակի գործողություններ,
4. Քաղաքացիական անհնազանդություն,
5. Ոչ բռնի հարկադրանք,
6. Անհրաժեշտությունից ելնելով ոչ բռնություն,
7. Բռնություն առանց ատելության¹⁴:

Միևնույն ժամանակ համացանցի և նորագույն տեխնոլոգիաների զարգացման համատեքստում սկսում են զարգանալ նաև Ինտերնետային միջոցներով քաղաքացիական անհնազանդության գործողությունները (Տե՛ս Մեջբերում 2):

Մեջբերում 2

Լեհաստան

Համացանցի միջոցով դրսևորվող քաղաքացիական անհնազանդություն

⁹ X. DELGRANGE, "La désobéissance civile, seul recours effectif contre la loi?", Observations sous Cour const., arrêt n° 148/2011 du 5 octobre 2011, J.T., 2011, liv. 6452, 710:

¹⁰ Հասկանալի է, որ այստեղ Մ. Բազլայը նկատի ունի Սահմանադրությամբ ամրագրված բոլոր իրավունքները:

¹¹ «Ռուսաստանի Դաշնության սահմանադրական իրավունք», Մ. Վ. Բազլայ, Մոսկվա, 2001թ.:

¹² Freeman, Harrop A. (1966) "The Right of Protest and Civil Disobedience," Indiana Law Journal: Vol. 41: Iss. 2, Article 3.

Պ <http://www.repository.law.indiana.edu/ilj/vol41/iss2/3>

¹³ Մշակվել է Մահաթմա Գանդիի կողմից:

¹⁴ The Right of Protest and Civil Disobedience, Harrop A. Freeman. Cornell University Law School.

Համացանցը հնարավորություն է ընձեռում քաղաքացիական անհնազանդության դրսևորման նոր ձևերի զարգացման համար: Ի սկզբանե, համացանցի հիմքում ընկած առանցքային գաղափարներն են՝ ազատ արտահայտվելու իրավունքը և տեղեկատվության հասանելիությունը: Համացանցը նպաստել է քաղաքացիական անհնազանդության ոլորտում տարվող աշխատանքի դյուրացմանը՝ հնարավորություն տալով, օրինակ, մուտք գործել որևէ կայք և տեղեկություններ ստանալ նախատեսված բողոքի ակցիայի, հասարակական շարժման ծրագրի կամ քննարկման համար առանձնացված նյութերի մասին կամ բողոքի արտահայտման նամակներն ուղարկել էլեկտրոնային տարբերակով, արգելափակել համապատասխան կայքերը (այսպես կոչված «վիրտուալ նստացույց»), «կոտրել» համապատասխան կայքերը (օրինակ՝ կայքի բովանդակությունը փոխելու նպատակով), ստեղծել համակարգչային վիրուսներ և մուտք գործել ներքին ցանցային համակարգեր: Բողոքի դրսևորման նման միջոցների դիմող անձանց ասում են կիրեռակտիվիստներ կամ կայքեր «կոտրող» ակտիվիստներ (անգլ.՝ «hacktivists»):¹⁵

Ստորև ներկայացվում են Լեհաստանում համացանցի միջոցով դրսևորվող քաղաքացիական անհնազանդության ձևերի օրինակները.

- Լեհաստանի Աշխատանքի նախարարության կայքի և Լեհաստանի վարչապետի յոթ ինտերնետային կայքերի վրա 2008 թվականին կատարված կիրեռհարձակումներ,¹⁶

- Փախստականների հարցերով խորհրդի, Հիդրոէկոլոգիական հետազոտության համար պատասխանատու պետական հանձնախմբի և Կենտրոնական քննական հանձնաժողովի ինտերնետային կայքերի վրա 2010 թվականին գործած կիրեռհարձակումներ (հանցագործության փաստն ապացուցելու համար տուժող կողմերը պետք է մեղադրական բողոք ներկայացնեին, նման բողոքի բացակայության պատճառով իրավախախտները պատասխանատվության չեն ենթարկվել),¹⁷

- Լեհաստանի մի քանի համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, առողջապահական և մշակութային հաստատությունների կայքերի վրա 2011 թվականին գործած կիրեռհարձակումներ (կայքերում տեղադրվել են քննադատական բովանդակությամբ հաղորդագրություններ Լեհաստանի կրթական համակարգի, մասնավորապես՝ աշակերտների և ուսանողների կողմից թմրանյութերի և ալկոհոլի չարաշահման վերաբերյալ: Ինչպես հայտնի է դարձել, իրավախախտները պատասխանատվության չեն ենթարկվել, քանի որ նրանց արարքը հասարակության համար շատ փոքր վնաս է պարունակել),¹⁸

- Լեհաստանի խորհրդարանի, Վարչապետի աշխատակազմի և երկրի նախագահի աշխատակազմի կայքերի վրա 2012 թվականին գործած կիրեռհարձակումներ («Anonymous»

¹⁵ Marta du Vall, Nieposłuszeństwo ..., էջ՝ 198:

¹⁶ Marta du Vall, Nieposłuszeństwo..., էջ՝ 199:

¹⁷ Marta du Vall, Nieposłuszeństwo..., էջ՝ 199:

¹⁸ Marta du Vall, Nieposłuszeństwo..., էջեր՝ 199-200:

միջազգային խումբը խոստովանել է «Կեղծումների դեմ պայքարի վերաբերյալ առևտրային համաձայնագիրը» (ACTA) վավերացնելու պատրաստակամության մասին Լեհաստանի իշխանությունների հայտարարությանն ի պատասխան կիրեռհարձակման պատրաստումը և իրագործումը (լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս հաջորդ բաժինը)¹⁹:

Կիրեռակտիվիզմը տարբերվում է քաղաքացիական անհնազանդության դրսևորման հիմնական ձևերից, քանի որ համացանցն ընձեռնում է անանունություն պահպանելու ավելի մեծ հնարավորություն: Կիրեռակտիվիզմի դրսևորման պարագայում ավելի հեշտ է խուսափել պատժից, մինչդեռ հասարակական անհնազանդության հատկանիշներն են՝ պատժամիջոցների ընդունումը և բացահայտ գործունեությունը:

2. Քաղաքացիական անհնազանդության իրավունքը

Իրավական բառապաշարի տեսանկյունից Հ. Ֆրիմենը առաջարկում է քաղաքացիական անհնազանդության հետևյալ հիմունքները՝ (1) քաղաքացիական անհնազանդությունը ճանաչված գործընթաց է ուղղված օրենսդրության և քաղաքականության դեմ բողոքելու և դատարանի կողմից նման գործընթացի հիմնավորմանը, (2) իրավական տեսությունը ճանաչում է օրենքի և քաղաքականության փոփոխության ոչ բռնի միջոցների հնարավորությունը, (3) որ օրենքի ենթարկվելու պարտավորությունը բացարձակ չէ, այլ հարաբերական է, և թույլ է տալիս որոշ նմանատիպ ոչ բռնի բողոքարկումների հնարավորություն, (4) որ բողոքները և քաղաքացիական անհնազանդությունը պետք է պաշտպանվեն Առաջին լրացման շրջանակներում²⁰, (5) որ եթե նույնիսկ բողոքը կամ քաղաքացիական անհնազանդության ակտը հանդիսանում է օրենքի տեխնիկական խախտում, անհնազանդության նպատակը պետք է պայմանական պատիժ առաջացնի (անկասկած ոչ առավել խիստ քան սովորական դեպքերում):

Որպես կանոն մասնագետները նշում են բողոքելու իրավունքի սահմանափակ հնարավորություններ: Ռոուլը, օրինակի համար նշում է, որ նույնիսկ գրեթե արդար հասարակության մեջ անձը կարող է ենթադրաբար իրավունք ունենալ ներգրավվել քաղաքացիական անհնազանդության գործողության մեջ ներքոնշյալ 3 պայմանների առկայության դեպքում. 1. Ի պատասխան էական և ակնհայտ անարդարությանը, 2. որպես ծայրահեղ միջոց, 3. այլ փոքրամասնությունների հետ համակարգված աշխատանքի դեպքում:²¹

¹⁹ Marta du Vall, *Niepostuszeństwo...*, էջեր՝ 199-200:

²⁰ Խոսքը գնում է ԱՄՆ Սահմանադրության առաջին լրացման մասին, ընդունված է 1791 թ. դեկտեմբերի 15-ին: Լրացմամբ արգելվում է այնպիսի օրենքի ընդունումը, որը կհաստատի մեկ կրոն, կարգելի կրոնի ազատության իրացումը, կսահմանափակի խոսքի ազատությունը, կխախտի մամուլի ազատությունը, կմիջամտի խաղաղ հավաքների ազատությունը, կարգելի դիմել Կառավարությանը բողոքների բավարարման վերաբերյալ դիմումներով

²¹ Civil Disobedience (First published Thu Jan 4, 2007; substantive revision Fri Dec 20, 2013). Kimberley Brownlee <http://plato.stanford.edu/entries/civil-disobedience/>

Որոշները նշում են, որ քաղաքացիական անհնազանդության իրավունքն առկա է միայն ոչ լիբերալ ռեժիմների դեպքում: Հաշվի առնելով, որ ոչ լիբերալ ռեժիմների դեպքում խախտվում է անձի քաղաքական մասնակցության իրավունքը, անձինք, ում իրավունքները խախտվել են, իրավունք ունեն իրացնել իրենց բարոյական իրավունքներն այնպես, ինչպես դա կվարվեին այն դեպքում, եթե այդ իրավունքները ճանաչվեին օրենքով:²²

Ռոնալդ Դվորկինը իր հերթին կապում է քաղաքացիական անհնազանդության իրավունքը ոչ միայն անձի քաղաքական մասնակցության իրավունքի հետ, այլ նրա այլ իրավունքների հետ, որոնք նա կարող է օգտագործել կառավարության հետ հարաբերություններում, օրինակ ազատ արտահայտվելու իրավունքը: Անձն իրավունք ունի չենթարկվել օրենքին բոլոր այն դեպքերում, երբ օրենքը բացասական կերպով միջամտում է կառավարության դեմ ունեցած իր իրավունքներին:²³ Այսպիսով, օրենքը խախտելու անձի իրավունքը անկախ իրավունք չէ, այն սերտորեն կապված է այն իրավունքի հետ, որը կառավարությունը չի հարգում: (Տե՛ս Մեջբերում 3, Մեջբերում 4)

Մեջբերում 3

Միացյալ Թագավորություն

2.2 Ստորև ներկայացվում է ճնշման և քաղաքացիական անհնազանդության վերաբերյալ բազմաբնույթ քննարկումներին առնչվող ՄԻԵԿ-ով ամրագրված իրավունքների ոչ ամբողջական ցանկը:

ՄԻԵԿ Հոդված	Իրավունք	Համապատասխանություն	Վերապահում
5	Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք ²⁴	Նշված իրավունքը հատկապես կարևոր է այն դեպքերում, երբ բողոքի ցույցերի ժամանակ ոստիկանությունն անցնում է զսպողական մարտավարության, ինչպես նշված է ստորև	Շատ քիչ բացառություններ, օրինակ՝ օրինական ձերբակալություն
8	Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք	Բողոքի ցույցերի ժամանակ կատարվող աննորբանկատ հսկողությունը ²⁵ և խուզարկումը ²⁶ կարող հանգեցնել այս իրավունքի ոտնահարմանը	Վերապահումներով իրավունք
10	Արտահայտվելու ազատություն	Բողոքի ակցիային կամ ցույցին մասնակցությունը հանդիսանում է արտահայտվելու ազատություն, որն ամրագրված է կոնվենցիայի 10-րդ հոդվածով ²⁷	Վերապահումներով իրավունք
11	Հավաքների և միավորման ազատություն	Այս ազատությունը ներառում է խաղաղ բողոքի ցույցեր անցկացնելու իրավունքը	Վերապահումներով իրավունք

²² Նույնը

²³ Նույնը

²⁴ Այս իրավունքը երբեմն անվանում են «անձի անձեռնմխելիության դրույթ»:

²⁵ *Klass v Germany* (1979–80) 2 EHRR 214.

²⁶ *Gillan and Quinton v UK* (2010) 50 EHRR 45.

²⁷ *Sunday Times v UK* (No 2) 14 EHRR 229.

Մեջբերում 4

Բելգիա

Քաղաքացիական անհնազանդությունը որպես իրավունք ամրագրված չէ Բելգիայի օրենսդրությամբ:²⁸ Միևնույն ժամանակ այն իրավախախտում չի համարվում Բելգիայի քրեական օրենսգրքով: Փոխարենը, այս հասկացությունն արմատացած է արդարադատությունից և հավասարության կամ հիմնարար իրավունքներից բխող «գերադաս սկզբունքներում»:²⁸

Բելգիայում պաշտպանված է իր սահմանադրությամբ ճանաչված հիմնարար իրավունքների վրա հիմնված վարքագիծը (օրինակ՝ ազատ արտահայտվելու իրավունք (Հոդված 19), մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունք (Հոդված 22), մարդկային արժանապատվության իրավունք (Հոդված 23), խոսքի ազատության իրավունք (Հոդված 25) և հավաքների ազատության իրավունք (Հոդված 26)):²⁹

Բացի այդ, Եվրոպական սոցիալական խարտիայի³⁰ 6-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված է գործադուլի իրավունքը, որը կիրառելի է Բելգիայում³¹ և Բելգիայի Գերագույն դատարանի (Վճռաբեկ դատարան) կողմից ճանաչվում է որպես հիմնարար իրավունք:³² Ավելին, Բելգիայում այդ իրավունքի իրացումը երաշխավորվում է ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 8-րդ հոդվածի 1-ին կետով, Աշխատավորների հիմնարար սոցիալական իրավունքների եվրոպական համայնքի խարտիայի 13-րդ կետով, Հիմնարար իրավունքների եվրոպական խարտիայի 28-րդ հոդվածով և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԴ) 11-րդ հոդվածով:³³

Քաղաքացիական անհնազանդության դիմելու իրավունքը որոշակի կերպով ճանաչվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից: Այսպես, «Նոսովը և այլոք ընդդեմ Ռուսաստանի» գործով ՄԻԵԴ-ը արձանագրել է հետևյալը. «Դատարանը ճանաչել է, որ 11-րդ հոդվածում արձանագրված խաղաղ հավաքների ազատության իրավունքը ժողովրդավարական պետությունների հիմնարար իրավունքներից է և ազատ արտահայտվելու իրավունքի հետ մեկտեղ հանդիսանում է հասարակության հիմքերից մեկը: Հավաքների ազատության իրավունքի նպատակներից է հարթակ ապահովել հասարակական քննարկումների և բողոքի հրապարակային արտահայտման համար»: Վերոնշյալից եզրակացնում ենք, որ բողոքի իրավունքը համարվում է հիմնարար իրավունք, ուստի կարող է պաշտպանվել սահմանադրությամբ³⁴:

²⁸ O. Դե Շոնիթթեմ. «Désobéissance civile et cause significative en justice», in PERROUTY, P.-A. (éd.), *Obéir et désobéir: le citoyen face à la loi*, Բրյուսելի ազատ համալսարանի հրատարակություն, 2000թ., 97:

²⁹ Մ. ՖԱԼՔՈՆԻ ԹԵԼԼԱ. «Un droit à la désobéissance civile? Quelles conséquences juridiques?», R.I.E.J., 2000, liv. 45, 98:

³⁰ 1990թ. հուլիսի 11-ի օրենք, M.B., 1990թ. դեկտեմբերի 28:

³¹ Սահմանադրական դատարան, 1993թ. հուլիսի 15, J.T., 1993, 820:

³² Cass., 21 décembre 1981, Pas., 1982, I, 531:

³³ N. BEAUFILS, 'Droit de grève en bref: principes de base et nouvelles tendances', J.T.T., 2010, nr. 1063, 130:

³⁴ Տե՛ս նաև վերջին 7. Քաղաքացիական անհնազանդություն, Ռուսաստանի Դաշնություն:

Իսկ Եվրոպական Խորհրդարանը, 1991 թ. օգոստոսին և հոկտեմբերին ընդունեց Մադագասկարի ջարդերը և քաղաքացիների ցույցերի դեմ ուղղված կառավարության գործողությունները դատապարտող բանաձև, որում ասվում էր հետևյալը. «Քանզի քաղաքացիական ծառայողների գործադուլը, շարունակական բնույթ կրող քաղաքացիական անհնազանդության արշավը և խաղաղ դիմադրությունը խոսում են Մադագասկարի բնակչության ուժեղ կամքի մասին...»³⁵ Այսպիսով, Եվրոպական Խորհրդարանը ուղղակիորեն ճանաչում է քաղաքացիական անհնազանդության իրավունքը:

Քաղաքացիական անհնազանդությանը, որպես իրավունքի անդրադարձ է կատարվել նաև ուսումնասիրված երկրներում իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում: Այսպես, Միացյալ Թագավորությունում քննված գործերից մեկի վերաբերյալ դատարանի որոշման մեջ նշվում է, որ նրանք, ովքեր խախտում են օրենքը կառավարության գործունեության կամ օրենքի անարդարության մասին իրենց համոզմունքներն ամրապնդելու նպատակով, երբեմն պաշտպանվում են պատմության ընթացքում: Լեհաստանում նմանատիպ վճիռներ են կայացվել «Համերաշխություն» անկախ և ինքնավար արհմիության մի շարք գործերով (Մեջբերում 5, Մեջբերում 6):

Մեջբերում 5

Միացյալ Թագավորություն

Իր ելույթում Լորդ Հոֆմենն անդրադարձավ Միացյալ Թագավորությունում քաղաքացիական անհնազանդության նկատմամբ վերաբերմունքին.

Գործի հանգամանքներ. Գործով պատասխանողները խաղաղ հանրահավաքի շրջանակներում հավաքվել էին ճամփեզրին՝ խախտելով Հասարակական կարգի մասին օրենքով նախատեսված արգելող դրույթը:

«Գիտակցական հիմքերով քաղաքացիական անհնազանդությունը երկար և պատվավոր պատմություն ունի այս երկրում: Նրանք, ովքեր խախտում են օրենքը կառավարության գործունեության կամ օրենքի անարդարության մասին իրենց համոզմունքներն ամրապնդելու նպատակով, երբեմն պաշտպանվում են պատմության ընթացքում: Անմիջապես մտքիս եկավ սուֆրաժիստուհիների (տղամարդկանց համահավասար ընտրական իրավունք ունենալու համար պայքարող կանանց) օրինակը: Նման բողոքների դրսևորումների և ցույցերի հանդուրժումը վկայում է մեր հասարակության քաղաքակիրթ լինելու մասին: Մակայն գոյություն ունեն որոշակի կարգավորող նորմեր, որոնք որպես կանոն, տարբեր կերպ են ընկալվում օրենսդիրների և իրավախախտների կողմից: Յուրաքանչյուրը ձեռնարկում են համաչափ գործողություններ և չափից ավելի վնաս կամ անհարմարություն չեն պատճառում: Եվ նրանք այդուհանդերձ հաստատում են իրենց համոզմունքները՝ ընդունելով օրենքով նախատեսված պատժամիջոցները:

Մյուս կողմից, ուստիկանության և դատախազության աշխատակիցները զսպված մտեցում են դրսևորում, իսկ դատավորները վճիռ կայացնելիս հաշվի են առնում ճուրղարարների գիտակցված դրդապատճառները:

³⁵ Եվրոպական խորհրդարանի Բանաձև Մադագասկարի իրավիճակի վերաբերյալ, OJ C 326/181, 16.12.91:

Դատավորների կողմից կայացրած արդարացման վճիռները մարմնավորում են նրանց ուշադիր վերաբերմունքը նման կարգավորող նորմերի նկատմամբ»:

Director of Public Prosecutions v Jones (Margaret) [1999] 2 AC 240

Մեջբերում 6

Լեհաստան

Գործի հանգամանքներ. 1992թ. մայիսի 12-ին Լեհաստանի Գերագույն դատարանը³⁶՝ ի դեմս յոթ դատավորի, վճիռ է կայացրել քաղաքացիական անհնազանդության վերաբերյալ՝ «Համերաշխություն» արհմիութենական շարժման համատեքստում:

«Գերագույն դատարանը վճռել է, որ արտահերթ բողոքարկման դիմումում բերված փաստարկներն արդարացի են: Թեև գործով դատապարտվածներն անտեսել են ռազմական դրության ընթացքում գործող օրենքը, նրանց անհնազանդությունը զուտ «ձևական» բնույթ է կրել: Նրանց արարքները կարելի էր հանցագործություն համարել միայն «մակերեսային» քննությամբ, իսկ դրանց հանցավոր բնույթը հաստատելու համար անհրաժեշտ էր գնահատել նաև այլ գործոնները: Օրենքի պահանջներին չենթարկվելն ինքնին հանցագործություն չի հանդիսանում:»

Անհրաժեշտ է նաև նշել, որ որոշ երկրների կողմից ճանաչվում է նաև բռնության կամ ճնշումների դեմ ապստամբելու իրավունքը: Այսպես, ըստ վերլուծաբանների, Ֆրանսիայի օրենսդրությամբ որպես հիմնարար իրավունք ամրագրվել է բռնապետությանը և ճնշումներին դիմակայելու իրավունքը (Տե՛ս Մեջբերում 7): Որոշ երկրներում, ինչպիսին է Բելգիան, ուղղակիորեն չի ճանաչվում այս իրավունքը, սակայն իրավակիրառ պրակտիկայում որոշակի գործողություններ կարելի է դիտարկել որպես քաղաքացիական անհնազանդության միջոց կամ դիմակայություն՝ բռնապետության կամ ճնշումների դեմ (Տե՛ս Մեջբերում 8): Այլ երկրներում, ինչպիսին է Ռուսաստանը, բռնապետության կամ ճնշումների դիմակայությունը գրեթե անհնարին է դիտարկել որպես իրավաչափ քայլ: (Տե՛ս Մեջբերում 9)

Մեջբերում 7

Ֆրանսիա

Ֆրանսիական հեղափոխությունից ի վեր՝ Ֆրանսիայի օրենսդրությամբ որպես հիմնարար իրավունք ամրագրվել է բռնապետությանը և ճնշումներին դիմակայելու իրավունքը: Մարդու և քաղաքացիների իրավունքների հռչակագրի 2-րդ հոդվածի համաձայն՝ «ցանկացած քաղաքական միավորման նպատակն է պաշտպանել Մարդու բնական և անօտարելի իրավունքները: Այդ իրավունքներն են Ազատության իրավունքը, Մեփականության իրավունքը, Անվտանգության իրավունքը և Ճնշումներին դիմակայելու իրավունքը»:

...

³⁶ Գերագույն դատարանի 1992թ. մայիսի 12-ի վճիռ, գործ թիվ՝ . II KRN 39/92, հրապարակվել է՝ OSNKW 1992 no. 9-10, item 61, OSA 1992 no. 11, item 1, p. 53, Legalis:

Այդուհանդերձ, 1944 թվականին՝ Վիշիի վարչակարգի ավարտին, Ֆրանսիայի Գերագույն դատարանը սկսել է ընդունել նման հասկացությունները: 1944 թվականին ընդունված որոշման մեջ Գերագույն դատարանը վճռել է, որ այն քաղաքացիական ծառայողները, ովքեր կենթարկվեն ապօրինի և առանց հիմքի գործող իշխանություններին, պատասխանատվության կենթարկվեն պետական դավաճանության համար:³⁷ Ավելի կարևոր է, որ դատարանն ընդունելի է համարել դիմադրությունը այն դեպքերում, երբ այն ուղղված է հանրային շահի լուրջ խախտման դիմակայմանը: Այսպիսով, դիմադրությունը կիրառելի է միայն համընդհանուր շահը պաշտպանելու համար:³⁸ Այսօրվա դրությամբ Ֆրանսիայի քրեական օրենսգրքով դեռևս արգելվում է դիմադրություն ցուցաբերել քաղաքացիական ծառայողին:³⁹ Գերագույն դատարանի կարծիքով՝ նման դեպքերում ապստամբությունը չի կարող արդարացվել քաղաքացիական ծառայողի անօրինական գործողությամբ:⁴⁰ Ավելին, դատարանը դիմադրությունը նույնացնում է ապստամբության հետ: Գործնականում դատավորները չեն ընդունում այդ սկզբունքի որևէ սահմանափակում:

Ամեն դեպքում, Ֆրանսիայի Սահմանադրական դատարանը (Սահմանադրական խորհուրդ) հայտարարել է, որ ճնշումներին դիմադրելու իրավունքը հանդիսանում է «լիարժեք սահմանադրական իրավունք»՝ այդպիսով ընդգծելով դրա նշանակությունը:⁴¹ Մասնավորապես, քաղաքացիական ծառայողներին թույլատրվում է օրինական միջոցներով չենթարկվել վերադասի կողմից տրված հրամաններին, եթե դրանք անօրինական են և կարող են խախտել հանրային շահը:⁴²

...

Բռնակալությունը կամ ճնշումների վրա հիմնված վարչակարգը կարելի է բնութագրել որպես գերագույն իշխանությամբ օժտված միապետի, մեկ անձի կամ մի խումբ անձանց կամայական կամ բացարձակ իշխանություն: Բռնակալությունը բնութագրվում է ճնշողական, անարդար և բռնապետական կառավարմամբ:⁴³

Ֆրանսիայի օրենսդրությամբ պաշտպանվում է ճնշումներից զերծ լինելու անհատի իրավունքը, սակայն բռնապետությունը կամ ճնշումները որպես այդպիսին հատուկ չեն սահմանվում: Այդուհանդերձ, օրենսդրությամբ նախատեսվում են այն մեխանիզմները և սկզբունքները, որոնք ուղղված են կառավարության նման վարչակարգերի վերափոխման կանխմանը:

³⁷ Տվյալ դեպքում քաղաքացիական ծառայողն առաջնորդվել է հրեական համայնքին գործազրկության նպաստից զրկող օրենքով:

³⁸ Օրինակ, դատարանը արդարացված դիմադրություն է համարել այն փաստը, որ անձը որոշ նրբանկատ տվյալները պաշտպանում է նացիստներից:

³⁹ Ֆրանսիայի Քրեական օրենսգրքի հոդված 433-6. «*խոչընդոտել նշանակում է բռնի դիմադրությամբ հակադրվել մի անձի, ով օժտված է պետական իշխանությամբ կամ կատարում է պետական ծառայությամբ իր վրա դրված որևէ հանձնարարություն գործելով իր լիազորությունների սահմաններում օրենքների, պետական մարմինների հրամանների, դատական որոշումների կամ կարգադրությունների կատարման համար*» [Հավելված 17. Քրեական օրենսգրքի հոդված 433-6 [անգլերեն]:

⁴⁰ Գերագույն դատարանի քրեական պալատ, 1995թ. փետրվարի 7 [Հավելված 18. Վճռաբեկ դատարանի քրեական պալատ, 1995թ. փետրվարի 7 [ֆրանսերեն]:

⁴¹ Սահմանադրական դատարան, 1982թ. հունվարի 16 (թիվ 81-132 DC) [Հավելված 19. Սահմանադրական խորհուրդ, 1982թ. հունվարի 16, 81-132 DC [ֆրանսերեն]:

⁴² 1983թ. հուլիսի 13-ի թիվ 83-634 օրենքի 28 հոդված [Հավելված 20. 1983թ. հուլիսի 13-ի թիվ 83-634 օրենք քաղաքացիական ծառայողների պարտավորությունների վերաբերյալ [ֆրանսերեն]:

⁴³ Բ. Շանտրու. «Սահմանադրական իրավունք», Սիրելի համալսարան, 25-րդ հրատարակություն, էջեր՝ 256-258:

Մեջբերում 8

Բելգիա

Բելգիայում տարբերակվում են դիմադրությունը և ապստամբությունը: Ապստամբությունը համարվում է հանցագործություն և սահմանվում է որպես պետական իշխանությունների հրամաններին ենթարկվելուց հրաժարվելը:⁴⁴ Դիմադրությունը տարբերվում է ապստամբությունից նրանով, որ այս դեպքում մարդիկ հրաժարվում են ենթարկվել պետական իշխանությունների անօրինական հրամաններին:⁴⁵ Թեև որոշ իրավագետներ պնդում են, որ Բելգիայի օրենսդրությամբ դիմադրության իրավունքը չի ճանաչվում, նրանցից շատերն այն կարծիքի են, որ դիմադրության իրավունքը բխում է Սահմանադրության մեջ ամրագրված սկզբունքներից:⁴⁶ Բելգիայի Սահմանադրության պատմությունից պարզ է դառնում, որ սահմանադրությունը կազմելիս քննարկվել է նաև դիմադրություն ցուցաբերելու իրավունքը:⁴⁷ Սակայն, սահմանադրության կազմման համար պատասխանատու Ազգային Կոնգրեսը գտել է, որ նման իրավունքի ներառումն անիմաստ է, քանի որ այն բխում է սահմանադրությամբ արդեն իսկ ամրագրված հիմնարար իրավունքներից: Ազգային Կոնգրեսն անգամ նշել է, որ Բելգիայի ժողովուրդն իրավունք ունի հրաժարվել պետական կարգադրությունները կատարելուց և անհրաժեշտության դեպքում ընդդիմանալ իշխանությունների ցանկացած անօրինական արարքին:⁴⁸

Այս առումով, կարելի է ասել, որ Բելգիայի քրեական օրենսգրքի 269-րդ հոդվածը, որով քրեականացվում է ապստամբությունը, թույլ է տալիս դիմադրություն ցուցաբերել ի պատասխան պետական իշխանությունների անօրինական գործողությունների: Բացի այդ, Բելգիայի նախադեպային իրավունքի շրջանակներում կայացված մի քանի վճիռներում ճանաչվել է անհրաժեշտության դեպքում կամ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում (ֆրանս.՝ *contrainte irresistible*) դիմադրություն ցուցաբերելու իրավունքը:⁴⁹ Բացի այդ, Գերագույն դատարանը հաստատել է, որ դիմադրությունն օրինական է այն դեպքում, երբ պետական իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցն ակնհայտորեն ապօրինի է կամ ամենայն հավանականությամբ կարող է պատճառել անդադնալի վնաս:⁵⁰ Վերոնշյալից հետևում է, որ դիմադրության իրավունքի օրինականությունը հարկավոր է պարզել յուրաքանչյուր առանձին դեպքի ուսումնասիրությամբ՝ հաշվի առնելով հստակ փաստերը:

Մեջբերում 9

Ռուսաստանի Դաշնություն

Ինչպես երևում է, կառավարության կողմից բռնապետությանը և ճնշմանը դիմադրելու իրավունքի իրացումը կարող է դրսևորվել որպես բողոքի արտահայտման ծայրահեղ և բռնի ձև, որը հրապարակայնորեն և/կամ զանգվածաբար երբեք չի կիրառվել ժողովրդավարական

⁴⁴ P. DUSSARD-BRACKENIERS, « La résistance individuelle aux actes illégaux de l'autorité », *R.R.D.*, 1983, 111:

⁴⁵ J.-M. DERMAGNE, « Droit pénal : rébellion et contrainte irresistible », *Journ. Procès*, 2002, n°442, 28-29:

⁴⁶ I. VERHAEGEN, *La protection pénale contre les excès de pouvoir et la résistance légitime à l'autorité*, Bruxelles, Bruylant, 1969, 289-290:

⁴⁷ J.-M. DERMAGNE, *op. cit.*, 111-112:

⁴⁸ E. HUYTTENS, *La Constitution belge*, t. II, 224-225:

⁴⁹ Corr. Liege, 2001թ. նոյեմբերի 27, *Journ. Proc.*, 2002, liv. 442, 28 ; Cass., arrêt Piette, 1930թ. հունվարի 6, *Pas.*, 1930, 55:

⁵⁰ Cass., 5 mars 1888, *Pas.*, 1888, 108:

Ռուսաստանի պատմությունում: Որոշ ռուս քաղաքագետների կարծիքով՝ այդ իրավունքի կիրառումը, ընդհանուր առմամբ, պետության և հասարակության զարգացման քայքայիչ ձև է:⁵¹

3. Քաղաքացիական անհնազանդության հատկանիշները

Քիմբերլի Բրաունլիի կողմից առանձնացվում են քաղաքացիական անհնազանդության մի շարք հատկանիշներ: Այդ հատկանիշներն են.

- Բարեխղճությունը
- Կապը/Հաղորդակցումը
- Հրապարակայնությունը
- Ոչ բռնություն

Բարեխղճությունը: Բարեխղճությունը, որպես քաղաքացիական անհնազանդության հատկանիշ, շեշտադրում է անում լրջությունը, նվիրվածությունը, բարոյական համոզմունքները, որոնք դրդում են քաղաքացիական անհնազանդ անձին խախտել օրենքը: (Տե՛ս Մեջբերում 10)

Մեջբերում 10

Լեհաստան

Այսպես, օրինակ Լեհաստանի Հանրապետության գործող Սահմանադրության (ուժի մեջ է մտել 1997թ. ապրիլի 2-ին) 83-րդ հոդվածով («Պարտավորություններ» բաժին) ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք պետք է հարգի Լեհաստանի Հանրապետության օրենքները: Սահմանադրության որևէ դրույթով չի նախատեսվում օրենքն անարգելու իրավունքը: Ավելին, Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին բաժնի համաձայն՝ Սահմանադրությունը հանդիսանում է Լեհաստանի Հանրապետության գերագույն օրենքը: Մինևույն ժամանակ Սահմանադրական դատարանի կայացրած վճիռներից մեկի համաձայն՝ եթե որևէ օրենքի որևէ դրույթ հակասում է Սահմանադրությանը ամրագրված օրենսդրական հիմնարար սկզբունքներին, ապա նման դրույթն օրենքի մաս չի կազմում, և դրա խախտումը չի համարվում Սահմանադրության 83-րդ հոդվածի խախտում:⁵² Այստեղ անհրաժեշտ է նշել, որ Սահմանադրական դատարանի կողմից կայացվել են նաև հակառակ տեսակետը հիմնավորող որոշումներ ևս:

⁵¹ Տե՛ս՝ օրինակ՝ Դ. Ռ. Սալիխով. «Բողոքի արտահայտման հետ կապված իրավահարաբերությունները սահմանադրական իրավունքում. տեսություն» // Սահմանադրական և ներպետական իրավունք, 2014թ., թիվ 1, Ս. Ա. Ավագյան. «Ժողովրդավարական բողոքի արտահայտման հետ կապված իրավահարաբերությունները. սահմանադրական և իրավական կողմ», սահմանադրական և ներպետական իրավունք, 2012թ., թիվ 1:

⁵² Լեհաստանի Սահմանադրական դատարանի 2002թ. մայիսի 27-ի վճիռ, գործ թիվ՝ K 20/01, հրապարակվել է 2002 թվականին, OTK-A, No. 3, item 34:

Կապը/ Հաղորդակցումը: Քաղաքացիական անհնազանդության նկատառումներից ելնելով օրենքի խախտումն ունի և դեպի ապագան և դեպի անցյալ ուղղված նպատակներ: Անձը փորձում է ոչ միայն փոխանցել իր վերաբերմունքը (բացասական) կոնկրետ քաղաքականության կամ օրենքի վերաբերյալ, այլ նաև հասարակության ուշադրությունը գրավել կոնկրետ խնդրին և օրենքի կամ քաղաքականության մեջ որոշակի փոփոխություն մտցնել: Քաղաքացիական անհնազանդության նպատակներից ելնելով, վերլուծաբանների մոտ որոշակի վեճեր են առաջանում, մասնավորապես այն հարցերի վերաբերյալ, թե արդյոք մասնավոր անձանց (օր` մասնավոր համալսարանների, բանկերի և այլն) որոշումների կամ քաղաքականության դեմ պայքարը կարող է հանդիսանալ քաղաքացիական անհնազանդություն, թե այս սահմանումը վերաբերելի է միայն հանրային իշխանությունների կողմից տարվող քաղաքականության դեմ մղվող պայքարին:

Բացի այդ որոշ մասնագետներ առանձնացնում են ուղղակի և անուղղակի քաղաքացիական անհնազանդության տեսակներ: **Ուղղակի քաղաքացիական անհնազանդության** դեպքերին են դասվում այն դեպքերը, երբ անձը խախտում է այն օրենքը, որի փոփոխման համար պայքարում է: **Անուղղակի քաղաքացիական անհնազանդության** դեպքերին են դասվում այն դեպքերը, երբ անձը այլ օրենքներ խախտելով է պայքարում որոշակի օրենքի կամ քաղաքականության փոփոխության համար:

Հրապարակայնությունը: Մասնագետները նշում են, որ քաղաքացիական անհնազանդությունը երբեք չի կարող տարվել գաղտնի կերպով, այն միշտ տարվում է հրապարակայնորեն, բացահայտ և պաշտոնական իշխանություններին բարեխիղճ կերպով ծանուցելու միջոցով:

Ոչ բռնությունը: Բռնության բացակայությունը հանդիսանում է քաղաքացիական անհնազանդության հատկանիշներից թերևս ամենավիճելին: Ինչպես և հրապարակայնությունը, այս հատկանիշը, նպատակաուղղված է թուլացնել օրենքի խախտման բացասական հետևանքները: Բացի այն, որ դժվար է սահմանել բռնության հստակ սահմանումը (օրինակ, արդյոք ինքն իր նկատմամբ, գույքի, այլ անձանց փոքր չափի վնաս պատճառելը հանդիսանում է բռնություն), այլև որոշ դեպքերում ոչ բռնի գործողությունները հաճախ կարող են առավել ծանր հետևանքների հանգեցնել, քան բռնի միջոցները: Նաև բռնության որոշակի չափը կարող է առավել մեծ ազդեցություն ունենալ հաղորդակցության տեսակետից: Միևնույն ժամանակ, ըստ տեսաբանների, այս վերջին նկատառումը ոչ մի դեպքում չի կարող մեկնաբանվել, որպես բռնի ուժով հասարակության ուշադրությունը գրավելու առավել նախընտրելի միջոց կամ տարբերակ` բռնի միջոցների համեմատ:

Անհնազանդության ոչ բռնի միջոցներին դիմելու կարևորությունը անհրաժեշտ է նաև դիտարկել խոսքի, հավաքների և միավորումների ազատությունների կարգավորման շրջանակներում և տեսանկյունից: Այսպես, ուսումնասիրված գրեթե բոլոր երկրներում թույլատրվում է խաղաղ հավաքների անցկացումը, որը չի խախտի նաև այլոց իրավունքները: Հավաքների, միավորումների և խոսքի ազատության սահմանափակում է նախատեսում նաև

ՄԻԵԿ: Միևնույն ժամանակ, հաճախ իրենից մեծ բարդություն է ներկայացնում բռնի և ոչ բռնի միջոցների միջև տարանջատման անցկացումը: (Տե՛ս Մեջբերում 11 և Մեջբերում 12)

Քաղաքացիական անհնազանդության ոչ բռնի միջոցների կիրառման կարևորությամբ ՄԻԵԴ-ը ևս անդրադարձել է՝ ազատ արտահայտման իրավունքի վերաբերյալ գործի շրջանակներում:

Մեջբերում 11

Ռուսաստանի Դաշնություն

Թիվ 4q/8-6316/12 գործով 2012թ. օգոստոսի 16-ի վճռում Մոսկվայի Քաղաքային դատարանը, վկայակոչելով վերոնշյալ կանոնները, օրինաչափ է համարել Մոսկվայի իշխանությունների կողմից Մոսկվայում համասեռամուլների շքերթի անցկացման թույլտվության մերժումը, քանի որ «Ռուսաստանի օրենքներով սահմանված չէ, որ իշխանությունները պետք է անվերապահորեն անփոփոխ թողնեն հավաքի անցկացման ժամը և վայրը՝ առանց գնահատելու քաղաքացիների անվտանգության համար հնարավոր ռիսկերը և սպառնալիքները... Նման հավաքները կարող են առաջ բերել քաղաքացիների և Մոսկվայի հյուրերի, տարբեր կրոններ դավանողների բացասական արձագանքը, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել բողոքի ակցիաների և հասարակական կարգի զանգվածային խախտումների»:

Մեջբերում 12

Ռուսաստանի Դաշնություն

Մեկ այլ գործով որոշում կայացնելիս Մոսկվայի քաղաքային դատարանը դիտարկել է «Էսքվայր» ամսագրին տրված հարցազրույցի ժամանակ ռուսաստանյան ընդդիմության ակտիվիստ Ալեքսեյ Նավալնու հետևյալ հայտարարությունը. «Եթե Դուք անդամակցում եք «Միասնական Ռուսաստան» կուսակցությանը, ապա Դուք գող եք»: Դատարանը գտել է, որ «մտքի և խոսքի ազատությունը չի կարող վերածվել այլոց պատվի և արժանապատվության վարկաբեկման գործիքի»: Բողոքի իրավունքը վերջանում է անմիջապես այնտեղ, որտեղ սկսվում են այլոց իրավունքներն ու ազատությունները: Այլոց իրավունքների և ազատությունների նկատմամբ հարգանքը հանդիսանում է ակնհայտ անհրաժեշտություն, քանի որ հակառակ մոտեցումը կհակասեր բոլոր քաղաքացիների հավասարության հայեցակարգին (Սահմանադրության 19-րդ հոդվածի 2-րդ մաս): Այս դիրքորոշումն արտահայտված է Ռուսաստանի Սահմանադրական դատարանի և այլ դատարանների գերակշիռ գործելակերպում: Սահմանադրական դատարանի վերջերս կայացրած որոշմամբ, որով մերժվել է Նադեժդա Տոլոկոննիկովայի՝ Ռուսաստանի Քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածը (Խուլիգանություն) ազատ արտահայտվելու իրավունքին (Սահմանադրության 55-րդ հոդված) ոչ համապատասխան ճանաչելու մասին դիմումը, Դատարանը գտել է. «Եթե տեղեկատվության տարածման միջոցները նշված տարածման ժամանակի և վայրի տեսանկյունից հիմնված են որոշակի վայրերում, այդ թվում՝ կրոնի հետ կապված վայրերում, հասարակության կողմից ընդունված վարքի ընկալման նկատմամբ ցուցադրական և կոպիտ

արհամարհանքի վրա, բարոյագուրկ են կամ գուրկ արվեստագիտական արժեքներից, ապա Մահմանադրությամբ երաշխավորված ազատ արտահայտվելու իրավունքը նման գործողությունների վրա չի տարածվում»:

4. Քաղաքացիական անհնազանդության հիմնավորումը

Հերրոփ Ֆրիմենը առանձնացնում է քաղաքացիական անհնազանդության հիմնավորման երկու տեսություն: **Առաջինը** բխում է բնական իրավունքների տեսությունից, որը թույլ է տալիս բողոքարկել օրենքների ոչ իրավաչափ լինելը: Այսպես, երբ Սմերիկյան գաղութները հռչակեցին իրենց անկախությունը Անգլիայից, քանի որ «բոլորը ստեղծված են հավասար, օժտված են Արարչի կողմից որոշ անօտարելի իրավունքներով, որոնց թվում է կյանքի, ազատության և երջանկության ձգտումը», երբ Բարձրագույն դատարանը ճանաչում է խիղճը, որպես պարտավորություն, որը բարձր է քան Պետությունը, նրանք ապավինում են առավել բարձր իրավունքին, բնական արդարադատությանը, անձի հիմնարար իրավունքներին, որը չի կարող վերացնել որևէ քաղաքական ուժ: **Երկրորդ** տեսությունը, ըստ Ֆրիմենի, կայանում է նրանում, որ ոչ բռնի հեղափոխությունը գտնվում է իրավունքի շրջանակներում:⁵³

Ըստ Քիմբերլի Բրաունի, քաղաքացիական անհնազանդության, որպես միջոցի հիմնավորման, արդարացման համար պետք է հաշվի առնել քաղաքացիական անհնազանդ անձի կոնկրետ գործողությունը, և դրա հավանական հետևանքները, ինչպես նաև քաղաքացիական անհնազանդության մեջ ներգրավման շարժառիթները:

Քաղաքացիական անհնազանդի կողմից՝ միջոցների ընտրության ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել.

- գործողությունների անօրինականությունը,
- գործողությունների՝ որպես ծայրահեղ միջոց հանդիսանալը, կամ առաջին միջոց հանդիսանալը,
- այլ քաղաքացիական անհնազանդների հետ գործողությունների կոորդինացումը,
- հաջողության հավանականությունը,
- գործողությունների ուղղակիությունը կամ անուղղակիությունը և հնարավոր վնասը:

Քաղաքացիական անհնազանդ անձի շարժառիթները ներառում են, մասնավորապես.

- այդ խնդրի ուղղությամբ պայքարելու դրդապատճառները,
- նման միջոցով խնդրի լուծման ուղղությամբ պայքարելու միջոցները:

⁵³ Freeman, Harrop A. (1966) "The Right of Protest and Civil Disobedience," Indiana Law Journal: Vol. 41: Iss. 2, Article 3.

5. Պատասխանատվությունը

Հաշվի առնելով, որ քաղաքացիական անհնազանդության գործողությունները որպես կանոն ներառում կամ հանդիսանում են օրենքի խախտում, այս հարցի համատեքստում կարևորագույն հարց է հանդիսանում պատասխանատվության հիմնախնդիրը:

Ըստ Ն. Ֆրիմենի քաղաքացիական անհնազանդության համար պատասխանատվությունը պետք է լինի պայմանական: Գանդին պնդել է, որ քաղաքացիական անհնազանդ անձը պետք է պատրաստակամ լինի վճարել «տույժը»: Քաղաքացիական անհնազանդության բազմաթիվ տեսաբաններ գտնում են, որ այս պահանջը պարտադիր պայման է՝ նպատակներն «անարատ» պահելու համար: Սակայն Ն. Ֆրիմենը արդարացված չի համարում կիրառել ազատագրկման հետ կապված որևէ պատիժ կամ այնպիսի պատժատեսակ, որը առավել խիստ կլիներ քան այն դեպքերում, երբ օրինախախտումը կատարվեր է այլ դրդապատճառներով:⁵⁴

Ըստ այլ տեսաբանների ևս, պարզապես հանցագործություն կատարած անձինք ցանկություն չունեն բացահայտել իրենց կողմից կատարած արարքը, այն դեպքում, երբ քաղաքացիական անհնազանդ անձինք հակառակը՝ փորձում են բոլորին տեղյակ պահել կատարվածի մասին: Քաղաքացիական անհնազանդ անձինք նաև ձգտում են պատրաստակամ լինել կրել պատիժը, դրանով իսկ ցույց տալով, որ նրանք տարբերվում են սովորական իրավախախտներից:

Քաղաքացիական անհնազանդությունը անհրաժեշտ է նաև տարբերակել պարզապես իրավախախտումներից: Ժողովրդավարական հասարակություններում քաղաքացիական անհնազանդությունը, որպես այդպիսին հանցագործություն չէ: Այս տարբերակումը առավել կարևոր է նաև քաղաքացիական անհնազանդության համար պատասխանատվության տեսակները որոշելու նպատակից ելնելով: Եթե քաղաքացիական անհնազանդ անձը պատժվելու է օրենքի միջոցով, ապա դա արվում է ոչ թե քաղաքացիական անհնազանդություն ցուցաբերելու համար, այլ այն արարքի համար, որը ճանաչված է որպես խախտում՝ օրինակ գույքին վնաս հասցնելը:

Ք. Բրաունլին անդրադառնալով քաղաքացիական անհնազանդության ակտերի համար պատասխանատվության միջոցներին և չափերին, անդրադառնում է պատժի նպատակների երկու տեսություն:

1. Պատասխանատվության նպատակը հետագայում անձանց կողմից օրենքի խախտումից ետ պահելն է: Այս տեսություն տեսնակյունից անձին պետք նշանակել այնպիսի պատիժ, որը բավարար կլինի այդ նպատակին հասնելու համար: Ուստի, որոշ դեպքերում մի

⁵⁴ Freeman, Harrop A. (1966) "The Right of Protest and Civil Disobedience," Indiana Law Journal: Vol. 41: Iss. 2, Article 3.

© <http://www.repository.law.indiana.edu/ilj/vol41/iss2/3>

գուցե անհրաժեշտ կլինի նշանակել առավել ծանր պատժատեսակ, ի տարբերություն սովորական անձի կողմից նույն արարքը թույլ տալու դեպքերի:

2. Ի տարբերություն այս մոտեցման, սոցիալական արդարադատության տեսության կողմնակիցները կարծում են, որ քաղաքացիական անհնազանդին պետք է պատժել այն չափով, որքան որ նա արժանի է այդ պատժին:

Այսպիսով ձևավորված է երեք խումբ կարծիք քաղաքացիական անհնազանդ անձանց նկատմամբ պատասխանատվության կիրառման վերաբերյալ: Առաջին խումբը հակված է այն կարծիքի, որ քաղաքացիական անհնազանդների հանդեպ պետք է կիրառվի նույն պատիժը, որը կկիրառվեր այն դեպքում, եթե նրանք լինեին շարքային օրինախախտ: Ըստ երկրորդ խմբի՝ նրանց հանդեպ պետք է կիրառվի առավել խիստ պատիժ, քանի որ նրանց շարժառիթներն առավել խորն են, և դրանց դեմ պայքարելու համարժեք միջոցներ են անհրաժեշտ: Երրորդ խմբի կարծիքների համաձայն, քաղաքացիական անհնազանդների հանդեպ պետք է կիրառվի առավել մեղմ պատիժ, քանի որ նրանց գործողությունները բարոյապես արդարացված են (հիմնավոր են բարոյական տեսանկյունից): Այստեղ կարևոր է նշել, որ Ֆրանսիայի իրավակիրառ պրակտիկայում ճանաչվում է անհրաժեշտության առկայության (ֆրանս.՝ «état de nécessité») տեսությունը, որի համաձայն պաշտպանությունը պետք է համաչափ լինի սպառնալիքին (Տե՛ս Մեջբերում 13), իսկ Լեհաստանի դատարանը իր կողմից կայացված վճռում հղում է կատարել «nullum crimen sine periculo sociali» (հասարակության համար վտանգի բացակայության պայմաններում խոսք չի կարող լինել հանցագործության մասին) հռոմեական իրավունքի դրույթին (Տե՛ս Մեջբերում 14):

Մեջբերում 13

Ֆրանսիա

Այսպես Ֆրանսիական օրենսդրությամբ ամրագրված է, որ տվյալ անձին, որն է այլ անձի կամ գույքի սպառնացող առկա կամ մոտալուտ վտանգի պարագայում անձանց կամ գույքը պաշտպանելու նպատակով որևէ իրավախախտում կատարած անձը կարող է վկայակոչել անհրաժեշտության առկայության սկզբունքը.⁵⁵ Այդուհանդերձ, պաշտպանությունը պետք է համաչափ լինի սպառնալիքին: Այս սկզբունքը կիրառվում է այն պարագայում, երբ անձը ապօրինի արարք է գործում հանուն գերագույն շահի պաշտպանության:

Հաշվի առնելով նշված դրույթի հնարավոր հետևանքները՝ այն կարող է վկայակոչվել միայն որոշ պայմանների առկայության դեպքում: Առաջին, իրավախախտումը պետք է արդարացված լինի առկա կամ մոտալուտ վտանգից խուսափելու անհրաժեշտությամբ: Գերագույն դատարանի կարծիքով՝ էլեկտրաէներգիայի մատակարարման հարցում ընտանիքին օգնելը ենթադրում է անհրաժեշտության առկայություն.⁵⁶ Երկրորդ, անձը կարող է վկայակոչել այս դրույթը միայն այն դեպքում, եթե ինքը չի նպաստել տվյալ իրավիճակի առաջացմանը: Երրորդ, կատարված իրավախախտումը պետք է լինի նշված դրույթը վկայակոչող անձին վնասից պաշտպանելու միակ և նվազագույնս վտանգավոր լուծումը:

⁵⁵ Ըստ Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 122-7 հոդվածների [Հավելված 4. Քրեական օրենսգրքի 122-7 հոդվածներ [անգլերեն]]:
⁵⁶ Գերագույն դատարանի Քրեական պալատ, 1956թ. հունվարի 4 [Հավելված 5. Վճռաբեկ դատարանի Քրեական պալատ, 1956թ. հունվարի 4 [ֆրանսերեն]]:

Չորրորդ, պաշտպանվող շահը պետք է ավելի արժեքավոր կամ առնվազն համարժեք լինի իրավախախտման արդյունքում խախտված շահի համեմատ: Եվ վերջապես, կատարված իրավախախտումը չպետք է ուղղված լինի օրենքով թույլատրելի որևէ արարքի կանխմանը:

Հատկանշական է, որ նշված դրույթի կիրառման պարագայում իրավախախտները կարող են ենթարկվել միմիայն քաղաքացիական, այլ ոչ թե քրեական պատասխանատվության:

Այս դրույթը հազվադեպ է կիրառվում Ֆրանսիայի օրենսդրության մեջ: Այն վկայակոչելու դեպքերում Գերագույն դատարանը հավելել է նաև մեկ չափանիշ՝ բարոյականության գապող ուժը (բարոյական սահմանափակում, հոգեկան հարկադրանք) (ֆրանս.՝ «*contrainte morale*»): Գործնականում դատարանը ճանաչում է անհրաժեշտության առկայությունը միայն այն պարագայում, եթե կատարված արարքն անկանխատեսելի էր և անհաղթահարելի: Դատարանը միշտ նախընտրում է իրավիճակի խիստ վերահսկման տարբերակը, որը սահմանափակում է սույն դրույթի կիրառումը:

Մեջբերում 14

Լեհաստան

(գ) Գործ IV KK 220/03

Թիվ IV KK 220/03 գործով²⁴ 2004թ. մարտի 18-ին կայացրած վճռում Գերագույն դատարանը վերահաստատել է, որ «Համերաշխություն» շարժման մասնակիցների արարքները չպետք է քրեական հանցագործություն համարվեն: Թիվ IV KK 220/03 գործով մեղադրյալները 1982 թվականին դատապարտվել են հավաքներին ներկա գտնվելու համար, որոնց մասնակիցները քարերով և բուխ առարկաներով հարձակվել են Քաղաքացիական ոստիկանության ծառայողների վրա: Գերագույն դատարանը բեկանել է 1982 թվականի վճիռը՝ հղում կատարելով հռոմեական իրավունքի հետևյալ դրույթին՝ «*nullum crimen sine periculo sociali*» (հասարակության համար վտանգի բացակայության պայմաններում խոսք չի կարող լինել հանցագործության մասին):

²⁴ Թիվ IV KK 220/03 գործով Գերագույն դատարանի 2004թ. մարտի 18-ի վճիռ, OSNwSK 2004 nr 1, poz. 613, Legalis:

6. Ամփոփում

Այսպիսով բռնության և ճնշման դեմ ընդվզման իրավական կարգավորումները տարբեր երկրներում կրում են տարատեսակ բնույթ:

Որոշ երկրներում, ինչպիսին է Ֆրանսիան, և՛ օրենսդրության, օրինակ Սահմանադրության, մակարդակում է ճանաչվում, և՛ օրենսդրության կիրառման ընթացքում է պաշտպանվում անձի դիմադրելու, բողոքելու իրավունքը: Այլ երկրներում, չնայած այս իրավունքը ուղակիորեն սահմանված չէ իրավական ակտերով, սակայն ենթադրվում է և մեկնաբանվում է որպես իրավունք, որը բխում է անձի՝ անօտարելի մի շարք այլ իրավունքներից: Ըստ վերլուծաբանների, անձի դիմադրելու, բողոքելու իրավունքը բխում է անձի կողմից՝ Սահմանադրությունը և իրավունքները հարգելու, իրավունքները՝ որպես բարձրագույն արժեք դիտարկելու, Սահմանադրությունը՝ որպես բարձրագույն օրենք դիտարկելու սկզբունքից:

Ամեն դեպքում քաղաքացիական անհնազանդության իրավունքը սերտորեն փոխկապակցված է այնպիսի իրավունքների հետ, ինչպիսիք են անձի անձեռնմխելիության իրավունքը, անձնական կյանքի, խոսքի ազատությունը, հավաքների ազատությունը: Այս իրավունքների լիարժեք և անձի համար արդյունավետ իրացումը, որը չի հանգեցնի այլոց իրավունքների խախտմանը, նաև անհրաժեշտ է դիտարկել որպես քաղաքացիական անհնազանդության իրավունքի պաշտպանվածության սկզբունք:

Ուսումնասիրված 11 երկրների օրենսդրության և իրավակիրառ փորձի վերլուծությունը, որոնք ներկայացվել են մեր գործընկերների կողմից, թույլ է տալիս գալ այն եզրակացության, որ **յուրաքանչյուր երկրի պատմական զարգացման ենթատեքստը կարևոր ազդեցություն է թողել այդ երկրում քաղաքացիական անհնազանդության իրավունքի զարգացման և քաղաքացիական անհնազանդության որպես անձի իրավունքի ընկալման վրա:**

Մեր գործընկերների ներկայացված օրինակներից միայն մի շարք էվրոպական երկրների փորձն է վկայում այն մասին, որ քաղաքացիական անհնազանդությունը առնվազն որոշ չափով ընդունելի է եղել այդ երկրների դատական մարմինների կողմից և որոշ դեպքերում անձինք չեն ենթարկվել պատասխանատվության՝ ելնելով կատարված գործողությունների նպատակից և պատճառված վնասի ոչ էական չափերից (լավագույն օրինակը Լեհաստանն է):

Միջին ասիական երկրներից և նախկին ԱՊՀ տարածքի երկրների օրենսդրական վերլուծությունների արդյունքները թույլ են տալիս գալ այն եզրահանգման, որ այս երկրներում քաղաքացիական անհնազանդությունը որպես այդպիսին իր լայն իմաստով չի դիտարկվում և արժևորվում, իսկ քաղաքացիական անհնազանդության իմաստով դիտարկվում է օրինակ՝ միայն հավաքների ազատության իրավունքը և դրանից բխող իրավական կարգավորումները, ինչի արդյունքում քաղաքացիական անհնազանդությանն ուղղված գործողությունները չեն դիտարկվում իրենց ամբողջական համատեքստում:

Հրատարակություն *	2012			2013			2014			2015			Քաղաքացիական անհնազանդության ճանաչումը ⁵⁷
	2011			2012			2013			2014			
	ՔԻ ⁵⁸	ՔԱ ⁵⁹	Կարգավիճակ	ՔԻ	ՔԱ	Կարգավիճակ	ՔԻ	ՔԱ	Կարգավիճակ	ՔԻ	ՔԱ	Կարգավիճակ	
1. Հայաստան	6	4	ՄԱ ⁶⁰	5	4	ՄԱ	5	4	ՄԱ	5	4	ՄԱ	-
2. Ավստրալիա	1	1	Ա ⁶¹	1	1	Ա	1	1	Ա	1	1	Ա	-
3. Բելգիա	1	1	Ա	1	1	Ա	1	1	Ա	1	1	Ա	+
4. Չինաստան	7	6	ՈԱ ⁶²	7	6	ՈԱ	7	6	ՈԱ	7	6	ՈԱ	-
5. Ֆրանսիա	1	1	Ա	1	1	Ա	1	1	Ա	1	1	Ա	+
6. Գերմանիա	1	1	Ա	1	1	Ա	1	1	Ա	1	1	Ա	+
7. Ճապոնիա	1	2	Ա	1	2	Ա	1	1	Ա	1	1	Ա	-
8. Ղազախստան	6	5	ՈԱ	6	5	ՈԱ	6	5	ՈԱ	6	5	ՈԱ	-
9. Լեհաստան	1	1	Ա	1	1	Ա	1	1	Ա	1	1	Ա	+
10. Ռուսաստան	6	5	ՈԱ	6	5	ՈԱ	6	5	ՈԱ	6	6	ՈԱ	-
11. Թաիլանդ	4	4	ՄԱ	4	4	ՄԱ	4	4	ՄԱ	6	5	ՈԱ	-
12. Միացյալ Թագավորություն	1	1	Ա	1	1	Ա	1	1	Ա	1	1	Ա	+

Նկար 1.

Հետազոտության առարկա երկրներում քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների վիճակի աղյուսակ՝ ըստ Freedom House ցուցանիշի

⁵⁷ ՔԱ ճանաչումը՝ «+» է նշված այն երկրներին համապատասխան վանդակներում, որոնց վերաբերյալ ներկայացված վերլուծության մեջ նշվել է առնվազն մեկ օրինակ՝ օրենսդրական նորմ կամ դատական վճիռ (դատական գործ) որով ճանաչվել է քաղաքացիական անհնազանդությունը, որպես իրավունք:

⁵⁸ ՔԻ՝ Քաղաքական իրավունքները

⁵⁹ ՔԱ՝ Քաղաքացիական ազատություններ

⁶⁰ ՄԱ՝ Մասնակի Ազատ (PF)

⁶¹ Ա՝ Ազատ (F)

⁶² ՈԱ՝ Ոչ Ազատ (NF)

Հավելվածներ

Հավելված 1/ ՄԻԵԿ-ի / ՄԻԵԴ-ի և ԵՄ

Բողոքի արտահայտման և քաղաքացիական անհնազանդության իրավունքը կարգավորող իրավական դաշտ

I. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԵԿ-ի / ՄԻԵԴ-ի և ԵՄ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Այս բաժնում ամփոփվում է քաղաքացիական անհնազանդության իրավունքի վերլուծությունը (1) Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիային (այսուհետ՝ ՄԻԵԿ), Մարդու իրավունքների եվրոպական դատարանում (ՄԻԵԴ)՝ համապատասխան գործերով ձևավորված նախադեպային իրավունքին և (2) Եվրոպական միության (ԵՄ) օրենսդրությանը համապատասխան:

(1) ՄԻԵԿ / ՄԻԵԴ

Եվրոպայի խորհուրդը (ԵԽ) հանդիսանում է 47 եվրոպական երկիր («մասնակից պետություններ») միավորող միջկառավարական կազմակերպություն, որն օժտված է մի շարք հարցերով նվազագույն իրավական չափանիշներ սահմանելու ընդարձակ լիազորություններով: ԵԽ-ի առավել ուշագրավ ձեռքբերում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ ՄԻԵԿ):¹ ՄԻԵԿ-ը հանդիսանում է Եվրոպայում մարդու իրավունքների կայացմանն ուղղված իրավական ուժ ունեցող կարևորագույն վերագրային իրավական փաստաթուղթ, որը ստորագրվել է ԵԽ բոլոր անդամ պետությունների² կողմից և պարտադիր է նրանց համար միջազգային իրավունքի շրջանակներում:

Նախքան ՄԻԵԿ-ի դիտարկումը հարկավոր է անդրադառնալ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին, քանի որ այն հանդիսանում է ՄԻԵԿ-ով արձանագրված իրավունքների, այդ թվում, որոշ չափով, նաև քաղաքացիական անհնազանդության իրավունքի աղբյուրը:

¹Յան Բաշե. «ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» (2-րդ հրատարակություն, 2006թ.):

²Ներկայումս ԵԽ-ին անդամակցում են հետևյալ պետությունները՝ Բելգիա, Դանիա, Ֆրանսիա, Իռլանդիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Նիդերլանդներ, Նորվեգիա, Շվեդիա, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, Հունաստան, Թուրքիա, Իսլանդիա, Գերմանիա, Ավստրիա, Կիպրոս, Շվեյցարիա, Մալթա, Պորտուգալիա, Իսպանիա, Լիխտենշտեյն, Սան Մարինո, Ֆինլանդիա, Հունգարիա, Լեհաստան, Բուլղարիա, Էստոնիա, Լիտվա, Սլովենիա, Չեխիայի Հանրապետություն, Սլովակիա, Ռումինիա, Անդորրա, Լատվիա, Ալբանիա, Մոլդովա, Մակեդոնիա, Ուկրաինա, Ռուսաստան, Խորվաթիա, Վրաստան, Հայաստան, Ադրբեջան, Բոսնիա և Հերցեգովինա, Սերբիա, Մոնակո, Մոնտենեգրո:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր

1948թ. դեկտեմբերի 10-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան Փարիզում հայտարարել է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր ընդունելու մասին՝ համարելով այն բոլոր ժողովուրդների և բոլոր ազգերի ձեռքբերումների միասնական չափանիշ: Հռչակագրով առաջին անգամ ամրագրվեցին համակողմանիորեն պաշտպանված լինելու մարդու հիմնարար իրավունքները: Թեև Հռչակագիրը պարտադիր պայմանագիր չի հանդիսանում, այն, թերևս, միջազգային սովորույթային իրավունքի մաս է կազմում և հիմք է ծառայել բազում (պարտադիր) միջազգային փաստաթղթերի, օրինակ՝ ՄԻԵԿ-ի համար:

Քաղաքացիական անհնազանդության իրավունքը (ընդվզելու և ապստամբելու իրավունք) որպես այդպիսին ճանաչվում է Հռչակագրի Նախաբանի 3-րդ պարբերության մեջ.

«Քանզի անհրաժեշտ է օրենքի իշխանությամբ պաշտպանել մարդու իրավունքները, որպեսզի նա, որպես վերջին միջոց՝ հարկադրված չընդվզի բռնակալության ու ճնշման դեմ»:

Հարկավոր է նշել, որ ընդվզելու և ապստամբելու իրավունքը նշվում է ոչ թե բուն հռչակագրում, այլ՝ Նախաբանում: Որպես այդպիսին՝ նշված իրավունքն ինքնուրույն չէ, այլ ավելի շուտ հանդիսանում է հենց Հռչակագրում ամրագրված մարդու իրավունքները մեկնաբանելու համար նախատեսված սկզբունք:

ՄԻԵԿ

ՄԻԵԿ-ում, որի նախաբանում վկայակոչվում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որևէ հղում չի կատարվում որպես այդպիսին քաղաքացիական անհնազանդության իրավունքին:

Այդուհանդերձ, ՄԻԵԿ-ով երաշխավորվում է ազատ արտահայտվելու և միավորումների կազմելու իրավունքները, որոնք էական նշանակություն ունեն քաղաքացիական անհնազանդության ցանկացած դրսևորման համար:

ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածով սահմանվում է խոսքի ազատության իրավունքը.

(1) *«Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում*

պետություններին՝ սահմանել ռադիոհաղորդումների,
հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական
ձեռնարկությունների արտոնագրում»:

(2) «Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական պետությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես նաև այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

ՄԻԵԿ-ի 11-րդ հոդվածով սահմանվում է միավորումների ազատության իրավունքը.

(1) «Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորումներ կազմելու ազատության իրավունք, ներառյալ՝ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը»:

(2) «Այս իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակումների, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական պետությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակական անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը և այլ անձանց իրավունքները և ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչընդոտում զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի ներկայացուցիչների կողմից այդ իրավունքների

իրացման նկատմամբ սահմանափակումների ամրագրմանը»:

10-րդ և 11-րդ հոդվածներով ամրագրված են վերապահումներով իրավունքներ, ինչը նշանակում է, որ անդամ պետության միջամտությունն իրավունքի իրացմանը կարող է արդարացվել որոշակի հանգամանքներում:³ Այն դեպքերում, եթե իրավունքների խախտումն արդարացված է, ՄԻԵԿ-ը չի խախտվում:

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունք

ՄԻԵԴ-ը հանդիսանում է ՄԻԵԿ-ի շրջանակներում հիմնված միջազգային դատարան և ՄԻԵԿ-ով նախատեսված իրավունքների իրացման համար պատասխանատու հիմնական հաստատությունը: ՄԻԵԴ-ի վերջնական վճիռներն իրավաբանական ուժ ունեն և պարտադիր են անդամ պետությունների համար, որոնք միջազգային իրավունքի շրջանակներում պարտավոր են իրագործել այդ վճիռները: Շատ դեպքերում ՄԻԵԴ-ի վճիռների իրագործման համար կարող է առաջանալ պետական օրենսդրությունը փոփոխելու անհրաժեշտություն՝ ՄԻԵԿ-ին այն համապատասխանեցնելու համար:⁴ ԵԽ-ն հստակեցրել է, որ ՄԻԵԴ-ը չի փոխարինում ազգային դատարաններին և ԵՄ անդամ հանդիսացող երկրների՝ մարդու իրավունքների ենթադրյալ խախտումների մասին փաստող քաղաքացիները պետք է նախ սպառեն ներպետական իրավական պաշտպանության միջոցները, և հետո միայն նրանց գործը կարող է ընդունվել ՄԻԵԴ-ի կողմից:⁵

ա) Բռնության, զինված դիմադրության կամ ապստամբության հրահրման բացառում

«Գերզերն ընդդեմ Թուրքիայի» գործով⁶ կայացրած վճռում ՄԻԵԴ-ը նախանշել է խոսքի ազատության սահմանները՝ շեշտադրելով «բռնության», «զինված դիմադրության» կամ «ապստամբության» հրահրման արգելքը:

«Բացի այդ, Դատարանը գտնում է, որ դիմումատուի ուղերձն ընթերցվել է հիշատակի արարողությանը ներկա միայն մի խումբ մարդկանց համար, ինչը զգալիորեն սահմանափակել է «ազգային անվտանգության», «հասարակական կարգի» կամ «տարածքային ամբողջականության» վրա դրա հնարավոր ազդեցությունը: Ի լրումն վերոնշյալի՝ թեև նշված ուղերձը պարունակել է հետևյալ բառերը՝

³ «Parti Nationaliste Basque-Organization Regionale D'Iparralde» ընդդեմ Ֆրանսիայի» գործ, թիվ 71251/01 հայցադիմում, 2007թ. հունիսի 7:

⁴ Դեմիեն Չելվերս. «Եվրոպական միության իրավունք» (2-րդ հրատարակություն, 2010թ.):

⁵ Յան Բաշե. «Եվրոպական Միության Միության ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» (2-րդ հրատարակություն, 2006թ.):

⁶ «Գերզերն ընդդեմ Թուրքիայի» գործ, թիվ 24919/94 հայցադիմում, 1999թ. հունիսի 8, կետ 50:

«դիմադրություն», «պայքար» և «ազատագրում», այն չի հանդիսացել բռնության կամ ընդվզման հրահրում. ՄԻԵԴ-ի կարծիքով՝ հարկավոր է հաշվի առնել այդ կարևոր հանգամանքը»:

բ) Անհարմարություն պատճառելն ընդունելի է:

10-րդ և 11-րդ հոդվածներով ամրագրված իրավունքների նկատմամբ կարող են կիրառվել միայն ժողովրդավարական պետությունում անհրաժեշտ և օրենքով սահմանված սահմանափակումները: Թեև սահմանափակումների պայմանները տարբերվում են իրենց բնորոշ առանձնահատկություններով, դրանց հիմքում ընկած է համապարփակ հանրային շահերի պաշտպանությունը, օրինակ՝ ազգային անվտանգությունը կամ այլոց մրցակից իրավունքները: ՄԻԵԴ-ի պահանջներին համապատասխան՝ ՄԻԵԿ-ով նախատեսված իրավունքների սահմանափակման ուղղությամբ ցանկացած մասնակից պետության գործադրած միջոցները պետք է անհրաժեշտ լինեն տվյալ իրավիճակում և համապատասխանեն հետապնդվող նպատակին:⁷

Հատկանշական է, որ ՄԻԵԴ-ն ընդունելի է համարել բողոք արտահայտելու նպատակով հավաքների ժամանակ որոշ աստիճանի անհարմարություն պատճառելը՝ նշելով հետևյալը.

«...Կոնվենցիայի 11-րդ հոդվածում ամրագրված հավաքների ազատության իրավունքով պաշտպանվում են բողոքի այնպիսի դրսևորումներ, որոնք կարող են անհարմարություն կամ վիրավորանք պատճառել այն անձանց, ովքեր դեմ են բողոքի միջոցով բարձրաձայնված գաղափարներին կամ պնդումներին»:⁸

գ) Մասնակից պետությունների վրա դնել խաղաղ հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու դրական պարտավորություն

«Բոչկովսկին և այլք ընդդեմ Լեհաստանի» գործով⁹ դիմումատուներին, ովքեր հանդիսացել են ի թիվս այլոց սեռական կողմնորոշման հիմքով խտրականության դեմ պայքարում ակտիվ գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ներ) անդամներ, մերժել են տրամադրել հավաք անցկացնելու թույլտվություն: Այդուհանդերձ, ցույցերն ի վերջո կայացել են նախանշված ամսաթվերին: ՄԻԵԴ-ը նշել է, որ հավաքներն անցկացվել են առանց օրինականության կանխավարկածի, որը հանդիսանում է հավաքների ազատության

⁷ «Արսլանն ընդդեմ Թուրքիայի» գործ, թիվ 23462/94 հայցադիմում, 1999թ. հուլիսի 8, կետ 46:

⁸ «Ստանկովն ընդդեմ Բուլղարիայի» գործ, հայցադիմումներ թիվ 29221/95 և 29225/95, 2001թ. հոկտեմբերի 2, կետ 86:

⁹ Հայցադիմում թիվ 1543/06, 2007թ. մայիսի 3, կետ 67:

արդյունավետ և անխափան իրացման կենսական կողմերից մեկը: (Eng. However, the ECtHR noted that the assemblies were held without a presumption of legality, such a presumption constituting a vital aspect of effective and unhindered exercise of freedom of assembly.)⁶³ ՄԻԵԴ-ը նկատել է նաև, որ նման թույլտվության մերժումը կարող էր բացասական ազդեցություն գործել հավաքների մասնակիցների վրա:

(3) ԵՄ ԻՐԱՎՈՒՆՔ

Եվրոպական Միությունն իրենից ներկայացնում է ինչպես քաղաքական նախագիծ, այնպես էլ 28 պետություն¹⁰ միավորող իրավական կազմակերպության ձև: Այդ պետությունները հանդիսանում են ԵՄ պայմանագրերի մասնակից պետություններ՝ դրանով իսկ օգտվելով ԵՄ անդամակցությունից բխող արտոնություններից և ստանձնելով համապատասխան պարտավորություններ:¹¹ Ի տարբերություն որևէ միջազգային կազմակերպության (օրինակ՝ ՄԱԿ կամ ԵԽ) անդամակցելուց՝ ԵՄ-ին անդամակցող երկրներից յուրաքանչյուրը ԵՄ-ի օրենսդիր և դատական հաստատություններում իրենց ներկայացուցչության դիմաց ստանձնում են որոշակի օրենքներ պարտադիր կատարելու պարտականություն:¹² Այսպիսով, ԵՄ-ին անդամակցության թեկնածու պետություններից յուրաքանչյուրը պետք է ԵՄ-ի չափանիշներին համապատասխանեցնի իր ներպետական օրենսդրությունը և քաղաքականությունը:

Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիա

2009 թվականին ԵՄ-ն շրջանառության մեջ է դրել միավորումներ կազմելու ազատության իրավունքին առնչվող հատուկ իրավական պարտավորություն: Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիայի (Խարտիա) շնորհիվ միավորումներ կազմելու ազատության իրավունքն անմիջականորեն կիրառելի է դառնում ԵՄ հաստատությունների և մարմինների համար: Խարտիան իրավական ուժով կիրառելի է միայն այն հաստատություններում և առանձին երկրներում, որտեղ գործում է ԵՄ օրենսդրությունը (օրինակ՝ կանոնակարգեր և հանձնարարականներ):¹³ Խարտիայով սահմանված Եվրամիության իրավասությունները չեն գերազանցում պայմանագրերով արդեն իսկ սահմանված իրավասությունները: Խարտիայի 12-րդ հոդվածի համաձայն.

«Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և

⁶³ Տեքստի անգլերեն տարբերակը՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի լրացում:

¹⁰ Բելգիա, Դանիա, Ֆրանսիա, Իռլանդիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Նիդերլանդներ, Շվեդիա, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ թագավորություն, Հունաստան, Գերմանիա, Ավստրիա, Կիպրոս, Մալթա, Պորտուգալիա, Իսպանիա, Ֆինլանդիա, Հունգարիա, Լեհաստան, Բուլղարիա, Էստոնիա, Լիտվա, Սլովենիա, Չեխիայի Հանրապետություն, Սլովակիա, Ռումինիա, Լատվիա և Խորվաթիա:

¹¹ Դեմիեն Չելմերս. «Եվրոպական միության իրավունք» (2-րդ հրատարակություն, 2010թ.):

¹² ԵՄ-ին անդամակցելու նախապայմանն է, որ թեկնածու պետություններն անդամակցեն նաև ԵՄ-ին և վավերացնեն ՄԻԵԿ-ը:

¹³ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունը, Լեհաստանը և Չեխիայի Հանրապետությունը հրաժարվել են Խարտիայի կիրառումից:

միավորումներ կազմելու ազատության իրավունք բոլոր մակարդակներում, մասնավորապես՝ քաղաքական, արհմիութենական և քաղաքացիական հարցերի առնչությամբ, ինչից ենթադրվում է, որ յուրաքանչյուրի ոք ունի իր շահերի պաշտպանության նպատակով արհմիություններ կազմելու և դրանց միանալու իրավունք»:

Խարտիայի 12-րդ հոդվածի իմաստը համընկնում է ՄԻԵԿ-ի իմաստի հետ: Ըստ Խարտիայի 52-րդ հոդվածի 3-րդ կետի՝ նշված իրավունքի սահմանափակումները չեն կարող գերազանցել ՄԻԵԿ-ի 11-րդ հոդվածի 2-րդ կետով օրինական համարվող սահմանափակումները: Խարտիայի նպատակը ոչ թե Եվրոպայում մարդու իրավունքների պաշտպանության կրկնակի համակարգի ստեղծումն է, այլ այդ համակարգի փոխլրացումը՝ ԵՄ-ում իրավունքների հստակ տեսանելիությունը և բացարձակ իրավական որոշակիությունն ապահովելու միջոցով: Բացի այդ, ՄԻԵԿ-ի համեմատությամբ՝ Խարտիայի շրջանակն ավելի ընդլայնված է, քանի որ այն կարգավորում է նաև սոցիալական և տնտեսական իրավունքները: Ի լրումն վերոնշյալի՝ Խարտիայի II-112 (3) և 113-րդ հոդվածների համաձայն՝ ՄԻԵԿ-ը և ՄԻԵԿ-ի նախադեպային իրավունքը հանդիսանում են ԵՄ-ի հիմնարար իրավունքների մեկնաբանության նվազագույն չափանիշը: ԵՄ օրենսդրության շրջանակում դիտարկվող գործերը քննելիս ԵՄ-ի դատարանները և առանձին պետությունների ազգային դատարանները պետք է հաշվի առնեն խարտիայի դրույթները:

Եվրոպական խորհրդարան

1991 թ. օգոստոսի և հոկտեմբերի Մադագասկարի ջարդերը և քաղաքացիների ցույցերի դեմ ուղղված կառավարության գործողությունները դատապարտող բանաձև ընդունելով՝ Եվրոպական խորհրդարանն անուղղակիորեն ճանաչել է քաղաքացիական անհնազանդության իրավունքը:

«Քանզի քաղաքացիական ծառայողների գործադուլը, շարունակական բնույթ կրող քաղաքացիական անհնազանդության արշավը և խաղաղ դիմադրությունը խոսում են Մադագասկարի բնակչության ուժեղ կամքի մասին...»¹⁴

Հաշվի առնելով Միացյալ Նահանգներում 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական հարձակումներից հետո եվրոպական հակաահաբեկչական միջոցառումները՝ Եվրոպական խորհրդարանը ընդունել է բանաձև, որտեղ մասնավորապես նշվում է

¹⁴ Եվրոպական խորհրդարանի Բանաձև Մադագասկարի իրավիճակի վերաբերյալ, OJ C 326/181, 16.12.91:

«Քանզի անդամ պետություններից ոչ մեկը չպետք է հակահարկչական օրենսդրությունը կիրառի կազմակերպությունների և շարժումների ներքո կառավարության քաղաքականությունը խաղաղ ճանապարհով վիճարկող կամ սոցիալական ընդդիմություն կամ քաղաքացիական անհնազանդություն դրսևորող անձանց իրավունքները վերացնելու կամ սահմանափակելու համար»:

Եզրակացություն

Քաղաքացիական անհնազանդության իրավունքը ճանաչվել է ՄԻԵԿ-ի շրջանակներում թեև ոչ որպես առանձին իրավունք, այլ ավելի շուտ՝ որպես խոսքի ազատության և միավորումներ կազմելու ու հավաքների ազատության իրավունքները մեկնաբանելու գործիք: ՄԻԵԿ-ի նախադեպային իրավունքով պահանջվում է, որ նշված ազատությունների իրացումը չհանգեցնի բռնության, զինված դիմադրության կամ ընդվզման հրահրմանը՝ ընդունելով, որ հավաքների ազատության իրավունքը կարող է առաջ բերել որոշ աստիճանի անհարմարություն: Միաժամանակ անդամ պետությունները ստանձնում են հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու դրական պարտականությունը:

ԵՄ-ի համատեքստում ԵՄ հիմնարար ազատությունների խարտիան երաշխավորում է միավորումներ կազմելու ազատության իրավունքը: Նշված իրավունքի շրջանակներն ու սահմանափակումները մեկնաբանվում են ՄԻԵԿ-ի վերոնշյալ նախադեպային իրավունքին համապատասխան: Եվրոպական խորհրդարանի կողմից արված շատ սահավաթիվ հղումներից բացի՝ ԵՄ-ի հաստատությունները չեն ընդունել քաղաքացիական անհնազանդության իրավունքը հաստատող օրենսդրական կամ որևէ այլ իրավական փաստաթուղթ:

II. ՀՐԱՁԵՆ ԿՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՄ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

ԵՄ օրենսդրության առաջնային մակարդակով՝ ո՛չ Եվրոպական միության պայմանագրով, ո՛չ էլ ԵՄ-ի գործունեության մասին պայմանագրով ամրագրված չէ ԵՄ-ի քաղաքացիների՝ հրազեն կրելու իրավունքը:¹⁶ Նման իրավունքի առկայությունն

¹⁵ Եվրոպական խորհրդարանի Բանաձև 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո ԵՄ հակահարկչական ռազմավարության գնահատման և հեռանկարների վերաբերյալ, OJ C 300 E/608, 11.12.2003:

¹⁶ O.J. 2012 C 326/13 պայմանագրի ամփոփ տարբերակը՝ <http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:2012:326:0013:0046:EN:PDF>; Consolidated Version of the TFEU, O.J. 2012 C 327/47, <http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:2012:326:0047:0200:EN:PDF>

ինքնին պետք է կարգավորվի անդամ պետությունների տարբեր իրավական համակարգերով, որոնք առաջին հերթին պատասխանատու են ներքին անվտանգության և հասարակության կարգի պահպանության համար:

ԵՄ օրենսդրության երկրորդական մակարդակով՝ ֆիզիկական անձանց կողմից զենք և առնչվող նյութեր ձեռք բերելու և պահելու հետ կապված հարցերը հիմնականում կարգավորվում են թիվ 91/477/EEC հանձնարարականով¹⁷ (թիվ 2008/51/EC լրամշակված հանձնարարական):¹⁸ Նման հանձնարարականների նպատակն է ապահովել հրազեն ձեռքբերելու և պահելու հետ կապված հարցերի վերահսկողությունը, խթանել միասնական շուկայում հրազենի հոսքը և ԵՄ-ի օրենսդրության մեջ ներառել Հրազենի ապօրինի արտադրության և շրջանառության մասին ՄԱԿ-ի արձանագրության դրույթները: ԵՄ-ի վերոնշյալ հանձնարարականներից երկուսում էլ ներկայացվում են նվազագույն պահանջներ. այսպիսով, ԵՄ անդամ պետություններն ազատ են հրազեն ձեռք բերելու և պահելու հետ կապված ավելի խիստ կանոններ սահմանելու գործում:

ԵՄ անդամ պետություններում հրազեն ձեռք բերելու և պահելու իրավունք ունեն միայն դրա համար «հիմնավոր պատճառ» ունեցող անձինք, ովքեր բավարարում են հետևյալ երկու լրացուցիչ պահանջները (ազգային մակարդակով կարող են առաջադրվել ավելի խիստ պահանջներ կամ այլ պահանջներ):¹⁹

- առնվազն 18 տարին լրացած քաղաքացիներ, բացառությամբ՝ որսորդության և թիրախային կրակելու մարզաձևի նպատակներով հրազեն ձեռք բերելու և պահելու դեպքերի,

- քաղաքացիներ, ովքեր ամենայն հավանականությամբ չեն կարող վնաս հասցնել իրենց, հասարակական կարգին կամ հասարակական անվտանգությանը:

Վերոնշյալ հանձնարարականներով որպես այդպիսին չեն ամրագրվում ո՛չ հրազեն կրելու և գործածելու իրավունքը, ո՛չ էլ հրազենի գործածման օրինական դեպքերը (օրինակ՝ քաղաքացիական անհնազանդություն, ինքնապաշտպանություն, որսորդություն կամ կրակելու մարզաձև):

ԵՄ օրենսդրությամբ ամրագրված չէ ԵՄ-ի քաղաքացիների՝ հրազեն կրելու կամ գործածելու որևէ իրավունք: Նման իրավունքի և դրա իրացման պայմանների սահմանումը թողնվել է ԵՄ-ի յուրաքանչյուր անդամ պետության հայեցողությանը:

¹⁷ 1991թ. հունիսի 18-ի Խորհրդի թիվ 91/477/EEC հանձնարարական Ձենք ձեռք բերելու և պահելու նկատմամբ վերահսկողության վերաբերյալ, 1991 O.J. (L 256) 51, <http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=CELEX:31991L0477:en:HTML>

¹⁸ Ձենք ձեռքբերելու և պահելու նկատմամբ վերահսկողության վերաբերյալ թիվ 91/477/EEC 2008 O.J. (L 179) 5 հանձնարարականը լրացնելու վերաբերյալ Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի 2008թ. մայիսի 21-ի թիվ 2008/51/EC հանձնարարական, <http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2008:179:0005:0011:en:PDF>

¹⁹ Թիվ 2008/51/EC հանձնարարականի 1-ին հոդվածի 4-րդ կետ (թիվ 91/477/EEC հանձնարարականի 5-րդ հոդվածի լրացմամբ):

Հավելված 2/Բելգիա

Քաղաքացիական անհնազանդությունը Բելգիայի օրենսդրության շրջանակներում

2014թ. սեպտեմբերի 25

Սույն աշխատության նպատակն է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակին (ՀՔԱՎ) տեղեկատվություն տրամադրել Բելգիայի օրենսդրության շրջանակներում քաղաքացիական անհնազանդության հասկացության և այն կարգավորող իրավական դաշտի վերաբերյալ:

Մենք գիտակցում ենք, որ սույն աշխատության մեջ ամփոփված տեղեկությունները կծառայեն բազմակի նպատակների իրագործմանը, այդ թվում՝ խնդրո առարկա հարցի շուրջ օրենսդրության համեմատական ուսումնասիրության հրապարակմանը և, հավանաբար, նաև Հայաստանում ընթացող քրեական դատավարության շրջանակներում Շանթ Հարությունյանի (ում շահերը ներկայացնում է ՀՔԱՎ-ը) պաշտպանությանը:

Այդ կապակցությամբ ՀՔԱՎ-ը խնդրել է մեզ պատասխանել հետևյալ հարցերին.

1. Քաղաքացիական անհնազանդության ինչպիսի՞ դրսևորումներ են ճանաչվում Բելգիայի օրենսդրությամբ (Սահմանադրությամբ և այլ օրենքներով): Ինչպե՞ս են նման դրսևորումները դիտարկվում նշված պետության օրենսդրության շրջանակներում:

2. Ճնշումներից և բռնապետությունից պաշտպանության սահմանադրական երաշխիքներ. ո՞րն է բողոքի խաղաղ ու բռնի ձևերի սահմանագիծը: Սահմանադրությամբ ամրագրված է արդյո՞ք բռնություն գործադրելու իրավունքը, և եթե այո՞, ապա ինչպե՞ս է այն կարգավորվում:

3. Արդյո՞ք Սահմանադրությամբ կամ օրենքներով ճանաչվում է ապստամբելու իրավունքը, եթե տվյալ պետության կառավարությունը վերածվում է բռնապետության կամ ճնշումներ է գործադրում:

4. Ե՞րբ կարելի է խոսել բռնապետության և/կամ ճնշումների մասին: Ո՞րն է սահմանագիծը:

5. Քաղաքացիական անհնազանդության ո՞ր միջոցները կամ ձևերն են ընդունելի այն պարագայում, երբ փորձ է արվում փոխել սահմանադրական կարգը:

6. Ըստ համապատասխան օրենսդրության՝ ի՞նչ է իրենից ներկայացնում ժողովրդավարական երկրի սահմանադրական կարգը:

7. Եթե Սահմանադրությամբ նախատեսված են կառավարության՝ բռնապետության կամ ավտորիտար պետության վերածումը կանխելու համար անհրաժեշտ կառուցակարգերը (մեխանիզմները), ապա ինչպիսի՞ միջոցներ են ամրագրված Սահմանադրությամբ: Արդյո՞ք քաղաքացիական անհնազանդությունը որպես այդպիսին ընդունելի միջոց է, թե ոչ:

8. Արդյո՞ք անձինք իրավունք ունեն ունենալու, պահելու և գործածելու հրագեն և օգտագործելու այլ տեսակի զենք կամ այլ միջոցներ:

Մտորն հերթով անդրադառնում ենք այս հարցերին:

I. **Բողոքի դրսևորումները և քաղաքացիական անհնազանդությունը կարգավորող իրավական դաշտ. քաղաքացիական անհնազանդության ինչպիսի՞ դրսևորումներ են ճանաչվում Բելգիայի օրենսդրությամբ (Սահմանադրությամբ և այլ օրենքներով): Ինչպե՞ս են նման դրսևորումները դիտարկվում նշված պետության օրենսդրության շրջանակներում:**

Թեև քաղաքացիական անհնազանդությունը (Ա) հստակ չի ճանաչվում Բելգիայի օրենսդրությամբ, սակայն ճանաչվում են քաղաքացիական անհնազանդությանը հարակից այլ իրավական հասկացությունները (Բ):

Ա. Քաղաքացիական անհնազանդությունը կարգավորող իրավական դաշտ

Բելգիայում գիտական տեսանկյունից քաղաքացիական անհնազանդությունը սահմանվում է որպես. (i) օրենքի միտումնավոր և գիտակցված խախտում, որն ուղղված է որոշակի օրենքի փոփոխմանը, սակայն հարցականի տակ չի դնում ամբողջ իրավական կամ քաղաքական վարչակարգը,¹ (ii) կառավարության դեմ ուղղված անհնազանդության հրապարակային գործողություն, (iii) հավաքական՝ կոլեկտիվ գործողություն, որը բխում է ոչ թե անհատական կարծիքից, այլ խմբային որոշումից և (iv) խաղաղ գործողություն, որի ընթացքում չի բացառվում ուժի կամ բռնության գործադրումը:²

Քաղաքացիական անհնազանդությունը որպես իրավունք ամրագրված չէ Բելգիայի օրենսդրությամբ:³ Միևնույն ժամանակ այն իրավախախտում չի համարվում Բելգիայի քրեական օրենսգրքով: Փոխարենը, այս հասկացությունն արմատացած է արդարադատությունից, հավասարության կամ հիմնարար իրավունքներից բխող «գերադաս սկզբունքներում»:⁴

Բելգիայում պաշտպանվում է սահմանադրությամբ ճանաչված հիմնարար իրավունքների վրա խարսխված վարքագիծը (օրինակ՝ ազատ արտահայտվելու իրավունք (Հոդված 19), մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունք (Հոդված 22), մարդկային

¹ Օ. ԴԵ ՇՈՒԹԹԵԼ. «Désobéissance civile et cause significative en justice», in PERROUTY, P.-A. (éd.), *Obéir et désobéir: le citoyen face à la loi*, Բրյուսելի ազատ համալսարանի հրատարակություն, 2000թ., 97:

² Ֆ. ՕՍԹ. «La désobéissance civile: jalons pour un débat», in PERROUTY, P.-A. (éd.), *Obéir et désobéir: Le citoyen face à la loi*, Բրյուսելի ազատ համալսարանի հրատարակություն, 2000թ., 16-19:

³ Ա. ԼԵԴՈՅ. «Séance solennelle de rentrée du 23 janvier 2009- Antigone, mon pere», J.T., 2009, 56:

⁴ Օ. ԴԵ ՇՈՒԹԹԵԼ. «Désobéissance civile et cause significative en justice», in PERROUTY, P.-A. (éd.), *Obéir et désobéir: le citoyen face à la loi*, Բրյուսելի ազատ համալսարանի հրատարակություն, 2000թ., 97:

արժանապատվության իրավունք (Հոդված 23), խոսքի ազատության իրավունք (Հոդված 25) և հավաքների ազատության իրավունք (Հոդված 26):⁵

Բացի այդ, Եվրոպական սոցիալական խարտիայի⁶ 6-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված է գործադուլի իրավունքը, որը կիրառելի է Բելգիայում⁷ և Բելգիայի Գերագույն դատարանի (Վճռաբեկ դատարան) կողմից ճանաչվում է որպես հիմնարար իրավունք:⁸ Ավելին, Բելգիայում այդ իրավունքի իրացումը երաշխավորվում է ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 8-րդ հոդվածի 1-ին կետով, Աշխատավորների հիմնարար սոցիալական իրավունքների եվրոպական համայնքի խարտիայի 13-րդ կետով, Հիմնարար իրավունքների եվրոպական խարտիայի 28-րդ հոդվածով և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԴ) 11-րդ հոդվածով:⁹

Թեև նշված իրավունքները համարվում են հիմնարար իրավունքներ, դրանք ենթակա են սահմանափակումների: Նախ, այդ իրավունքների իրացումը չպետք է խախտի գործող օրենքները: Երկրորդ, այդ իրավունքների իրացումը չի կարող խախտել հասարակական կարգը,¹⁰ որի ենթադրում է որոշակի ժամանակահատվածում հասարակության կողմից ճանաչված արժեքների պաշտպանությունը:¹¹ Հետևաբար, պետական մարմինները կարող են սահմանափակել այդ հիմնարար իրավունքները միայն այնպիսի ընդհանուր շահերը և իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու համար:¹² Այդ նպատակով պետական մարմինների ձեռնարկած միջոցառումները պետք է համաչափ լինեն օրենսդիրի կողմից հետապնդվող նպատակին, լինեն ժամանակավոր և կիրառվեն միայն այն դեպքում, երբ դրանք հանդիսանում են իշխանությունների՝ հասարակական կարգը պահպանելու միակ հնարավորությունը:¹³

Թեև քաղաքացիական անհնազանդությունը Բելգիայի օրենսդրությամբ հստակ չի ճանաչվում, որոշ դատավորներ անդրադարձել են այդ սկզբունքին նախադեպային իրավունքի շրջանակներում: Այդուհանդերձ, վերջերս արձանագրված գործերով քաղաքացիական անհնազանդության վերաբերյալ Բելգիայի դատարանների դիրքորոշումը շարունակում է մնալ չհստակեցված:

Վերջերս Բելգիայի Սահմանադրական դատարան (Սահմանադրական դատարան) են դիմել իսլամ դավանող կանայք հանրային վայրերում գլխաշոր կրելն արգելող (քրեական պատժամիջոցի սպառնալիքով) 2011թ. հունիսի 1-ի օրենքի («Գլխաշորի մասին օրենք») սահմանադրականությունը որոշելու խնդրանքով:¹⁴ Դատարան դիմած կանայք հայց են

⁵ Մ. ՖԱԼԶՈՆԻ ԹԵԼԼՍ. «Un droit à la désobéissance civile? Quelles conséquences juridiques?», R.I.E.J., 2000, liv. 45, 98:

⁶ 1990թ. հուլիսի 11-ի օրենք, M.B., 1990թ. դեկտեմբերի 28:

⁷ Սահմանադրական դատարան, 1993թ. հուլիսի 15, J.T., 1993, 820:

⁸ Cass., 21 décembre 1981, Pas., 1982, I, 531:

⁹ N. BEAUFILS, 'Droit de grève en bref : principes de base et nouvelles tendances', J.T.T., 2010, nr. 1063, 130:

¹⁰ C.E., 4 mai 2014, J.L.M.B., 2014, Liv. 25, 1212-1214:

¹¹ B. MOUFFE, 'Entre ordre et désordre. L'ordre public, censure du droit à la liberté d'expression?', *Ann. dr. Louv.*, 2011, liv. 2, 147:

¹² G. NINANE, 'Le débat sur la nécessité des restrictions au droit à l'expression dans une société plurielle' (note sous C.Const. 6 décembre 2012), *J.L.M.B.*, 2013, liv. 11, 648:

¹³ G. NINANE, 'Une police administrative des spectacles ligotée par le droit fondamental à la liberté d'expression' (note sous C.E. 23 mars 2009, *J.L.M.B.*, 2009, liv. 20, 946:

ներկայացրել «Գլխաշորի մասին օրենքը» կասեցնելու և չեղյալ հայտարարելու վերաբերյալ՝ պնդելով, որ նման օրենքը (և դրա հետ կապված քրեական պատժամիջոցը) սահմանափակում է նրանց դավանանքի ազատությունը՝ դրանով իսկ խախտելով նրանց սահմանադրական իրավունքները: Բելգիայի օրենսդրության համաձայն՝ Սահմանադրական դատարանը կարող է կասեցնել այն օրենքների կատարումը, որոնք առերևույթ հակասահմանադրական են թվում: Նման իրավիճակում դատարանը պետք է, ի թիվս այլ հարցերի, որոշի, թե արդյոք վիճարկվող օրենքի կիրառումը կարող է անդառնալի վնաս հասցնել հայցվորներին: Տվյալ գործով Սահմանադրական դատարանը եզրակացրել է, որ անդառնալի վնասի որևէ սպառնալիք չկա: Ենթադրելով, որ օրենքին չենթարկվելուց հետո կանանց դեմ քրեական գործ կհարուցվի, Սահմանադրական դատարանը գտել է, որ կանայք դեռևս հնարավորություն կունենան դիմելու քրեական գործերով դատավորին նախքան դատարանում գործի քննությունը լուծման ենթակա հարցը (ֆրանս.՝ «question préjudicielle հարց է préjudicielle») Սահմանադրական դատարան ուղղելու խնդրանքով, իսկ դատարանն այնուհետև նախնական որոշում կկայացնի «Գլխաշորի մասին» օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանելու վերաբերյալ:¹⁵ Որոշ իրավագետների կարծիքով՝ տվյալ գործով դատարանի բերած փոքր-ինչ զարմանալի փաստարկները կարելի է մեկնաբանել որպես օրենքը վիճարկելու նպատակով քաղաքացիական անհնազանդություն դրսևորելու կոչ:¹⁶

Քաղաքացիական անհնազանդության հայեցակարգին հնարավոր առնչություն ունեցող մեկ այլ օրինակ է Թերմոնդի Քրեական դատարանի 2013թ. սեպտեմբերի 24-ի որոշումը:¹⁷ Այդ գործում ներգրավված մի խումբ անձինք ոչնչացրել են գենետիկորեն ձևափոխված մշակաբույսերը՝ գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների կիրառումը դատապարտելու նպատակով և բերքը փոխարինել են օրգանական կարտոֆիլով: Դատավորն այս արարքը որակել է ոչ թե որպես քաղաքական արարք (թեև այն կատարվել է քաղաքական կուսակցությունների, գիտնականների, ՀԿ-ների և այլոց աջակցությամբ), այլ՝ որպես հանցավոր դավադրություն (ֆրանս.՝ «association de malfaiteurs»): Նման որակավորումը թույլ տվեց Բելգիայի իշխանություններին ճնշել բողոքի ակցիան: Այդուհանդերձ, այս գործով կայացրած դատական որոշումը բողոքարկվել է և կքննվի 2014 թվականի հոկտեմբեր ամսին:

Բ. Քաղաքացիական անհնազանդությանն առնչվող Բելգիայի իրավական հասկացությունները

Թեև Բելգիայի օրենսդրության մեջ անմիջական անդրադարձ չի կատարվում քաղաքացիական անհնազանդության իրավունքին, օրենսդրությամբ ճանաչվում են քաղաքացիական անհնազանդության հարակից իրավական հասկացություններից մի քանիսը, մասնավորապես՝ (i) համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունը

¹⁵ Սահմանադրական դատարան, 2011թ. հոկտեմբերի 5, *J.T.*, 2011, liv. 6452, 709:

¹⁶ X. DELGRANGE, "La désobéissance civile, seul recours effectif contre la loi?", Observations sous Cour const., arrêt n° 148/2011 du 5 octobre 2011, *J.T.*, 2011, liv. 6452, 710:

¹⁷ *Sté u'* <http://www.infogm.org/belgique-proces-pomme-de-terre-ogm>; <http://sciencescitoyennes.org/proces-ogm-en-belgique-un-nouveau-deni-de-democratie/>:

մերժողի կարգավիճակ, (ii) ծայրահեղ անհրաժեշտություն (ֆրանս.՝ «état de nécessité») և (iii) համերաշխության խախտում (ֆրանս.՝ «délit de solidarité»):

«i» կետի առնչությամբ հարկավոր է նշել, որ 1980թ. փետրվարի 20-ի օրենքով սահմանվել է համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունը մերժողի կարգավիճակը, որը թույլ է տալիս քաղաքացիներին վկայակոչել իրենց համոզմունքներով թելադրված ազդեցիկ պատճառները պարտադիր զինվորական ծառայությունը մերժելու (և դրանից կազատվելու) համար:¹⁸ Այս կարգավիճակը, ընդհանուր առմամբ, այլևս չի կիրառվում, քանի որ Բելգիայում զինվորական ծառայությունն այլևս (1995 թվականից սկսած) պարտադիր բնույթ չի կրում: Բելգիայի օրենսդրությամբ ամրագրված է միայն զինվորական ծառայություն մերժողների հատուկ կարգավիճակը, մինչդեռ մարդու իրավունքների վերաբերյալ եվրոպական և միջազգային պայմանագրերով պաշտպանվում են նաև համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունը մերժողները, ովքեր վկայակոչում են ազգային մակարդակով պարտադրված միջոցներին ընդդիմանալու իրենց հիմնարար իրավունքները: Օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերջերս որոշում է կայացրել հոգուտ Հայաստանի քաղաքացու՝ հայտարարելով, որ թեև նա պարտավոր էր զինվորական ծառայություն անցնել այդ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով, նա կարող էր ընդդիմանալ ծառայություն անցնելու պարտականությանը՝ վկայակոչելով ՄԻԵԿ-ով ամրագրված պաշտպանության դրույթները:¹⁹

«ii» կետի առնչությամբ հարկավոր է նշել, որ 1987 թվականից սկսած՝ Գերագույն դատարանը հետևողականորեն կիրառել է «ծայրահեղ անհրաժեշտություն» հասկացությունը, որի համաձայն՝ վտանգի մեջ հայտնվելու կամ իրեն կամ որևէ այլ անձի սպառնացող մոտալուտ վտանգի պարագայում անձին թույլատրվում է խախտել օրենքը՝ պայմանով, որ այդ խախտումը համաչափ է վտանգին: Այս տեսական հասկացության գործնական կիրառումն ապահովելու համար Գերագույն դատարանը սահմանել է մի քանի պայման: Առաջին, վտանգի մեջ հայտնված անձի իրավունքները կամ շահերը պետք է գերակայեն խախտված իրավունքի կամ շահի համեմատ:²⁰ Երկրորդ, վտանգի մեջ հայտնված անձի առջև ծառայած խնդիրը պետք է գտնվի օրենքի գերակայության սկզբունքի կարգավորումից դուրս:²¹ Եվ վերջապես, վտանգի մեջ հայտնված անձի պատասխան գործողությունները պետք է լինեն համաչափ և վտանգը կանխելու միակ ողջամիտ միջոցը:²² Տվյալ տեսական իրավունքի գործնական կիրառման պարագայում անձը քրեական պատասխանատվության չի ենթարկվում:

Այս կապակցությամբ Բելգիայի դատարանները ճանաչում են ժողովրդի՝ պետական իշխանությունների ապօրինի արարքներին (օրինակ՝ ապօրինի ձերբակալություն)

¹⁸ Lois coordonnées sur le statut d'objecteur de conscience, *M.B.*, 19 mars 1980:

¹⁹ ՄԻԵԿ, 2011թ. հուլիսի 7, «*Բայաստյանն ընդդեմ Հայաստանի*» գործ:

²⁰ Cass., 1960թ. փետրվարի 10, *Pas.*, 1960, I, 663:

²¹ Բրյուսել, 1986թ. նոյեմբերի 19, *J.L.*, 1987, 47:

²² Cass., 1978թ. դեկտեմբերի 12, *Pas.*, 1979, I, 419:

դիմակայելու իրավունքը:²³ Իրավական պաշտպանության այս միջոցից օգտվելու համար՝ անձը պետք է ցուցաբերի այնպիսի դիմադրություն, որը համաչափ է պետական պաշտոնյայի արարքին²⁴, և պետական մարմնի արարքը պետք է լինի ակնհայտորեն անօրինական:²⁵ Այդուհանդերձ, «ակնհայտ անօրինականության» մասին հաստատված նախադեպային իրավունք գոյություն չունի:

«iii» կետի առնչությամբ հարկավոր է նշել, որ Բելգիայի օրենսդրության մեջ անուղղակի անդրադարձ է արվում համերաշխության խախտմանը 1980թ դեկտեմբերի 5-ի օրենքի 77-րդ հոդվածում, որը փոփոխվել է 2009թ. սեպտեմբերի 3-ի օրենքով: Նշված հոդվածի համաձայն՝ Բելգիա ապօրինի ճանապարհով մուտք գործելու և այդտեղ բնակություն հաստատելու հարցում ներգաղթյալներին աջակցող յուրաքանչյուր ոք գործում է հանցանք: Այդուհանդերձ, նշված հոդվածով նախատեսվում է բացառություն այն մարդկանց համար, ովքեր այս հանցանքը գործում են «խիստ մարդասիրական նպատակներով»:

Բելգիայում դեռևս չի կայացվել համերաշխության հանցագործության առնչությամբ որևէ վճիռ. այդուհանդերձ, օրենսդիրն օրինականացրել է քաղաքական կամ բարոյական համոզմունքներով պայմանավորված այս արարքը:

II. Ճնշումներից և բռնապետությունից իրավական պաշտպանության միջոցների սահմանադրական երաշխիքները. ո՞րն է բողոքի դրսևորման խաղաղ և բռնի ձևերի սահմանագիծը: Արդյո՞ք սահմանադրությամբ ամրագրված է բռնություն գործադրելու իրավունքը, և եթե այո՞, ապա ինչպե՞ս է այդ իրավունքը կարգավորվում օրենքով:

Բելգիայի օրենսդրության համաձայն՝ բողոքի դրսևորման իրավունքը կարող է համարվել սահմանադրական իրավունք: Այդուհանդերձ, այս իրավունքն ունի սահմանափակումներ. մասնավորապես՝ դա վերաբերում է բողոքի դրսևորման բռնի ձևերին: Ինչպես արդեն նշվել է, Բելգիայի օրենսդրությամբ ամրագրված են խոսքի ազատության, խաղաղ հավաքների ազատության և գործադուլի իրավունքները: Մեր կարծիքով՝ նշված իրավունքները, միասին և առանձին վերցված, երաշխավորում են «բողոք արտահայտելու իրավունքը»:

Բողոք արտահայտելու իրավունքը հատկապես կայուն է այն դեպքերում, երբ հիմնված է ազատ արտահայտվելու իրավունքի վրա, և երբ այդ իրավունքի իրացումը, հատկապես՝ ներկայացումների միջոցով, հետևողականորեն պաշտպանված է: Բելգիայում հազվադեպ են արգելում բողոք արտահայտելու նպատակով ներկայացումները: Օրինակ, դերասան

²³ Լիեժ (Լիեժի Քրեական դատարան), 2001թ. նոյեմբերի 27, դատավարություն, 2002, թիվ 442, 28-29, դատարանը գտնելով, որ կասկածյալը, ով վիրավորվել է իրեն ապօրինաբար ձերբակալելու փորձ անող ոստիկանին, ստիպված էր այդպես գործել բնագրային մղումով, որը նա ի վիճակի չէր հաղթահարել, Corr. Hasselt, 5 mars 1880, Pas., 1880, III, 316, դիմադրությունը համարել է օրինական այն դեպքերում, երբ պետական իշխանությունների արարքն իսկապես ապօրինի է, իսկ դիմադրությունը համաչափ է դրան:

²⁴ *Sté u' ophնակ* Corr. Turnhout 1951թ. ապրիլի 28, *RW* 1950-51, col. 1719, դատարանը մերժել է պաշտպանել մի անձի, ով ուժ է գործադրել պետական ծառայողի նկատմամբ, ով փորձում էր (առանց նախնական թույլտվության) մուտք գործել իր բնակարան, քանի որ նախքան ուժային միջոցների դիմելը քաղաքացին խաղաղ ճանապարհով չի մերժել ծառայողի պահանջը:

²⁵ P. DUSSARD-BRACKENIERS, 'La résistance individuelle aux actes illégaux de l'autorité', Rev. ég. Dr., 1983, 114.

Դյոդոնների ներակայացումներն (որոնք, ընդհանուր առմամբ, համարվում են հակահրեական) արգելվել են մի քանի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, սակայն պետական ակտերի օրինականությունը, այդ թվում՝ նաև սահմանադրականությունը վերահսկող Պետական խորհուրդը (ֆրանս.՝ Conseil d'Etat), չեղյալ է հայտարարել տեղական մարմինների որոշումները՝ հանուն ազատ արտահայտվելու իրավունքի, և ներկայացումներն ի վերջո կայացել են:²⁶ Պետական խորհուրդը գտել է նաև, որ «կաբարեները» և այլ տեսակի ներկայացումները, ըստ էության, հանդիսանում են խաղաղ հավաքներ, որոնք չեն խախտում հասարակական կարգը:²⁷

Վերոնշյալ այլ իրավունքների մաս կազմող բողոք արտահայտելու իրավունքը ենթակա է որոշակի սահմանափակումների: Մասնավորապես, այդ իրավունքի իրականացումը չի կարող խախտել որևէ գործող օրենք կամ հասարակական կարգը:

Նման սահմանափակումները կարող են դրսևորվել տարբեր առումներով

Օրինակ, Սահմանադրության 26-րդ հոդվածը, որով ամրագրված է հավաքների ազատության իրավունքը, նախատեսում է, որ այս իրավունքը կարող է սահմանափակվել փորձի վրա խարսխված հիմնավորմամբ օրենքով սահմանված կարգով: Ավելին, 26-րդ հոդվածով սահմանվում է ազատ հավաքների իրավունքի իրացման նախնական թույլտվությունը տեղական մարմինների կողմից: Բողոքի ակցիա կազմակերպելիս հարկավոր է պահպանել որոշ ձևականություններ՝ կախված ակցիայի անցկացման վայրի ինքնակառավարման մարմիններից թույլտվության հետ: Բողոքի ակցիա անցկացնելու դիմումի մերժման պարագայում կազմակերպիչները կարող են վերականգնել իրենց իրավունքը և դիմել Պետական խորհուրդ:

Բացի այդ, «Համայնքային ինքնակառավարման մասին» նոր օրենքի (ֆրանս.՝ «Nouvelle Loi Communale») 135-րդ հոդվածի 2-րդ կետը մեկնաբանելիս Գերագույն դատարանը եզրակացրել է, որ հասարակական կարգի պահպանումը գերակայում է ազատ արտահայտվելու իրավունքի նկատմամբ: Այդպիսով, Գերագույն դատարանը սահմանափակել է խոսքի ազատության իրավունքի իրացումը այն պարագայում, եթե տեղեկատվական նյութերի բաշխումը հանգեցնում էր փողոցների աղտոտմանը և խոչընդոտում էր երթևեկությունը:²⁸

Այս իրավունքի սահմանափակման մեկ այլ օրինակ ամրագրված է Բելգիայի քրեական օրենսգրքի 104-րդ և 135-րդ հոդվածներում: Նշված հոդվածները սահմանափակում են խոսքի ազատությունը՝ արգելելով այնպիսի քարոզչությունը, որը կարող է վնասել Բելգիայի ամբողջականությանը, ինքնիշխանությանը կամ անկախությանը կամ խաթարել պետության հանդեպ քաղաքացիների հավատարմությունը (loyalty):

Բողոքի դրսևորման խաղաղ և բռնի ձևերի սահմանագծի ներկայացման հաջող օրինակ ներկայացվում է Բրյուսել քաղաքի «հասարակական կարգի պահպանման կանոնակարգում»,

²⁶ C.E., 2009թ. մարտի 23, *J.L.M.B.*, 2009, liv. 20, 938:

²⁷ C.E., 1954թ. հունվարի 25, *Rev. Comm.*, 1954, 65:

²⁸ Cass., 1973թ. հոկտեմբերի 29, *Pas.*, 1974, I, 232:

որի 31-րդ և 32-րդ հոդվածներով ամրագրված են տարբեր պայմաններ, որոնք պետք է պահպանեն բողոքի ակցիայի կազմակերպիչները, իսկ 33-րդ հոդվածում ներկայացվում են այս իրավունքի սահմանափակումները այնպիսի բռնի արարքների պարագայում, ինչպիսիք են, օրինակ՝ առարկաներ նետելը, հրազեն օգտագործելը և այլն, որի դեպքում ոստիկանությունը լիազորված է միջամտել նման բողոքի ակցիաների անցկացմանը:²⁹

III. Արդյո՞ք սահմանադրությամբ կամ օրենքներով ճանաչվում է կառավարության՝ բռնապետության վերածվելու կամ ճնշումների պարագայում անձի ապստամբելու իրավունքը:

Բելգիայում տարբերակվում են դիմադրությունը և ապստամբությունը: Ապստամբությունը համարվում է հանցագործություն և սահմանվում է որպես պետական իշխանությունների հրամաններին ենթարկվելուց հրաժարվելը:³⁰ Դիմադրությունը տարբերվում է ապստամբությունից նրանով, որ այս դեպքում մարդիկ հրաժարվում են ենթարկվել պետական իշխանությունների անօրինական հրամաններին:³¹ Թեև որոշ իրավագետներ պնդում են, որ Բելգիայի օրենսդրությամբ դիմադրության իրավունքը չի ճանաչվում, նրանցից շատերն այն կարծիքի են, որ դիմադրության իրավունքը բխում է Սահմանադրության մեջ ամրագրված սկզբունքներից:³² Բելգիայի Սահմանադրության պատմությունից պարզ է դառնում, որ սահմանադրությունը կազմելիս քննարկվել է նաև դիմադրություն ցուցաբերելու իրավունքը:³³ Սակայն, սահմանադրության ձևավորման համար պատասխանատու Ազգային Կոնգրեսը գտել է, որ նման իրավունքի ներառումն անիմաստ է, քանի որ այն բխում է սահմանադրությամբ արդեն իսկ ամրագրված հիմնարար իրավունքներից: Ազգային Կոնգրեսն անգամ նշել է, որ Բելգիայի ժողովուրդն իրավունք ունի հրաժարվել պետական կարգադրությունները կատարելուց և անհրաժեշտության դեպքում ընդդիմանալ իշխանությունների ցանկացած անօրինական արարքին:³⁴

Այս առումով, կարելի է ասել, որ Բելգիայի քրեական օրենսգրքի 269-րդ հոդվածը, որով քրեականացվում է ապստամբությունը, թույլ է տալիս դիմադրություն ցուցաբերել ի պատասխան պետական իշխանությունների անօրինական գործողությունների: Բացի այդ, Բելգիայի նախադեպային իրավունքի շրջանակներում կայացված մի քանի վճիռներում ճանաչվել է անհրաժեշտության դեպքում կամ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում (ֆրանս.՝ *contrainte irresistible*) դիմադրություն ցուցաբերելու իրավունքը:³⁵ Բացի այդ, Գերագույն դատարանը հաստատել է, որ դիմադրությունն օրինական է այն դեպքում, երբ պետական իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցն ակնհայտորեն ապօրինի է կամ

²⁹ http://www.bruxelles.be/dwnld/20128699/RGP-Bruxelles_cover_2008.pdf

³⁰ P. DUSSARD-BRACKENIERS, « La résistance individuelle aux actes illégaux de l'autorité », *R.R.D.*, 1983, 111:

³¹ J.-M. DERMAGNE, « Droit pénal : rébellion et contrainte irresistible », *Journ. Procès*, 2002, n°442, 28-29:

³² I. VERHAEGEN, *La protection pénale contre les excès de pouvoir et la résistance légitime à l'autorité*, Bruxelles, Bruylant, 1969, 289-290:

³³ J.-M. DERMAGNE, *op. cit.*, 111-112:

³⁴ E. HUYTENS, *La Constitution belge*, t. II, 224-225:

³⁵ Corr. Liege, 2001թ. նոյեմբերի 27, *Journ. Proc.*, 2002, liv. 442, 28 ; Cass., arrêt Piette, 1930թ. հունվարի 6, *Pas.*, 1930, 55:

ամենայն հավանականությամբ կարող է պատճառել անդառնալի վնաս:³⁶ Վերոնշյալից հետևում է, որ դիմադրության իրավունքի օրինականությունը հարկավոր է պարզել յուրաքանչյուր առանձին դեպքի ուսումնասիրությամբ՝ հաշվի առնելով հստակ փաստերը:

IV. Ե՞րբ կարելի է խոսել բռնապետություն և/կամ ճնշումների մասին. ո՞րն է սահմանագիծը

Բռնապետությունը կամ ճնշումների վրա հիմնված վարչակարգը բնութագրվում է մեկ անձի կամ մի խումբ անձանց ձեռքբերում կենտրոնացված ուժեղ իշխանությամբ և այն սահմանափակող որևէ օրենքի կամ հաստատության բացակայությամբ: Նման վարչակարգի պարագայում բացառվում է քաղաքացիների մասնակցությունը քաղաքական կյանքին և անտեսվում են մարդու հիմնարար իրավունքները:

Բելգիայի օրենսդրության մեջ հստակ անդրադարձ չի արվում բռնապետությանը և ճնշումներին: Միակ անդրադարձը կարելի է գտնել Սարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի Նախաբանի երրորդ կետում: Այդուհանդերձ, Բելգիայի Սահմանադրությամբ և իրավակարգով ամրագրված են մի քանի երաշխիքներ, որոնք բելգիացի ժողովրդին պաշտպանում են բռնապետությունից և ճնշումներից: Նշված երաշխիքներից մեկը կիրառում է Սահմանադրական դատարանը, որն ապահովում է Բելգիայի օրենքների համապատասխանությունը Սահմանադրությանը:

Բելգիայի պետության՝ լուրջ ճգնաժամը (օրինակ՝ քաղաքական, առողջապահական, անվտանգության) հաղթահարելու միակ գործիքը հանդիսանում է այսպես կոչված «հատուկ լիազորությունները» (ֆրանս.՝ «pouvoirs spéciaux»), որոնց միջոցով օրենսդիր իշխանությունը պատվիրակվում է գործադիր իշխանությանը:³⁷ Նման պարագայում խորհրդարանն օրենք է ընդունում, որով գործադիր իշխանությանը պատվիրակվում է որոշակի սահմանափակ ժամանակահատվածում և տարածքում որոշ կանոնակարգեր փոփոխելու կամ նման պայմաններով նոր կանոնակարգեր մշակելու լիազորությունը՝ հրատապ խնդիրը լուծելու համար: Նշված ժամանակահատվածի ավարտից հետո գործադիր իշխանության կողմից ձեռնարկված միջոցառումները պետք է հաստատվեն օրենսդիր իշխանությունների կողմից: Այս գործիքը վերջերս կիրառվել է 2009 թվականին³⁸ գրիպի «Ա» տեսակի համաճարակի տարածման վտանգը կանխելու նպատակով, սակայն երբեք չի կիրառվել բռնապետության կամ ճնշումների (կամ նման) վտանգը հաղթահարելու համար:

³⁶ Cass., 5 mars 1888, *Pas.*, 1888, 108:

³⁷ Սահմանադրության 105-րդ հոդված:

³⁸ <http://www.7sur7.be/7s7/fr/4331/Grippe-mexicaine/article/detail/1000885/2009/09/22/Despouvoirs-speciaux-accordes-au-gouvernement-en-cas-d-epidemie-de-grippe-A.shtml>

V. Որո՞նք են սահմանադրական կարգի փոփոխման փորձի ժամանակ քաղաքացիական անհնազանդության դրսևորման ընդունելի միջոցները կամ ձևերը

Բելգիան Սահմանադրական միապետություն է, ինչը նշանակում է, որ պետության գլուխ կանգնած է թագավորը: Այդուհանդերձ, նրա լիազորությունները խիստ սահմանափակ են և խորհրդանշական բնույթ են կրում, քանի որ նա չի ընտրվում ժողովրդավարական եղանակով: Պետության քաղաքական կյանքում թագավորի միակ լիազորությունը սահմանափակվում է ընտրություններից հետո կառավարության ձևավորման գործընթացը համակարգող անձի ընտրությամբ: Այնուամենայնիվ, այդ ընտրությունն անգամ պայմանավորված է ընտրությունների արդյունքներով և ոչ թե թագավորի անձնական հայեցողությամբ:

Բելգիայի օրենսդրությամբ ամրագրված չէ Սահմանադրական կարգի փոփոխման փորձի ժամանակ քաղաքացիական անհնազանդության ընդունելի որևէ ձև այն պարզ պատճառով, որ այդ պետության Սահմանադրությամբ արդեն իսկ տարբեր մեխանիզմներով բացառվում են պետական հեղաշրջումները և խռովությունները: Ամենաէական մեխանիզմն ամրագրված է Սահմանադրության 187-րդ հոդվածով, որի համաձայն Սահմանադրության կիրառումը չի կարող դադարեցվել: Մի խոսքով, հեղաշրջումները և խռովություններն արգելված են ցանկացած հանգամանքներում: Այդուհանդերձ, Սահմանադրության 195-րդ հոդվածով նախատեսվում են Սահմանադրության վերանայման դեպքերը: Սահմանադրությունը կարող է վերանայվել օրենսդիր իշխանության նախաձեռնությամբ սահմանափակ պայմաններում, որոնք երաշխավորում են այդ գործընթացի նկատմամբ Բելգիայի քաղաքացիների վերահսկողությունը, օրինակ, Սահմանադրական փոփոխությունների առաջարկը քննարկելու նպատակով նոր ընտրություններ անցկացնելու միջոցով:

Ավելին, Բելգիայում պետական հեղաշրջումները և խռովությունները կանխելու գործում խիստ կարևոր դերակատարում ունի իշխանության բոլոր ճյուղերի լիազորությունների հավասարակշռությունը: Սահմանադրությամբ հստակ ամրագրված են իշխանության յուրաքանչյուր ճյուղի (այսինքն՝ դատական (40-րդ հոդված), օրենսդիր (36-րդ հոդված) և գործադիր (37-րդ հոդված)) իշխանությունների լիազորությունները և մեկ անձի ձեռքում դրանց կենտրոնացումը բացառող որոշ մեխանիզմներ: Ի դեմս խորհրդարանի՝ ժողովուրդն անուղղակիորեն վերահսկում է լիազորությունների հավասարակշռությունը այն աստիճան, որ 46-րդ հոդվածի համաձայն՝ խորհրդարանն իրավունք ունի լուծարել կառավարությունը: Խորհրդարանը կարող է մերժել վարչապետի՝ նորաստեղծ կառավարության նկատմամբ վստահության միջնորդությունը, և անգամ կառավարության ձևավորումից հետո խորհրդարանը դեռևս կարող է փոխել իր կարծիքը և անվստահություն հայտնել կառավարությանը:

Նշված մեխանիզմներն արդյունավետ են եղել պետական հեղաշրջումների և խռովությունների կանխման գործում, քանի որ 1831 թվականին ձեռքբերված անկախությունից ի վեր Բելգիայում նման փորձեր երբեք չեն արվել:

VI. Համապատասխան օրենսդրության համաձայն՝ ի՞նչ է իրենից ներկայացնում ժողովրդավարական երկրի սահմանադրական կարգը

Բելգիայի Սահմանադրությամբ աստիճանակարգված նորմերով հստակ ամրագրված է սահմանադրական կարգը (Ս) և ժողովրդավարության արդյունավետությունը բարձրացնող մի շարք հաստատությունները և մեխանիզմները (Բ):

Ա. Իրավական նորմերի աստիճանակարգում

Ժողովրդավարական պետություններում էական դերակատարում ունի իրավական նորմերի աստիճանակարգումը՝ ապահովելով ըստ արժեքների բոլոր նորմերի դասակարգումը: Յուրաքանչյուր ստորակարգային իրավական նորմ պետք կարգավորվի վերադաս նորմով: Աստիճանակարգման մակարդակները ներառում են տարբեր գործադիր մարմինների կողմից կիրառվող միջազգային իրավունքը, ազգային օրենքները և այլ ազգային կանոնակարգերը: Նշված իրավական նորմերը ենթակա են Բելգիայի տարբեր դատարանների կողմից կիրառվող աստիճանակարգման:

Բելգիայի իրավական նորմերի աստիճանակարգումն առանձնահատուկ է, քանի որ երկրի երկու բարձրագույն դատական ատյանների՝ Գերագույն դատարանի և Սահմանադրական դատարանի միջև տարաձայնություններ կան բուրգը գլխավորող իրավական նորմի վերաբերյալ:

Լեսկիի գործով 1971թ. մայիսի 27-ին կայացրած վճռում Գերագույն դատարանը գտել է, որ Բելգիայի կողմից վավերացրած բոլոր միջազգային պայմանագրերը գերակայում են ցանկացած ազգային իրավական նորմայի, անգամ՝ Սահմանադրության նկատմամբ: Դատարանն այդ դիրքորոշումը հաստատել է նաև մի քանի այլ որոշումներում:³⁹

Ի տարբերություն Գերագույն դատարանի՝ Սահմանադրական դատարանը գտել է, որ Սահմանադրությունն է գերակայում իր դրույթներին հակասող ցանկացած միջազգային պայմանագրի նկատմամբ: Սահմանադրական դատարանը առաջնորդվում է Սահմանադրության 142-րդ հոդվածով, որով օրենսդիր իշխանությանն արգելվում է ընդունել սահմանադրությանը հակասող որևէ օրենք: Սահմանադրական դատարանի կարծիքով՝

³⁹ Cass., 2004թ. նոյեմբերի 16, *R.C.J.B.*, 2007, 36; Cass, 1976թ. հունվարի 14, *R.B.D.I.*, 1978-1979, 722, Cass., 1984թ. սեպտեմբերի 13, *Pas.*, 1985, I, 65:

սահմանադրությանը հակասող պայմանագրի հաստատելով՝ խորհրդարանը խախտում է այս հոդվածը:⁴⁰

Գերագույն դատարանի և Սահմանադրական դատարանի միջև նշված տարաձայնության առկայությունը Բելգիայի իրավակարգի վրա գործնականում որևէ կերպ չի ազդել, քանի որ Գերագույն դատարանի և Սահմանադրական դատարանի իրավասությունները շատ տարբեր են: Գերագույն դատարանը վերահսկում է դատական համակարգի աշխատանքը, վճիռների օրինականությունը և կատարելագործում օրենքի միասնական մեկնաբանությունը, մինչդեռ Սահմանադրական դատարանն ապահովում է դաշնային, շրջանային և համայնքային օրենսդիր մարմինների ընդունած օրենսդրական ակտերի համապատասխանությունը Բելգիայի Սահմանադրությանը: Այս ամենը հաշվի առնելով՝ դատական վճիռները և իրավական նորմերը դիտարկվում են տարբեր կերպ. վճիռներ կայացնելիս հարկավոր է առաջնորդվել միջազգային պայմանագրերով, իսկ իրավական նորմերի հիմքը կազմում է Սահմանադրությունը:

Բ. Իրավական նորմերի աստիճանակարգման պահպանումը և արդյունքում ժողովրդավարության արդյունավետության կատարելագործումը երաշխավորող տարբեր հաստատություններ և մեխանիզմներ

Վերադաս և ստորադաս իրավական նորմերի փոխազդեցությունը վերահսկվում է երեք հիմնական հաստատությունների կողմից՝ Սահմանադրական դատարան, Գերագույն դատարան և Պետական խորհուրդ:

Ինչպես արդեն նշվել է, Սահմանադրական դատարանն ապահովում է դաշնային, շրջանային և համայնքային օրենսդիր մարմինների ընդունած օրենսդրական ակտերի սահմանադրականությունը: Օրենքի սահմանադրականությունը կարող են վիճարկել նաև դաշնային կամ շրջանային պետական կառավարման մարմինները, խորհրդարանի նախագահները, ինչպես նաև այդ հարցում իր հետաքրքրվածությունը հիմնավորող ցանկացած առանձին անհատ:⁴¹

Պետական խորհուրդը վերահսկում է գործադիր մարմինների աշխատանքը և հանդիսանում է վարչական արդարադատության համակարգի բարձրագույն մարմին: Այն ապահովում է վարչական ակտերի, որոշումների կամ կանոնակարգերի օրինականությունը և որոշում է կայացնում դրանք չեղյալ համարելու կամ կասեցնելու վերաբերյալ: Պետական խորհրդից բացի՝ յուրաքանչյուր ոք կարող է գործադիր մարմինների որևէ կանոնակարգի անօրինականության առնչությամբ դիմել ցանկացած դատարան:⁴²

⁴⁰ *St. u* Սահմանադրության 188-րդ հոդված՝ ազգային օրենսդրության նկատմամբ Սահմանադրության գերակայության վերաբերյալ:

⁴¹ 1989թ. հունվարի 6-ի հատուկ օրենքի 2-րդ հոդված, *M.B.*, 1989թ. հունվարի 7:

⁴² Սահմանադրության 159-րդ հոդված. Բելգիայի դատարանները պետք է կիրառեն ընդհանուր, շրջանային և տեղական կանոնակարգերը միայն այնքանով, որքանով դրանք համապատասխանում են (դաշնային կամ դաշնայնացված) օրենքներին:

Ինչպես արդեն նշվել է, Գերագույն դատարանը վերահսկում է դատական համակարգը: Այն վերանայում է վճիռների օրինականությունը և կատարելագործում օրենքների միասնական մեկնաբանությունը, ինչը նպաստում է իրավական անվտանգության ամրապնդմանը:

VII. Արդյո՞ք սահմանադրությամբ ամրագրված են պետության՝ բռնապետության կամ ավտորիտար պետության վերածումը կանխելու համար բավարար մեխանիզմներ, և որո՞նք են Սահմանադրությամբ ամրագրված միջոցները: Արդյո՞ք քաղաքացիական անհնազանդությունը որպես այդպիսին համարվում է ընդունելի միջոց

Ինչպես արդեն նշվել է, Սահմանադրությամբ ամրագրված են ժողովրդավարության պահպանմանը և բռնապետության կամ ճնշումների վրա խարսխված վարչակարգի հաստատման վտանգից քաղաքացիների պաշտպանությանն ուղղված մի քանի մեխանիզմներ: Սահմանադրությամբ ամրագրված են նաև այնպիսի հիմնարար իրավունքների պաշտպանությանն ուղղված մի քանի երաշխիք, որոնք կարող են խախտվել ճնշումների վրա հիմնված վարչակարգի պայմաններում: Հիմնական երաշխիքներից մեկն է կամայական կալանավորումից պաշտպանությունը և ինչպես դատավարությունից առաջ, այնպես էլ հետո անձի անձեռնմխելիության իրավունքը (Ա): Սահմանադրությամբ ամրագրված են նաև մի քանի այլ ուշագրավ երաշխիքներ (Բ), որոնք կներկայացվեն ստորև:

Ա. Պաշտպանություն կամայական կալանավորումից և անձի անձեռնմխելիության իրավունք

Սահմանադրության 12-րդ հոդվածի համաձայն՝ «ոչ ոքի չի կարելի դատել՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերում և կարգով»: Նման դեպքերը և ընթացակարգերը սահմանվում են Բելգիայի քրեական օրենսգրքով և Քրեական դատավարության օրենսգրքով և կարող են տարանջատվել «մինչդատական» և «հետդատական» փուլերի:

Մինչդատական ընթացակարգեր. Նախ և առաջ, հարկավոր է նշել, որ ոստիկանության ծառայողներին թույլատրվում է ձերբակալել կասկածյալին միայն այն դեպքում, եթե նա բռնվում է հանցանք (հանցագործություն) գործելու պահին: Ոստիկանությունը պետք է ձերբակալության մասին տեղյակ պահի շրջանային դատախազին: Եթե տվյալ անձը չի բռնվել հանցանք գործելու պահին, ապա միայն դատախազը կարող է թույլատրել ձերբակալել նրան: Ձերբակալությունից հետո կասկածյալը կարող է պահվել ոստիկանության կալանքի վայրում առավելագույնը 24 ժամ:⁴³ Նման միջոցների նպատակն է ապահովել, որպեսզի կասկածյալին ոստիկանությունն բերման ենթարկելուց հետո ոստիկանության ծառայողները կամ դատախազները նրան չզրկեն իր ազատությունից:

⁴³ «Կանխարգելիչ կալանքի մասին» 1990թ. հուլիսի 20-ի օրենքի 2-րդ հոդված, *M.B.*, 1990թ. օգոստոսի 14:

Բացի այդ՝ 2011թ. օգոստոսի 13-ի այսպես կոչված «Մալդուզի» օրենքի ընդունումից հետո իշխանությունները պետք է թույլատրեն կասկածյալին ոստիկանությունում առաջին հարցումից առաջ խորհրդակցել փաստաբանի հետ:⁴⁴ Այս միջոցի նպատակն է ապահովել, որպեսզի կասկածյալն իմանա իր՝ Բելգիայի քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով ամրագրված իրավական պաշտպանության իրավունքը: Բացի այդ, կասկածյալն իրավունք ունի կապ հաստատել վստահելի անձի հետ՝ իր վիճակի մասին նրան տեղեկացնելու նպատակով: Կասկածյալն ունի նաև բժշկական օգնություն ստանալու իրավունք:

Այնուհետև գործը քննող դատավորի որոշմամբ կասկածյալի նախնական կալանքը կարող է երկարացվել մինչ վերջնական վճռի կայացումը, և կարող է նշանակվել կանխարգելիչ կալանք (ֆրանս.՝ *detention preventive*): Կանխարգելիչ կալանքը նույնպես կարգավորվում է մի քանի իրավական պայմաններով և հիմնարար իրավունքներով: Առաջին, կալանքը պետք է լինի հասարակության պաշտպանությանն ուղղված բացարձակապես անհրաժեշտ միջոց, իսկ իրավախախտումը պետք է լինի այնպիսին, որի առնչությամբ, ամենայն հավանականությամբ, կկայացվի առնվազն մեկ տարվա ազատազրկման դատավճիռ: Բացի այդ, եթե հանցանքի առնչությամբ կարող է կայացվել մինչև 15 տարով ազատազրկման դատավճիռ, ապա պետք է առկա լինի նաև հիմնավորված մտավախություն, որ կասկածյալը կարող է կատարել նաև այլ հանցագործություններ կամ ոչնչացնել ապացույցները: Ամեն ամիս դատավորը պետք է վերանայի կանխարգելիչ կալանք նշանակելու մասին որոշումը: Կասկածյալը կարող է նաև վիճարկել դատավորի որոշումը դրա կայացման պահից հինգ օրվա ընթացքում:

Հետդատական ընթացակարգեր. Անգամ ազատազրկման դատապարտվելուց հետո կասկածյալը դեռևս կարող է պահանջել պահպանել իր հիմնարար իրավունքները: Կասկածյալը կարող է նման պահանջ ներկայացնել արժանապատվության իրավունքի հիման վրա, որը պաշտպանված է սահմանադրության 23-րդ հոդվածով: Նշված հոդվածով ամրագրված է, որ ազատազրկման ընթացքում կալանավորը պետք է ապրի հոգեբանասոցիալական, ֆիզիկական և նյութական այնպիսի միջավայրում, որտեղ հարգում են նրա մարդկային արժանապատվությունը և հնարավորություն են տալիս պահպանել կամ բարձրացնել իր ինքնագնահատականը և անհատական ու սոցիալական պատասխանատվության աստիճանը: Սահմանադրությանը 22-րդ հոդվածի համաձայն՝ կալանավորն ունի անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք: Այս առումով, ազատազրկումը կարող է սահմանափակել միայն ազատության իրավունքը, սակայն չի կարող սահմանափակել ընտանեկան հարաբերություններ պահպանելու իրավունքը: Բացի այդ, կալանավորվելուց հետո պահպանվում են նաև անձի դավանանքի ազատության և ազատ արտահայտվելու իրավունքները, որոնք ամրագրված են սահմանադրության 19-րդ հոդվածով:

⁴⁴ *Sté u նաև*՝ 1990թ. հուլիսի 20-ի օրենքի 2-րդ հոդվածը:

Բ. Իրավունքների պաշտպանության այլ երաշխիքներ

Ճնշումների վրա հիմնված վարչակարգի պարագայում, ամենայն հավանականությամբ, խախտվող հիմնարար իրավունքների պաշտպանությանն ուղղված այլ երաշխիքներն են՝ իրավական պաշտպանության իրավունքը, անմեղության կանխավարկածը և պատժի համաչափությունը:

Իրավական պաշտպանության իրավունքի առնչությամբ հարկավոր է նշել, որ այդ իրավունքն ամրագրված է ՄԻԵԿ-ի 6.1 հոդվածով, որը վավերացրել է նաև Բելգիան: Նշված հոդվածով պաշտպանվում է արդար դատաքննության իրավունքը, որը ենթադրում է ողջամիտ ժամանակահատվածում անկախ և անկողմնակալ դատարանում հրապարակային դատական նիստի անցկացում, անմեղության կանխավարկածի և սույն խորագրի «Ա» կետի մեջ դիտարկվող այլ իրավունքների պահպանմամբ:

Անմեղության կանխավարկածի առնչությամբ հարկավոր է նշել, որ ՄԻԵԿ-ի 6.2 հոդվածով պաշտպանվում է անմեղության կանխավարկածը որպես իրավական պաշտպանության իրավունքի էական կողմերից մեկը: Յուրաքանչյուր ոք օգտվում է անմեղության կանխավարկածից, մինչ օրինական ճանապարհով ապացուցվի նրա մեղքը: Այս իրավունքը հանդիսանում է ընթացակարգային երաշխիք և դրա հիմնական իմաստը կայանում է նրանում, որ ապացույցի բեռը չպետք է ընկնի մեղադրյալի վրա, և որ միայն ողջամիտ կասկածի առկայությունը բավարար չէ պատասխանողին դատապարտելու համար:

Ինչ վերաբերում է պատժի համաչափությանը, Սահմանադրական դատարանն այս պահանջի կատարումը վերահսկում է Բելգիայում կիրառելի եվրոպական և միջազգային օրենսդրության տարբեր իրավական նորմերի և սահմանադրության 10-րդ և 11-րդ հոդվածների միջոցով:⁴⁵ Դատարանն արգելում է ցանկացած պատժամիջոց, որն անհամաչափ է նպատակի համեմատ:

VIII. Արդյո՞ք անձինք կարող են ունենալ, պահել և գործածել հրազեն կամ գործածել այլ տեսակի զենք կամ այլ միջոցներ

Ձենք և զինամթերք պահելու և գործածելու հետ կապված հարցերը շատ խիստ են կարգավորվում Բելգիայի օրենսդրությամբ: Այդ ոլորտը Բելգիայում կարգավորում է 2008թ. սեպտեմբերի 1-ի օրենքով փոփոխված 2006թ. հունիսի 9-ի օրենքը, որի 3-րդ հոդվածի 1-ին կետում ներկայացվում է արգելված զենքի ցանկը, օրինակ՝ մարտական զենք, դանակներ, մահակներ, ինքնապաշտպանության սփրեյներ և այլն:

Ինչ վերաբերում է հրազենին, ապա ինքնապաշտպանական զենք պահելու համար հարկավոր է ոստիկանությունից ստանալ «Ձև 4» համապատասխան թույլտվություն, իսկ որսորդական կամ մարզական զենք պահելու համար՝ «Ձև 9» թույլտվություն: Բացառություն

⁴⁵ Սահմանադրական դատարան, գործ թիվ 81/2007, 2007թ. հունիսի 7, *J.L.M.B.*, 2007, liv. 26, 1087:

են կազմում անվտանգության ծառայողները և ոստիկանները, քանի որ հրազենը կամ որևէ այլ զենք կազմում են նրանց մասնագիտական սպառազինության մի մասը:⁴⁶

⁴⁶ Ձենքի հետ առնչվող տնտեսական և անհատական գործունեությունը կարգավորող 2006թ. հունիսի 8-ի օրենք (հայտնի է նաև՝ «Ձենքի մասին օրենք» անվամբ), *M.B.*, 2006թ. հունիսի 9:

Հավելված 3/Գերմանիա⁶⁴

Բողոքի արտահայտման ձևեր և քաղաքացիական անհնազանդություն

2014թ. սեպտեմբերի 30-ին

ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

Գերմանիայի յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի անցկացնել խաղաղ և անզեն հանրային հավաքներ՝ պետական իշխանության դեմ ուղղված իր բողոքն արտահայտելու նպատակով:

Օրենքի խախտումները չեն կարող արդարացվել քաղաքացիական անհնազանդության դրսևորմամբ:

Խիստ բացառիկ դեպքերում Գերմանացի քաղաքացիներն իրավունք ունեն ցուցաբերելու պասիվ և ակտիվ դիմադրություն՝ ուժային միջոցների կիրառմամբ:

Ներածություն

«Հանրային շահերի պաշտպանության իրավունք. ՓԻԼներթ» ՀԿ-ն խնդրել է Տրանկֆորտում գործող «Ուեյլ, Գոթշալ և Մենջես» ՍՊԸ-ին կամավոր հիմունքներով աջակցել Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակին (Հայաստան) բողոքի արտահայտման և քաղաքացիական անհնազանդության հարցերը կարգավորող Գերմանիայի օրենսդրության վերաբերյալ հետազոտություն անցկացնելու միջոցով:

Հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել ճնշումներից և բռնապետության դրսևորումներից քաղաքացիներին պաշտպանող սահմանադրական երաշխիքներին, ժողովրդավարության և բողոքի դրսևորման օրինական միջոցների պահպանման մեխանիզմներին, հատկապես բռնի միջոցներից քաղաքացիներին պաշտպանելու մեխանիզմներին: Հարկավոր է օրենսդրությունը դիտարկել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի նախաբանի 3-րդ մասի դրույթների համադրությամբ:

«Անհրաժեշտ է օրենքի գերակայությամբ պաշտպանել մարդու իրավունքները, որպեսզի նա, որպես վերջին միջոց, հարկադրված չընդվզի բռնակալության ու ճնշման դեմ»:

Սույն փաստաթղթի սկզբում ներկայացվում է Գերմանիայի համապատասխան սահմանադրական իրավունքը կարգավորող օրենսդրական դաշտը (III)⁶⁵՝ պաշտոնեական

⁶⁴ Վերլուծությունը իրականացվել է «Ուեյլ, Գոթշալ և Մենջես» ՍՊԸ, իրավաբանական գրասենյակի կողմից:

⁶⁵ <http://www.weil.com/>

«Հաշվի առնելով, որ վերլուծությունը իրականացվել է Pro Bono հիմունքներով, ոչ Գրասենյակը («Ուեյլ, Գոթշալ և Մենջես» ՍՊԸ), ո՛չ Գրասենյակի աշխատակիցները չեն կարող պատասխանատվության ենթարկվել իրականացված վերլուծության համար:»

դիրքի չարաշահման կանխմանն ուղղված համապատասխան երաշխիքներով և մեխանիզմներով սահմանադրական կարգի նկարագրությամբ: Այնուհետև ներկայացվում է բողոքների և քաղաքացիական անհնազանդության դրսևորումները կարգավորող օրենսդրական դաշտի նկարագիրը, դրա սահմանափակումները և հիմնավորումները (IV): Փաստաթղթի եզրափակիչ մասում ներկայացվում է օրենսդրության համառոտ գնահատումը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի նախաբանի 3-րդ մասով ամրագրված դրույթներին համապատասխան (V):

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Հիմնական օրենք և սահմանադրական կարգ

Գերմանիայի Դաշնային Հանրապետության սահմանադրական կարգն ամրագրված է «Հիմնական օրենք» («Grundgesetz») կոչվող օրենսգրքում: Հիմնական դրույթն ամփոփված է 1-ին Հոդվածում. 1-ին Հոդվածի 1-ին կետի 1-ին նախադասությամբ երաշխավորվում է մարդու արժանապատվության անձեռնմխելիությունը, իսկ դրա պաշտպանությունը հանդիսանում է պետական կառավարման բոլոր մարմինների առաջնային պարտքն ու պարտականությունը: 1-ին Հոդվածի 2-րդ կետում հաստատվում է այն անփոփոխ և անօտարելի իրավունքների ճանաչումը, որոնք հիմք են հանդիսանում մարդկային համայնքի հաստատման, աշխարհում խաղաղության և արդարության պահպանման համար: 1-ին Հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Հիմնական օրենքում արձանագրված հիմնական իրավունքները որպես անմիջականորեն կիրառելի օրենք պարտադիր են օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների համար:

Վերոնշյալ հիմնական իրավունքները սահմանված են Հիմնական օրենքի 2-19-րդ հոդվածներում և շատ կարևոր դերակատարում ունեն սահմանադրական կարգի պահպանման գործում: Այդ իրավունքները կողմնորոշված են համընդհանուր մարդու իրավունքների գաղափարներին և իրենցից ներկայացնում են քաղաքացիների պաշտպանությանն ուղղված և պետական իշխանությունների բոլոր մարմինների համար պարտադիր իրավունքներ: Ի թիվս այլոց, հիմնական իրավունքներից են՝ խոսքի, մամուլի և հավաքների ազատության իրավունքները: Նման իրավունքները երաշխավորում են հասարակական և հավաքական կարծիքի արտահայտման ազատությունը և կենսական նշանակություն ունեն ժողովրդավարական կամքի և հասարակական կարծիքի ձևավորման գործում:

Սահմանադրական կարգի անկյունաքարերից են նաև 20-րդ հոդվածի 1-3-րդ կետերում ամրագրված պետության ձևի սկզբունքները: Այդ սկզբունքներով նախատեսվում է դաշնային պետության հանրապետական և սոցիալական ձևը, ժողովրդի ինքնիշխանության և մեծամասնության սկզբունքի, ինչպես նաև իշխանության՝ օրենսդիր, գործադիր և դատական ճյուղավորման սկզբունքի վրա հիմնված ժողովրդավարությունը: Ամփոփելով՝ 20-րդ

հողվածի 3-րդ կետից հետևում է, որ օրենսդիր իշխանությունը մասնավորապես պարտավոր է ղեկավարվել սահմանադրական կարգով, իսկ գործադիր և դատական իշխանությունները՝ օրենքով և արդարադատությամբ:

Սահմանադրական կարգի պահպանումը և պաշտոնական դիրքի չարաշահման կանխումը

Սահմանադրական կարգի պահպանումն ապահովվում է տարբեր մեխանիզմներով: Նախ, գործում է իշխանությունների բաժանման անհամաչափ համակարգը, որը կանխում է իշխանության կենտրոնացումը իշխանության ճյուղերից որևէ մեկի ձեռքում: Դաշնային խորհրդարանը («Bundestag») կարող է փոխարինել դաշնային կանցլերին («Bundeskanzler»), հետևաբար նաև՝ դաշնային կառավարությունը՝ ձայների մեծամասնությամբ անվստահություն հայտնելով դաշնային կանցլերին. այդ դեպքում անվստահություն հայտնելուն զուգընթաց հարկավոր է ընտրել նոր կանցլեր՝ 67-րդ հողվածին համապատասխան: Ըստ 61-րդ Հողվածի՝ Դաշնային խորհրդարանը և Դաշնային խորհուրդը («Bundesrat») կարող են Դաշնային սահմանադրական դատարանում (Bundesverfassungsgericht) պաշտոնանկության ընթացակարգ սկսել Դաշնային նախագահի (Bundespräsident) դեմ, եթե նա միտումնավոր խախտի սահմանադրական կամ դաշնային օրենքը: Դաշնային կառավարությունը կամ Դաշնային խորհրդարանի անդամների մեկ քառորդը կարող են դիմել Դաշնային սահմանադրական դատարան՝ Հիմնական օրենքին ընդունված օրենքի համապատասխանությունը որոշելու համար և չհամապատասխանելու դեպքում օրենքը կարող է չեղյալ հայտարարվել:

Երկրորդ, գործում է որոշակի կանոնակարգ՝ 79-րդ հողվածի 3-րդ կետով ամրագրված «հավերժական դրույթը», որով արգելվում է որևէ փոփոխություն կատարել 1-ին հողվածում և 20-րդ հողվածում և հենց այդ դրույթում: Հավերժական դրույթով ամրագրված է, որ սահմանադրական օրենսդիրը չի կարող վերացվել ժողովրդավարական սահմանադրական կարգը: Թեև որոշ հիմնական իրավունքներ կարող են փոփոխվել, բոլոր հիմնական իրավունքների վերացումը կհանգեցնի 1-ին հողվածի 3-րդ կետի խախտմանը, որն արգելված է 79-րդ հողվածի 3-րդ կետով:

Երրորդ, առանձին անհատները նույնպես կարող են վիճարկել պետական մարմինների ցանկացած գործողություն՝ Դաշնային սահմանադրական դատարան իրենց հիմնական իրավունքների խախտման վերաբերյալ սահմանադրական գանգատ ներկայացնելու միջոցով:

Ընդհանուր առմամբ, Գերմանիայի քաղաքացիները չունեն բռնի միջոցներով սահմանադրական կարգը պահպանելու իրավունք, հակառակ դեպքում՝ ակնհայտորեն կխախտվեր ուժային միջոցների կիրառման պետական մենաշնորհը, որը բխում է 20-րդ հողվածի 2-րդ կետում ամրագրված օրենքի գերակայության սկզբունքից: Այնուամենայնիվ,

կա մեկ բացառություն. դիմադրության իրավունքը, որի իրացման համար, սակայն, անհրաժեշտ է շատ խիստ նախապայմանների առկայությունը:

Դիմադրության իրավունք

20-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ Գերմանիայի յուրաքանչյուր քաղաքացի ունի դիմադրության իրավունք ընդդեմ սահմանադրական կարգը վերացնելու փորձ անող ցանկացած անձի բացառապես այն դեպքերում, եթե ոչ մի այլ միջոց հասանելի չէ: Դիմադրության իրավունքի նպատակն է ապահովել, որ սահմանադրական կարգի պաշտպանությունը լինի ոչ միայն բոլոր պետական կառավարման մարմինների առջև դրված խնդիրը, այլև՝ յուրաքանչյուր քաղաքացու՝ սահմանադրական կարգի խախտմամբ պաշտոնեական դիրքի չարաշահման ցանկացած դրսևորումներին դիմակայելու իրավունքը: Դիմադրության իրավունքը ներառում է դիմադրության ոչ միայն պասիվ, այլև՝ ակտիվ միջոցներ, օրինակ՝ ռազմական ուժային միջոցների գործածումը՝ պայմանով, որ դրանք լինեն համաչափ: Նման դեպքերում արդարացված է այն բոլոր գործողությունների կիրառումը, որոնք այլ հանգամանքներում միանշանակ կհամարվեին ապօրինի բռնության դրսևորումներ: Այդուհանդերձ, դիմադրության իրավունքը խիստ երկրորդական բնույթ է կրում: Անձը կարող է իրացնել իր դիմադրության իրավունքը միայն օրենքի գերակայության և սահմանադրական կարգի վերականգնմանն ուղղված բոլոր մնացած սահմանադրական միջոցները սպառելուց հետո:⁶⁵ Այսպիսով, դիմադրության իրավունքը կարող է իրացվել միայն այն դեպքերում, եթե սահմանադրական կարգը վտանգված է կամ արդեն իսկ վերացվել է:

1949 թվականին Գերմանիայի Դաշնային Հանրապետության հիմնադրումից ի վեր շարունակական բնույթ կրող սահմանադրական միջոցների և ժողովրդավարական կամքի ձևավորման գործընթացին մասնակցելու հնարավորության շրջանակներում ոչ ոքի չի հաջողվել իր նմանօրինակ գործողություններն արդարացնել դիմադրության իրավունքի իրացմամբ:

ԲՈՂՈՔ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Բողոք արտահայտելու իրավունքի սահմանադրական պաշտպանությունը

Բողոք արտահայտելու և քաղաքացիական անհնազանդության իրավունքներն անմիջականորեն փոխկապակցված են խոսքի ազատության, մամուլի ազատության և հավաքների ազատության հետ: Հիմնական օրենքի վրա խարսխված այդ հիմնական իրավունքները հիմք են ստեղծում Գերմանիայում բողոքի արտահայտման իրավունքի իրացման համար: 8-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորվում է Գերմանիայի յուրաքանչյուր քաղաքացու՝ խաղաղ և անզեն հավաքներ կազմակերպելու և նման հավաքներին մասնակցելու իրավունքը: Այս հիմնական իրավունքն իր բնույթով անմիջականորեն փոխկապակցված է խոսքի և մամուլի ազատության իրավունքների հետ, քանի որ

⁶⁵ Դաշնային սահմանադրական դատարան, 2009թ. հունիսի 30-ի վճիռ, 1956թ. օգոստոսի 17-ի վճիռ:

հավաքները հաճախ անցկացվում են հատկապես՝ տարածվող նյութերի օգնությամբ որոշակի հայացքներ արտահայտելու նպատակով: Խոսքի և մամուլի ազատության իրավունքներն ամրագրված են 5-րդ հոդվածի 1-ին կետում: Ուստի, պաշտպանված է ոչ միայն հավաքների ազատությունը, այլև՝ հավաքների ընթացքում կարծիքներ արտահայտելու ազատության իրավունքը:

8-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ բացօթյա հավաքների դեպքում հավաքների ազատության իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով նախատեսված դեպքերում: Նման սահմանափակումներն ամրագրված են «Հավաքների մասին» Գերմանիայի օրենքում (Versammlungsgesetz) (համեմատի՛ր ստորև ներկայացված նյութի հետ): Այդուհանդերձ, չնայած սահմանափակումների թույլատրելիությանը՝ դրանք պետք է համապատասխանեն Հիմնարար օրենքի դրույթներին և չպետք է խախտեն դրանք:

Քաղաքացիական անհնազանդություն

Քաղաքացիական անհնազանդության դրսևորումների դասակարգումը և իրավական գնահատականը պայմանավորված են բողոքի արտահայտման ընտրված ձևով:

Գերմանիայի իրավական համակարգում քաղաքացիական անհնազանդությունը դիտարկվում է դիմադրության արտահայտման տարբեր ձևերի հետ կապակցմամբ: Որպես կանոն, քաղաքացիական անհնազանդություն ընկալվում է հետևյալ կերպ. «կառավարության՝ կարևոր նշանակություն ունեցող առանձին որոշումների նկատմամբ քաղաքացիների առարկության արտահայտություն՝ բողոքի արտահայտման ցուցադրական կամ խորհրդանշական միջոցներով կամ նույնիսկ կանոնների բացահայտ խախտմամբ էթիկայի տեսակետից անթույլատրելի և անօրինական համարվող կառավարության որոշման կիրառմանն ընդդիմանալու նպատակով»:⁶⁶

Ի տարբերություն 20-րդ հոդվածի 4-րդ կետի մեկնաբանությամբ դիմադրության իրավունքի՝ քաղաքացիական անհնազանդությունն ուղղված է ոչ թե սահմանադրական կարգը՝ որպես այդպիսին կործանումից պաշտպանելուն, այլ միայն կառավարության ընդունած առանձին փաստաթղթերի կամ գործած արարքների դեմ օրինական համարվող միջոցներով բողոքի արտահայտմանը:

Քաղաքացիական անհնազանդությունը որպես այդպիսին հանցագործություն կամ արգելված արարք չի հանդիսանում, և եթե դրա շրջանակներում բողոքի արտահայտման համար ընտրվում է հավաքի ձևը, ապա այն պաշտպանված է հիմնական իրավունքներով: Այդուհանդերձ, նման պաշտպանությունը դադարում է հիմնական իրավունքների շրջանակը գերազանցելու դեպքում:

⁶⁶ Դաշնային սահմանադրական դատարան, 1986թ. նոյեմբերի 11-ի վճիռ:

Հիմնական իրավունքների շրջանակ

8-րդ հոդվածով պաշտպանվում է միայն խաղաղ և անզեն հավաքներ անցկացնելու իրավունքը: Հավաքը խաղաղ չի համարվում, եթե մասնակիցների մեծամասնությունը կատարում է վտանգավորության որոշակի աստիճան ունեցող գործողություններ, օրինակ՝ տարբեր տեսակի բռնություն է գործադրում կամ վնաս է հասցնում մարդկանց և (կամ) գույքին, թեև երրորդ կողմի արժանապատվությունը նվաստացնող հայտարարությունները բավարար հիմք չեն կազմում:⁶⁷

Հավաքը համարվում է զինված, եթե մասնակիցները կրում են է «Ջենքի մասին» օրենքի (Waffengesetz) 1-ին մասում ներկայացված զենքը, այդ թվում՝ հրազեն, դաշույններ կամ կաստետներ, կամ վտանգավոր իրեր, օրինակ՝ բեյսբոլի գարկիչներ: Այն դեպքում, եթե հավաքի մասնակիցները կրում են այսպես կոչված «պաշտպանական զենք», օրինակ՝ վահաններ, սաղավարտներ կամ հակազագային դիմակներ, հավաքները համարվում են անզեն:

Հիմնական օրենքի 8-րդ հոդվածով պաշտպանված չէ զինված կամ ոչ խաղաղ հավաքների անցկացումը, և նման դեպքերում ոստիկանությունը կարող է միջոցներ ձեռնարկել հավաքների մասնակիցների նկատմամբ, օրինակ՝ արգելել հավաքը՝ հաշվի չառնելով հավաքների ազատությամբ պաշտպանված հավաքների մասնակիցների նկատմամբ թույլատրելի միջոցների մասին բարձր պահանջները: Ուստի, քաղաքացիական անհնազանդության դրսևորումները միշտ պետք է լինեն խաղաղ և անզեն, որպեսզի դրանց վրա տարածվի հավաքների ազատությունը:

Այդուհանդերձ, «Հավաքների մասին» օրենքով որոշակի սահմանափակումներ են նախատեսվում բացօթյա հանրային հավաքների անցկացման համար, այդ թվում՝ 14-րդ մասով ամրագրված է հավաքի մասին 48 ժամ առաջ իրավասու մարմիններին ծանուցելու ընդհանուր պահանջը: Ինքնաբուխ՝ նախապես չծրագրված հավաքների համար կարող են լինել բացառություններ: 7-րդ մասի դրույթների համաձայն՝ հավաքը պետք է ունենա դեկավար, ով պատասխանատու է հավաքի ընթացքում կարգուկանոնի պահպանման համար: 17-րդ «ա» մասի համաձայն՝ չի թույլատրվում կրել ինչպես պաշտպանական զենք, այնպես էլ անձի ինքնությունը թաքցնող որևէ հագուստ, իսկ 3-րդ մասի համաձայն՝ անզամ համազգեստ: «Հավաքների մասին» օրենքի դրույթների խախտումները համարվում են վարչական կամ քրեական իրավախախտումներ:

Այլ իրավական սահմանափակումներ

⁶⁷ Դաշնային սահմանադրական դատարան, 2001թ. հոկտեմբերի 24-ի որոշում:

Հիմնական օրենքով նախատեսված պաշտպանությունից զրկվելու հետ մեկտեղ կարող են առաջանալ տարաձայնություններ նաև օրենքով ամրագրված այլ իրավունքների հետ: Քաղաքացիական անհնազանդության առանձին դրսևորումներից կախված՝ հնարավոր են տարաձայնություններ Գերմանիայի Քրեական օրենսգրքի (Strafgesetzbuch) կամ Հասարակական կարգի խախտման մասին օրենքի (Ordnungswidrigkeitengesetz) հետ հիմնականում այն պատճառով, որ քաղաքացիական անհնազանդության դրսևորումները մտադրաբար ուղղված են օրենքի խախտմանը՝ բողոքների արտահայտման հանրային ընկալման մակարդակը բարձրացնելու համար: Քաղաքացիական անհնազանդությանն առավել շատ առնչվում են հետևյալ հարցերը կարգավորող օրենքները՝ հանրությանը հանցագործություն կատարելու սադրանք (Քրեական օրենսգրքի 111-րդ մաս), իրավապահ մարմինների ներկայացուցիչներին դիմադրություն ցուցաբերելը (Քրեական օրենսգրքի 113-րդ մաս), կոտրանքով գողություն (Քրեական օրենսգրքի 123-րդ մաս), հարկադրանք (Քրեական օրենսգրքի 240-րդ մաս) և գույքին վնաս պատճառելու քրեապես պատժելի արարք (Քրեական օրենսգրքի 303-րդ մաս): Առանց որևէ արդարացման կատարված նշված հանցագործությունները պատժելի են:

Դաշնային սահմանադրական դատարանի տեսանկյունից քաղաքացիական անհնազանդությունն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ օրենքի խախտման ընդհանուր արդարացման համար: Դատարանը փաստում է, որ հաճախակի անօրինական արարք գործելու նպատակով կատարված արարքները չեն կարող իրենց իսկ արդարացումը հանդիսանալ:⁶⁸

Այդ իսկ պատճառով քաղաքացիական անհնազանդությունը կարելի է արդարացնել միայն օրենքում արտացոլված իրավունքի (գրված իրավունք, գրավոր օրենք) վրա հիմնված արդարացմամբ: Քրեական իրավունքում առկա են նման արարքների արդարացման որոշ հիմքեր, այդ թվում՝ ինքնապաշտպանությունն ապօրինի ոտնձգություններից (Քրեական օրենսգրքի 32-րդ մաս), արդարացված անհրաժեշտություն (Քրեական օրենսգրքի 34-րդ մաս) կամ դիմադրություն իրավապահ մարմինների ոչ օրինական գործողություններին (Քրեական օրենսգրքի 113-րդ մաս, կետ 3): Այդուհանդերձ, քաղաքացիական անհնազանդության դրսևորումները սովորաբար չեն ուղեկցվում այնպիսի իրավիճակներով, որոնք կարող են որակավորվել որպես ինքնապաշտպանական իրավիճակներ:

Եզրափակելով հարկավոր է նշել, որ քաղաքացիական անհնազանդության շրջանակներում ձեռնարկվող բռնի գործողությունները, որպես կանոն, անօրինական են համարվում և հաճախ պատժելի են, քանի որ երրորդ կողմերի օրինական շահերի խախտումը չի կարող արդարացված լինել: Թեև խաղաղ բողոքները և քաղաքացիական անհնազանդության դրսևորումները պաշտպանված են Հիմնական օրենքներով և օրինական են համարվում, դրանք կարող են սահմանափակվել որոշակի հանգամանքներում՝ բախվող օրինական շահերը պաշտպանելու նպատակով:

⁶⁸ Դաշնային սահմանադրական դատարան, 1986թ. նոյեմբերի 11-ի վճիռ:

Հատուկ դեպք՝ շրջափակում նստացույցի միջոցով

Իրավաբանական տեսանկյունից դժվար է դասակարգել նստացույցների միջոցով հանրային փողոցների և հասարակական վայրերի շրջափակումները, որոնք անհարմարություն են առաջացնում երրորդ անձանց համար: Հաշվի առնելով, որ նման շրջափակումների նպատակն է ազդեցություն գործել հասարակական կարծիքի վրա, բողոքի նման արտահայտությունները մի կողմից, 8-րդ հոդվածի համաձայն, պաշտպանվում են հավաքի ազատության իրավունքով, եթե շրջափակումը խաղաղ է և անզեն: Մյուս կողմից, Գերմանական քրեական իրավասության՝ Քրեական օրենսգրքի 240-րդ մասի համաձայն՝ նման շրջափակումները հանդիսանում են քրեապես պատժելի հարկադրանքի արարք, քանի որ շրջափակումն ինքնին կարող է համարվել բռնություն: Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանը հանգել է այն եզրակացության, որ որևէ արարքի որակումը որպես հավաքների ազատության իրավունքի արտահայտություն կամ հնարավոր քրեական մեղադրանք առաջացնող արարք կարող է որոշվել միայն ամեն դեպքի առանձին ուսումնասիրությամբ՝ դատապարտության չափանիշով: Վճռորոշ է այն հանգամանքը, թե արդյոք շրջափակումն ազդել է երրորդ անձանց հիմնական իրավունքների վրա: Բացի այդ, գնահատման համար նշանակալի գործոններից կարող են լինել շրջափակման տևողությունը, ուժգնությունը, դրա մասին ժամանակին ծանուցման ներկայացումը և շրջափակումից խուսափելու հնարավորությունները:⁶⁹

Էքսկուրս դեպի «Զենքի մասին» Գերմանիայի օրենք

Գերմանիայում զենք պահելու և կրելու իրավունքը խիստ սահմանափակ է: Ինչպես արդեն նշվել է, հավաքների ազատության իրավունքը տարածվում է միայն անզեն հավաքների վրա: «Զենքի մասին» Գերմանիայի օրենքի 42-րդ մասի համաձայն՝ հավաքներից բացի, արգելված է զենք կրել նաև հասարակական միջոցառումների ժամանակ, օրինակ՝ տոնավաճառներին, կինոթատրոնում և համերգներին:

Մեծ վտանգավորություն ներկայացնող զենքը, օրինակ՝ ինքնաձիգ հրազենը, ինչպես նաև՝ ատրճանակը, կաստետները և հատկապես վտանգավոր դանակներն առհասարակ արգելված են: Որսով և որոշ մարզաձևերով զբաղվելու համար անհրաժեշտ հրազենը կարելի է գնել հատուկ թույլտվությամբ և շատ խիստ պահանջներ բավարարելու դեպքում: Պետական իշխանություններն իրավասու և պարտավոր են պարբերաբար ստուգումներ կատարել հրազեն ունեցող անձանց բնակարաններում՝ նման պահանջների պահպանումը ստուգելու համար:

⁶⁹ Դաշնային սահմանադրական դատարան, 2011թ. մարտի 7-ի որոշում:

Առանց համապատասխան թույլտվության արգելված հրազեն կամ զինամթերք պահելը քրեական հանցագործություն է:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՆԴՆԱՆՈՒՐ ՀՌՉԱԿԱԳՐԻ ՆԱԽԱԲԱՆԻ 3-րդ ՄԱՍԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Լինելով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված փաստաթուղթ՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն անմիջականորեն կիրառվող օրենք է հանդիսանում Գերմանիայում: Այդուհանդերձ, դրա հիմքում ընկած գաղափարները հանդիպում են նաև Գերմանիայի հիմնական օրենքում: Հռչակագրի նախաբանի 3-րդ մասի դրույթներն արտահայտված են Գերմանիայի Սահմանադրության 1-ին հոդվածի 2-րդ կետում ամրագրված մարդու հիմնարար իրավունքներով և հիմնական իրավունքների համակարգմամբ: Պետական իշխանությունները պարտավոր են պայմաններ ստեղծել նշված հիմնական իրավունքների իրացման համար, իսկ անհատները կարող են վիճարկել իրենց իրավունքները խախտող ցանկացած գործողություն: Բացի այդ, Հիմնական օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված է անհատների՝ բոլոր իրավունքների վերացման դեպքում դիմադրություն ցուցաբերելու իրավունքը:

Հավելված 4/Լեհաստան⁷⁰

Քաղաքացիական անհնազանդության դրսևորումները Լեհաստանում. Իրավական հայեցակետ

2014թ. հունիսի 6

1. Ներածություն

Քաղաքացիական անհնազանդությունը հանդիսանում է օրենքի նպատակաուղղված խախտում՝ առանց պատժից խուսափելու փորձի:¹ Չոն Ռոլսը սահմանել է քաղաքացիական անհնազանդությունը որպես հանրային, խաղաղ, գիտակցված արարք, որը, սակայն, հակասում է օրենքին և ուղղված է որևէ օրենքի կամ քաղաքականության փոփոխությանը:² Քաղաքացիական անհնազանդությունը դրսևորվում է բացեփաց և հրապարակավ:³ Քաղաքացիական անհնազանդությունն այն վերջնական միջոցն է, որը ձեռնարկվում է մյուս բոլոր հնարավորությունները սպառելուց կամ կորցնելուց հետո:⁴ Այն դրսևորվում է հանուն ոչ թե անհատական, այլ հանրային շահի (այս իմաստով անհատական շահ է համարվում նաև որևէ երկրի օրենքները բարոյական կամ կրոնական անառարկելի ուսմունքի կամ բնական իրավունքի սկզբունքներով փոխարինելու փորձը):⁵

1989 թ. Լեհաստանում Խորհրդային վարչակարգի տապալումից հետո «քաղաքացիական անհնազանդություն» եզրույթը հազվադեպ է գործածվել ինչպես իրավական, այնպես էլ քաղաքական և հասարակական համատեքստում:⁶ Եզրույթի գործածումը հիմնականում սահմանափակվում է փիլիսոփայական և հասարակագիտական աշխատություններով: Գերակայող տեսակետների համաձայն՝ քաղաքացիական անհնազանդությունը դրսևորվում է միայն ժողովրդավարական երկրներում, և այդ իսկ պատճառով կոմունիստական երկրներում (ինչպիսին էր նաև Լեհաստանը մինչ 1989թ.) ծավալվող հասարակական շարժումները դժվար է դասել քաղաքացիական անհնազանդությանը դրսևորումների շարքին:⁷ Նման մոտեցումը նկատելի է նաև Լեհաստանի դատական պրակտիկայում: Քանի որ քաղաքացիական անհնազանդությունը մեծապես պայմանավորված է պատմությամբ և դրա դրսևորման համար անհրաժեշտ միջոցների առկայությամբ, նպատակահարմար է այն դիտարկել ավելի մեծ համատեքստում: Այդ իսկ պատճառով սույն համառոտ զեկույցում ընդգրկվել են նաև սահմանային դեպքեր:

⁷⁰ Վերլուծությունն իրականացվել է Լեհաստանի Վարշավայի համալսարանի Իրավաբանության և կառավարման ֆակուլտետի շրջանավարտ՝ Եվա Ֆաբիանի կողմից:

¹ Barbara Grabowska, *Kilka uwag na temat nieposłuszeństwa obywatelskiego*, Ruch Filozoficzny, nr 4, 2007, էջեր՝ 615-178:

² Marta du Vall, *Nieposłuszeństwo obywatelskie w XXI wieku, Dylematy Polskiej Demokracji*, Kraków 2012, էջ՝ 193:

³ Barbara Grabowska, *Kilka.....*:

⁴ Barbara Grabowska, *Kilka.....*:

⁵ Barbara Grabowska, *Kilka.....*:

⁶ Janusz Kochanowski, *Lepper i Antygona, Obywatelskie nieposłuszeństwo czy pospolite przestępstwo?*, "Rzeczpospolita" 31 հոկտեմբերի – 1 նոյեմբերի 2001թ.:

⁷ Չ. Ռոլսին մեջբերող հեղինակներ՝ Marta du Vall, *Nieposłuszeństwo....*, էջ՝ 193, R. Skrzypiec, *Obywatelskie nieposłuszeństwo w świetle wartości*, BZB nr 21 - *Między lobbieniem a akcją bezpośrednią*:

Իրավական համատեքստում Լեհաստանի դատարանների կողմից առավել հաճախ որդեգրված մոտեցման համաձայն՝ նախկինում քրեական օրենսդրությամբ պատժելի համարվող քաղաքացիական անհնազանդության դրսևորման ձևերում բացակայում էր «հասարակության համար վնասակարության» տարրը: Արդյունքում, նման դրսևորման ձևերը քրեական հանցագործություն չեն համարվում և չեն կարող լինել պատժելի: Դատարանները բազմիցս որդեգրել են այս մոտեցումը Խորհրդային վարչակարգի օրոք կայացրած վճիռների (հիմնականում 1950-1989թթ. ընկած ժամանակահատվածում) վերանայման ժամանակ և չեղյալ են հայտարարվել դրանք 1990-ական թթ սկզբներին կայացված արտահերթ վերաքննիչ վճիռներով:

2. Լեհաստանի սահմանադրությունը

2.1 Լեհաստանի Հանրապետության գործող սահմանադրության (ուժի մեջ է մտել 1997թ. ապրիլի 2-ին) 83-րդ հոդվածով («Պարտավորություններ» բաժին) ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք պետք է հարգի Լեհաստանի Հանրապետության օրենքները: Սահմանադրության որևէ դրույթով չի նախատեսվում օրենքն անարգելու իրավունքը: Ավելին, Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին բաժնի համաձայն՝ Սահմանադրությունը հանդիսանում է Լեհաստանի Հանրապետության գերագույն օրենքը:

2.2 Լեհաստանի Սահմանադրական դատարանի կայացրած որոշումները

Լեհաստանի Սահմանադրական դատարանը սահմանադրական դատական ատյան է, որը լիազորված է Սահմանադրությամբ հաստատված աստիճանակարգման հիման վրա որոշումներ կայացնել ավելի վերադաս օրենքներին ենթադաս օրենքների համապատասխանության վերաբերյալ:

Օրենքն անարգելու իրավունքի մեկնաբանությունը ներկայացվում է Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին կետում, որտեղ ամրագրված է, որ սահմանադրությունը հանդիսանում է Լեհաստանի գերագույն օրենքը: Սահմանադրական դատարանի կայացրած վճիռներից մեկի համաձայն՝ եթե որևէ օրենքի որևէ դրույթ հակասում է սահմանադրությամբ ամրագրված օրենսդրական հիմնարար սկզբունքներին, ապա նման դրույթն օրենքի մաս չի կազմում, և դրա խախտումը չի համարվում սահմանադրության 83-րդ հոդվածի խախտում:⁸ Այդուհանդերձ, կայացվել են նաև հակառակ տեսակետը հիմնավորող վճիռներ:⁹ Սահմանադրական դատարանը շեշտել է, որ օրենքի գերիշխանության սկզբունքի վրա հիմնված ժողովրդավարական երկրում պետք է գործեն այնպիսի ընթացակարգեր, որոնք թույլ կտան վիճարկել և հարցականի տակ առնել քաղաքացիների վրա դրված

⁸ Սահմանադրական դատարանի 2002թ. մայիսի 27-ի վճիռ, գործ թիվ՝ K 20/01, հրապարակվել է 2002 թվականին, OTK-A, No. 3, item 34:

⁹ Սահմանադրական դատարանի 2004թ. դեկտեմբերի 27-ի վճիռ, գործ թիվ՝ SK 35/02, հրապարակվել է 2004 թվականին, OTK-A, No. 11, item 119:

պարտավորությունները: Նման ընթացակարգերը նպաստում են ժողովրդավարական համակարգի ամրապնդմանը՝ թույլ տալով քաղաքացիներին ազդել օրենքով նախատեսված պարտականությունների հետ կապված հարցերի կարգավորման վրա և զերծ պահելով նրանց անօրինական միջոցների դիմելու անհրաժեշտությունից:¹⁰

3. «Համերաշխություն» արհմիութենական շարժում և Լեհաստանի դատական պրակտիկան

«Համերաշխություն» անկախ և ինքնավար արհմիությունը (լեհ.՝ «Niezależny Samorządny Związek Zawodowy», կամ «NSZZ, „Solidarność”») (այսուհետ՝ նաև՝ «Համերաշխություն») հիմնադրվել է 1980 թ. և հանդիսացել է Խորհրդային վարչակարգի երկրներում գործող առաջին անկախ արհմիությունը: «Համերաշխության» ազդեցության տարածումը կասեցնելու համար՝ 1981 թ. դեկտեմբերի 13-ին գեներալ Վոյցեխ Յարուզելսկին (1923-2014), ով այդ ժամանակ վարչապետ և պաշտպանության նախարար էր, հայտարարեց ռազմական դրություն և հասարակական շարժումը որակեց որպես անօրինական:

3.1 Թիվ II KRN 39/92 գործի հանգամանքները

1992թ. մայիսի 12-ին Լեհաստանի Գերագույն դատարանը¹¹ ի դեմս յոթ դատավորի վճիռ է կայացրել քաղաքացիական անհնազանդության վերաբերյալ՝ «Համերաշխություն» արհմիութենական շարժման համատեքստում:

1982թ. օգոստոսի 13-ին, Լեհաստանի շրջանային դատարաններից մեկի որոշմամբ ազատազրկվել է չորս անձ՝ «Համերաշխություն» արհմիութենական շարժումը կառավարության կողմից արգելելուց հետո շարժման գործունեությունը շարունակելու համար: Նշված անձանց մեղադրանք է առաջադրվել ռազմական դրության արդյունքում ստեղծված իրավիճակը, արհմիութենական անդամավճարները մուծելու անհրաժեշտությունը և կառավարությանն ընդդիմանալու նպատակով հանրային դիմադրության հինգ հոգանոց կոմիտեների հիմնումը քննարկելու նպատակով հավաք կազմակերպելու, թռուցիկներ պատրաստելու և տարածելու, հանրային վայրերում կարգախոսներ գրելու, մայիսի 1-ի (Աշխատավորների օր) հանրահավաքը բոյկոտելու կոչեր անելու, ինչպես նաև տեղական դիմադրության կոմիտեների հիմնման և կառավարման հրահանգներ կազմելու և ներկայացնելու համար:

1982թ. դեկտեմբերի 15-ին դատապաշտպանների խորհուրդը Գերագույն դատարանում բողոքարկել է վերոնշյալ գործով ամբաստանյալների դեմ կայացված վճիռը: Դատարանն անփոփոխ է թողել վճիռը: 1992 թ. (հստակ ամսաթիվը հայտնի չէ)՝ Լեհաստանում

¹⁰ Գերագույն դատարանի 2000թ. ապրիլի 18-ի վճիռ, գործ թիվ՝ K 23/99, հրապարակվել է՝ OTK 2000, No. 3, item 89:

¹¹ Գերագույն դատարանի 1992թ. մայիսի 12-ի վճիռ, գործ թիվ՝ II KRN 39/92, հրապարակվել է՝ OSNKW 1992 no. 9-10, item 61, OSA 1992 no. 11, item 1, p. 53, Legalis:

Խորհրդային վարչակարգի տապալումից հետո, Լեհաստանի գլխավոր դատախազը ներկայացրել է վճիռը բեկանելու արտահերթ բողոքարկման դիմում (լեհ.՝ rewizja nadzyczajna): Ըստ գլխավոր դատախազի՝ գործով դատապարտվածների արարքները Լեհաստանի օրենսդրությամբ հանցանք չեն համարվում, քանի որ դրանք հասարակության համար որևէ վնաս չեն ներկայացրել (1969թ. ապրիլի 19-ին ընդունված Քրեական օրենսգրքի¹² 1-ին հոդվածի համաձայն՝ «անձը ենթարկվում է քրեական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ նա գործում է հասարակության համար վնաս ներկայացնող որևէ արարք, որի համար պատիժ է նախատեսվում այդ արարքի կատարման պահին գործող օրենքով»): Այժմ գործում է 1997թ. հունիսի 6-ին ընդունված Քրեական օրենսգրքը¹³):

3.2 Թիվ II KRN 39/92 գործի իրավական հիմքերը

Գերագույն դատարանը վճռել է, որ արտահերթ բողոքարկման դիմումում բերված փաստարկներն արդարացի են: Թեև գործով դատապարտվածներն անտեսել են ռազմական դրության ընթացքում գործող օրենքը, նրանց անհնազանդությունը զուտ «ձևական» բնույթ է կրել: Նրանց արարքները կարելի էր հանցագործություն համարել միայն «մակերեսային» քննությամբ, իսկ դրանց հանցավոր բնույթը հաստատելու համար անհրաժեշտ էր գնահատել նաև այլ գործոնները: Օրենքի պահանջներին չենթարկվելն ինքնին հանցագործություն չի հանդիսանում:

Ըստ Լեհաստանի օրենսդրության՝ քրեական հանցագործություն է համարվում միայն այն արարքը, որը վնասակար է հասարակության համար, այսինքն՝ հանգեցնում է հասարակության համար կարևոր նշանակություն ունեցող արժեքների խարխլմանը: Գերագույն դատարանի համոզմամբ հասարակության համար վնասակարության առկայությունը որոշելիս հարկավոր է հաշվի առնել 1982 թ. Լեհաստանում ստեղծված յուրահատուկ սոցիալական և քաղաքական իրավիճակը: Ամբաստանյալները հավատարիմ են մնացել Համերաշխության շարժմանը՝ համարելով դա իրենց բարոյական պարտքը հայրենիքի առջև և ձեռնարկել են դիմադրության խաղաղ միջոցներ: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ կոմունիստական վարչակարգի հայտարարած ռազմական դրությունը վտանգել է լեհ ազգի համար կենսական նշանակություն ունեցող շահերը և մարդու հիմնարար իրավունքները: Ռազմական դրության ընթացքում իշխող կուսակցությունը հնարավորություն է ստացել իրականացնել երկրի ամբողջական հսկողություն, առանց որևէ իրավական հիմքի ձեռքարկել, քրեական պատասխանատվության ենթարկել և բանտարկել հազարավոր քաղաքացիների: Գերագույն դատարանը նշել է նաև, որ լեհական հասարակությունը չի ընդունել 1981 թվականին հայտարարված ռազմական դրությունը, որը հանգեցրել է մի շարք հանցագործությունների, մինչդեռ Համերաշխության շարժման կողմնակիցները ձեռնարկել են խաղաղ և հասարակության կողմից ընդունելի միջոցներ: Ուստի, այդ միջոցները չեն կարող վնասակար համարվել հասարակության համար: Բացի

¹² Dz.U. 1969 Nr 13, poz. 94:

¹³ Dz.U. 1997 Nr 88, poz. 553:

այդ, նշված միջոցներին դիմած անձինք չեն խախտել Խորհրդային ռեժիմի օրոք Լեհաստանի Ժողովրդական Հանրապետության կողմից վավերացրած Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի միջազգային դաշնագիրը (1966թ.)¹⁴:

3.3 Թիվ II KRN 39/92 գործի մանրամասները

Մինչ թիվ II KRN 39/92 գործով վճիռ կայացնելը, 7 զինվորական դատավորներով ներկայացված Գերագույն (զինվորական) դատարանը 1991թ. ապրիլի 25-ին համանման որոշում է կայացրել թիվ WRN 45/91 գործով:¹⁵ Որոշումը կայացվել է հինգ անձանց վերաբերյալ, ում 1986 թ. մեղադրանք է առաջադրվել 1979-1985թթ. Լեհաստանում սոցիալիստական կարգերի տապալմանն ուղղված գործունեություն ծավալելու համար, մասնավորապես՝ «CDN» և «Reduta» ընդհատակյա տպարանների հիմնում, «ընտրությունները» բոյկոտելու կոչերով հողվածների հրատարակում, կառավարության հանդեպ դիմադրության դրսևորում, իշխող կուսակցության (Լեհաստանի միավորված աշխատավորների կուսակցություն) իշխանության և Խորհրդային Միության հետ դաշինքի վիճարկում, Լեհաստանում ապօրինի հեռուստատեսային և ռադիոհաղորդումների պատրաստում, մի քանի հանրային սկզբիների կազմակերպում, արտարժույթների, տպագրական սարքերի և քաղաքական գրականության ներմուծում Լեհաստան մաքսանենգ ճանապարհով, անձը հաստատող փաստաթղթերի կեղծում, արտասահմանյան կազմակերպությունների հետ կապի պահպանում և մասնակցություն «CDN» ապօրինի ընդհատակյա տպարանի աշխատանքներին: Այս գործով 5 ամբաստանյալների վերաբերյալ Զինվորական դատարանի 1986 թ. կայացրած վճիռները բողոքարկվել են Զինվորական դատախազի կողմից 1991թ. մարտի 15-ին:

Գերագույն դատարանը հայտնել է, որ ժողովրդավարական երկրներում քաղաքական անհնազանդությունը սովորական դարձած գործունեություն է, և այն չի կարող համարվել քրեապես պատժելի հանցանք: Նման գործունեության նախաձեռնողներին քրեական պատասխանատվության ենթարկելը հանդիսացել է քրեական իրավունքի խախտում, քանի որ նրանց արարքներում բացակայում է հանցագործության տարրը (Գերագույն դատարանը նկատի ունի մասնավորապես բռնությունը):

Գործով դատապարտվածների արարքներից ոչ մեկը վնասակար չէր հասարակության համար, ուստի նրանք չպետք է ենթարկվեին քրեական պատասխանատվության: Գերագույն դատարանն ընդգծել է, որ նրանց արարքներն արժանի են ոչ թե արհամարհանքի, այլ՝ ճանաչման և հարգանքի, քանի որ նրանք գործել են ոչ թե հանուն իրենց սեփական շահի, այլ՝ հանուն այլոց շահերի պաշտպանության: Նրանք իրացրել են Խորհրդային ռեժիմի օրոք Լեհաստանի Ժողովրդական Հանրապետության կողմից վավերացրած Քաղաքացիական և

¹⁴ Dz.U. 1977 Nr 38, poz. 167:

¹⁵Գերագույն դատարանի 1991թ. ապրիլի 25-ի որոշում, գործ թիվ WRN 45/91, OSNKW 1991/10-12/49:

քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի միջազգային դաշնագրով (1966)16 ամրագրված իրենց իրավունքները, և նրանց նպատակն էր նպաստավոր պայմաններ ստեղծել Լեհաստանի ժողովրդավարացման բարեփոխումների ընթացքի համար: Նրանք հարցականի տակ են առել գործող սոցիալ-տնտեսական համակարգը: Հասարակությունը մեծամասամբ նույնպես դեմ էր այդ համակարգին, և դատախազները քաջատեղյակ էին այդ մասին: Ի վերջո, Գերագույն դատարանը նշել է, որ կարելի է արդարացնել այն անհատներին, ովքեր դիմադրում են ամբողջատիրական համակարգին՝ քննադատելով այն և փորձելով բարելավել երկրում տիրող իրավիճակը յուրաքանչյուր մարդ էակին վերապահված քաղաքական իրավունքների միջոցով, նույնիսկ այն դեպքերում, եթե նրանց արարքները ձևականորեն համարվեն քրեական հանցանք, քանի որ նման արարքները հասարակության համար վնասակար չեն և ինքնին քրեական հանցագործություններ չեն հանդիսանում:

«Հանցագործության» և հասարակության համար վնասակարության գործոնի նկատմամբ Գերագույն դատարանի մոտեցումը տարբերվում է՝ կախված այն հանգամանքից, թե երբ է կատարվել հանցանքը՝ Խորհրդային շրջանում, թե՞ 1989 թ. Լեհաստանում ժողովրդավարական օրենքի գերակայության վերականգնումից հետո: Թեև Գերագույն դատարանի մոտեցումը վիճարկվել է մի շարք նշանավոր լեհ գիտնականների կողմից,¹⁷ այն շարունակում է գերակայել: Գերագույն դատարանն այս մոտեցման հիման վրա վճիռներ է կայացրել համապատասխան մեղադրանքներով դատապարտվածների նպատասխանատվության ենթարկելուց շատ տարիներ անց: Այդուհանդերձ, նման վճիռները մեծ կարևորություն են ներկայացնում դրանց կայացման օրոք դեռևս կենդանի դատապարտյալների, ինչպես նաև հասարակության լայն զանգվածների համար:

Գերագույն դատարանը նույնանման մոտեցում է դրսևորվել նաև թիվ II KRN 69/9118 գործով 1991թ. փետրվարի 27-ին կայացրած վճռում: Գործի շրջանակներում մեղադրանք է առաջադրվել Լեհաստանի ապստամբ ուժերում 1950-1952թթ. ժամանակահատվածում (այսինքն՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից և Լեհաստանում Խորհրդային կարգերի հաստատումից հետո) ծառայող անձին: Այդ գործով կայացված վճռում շեշտվում են մարդու հիմնարար իրավունքներն առհասարակ, և մասնավորապես՝ ահաբեկչության դեմ ուղղված ինքնապաշտպանության (անհատական և հավաքական) իրավունքը: Գործի համատեքստի ռազմական բնույթի պատճառով նշված արարքը չի կարող բնորոշվել որպես քաղաքացիական անհնազանդության դրսևորում: Այդուհանդերձ, Գերագույն դատարանն այս վճիռը մեջբերում է քաղաքացիական անհնազանդության համատեքստում հասարակության համար վնասակարության գործոնին առնչվող այլ գործերում:

3.4 Անդրադարձը թիվ II KRN 39/92 գործին Լեհաստանի նախադեպային իրավունքում

¹⁶ Dz.U. 1977 Nr 38, poz. 167:

¹⁷ A. Zoll, *Materialne określenie przestępstwa*, Prok. i Pr. 1997, nr 2, s. 9:

¹⁸ Թիվ II KRN 69/91 գործով Գերագույն դատարանի 1991թ. փետրվարի 27-ի վճիռ, OSNKW 1991/4-6/21:

1992թ. մայիսի 12-ին թիվ II KRN 39/92 գործով Գերագույն դատարանի վճիռը մեջբերվել է մի շարք այլ վճիռներում: Հարկավոր է հիշել, որ Լեհաստանում դատական վճիռները, այդ թվում՝ Գերագույն դատարանի կայացրած վճիռները, պարտադիր օրենսդրական ուժ չունեն, և դատարանը տեսականորեն կարող է համանման գործերով որդեգրել տարբեր մոտեցումներ:

(ա) Գործ III KK 469/06

2007թ. փետրվարի 1-ին Գերագույն դատարանը վճիռ է կայացրել թիվ III KK 469/0619 գործով: Գործը հարուցվել է 1982 թ. կատարված քրեական հանցագործության կապակցությամբ՝ անցորդների շրջանում Քաղաքացիական ոստիկանության (համարժեք է Լեհաստանի Ժողովրդական Հանրապետությունում գործող ոստիկանությանը) գլխամասային շենքն այրելու կոչեր անելու համար: 1992 թ. գործով ամբաստանյալն արդարացվել է: Գերագույն դատարանի համաձայն՝ հանցագործությունն ուղղված էր Լեհաստանի ժողովրդավարացմանը և ամբողջատիրական վարչակարգի տապալմանը, ինչն օրինական է համարվում նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի միջազգային դաշնագրով (1966թ.)²⁰ և խրախուսվում է Լեհաստանի հասարակության կողմից: Այդ իսկ պատճառով նշված արարքը քրեական հանցագործություն չի հանդիսանում:

(բ) Գործ III KK 211/06 գործ

2006թ. դեկտեմբերի 5-ին Գերագույն դատարանը վճիռ է կայացրել թիվ III KK 211/06 գործով:²¹ Գործը հարուցվել է մի քանի անձանց կողմից կատարած քրեական հանցագործության կապակցությամբ՝ 1981թ. դեկտեմբերի 13-ից (ռազմական դրություն հայտարարելու ամսաթիվ) մինչև 1983թ. Ժամանակահատվածում «Համերաշխություն» շարժման աշխատանքներին իրենց ակտիվ մասնակցության համար: Մեղադրյալները դատապարտվել են 1984 թ.: 2006 թվականին Լեհաստանի Մարդու իրավունքների պաշտպանը վճռաբեկ բողոք է ներկայացրել, և 1984 թ. վճիռը բեկանվել է: Գերագույն դատարանը եզրակացրել է, որ տվյալ անձինք, «Համերաշխություն» շարժման աշխատանքներին մասնակցելով, հասարակության համար որևէ վնաս չեն ներկայացրել, ձեռնարկել են խաղաղ միջոցներ և ձգտել Լեհաստանում վերականգնել ժողովրդավարությունը: Ուստի, նրանց արարքները չեն կարող (և չէին կարող) որակվել որպես քրեական հանցագործություն:

(գ) Գործ III KK 339/05 գործ

¹⁹ Թիվ III KK 469/06 գործով Գերագույն դատարանի 2007թ. փետրվարի 1-ի վճիռ, OSNwSK 2007/1/342, Biul.PK 2007/7/15:

²⁰ Dz.U. 1977 Nr 38, poz. 167:

²¹ Թիվ III KK 211/06 գործով Գերագույն դատարանի 2006 թ. դեկտեմբերի 5-ի վճիռ, OSNwSK 2006/1/2357:

Թիվ III KK 339/05 գործով²² 2006թ. ապրիլի 4-ին կայացրած վճռում Գերագույն դատարանն անդրադարձել է «Համերաշխություն» շարժման մասնակիցների գործով 1983 թ. վճռին: 2005 թ. Լեհաստանի Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, և 1983 թ. դատավճիռը բեկանվել է: Այս առնչությամբ Գերագույն դատարանը նշել է, որ ռազմական դրության ընթացքում կատարած քրեական հանցագործությունները հանդես են եկել որպես ոտնձգություն մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների նկատմամբ: Հասարակությունը չի ընդունել նշված քրեական օրենսդրությունը և աջակցել է ընդդիմությանը: «Համերաշխություն» շարժման աշխատանքներին շարունակական մասնակցությունը համահունչ էր Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի միջազգային դաշնագրին (1966): Նման արարքները չպետք է համարվեին և չեն հանդիսանում քրեական հանցագործություն, քանի որ դրանք որևէ վնաս չեն հասցրել հասարակությանը:

(դ) Գործ III KK 394/05

2006թ. հունիսի 7-ին Գերագույն դատարանը վճիռ է կայացրել թիվ III KK 394/05 գործով: Գործը հարուցվել է վեց անձանց դեմ, ում 1959 թ. մեղադրանք է առաջադրվել Քաղաքացիական ոստիկանության աշխատակիցների և Քաղաքացիական խորհրդի շենքի վրա հարձակում գործելու, ինչպես նաև այլ նման հարձակումներ գործելու կոչեր անելու համար: 1959 թվականից պահպանված դատական փաստաթղթերի և գործին առնչվող այլ նյութերի հիման վրա Գերագույն դատարանը պարզել է, որ գործով դատապարտված վեց անձինք նշված արարքը կատարել են ի պատասխան ոստիկանության կողմից կրոնական խորհրդանիշերի պղծմանը (քանդել են քրիստոնեական եկեղեցու զոհասեղանը և առգրավել ծիսակարգի համար անհրաժեշտ պարագաները): Գերագույն դատարանը նշել է, որ գործով դատապարտվածների արարքներն արդարացված են 1952թ. հուլիսի 22-ի Լեհաստանի Սահմանադրությամբ ամրագրված կրոնի ազատության իրավունքով և արտացոլել են լեհական հասարակության մեծ մասի տեսակետները: Այդ իսկ պատճառով գործով դատապարտվածների արարքները հասարակության համար վնասակար չէին և, ըստ էության, չպետք է համարվեին քրեական հանցագործություն: 1959 թ. կայացված մեղադրական դատավճիռները չեղյալ են հայտարարվել, իսկ գործի վարույթը կարճվել է:

(ե) Գործ III KRN 2/03

Թիվ III KRN 2/03 գործով²³ 2003թ. ապրիլի 3-ի վճռում Գերագույն դատարանը վերահաստատել է 1990-ական թվականներին կայացված դատավճիռներում իր արտահայտած տեսակետը Խորհրդային վարչակարգի կողմից անօրինական համարվող

²² Թիվ III KK 339/05 գործով Գերագույն դատարանի 2006թ. ապրիլի 4-ի վճիռ, OSNwSK 2006/1/727:

²³ Թիվ III KRN 2/03 գործով Գերագույն դատարանի 2003թ. ապրիլի 3-ի վճիռ, LEX no. 78403:

արհմիությանը, մասնավորապես՝ «Համերաշխություն» շարժման աշխատանքներին մասնակցության վերաբերյալ, որը քրեական հանցագործություն է համարվել ռազմական դրության ժամանակ: Գերագույն դատարանը շեշտել է, որ ռազմական դրության ընթացքում կատարած քրեական հանցագործություններն անընդունելի են հասարակության համար և խախտել են մարդու իրավունքները և ազատությունները, մինչդեռ ռազմական դրության հետևանքներին խաղաղ միջոցներով դիմադրությունը կենսական նշանակություն է ունեցել հասարակության համար: Այդ արարքներում բացակայել է հասարակությանը վնաս հասցնելու տարրը, ուստի՝ դրանք չէին կարող համարվել քրեական հանցագործություն:

(զ) Գործ IV KK 220/03

Թիվ IV KK 220/03 գործով²⁴ 2004թ. մարտի 18-ին կայացրած վճռում Գերագույն դատարանը վերահաստատել է, որ «Համերաշխություն» շարժման մասնակիցների արարքները չպետք է քրեական հանցագործություն համարվեն: Թիվ IV KK 220/03 գործով մեղադրյալները 1982 թ. դատապարտվել են հավաքների ներկա գտնվելու համար, որոնց մասնակիցները քարերով և բուխ առարկաներով հարձակվել են Քաղաքացիական ոստիկանության ծառայողների վրա: Գերագույն դատարանը բեկանել է 1982 թվականի վճիռը՝ հղում կատարելով հռոմեական իրավունքի հետևյալ դրույթին՝ «nullum crimen sine periculo sociali» (հասարակության համար վտանգի բացակայության պայմաններում խոսք չի կարող լինել հանցագործության մասին):

(գ) Գործ IV KK 486/02

2003թ. փետրվարի 4-ին թիվ IV KK 486/02 գործով կայացրած վճռում Գերագույն դատարանը հաստատել է թիվ II KRN 39/92 գործի առնչությամբ ներկայացված մեկնաբանությունը: Գործը հարուցվել է «Համերաշխություն» շարժման երեք մասնակիցների դեմ, ովքեր 1981թ. դեկտեմբերին շարժման անօրինական հայտարարումից հետո շարունակել են մասնակցել դրա աշխատանքներին՝ տարածելով «Համերաշխության» տպագրված նյութերը, գումար հավաքելով եկեղեցում պատարագի անցկացման համար և «Համերաշխության» պաստառ պատրաստելով 1983 թվականին Լեհաստան այցելած Հռոմի Պապ Հովհաննես Պողոս II-ի համար: Նշված խաղաղ միջոցները, որոնք թույլատրելի են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի միջազգային դաշնագրով (1966թ.) և հասարակության համար որևէ վնաս չեն ներկայացնում, չէին կարող քրեական հանցագործություն համարվել: Դատարանի կարծիքով՝ հասարակությունը պետք է ոչ միայն ընդունելի համարի նման արարքները, այլև ճանաչի և հարգի դրանք: Գերագույն դատարանը չէղյալ է հայտարարել այդ գործով 1984 թվականին կայացրած վճիռները:

²⁴ Թիվ IV KK 220/03 գործով Գերագույն դատարանի 2004թ. մարտի 18-ի վճիռ, OSNwSK 2004 nr 1, poz. 613, Legalis:

Հղիության արհեստական ընդհատում

1993 թ. Լեհաստանի օրենսդրությամբ սահմանվել է, որ հղիության արհեստական ընդհատումները թույլատրվում են միայն որոշակի արտակարգ դեպքերում:²⁵ 1997 թ. ծավալվել են հասարակական շարժումներ, որոնց մասնակիցները կոչ էին անում քաղաքացիներին չվճարել հարկերի մի փոքր մասը, քանի որ կառավարությունը կարող էր այդ գումարներով մարել օրենքով ցուցված հղիության արհեստական ընդհատումների հետ կապված ծախսերը: Թեև այս ակցիան քաղաքացիական անհնազանդության դրսևորման բնորոշ ձև էր, որոշ փորձագետներ ավելի հակված էին այն ընկալելու որպես քաղաքական գործիք:²⁶

Լեհաստանում աշխատող որոշ բժիշկներ հրաժարվում են օրենքով ցուցված դեպքերում կատարել հղիության արհեստական ընդհատումներ՝ վկայակոչելով «բժշկական գործ» մասնագիտության հետ կապված հարցերը կարգավորող Լեհաստանի օրենսդրության²⁷ «խղճի ազատության» մասին դրույթը, ինչպես նաև՝ էթիկայի սկզբունքները: Տարիներ շարունակ «խղճի ազատության» մասին դրույթը բուռն քննարկումների տեղիք է տվել Լեհաստանում, ընդ որում՝ քննարկման առարկա է դարձել նաև այն պահանջը, որ հղիության արհեստական ընդհատում կատարել հրաժարվող բժիշկները պետք է ուղղորդեն կանանց այն բժշկի մոտ, ով զբաղվում է նման գործունեությամբ: Նշված պատճառներով բժիշկներից շատերը հրաժարվում են նշել որևէ մեկ այլ բժշկի՝ հղիության ընդհատմանը խոչընդոտելու նպատակով: Բացի այդ, Լեհաստանի որոշ հիվանդանոցներ հայտարարել են, որ բժիշկներից ոչ մեկը հղիության արհեստական ընդհատում չի կատարում: Պրոֆեսոր Եվա Լետովսկայի (Լեհաստանում Մարդու իրավունքների առաջին պաշտպան (1987-1992թթ.), Լեհաստանի Գերագույն վարչական դատարանի անդամ (1999-2002թթ.) և Լեհաստանի Սահմանադրական դատարանի անդամ (2002-2012թթ.) կարծիքով՝ հիվանդանոցները չեն կարող կիրառել «խղճի ազատության» մասին դրույթը նույն ծավալով, ինչ առանձին բժիշկները: Ականավոր գիտնականի և դատավորի կարծիքով՝ հավասարության սկզբունքը որդեգրած երկրում նշված դրույթի կիրառումը պետք է կրի անհատական ազատության բնույթ, այլ ոչ մի վերածվի հասարակությանը պարտադրվող չափանիշի:²⁸

5. Համացանցի միջոցով դրսևորվող քաղաքացիական անհնազանդություն

Համացանցը հնարավորություն է ընձեռում քաղաքացիական անհնազանդության դրսևորման նոր ձևերի զարգացման համար: Ի սկզբանե, համացանցի հիմքում ընկած առանցքային գաղափարներն են՝ ազատ արտահայտվելու իրավունքը և տեղեկատվության հասանելիությունը: Համացանցը նպաստել է քաղաքացիական անհնազանդության ոլորտում

²⁵ Ustawa z dnia 7 stycznia 1993 roku o planowaniu rodziny, ochronie płodu ludzkiego i warunkach dopuszczalności przerywania ciąży (Dz.U. 1993 Nr 1, poz. 87):

²⁶ R. Skrzypiec, *Obywatelskie nieposuszeństwo w świetle wartości*, BZB nr 21 - *Między lobbieniem a akcją bezpośrednią*, <http://zb.eco.pl/bzb/21/wartosci.htm>.

²⁷ Ustawa z dnia 5 grudnia 1996 roku o zawodzie lekarza i lekarza dentystry (Dz.U. 2011 Nr 277, poz. 1634), Article 39:

²⁸ <http://www.lex.pl/czytaj/-/artykul/prof-letowska-klauzula-sumienia-ogranicza-prawa-pacjenta>.

տարվող աշխատանքի դյուրացմանը՝ հնարավորություն տալով, օրինակ, մուտք գործել որևէ կայք և տեղեկություններ ստանալ նախատեսված բողոքի ակցիայի, հասարակական շարժման ծրագրի կամ քննարկման համար առանձնացված նյութերի մասին կամ բողոքի արտահայտման նամակներն ուղարկել էլեկտրոնային տարբերակով, արգելափակել համապատասխան կայքերը (այսպես կոչված «վիրտուալ նստացույց»), «կոտրել» համապատասխան կայքերը (օրինակ՝ կայքի բովանդակությունը փոխելու նպատակով), ստեղծել համակարգչային վիրուսներ և մուտք գործել ներքին ցանցային համակարգեր: Բողոքի դրսևորման նման միջոցների դիմող անձանց ասում են կիրեռակտիվիստներ կամ կայքեր «կոտրող» ակտիվիստներ (անգլ.՝ «hacktivists»):²⁹

Ստորև ներկայացվում են Լեհաստանում համացանցի միջոցով դրսևորվող քաղաքացիական անհնազանդության ձևերի օրինակները.

Լեհաստանի Աշխատանքի նախարարության կայքի և Լեհաստանի վարչապետի յոթ ինտերնետային կայքերի վրա 2008 թվականին կատարված կիրեռհարձակումներ,³⁰

- Փախստականների հարցերով խորհրդի, Հիդրոէկոլոգիական հետազոտության համար պատասխանատու պետական հանձնախմբի և Կենտրոնական քննական հանձնաժողովի ինտերնետային կայքերի վրա 2010 թվականին գործած կիրեռհարձակումներ (հանցագործության փաստն ապացուցելու համար տուժող կողմերը պետք է մեղադրական բողոք ներկայացնեին, նման բողոքի բացակայության պատճառով իրավախախտները պատասխանատվության չեն ենթարկվել),³¹

- Լեհաստանի մի քանի համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, առողջապահական և մշակութային հաստատությունների կայքերի վրա 2011 թվականին գործած կիրեռհարձակումներ (կայքերում տեղադրվել են քննադատական բովանդակությամբ հաղորդագրություններ Լեհաստանի կրթական համակարգի, մասնավորապես՝ աշակերտների և ուսանողների կողմից թմրանյութերի և ալկոհոլի չարաշահման վերաբերյալ: Ինչպես հայտնի է դարձել, իրավախախտները պատասխանատվության չեն ենթարկվել, քանի որ նրանց արարքը հասարակության համար շատ փոքր վնաս է պարունակել)³²,

- Լեհաստանի խորհրդարանի, Վարչապետի աշխատակազմի և երկրի նախագահի աշխատակազմի կայքերի վրա 2012 թվականին գործած կիրեռհարձակումներ («Anonymous» միջազգային խումբը խոստովանել է «Կեղծումների դեմ պայքարի վերաբերյալ առևտրային համաձայնագիրը» (ACTA) վավերացնելու պատրաստակամության մասին Լեհաստանի իշխանությունների հայտարարությանն ի պատասխան կիրեռհարձակման պատրաստումը և իրագործումը (լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս հաջորդ բաժինը)³³:

²⁹ Marta du Vall, Nieposuszenieństwo ..., էջ՝ 198:

³⁰ Marta du Vall, Nieposuszenieństwo..., էջ՝ 199:

³¹ Marta du Vall, Nieposuszenieństwo..., էջ՝ 199:

³² Marta du Vall, *Nieposuszenieństwo...*, էջեր՝ 199-200:

³³ <http://niezalezna.pl/22177-zmaskowany-atak-hakerow>.

Կիբեռակտիվիզմը տարբերվում է քաղաքացիական անհնազանդության դրսևորման հիմնական ձևերից, քանի որ համացանցն ընձեռնում է անանունություն պահպանելու ավելի մեծ հնարավորություն: Կիբեռակտիվիզմի դրսևորման պարագայում ավելի հեշտ է խուսափել պատժից, մինչդեռ հասարակական անհնազանդության հատկանիշներն են՝ պատժամիջոցների ընդունումը և բացահայտ գործունեությունը:

6. «Կեղծումների դեմ պայքարի վերաբերյալ առևտրային համաձայնագրի» (ACTA) դեմ Լեհաստանում ծավալված բողոքը

«Կեղծումների դեմ պայքարի վերաբերյալ առևտրային համաձայնագիրը» (ACTA) մի շարք պետությունների միջև կնքված համաձայնագիր է, որով հաստատվում են մտավոր սեփականության իրավունքների պահպանման միջազգային չափանիշները:³⁴ Եվրոպական Միությունն ընդունել է համաձայնագիրը 2011 թ., երբ ԵՄ նախագահող երկիրը Լեհաստանն էր: 2012թ. հունվարին համաձայնագիրը ստորագրելուց հետո՝ նույն թվականի փետրվար ամսին, Լեհաստանը հայտարարել է, որ այն կասեցրել է վավերացման գործընթացն անբավարար հասարակական քննարկումների անցկացման պատճառով: 2012թ. հուլիսի 4-ին ԵՄ Խորհրդարանը հրաժարվել է համաձայնագրից:

Լեհաստանի կառավարության կողմից «Կեղծումների դեմ պայքարի վերաբերյալ առևտրային համաձայնագրի» նախնական ստորագրումը (մինչ համաձայնագրի վավերացման գործընթացի սկիզբը) մեծ արձագանք է բարձրացրել ինչպես Լեհաստանում, այնպես էլ արտասահմանում, այդ թվում՝ Լեհաստանի կառավարության թվով մոտ 20 ինտերնետային կայքերի վրա գործած կիբեռհարձակումներ, (2012թ. հունվարի 23-ի կիբեռհարձակումների համար պատասխանատվությունն իր վրա է վերցրել է «Anonymous» խումբը), Լեհաստանի վարչապետի կայքի «կոտրում» (2012թ. հունվարի 23-ին), համացանցի միջոցով բողոքի արտահայտման այլ ձևեր (այդ թվում՝ որոշ կայքէջերի խափանում), հասարակական կազմակերպությունների (Internet Society Polska, Fundacja Nowoczesna Polska, Fundacja Panoptykon) բողոքի ակցիաներ և հազարավոր մարդկանց մասնակցությամբ մի քանի ցույցեր մի շարք քաղաքներում (Կրակով, Վրոցլավ, Շեշին, Բիդգոշ, Թորուն, Բելոստոկ, Գդինյա, Թարնով, Կատովիցե, Քյեյցե, Էլբլոնգ, Կոզալին, Ռադում, Պլոնսկ, Էլբ): «Կեղծումների դեմ պայքարի վերաբերյալ առևտրային համաձայնագրի» վավերացման դեմ իրենց բողոքն արտահայտելու համար մասնակիցները կրել են Գայ Ֆոքսի դիմակներ: Անհատական տվյալների պաշտպանության հարցերով Լեհաստանի գլխավոր տեսուչը հայտնել է, որ վերոնշյալ համաձայնագրի ընդունման արդյունքում կարող է տուժել Լեհաստանի Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը և առաջարկել է Լեհաստանի կառավարությանը չվավերացնել համաձայնագիրը: Համաձայնագրի ընդունման դեմ են արտահայտվել նաև մի քանի լեհ քաղաքական գործիչներ՝ Խորհրդարանի նիստի ժամանակ կրելով Գայ Ֆոքսի դիմակներ

³⁴ Wikipedia.org, 2014թ. մայիս (http://en.wikipedia.org/wiki/Anti-Counterfeiting_Trade_Agreement#European_Union_2).

(2012թ. Հունվարի 26): Ի վերջո, վարչապետ Դոնալդ Տուսկը հայտարարել է, որ համաձայնագիրը չի վավերացվի, իսկ դրա ընդունման մասին նախկինում արված հայտարարություններն անվանել է թյուրիմացություն:³⁵

7. Եհովայի վկաներ

1995թ. նոյեմբերի 10-ին կայացրած վճռում³⁶ Գերագույն դատարանը նշել է, որ քրեական իրավախախտում հանդիսացող արարքները կարող են համարվել օրենքի նկատմամբ հիմնավորված անհնազանդության դրսևորումներ, եթե տվյալ օրենքը հակասում է խղճի և կրոնի ազատության շրջանակներում ամրագրված դավանանքի ազատության մասին սահմանադրական դրույթին:

Վերոնշյալ գործով դատապարտվել և ազատազրկվել է երկու կին՝ Եհովայի վկաների աղանդի մասին տպագիր նյութեր պատրաստելու և տարածելու համար: Քանի որ այդ նպատակով գործածված տպագրական մեքենաները գրանցված չէին, գրաքննության վարչությունը չէր կարող վերահսկել նման նյութերի տպագրումը: 1960թ. հոկտեմբերի 25-ին առաջին աստիճանի դատարանի կայացրած վճիռը չի բողոքարկվել: 1995 թ. Արդարադատության նախարարությունն արտահերթ բողոքարկման ընթացակարգով վճիռն ուղարկել է Գերագույն դատարան:

Արտակարգ բողոքարկման դիմումը քննելուց հետո Գերագույն դատարանն ընդգծել է, որ սոցիալիստական վարչակարգի տարիներին Եհովայի վկաների աղանդը գաղտնի կազմակերպություն չի հանդիսացել: Աղանդի ներկայացուցիչները մի քանի անգամ տեղեկացրել են Լեհաստանի իշխանություններին իրենց գոյության և կրոնական սկզբունքների մասին: Գրավոր նյութերի պատրաստումը կրոնական դավանանքի կարևորագույն բաղադրիչներից է: 1952 թ. Լեհաստանի սահմանադրությամբ ամրագրված է կրոնի ազատությունը: Այն փաստը, որ 1946 թ. գործող գրաքննության³⁷ մասին իրավական դրույթները տարածվել են նաև կրոնական նյութերի վրա, բնորոշ է ամբողջատիրական վարչակարգին: Թեև այս գործով դատապարտվածների արարքները ձևականորեն (թղթի վրա) հանցագործություն են համարվել, դրանք հասարակության համար որևէ վնաս չեն պարունակել, ուստիև քրեական իրավունքի իմաստով հանցագործություն համարվել չեն կարող:

8. Քաղաքացիական անհնազանդության դրսևորումները լեհ փաստաբանների շրջանում.

Լեհ փաստաբանները հրաժարվում են խախտել ծառայողական գաղտնիքի պահպանման պարտավորությունը

³⁵ Wikipedia.pl, 2014թ. մայիս (http://pl.wikipedia.org/wiki/Anti-Counterfeiting_Trade_Agreement).

³⁶ Թիվ II KRN 137/95 գործով Գերագույն դատարանի 1995թ. նոյեմբերի 10-ին կայացրած վճիռ, OSNKW 1996 nr 1-2, poz. 13, str. 54, Wokanda 1996 nr 3, str. 11, Biul. Inf. Pr. 1997 nr 1, str. 44, Legalis:

³⁷ *Dekret z dnia 5 lipca 1946 r. o utworzeniu Głównego Urzędu Kontroli Prasy, Publikacji i Widowisk (Dz. U. Nr 34, poz. 210):*

8.1 Լեհ փաստաբանները պարտավոր են պահպանել փաստաբանական գաղտնիքը

Լեհաստանում աշխատող փաստաբանները պարտավոր են ապահովել իրավաբանական ծառայություններ մատուցելու ընթացքում ստացված բոլոր տեղեկությունների գաղտնիությունը և անվտանգությունը: Այս հիմնական սկզբունքը, որը բնորոշ է իրավաբանական մասնագիտությանը,³⁸ հաստատվում է լեհ փաստաբանների մասնագիտական էթիկայի օրենսգրքով:³⁹ Այդուհանդերձ, Լեհաստանի Քրեական դատավարության օրենսգրքում կա մի դրույթ, որի համաձայն դատարանը կարող է կարգադրել դատաքննության գործընթացի մասնակիցներին ժամանակավորապես անտեսել իրենց ծառայողական գաղտնիքի (այդ թվում՝ փաստաբանական գաղտնիքի) պահպանման պարտավորությունը քրեական գործի քննության ժամանակ, եթե օրինակ՝ տվյալ վկայի ցուցմունքը հանդիսանում է արդարադատության իրականացման համար անհրաժեշտ պայման կամ որևէ փաստի միակ ապացույց:⁴⁰ Սակայն քրեական գործերի վարույթում որպես դատապաշտպան հանդես եկող փաստաբանների՝ ծառայողական գաղտնիքի պահպանման պարտավորության անտեսումն արգելվում է:⁴¹

8.2 Փաստաբանների գերագույն խորհրդի թիվ 1/VIII/94 որոշում

1994 թ. ընդունած որոշումներից մեկում Լեհաստանի Փաստաբանների գերագույն խորհուրդը⁴² կոչ է արել փաստաբաններին հրաժարվել քրեական դատաքննության ժամանակ վկայություն տալուց նույնիսկ այն դեպքերում, երբ որպես վկա դատակոչվեն դատարանի կամ դատախազի կողմից: Փաստաբանների գերագույն խորհրդի ներկայացուցիչները նշել են, որ ծառայողական գաղտնիքի պահպանման պարտավորությունը ժամանակավորապես անտեսելու մասին դատարանի կարգադրությունը չի կարող որևէ կերպ ազդել փաստաբանների կողմից՝ իրենց պարտավորության կատարման վրա, քանի որ այդ պարտավորությունը պետք է գերակայի:⁴³ Լեհաստանի Փաստաբանների գերագույն խորհրդի այս որոշումն ակնհայտորեն հակասում է Լեհաստանի Գերագույն դատարանի դիրքորոշմանը⁴⁴ և մեջբերվում է որպես լեհ փաստաբանների կողմից քաղաքացիական

³⁸ Փաստաբանների միջազգային ասոցիացիայի կողմից ընդունված Էթիկայի միջազգային օրենսգրքի 14-րդ բաժին, Մեքսիկո, 1964թ. հունիսի 29:

³⁹ Ներկայումս գործող Լեհ փաստաբանների մասնագիտական էթիկայի օրենսգրքի 19-րդ հոդված, (*Zbiór Zasad Etyki Adwokackiej i Godności Zawodu (Kodeks Etyki Adwokackiej)*), (լրամշակված տեքստը՝ Փաստաբանների գերագույն խորհրդի 2011թ. նոյեմբերի 19-ի թիվ 52/2011 որոշման մեջ:

⁴⁰ Լեհաստանի Քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդված, *Kodeks postępowania karnego z dnia 6 czerwca 1997 roku (Dz.U. 1997 Nr 89, poz. 555)*:

⁴¹ Լեհաստանի Քրեական դատավարության օրենսգրքի 178-րդ հոդված, *Kodeks postępowania karnego z dnia 6 czerwca 1997 roku (Dz.U. 1997 Nr 89, poz. 555)*:

⁴² Փաստաբանների գերագույն խորհրդի 1994թ. հունիսի 18-ի թիվ 1/VIII/94 որոշում:

⁴³ Մեջբերված է Փաստաբանների գերագույն խորհրդի փոխնախագահի խոսքից, Ms. Joanna Agacka-Indecka, *Tajemnica zawodowa adwokata – znaczące rozstrzygnięcie sądów (cz. II)*, *Palestra* no. 9-10/2005.

⁴⁴ Թիվ I KZP 30/98 գործով Գերագույն դատարանի 1999թ. փետրվարի 23-ի որոշում, OSNKW 1999/3-4/15, Prok.i Pr.-wkł. 1999/4/6, Biul.SN 1999/2/10, Wokanda 1999/4/11, M.Prawn. 1999/4/42:

անհնազանդության դրսևորման օրինակ:⁴⁵ Նշված օրինակը հանդիսանում է քրեական արդարադատության համակարգի և փաստաբանական գաղտնիքի պահպանման պարտավորության միջև ծագող հակասությունների դրսևորման հիմնական դեպքը:

⁴⁵ Piotr Krzysztof Sowiński, *Zwolnienie adwokata z obowiązku zachowania tajemnicy zawodowej w procesie karnym*, MoP 2004, Nr 3:

Հավելված 5/Միացյալ Թագավորություն⁷¹

Քաղաքացիական անհնազանդություն. Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության իրավական դաշտ

4 ապրիլի, 2013թ.

Սույն հուշագրում ամփոփված են Միացյալ Թագավորությունում բողոք արտահայտելու իրավունքը կարգավորող իրավական և սահմանադրական դաշտը, ոտնահարումից անձանց իրավունքների պաշտպանության օրենքով սահմանված հիմնական միջոցները և պետության գործողությունները վերահսկող համակարգը: Հուշագրում ամփոփված են նաև Միացյալ Թագավորությունում բողոք արտահայտելու իրավունքների սահմանափակումները, տարածված իրավախախտումները և նշված իրավունքը սահմանափակելու համար ոստիկանության կողմից կիրառվող մարտավարությունը: Հուշագիրը կազմելիս մեր ուշադրության կիզակետում էր Անգլիայի և Ուելսի օրենսդրությունը: Մասնավորապես, հուշագրում ընդգրկված են հետևյալ ոլորտները՝

- Միացյալ Թագավորությունում բողոքի արտահայտման օրինաչափ միջոցները և քաղաքացիական անհնազանդությունը կարգավորող իրավական դաշտը,
- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի նախաբանի 3-րդ մասում նշված բռնակալության և ճնշման դեմ ընդվզելու իրավունքի մեկնաբանումը Միացյալ Թագավորության կողմից,
- և լրացուցիչ հստակ հարցեր բռնակալությունից ու ճնշումից սահմանադրական պաշտպանության միջոցների և բողոքի արտահայտման խաղաղ և բռնի ձևերի սահմանագծի վերաբերյալ, ինչպես նաև Միացյալ Թագավորության դիրքորոշումը գենք ունենալու, պահելու և կիրառելու վերաբերյալ:

Մենք չենք դիտարկել ընտրական գապումների և հակակշիռների համակարգի և դատական վերահսկման հետ կապված հարցերը, ինչպես նաև Խորհրդարանական օմբուդսմենի, հատուկ հանձնաժողովների և բաց կառավարման (հրապարակայնություն), տեղեկատվության ազատության և մամուլի ազատության դերի հետ կապված հարցերը: Այդուհանդերձ, վերոնշյալ բոլոր հարցերը որոշակի դերակատարում ունեն Միացյալ Թագավորության հասարակության գապումների և հակակշիռների համակարգի ընդհանուր կառույցում, որոնք ուղղված են հասարակությունը պաշտպանելու բռնակալության կամ ճնշման հանգեցնող քաղաքական համակարգի չարաշահումներից:

Սույն հուշագիրը կազմված է հետևյալ բաժիններից.

1. Միացյալ Թագավորության Սահմանադրության և իրավական համակարգի ներածություն.

⁷¹ Վերլուծությունը իրականացրել է «Ռիդ Սմիթ» իրավաբանական գրասենյակը. [©] www.reedsmith.com

2. Քաղաքացիական անհնազանդություն և մարդու իրավունքներ.
3. Քրեական հանցագործություններ և ոստիկանության լիազորություններ.
4. հասարակական կարգի խանգարմանն առնչվող սովորությանին իրավունքի սկզբունքներ.
5. Սահմանադրական սկզբունքներ.
6. Դատական և քաղաքական վերաբերմունքի պատմական օրինակներ.
7. Եզրափակիչ մաս:

1. ՄԻԱՅՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ և ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Չհամակարգված սահմանադրություն

Միացյալ Թագավորությունը տարբերվում է մյուս պետություններից նրանով, որ չունի սահմանադրության մեկ միասնական փաստաթուղթ: Այդ իսկ պատճառով Միացյալ Թագավորության սահմանադրությունը երբեմն անվանում են «չգրված սահմանադրություն»: Այդուհանդերձ, ավելի ճիշտ կլինի այն անվանել չհամակարգված սահմանադրություն, որն իրենից ներկայացնում է ժամանակի ընթացքում ընդունված տարբեր օրենսդրական փաստաթղթերի, կոնվենցիաների և դատական որոշումների համագումար: Հենց այդ բազում աղբյուրներում են ամրագրված անձանց հիմնարար իրավունքներն ու ազատությունները: Նման սահմանադրության առավելությունը կայանում է նրանում, որ ժամանակի ընթացքում իրավունքները կարող են կատարելագործվել: Իսկ թերությունը կայանում է նրանում, որ իրավունքները ենթակա են աստիճանական քայքայման հետագա օրենքների ազդեցությամբ:

1.2 Նախադեպի սկզբունք

Միացյալ Թագավորության իրավական համակարգի հաջորդ ուշագրավ հայեցակետն այն է, որ իրավական լիազորությունները և սկզբունքները սահմանվում են ինչպես օրենսդրությամբ (խորհրդարանի կողմից ընդունված օրենքներով և օրենսդրական ակտերի տեսքով պատվիրակված օրենսդրությամբ), այնպես էլ սովորությանին իրավունքով: Սովորությանին իրավունքը հանդիսանում է դատարանների նախադեպային իրավունք, որի հիմքում ընկած է ժամանակի ընթացքում ձևավորված դատական նախադեպի համակարգը: Սովորությանին իրավունքի լիազորությունները և սկզբունքները ավելի ձկուն են և փոփոխվելու միտում ունեն: Նման լիազորությունները և սկզբունքները կարող են կատարելագործվել անկախ որևէ օրենքից և գործածվել որևէ առանձին օրենսդրական դրույթի մեկնաբանությունը և տարբեր իրավիճակներում կիրառումը որոշելու համար:

1.3 Դայսիի սկզբունքներ

1.4 Քաղաքացիական ազատությունների և մարդու իրավունքների պաշտպանության նկատմամբ Անգլիայի ավանդական մոտեցումը կրում է Դայսիի ազդեցությունը:⁷² Ընդհանուր առմամբ,

⁷² Դայսի, Սահմանադրության օրենք

նման մոտեցման հիմքում ընկած էր այն դիրքորոշումը, որ սովորության իրավունքի շրջանակներում անհատական ազատությունը մեծ մասամբ երաշխավորվում էր այն սկզբունքով, որ քաղաքացիներն ազատ են իրենց գործողություններում այնքանով, որքանով դրանք միանշանակն արգելված չեն օրենքով:

Սույն սկզբունքով մարդիկ ինքնաբերաբար օգտվում են կրոնի ազատությունից, ազատ արտահայտվելու և միավորումներ կազմելու ազատությունից, և նրանց կողմից նշված իրավունքների կենսագործումը կարող է սահմանափակվել միայն սովորության իրավունքի կամ օրենքների հստակ սահմանափակումների առկայության պարագայում: Ինչպես արդեն նշվել է, այս մոտեցման թերությունը կայանում է նրանում, որ ազատությունները ենթադրաբար խոցելի են ժամանակի ընթացքում քայքայման նկատմամբ:

2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

2.1 Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա և Մարդու իրավունքների մասին օրենք:

Միացյալ Թագավորությունում կիրառելի է նաև Եվրոպական իրավունքը: Միացյալ Թագավորությունն ուղղակիորեն սատարել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ)՝ ընդունելով Մարդու իրավունքների մասին օրենքը: Միացյալ Թագավորության օրենսդրությամբ պետական մարմինները, այդ թվում՝ ոստիկանությունը, պարտավոր են գործել ՄԻԵԿ-ի դրույթներին համապատասխան:

2.2 Ստորև ներկայացվում է ճնշման և քաղաքացիական անհնազանդության վերաբերյալ բազմաբնույթ քննարկումներին առնչվող ՄԻԵԿ-ով ամրագրված իրավունքների ոչ ամբողջական ցանկը:

Հոդված	Իրավունք	Համապատասխանություն	Վերապահում
5	Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք ⁷³	Նշված իրավունքը հատկապես կարևոր է այն դեպքերում, երբ բողոքի ցույցերի ժամանակ ոստիկանությունն անցնում է զսպողական մարտավարության, ինչպես նշված է ստորև:	Շատ քիչ բացառություններ, օրինակ՝ օրինական ձերբակալություն
8	Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք	Բողոքի ցույցերի ժամանակ կատարվող աննրբանկատ հսկողությունը ⁷⁴ և խուզարկումը ⁷⁵ կարող է հանգեցնել այս իրավունքի ռոտահարմանը:	Վերապահումներով իրավունք

<https://archive.org/details/introductiontos04dicegoog> (Հղումը լրացվել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից)

⁷³ Այս իրավունքը երբեմն անվանում են «անձի անձեռնմխելիության դրույթ»:

⁷⁴ *Klass v Germany* (1979–80) 2 EHRR 214.

⁷⁵ *Gillan and Quinton v UK* (2010) 50 EHRR 45.

10	Արտահայտվելու ազատություն	Բողոքի ակցիային կամ ցույցին մասնակցությունը հանդիսանում է արտահայտվելու ազատություն, որն ամրագրված է կոնվենցիայի 10-րդ հոդվածով: ⁷⁶	Վերապահումներով իրավունք
11	Հավաքների և միավորումների ազատություն	Այս ազատությունը ներառում է խաղաղ բողոքի ցույցեր անցկացնելու իրավունքը:	Վերապահումներով իրավունք

2.3 Վերապահումներով իրավունքներ

8-11-րդ (ներառյալ) հոդվածները հանդիսանում են «վերապահումներով իրավունքներ»: Դա նշանակում է, որ նշված իրավունքները բացարձակ և անխախտելի չեն: Այսինքն՝ կարելի է միջամտել դրանց իրականացմանը, եթե նման միջամտությունը.

- 2.3.1 բխում է օրենքից,
- 2.3.2 անհրաժեշտ միջոց է ժողովրդավարական հասարակությունում,
- 2.3.3 հետապնդում է իրավաչափ նպատակ, և
- 2.3.4 համաչափ է:⁷⁷

2.4 Իրավաչափ նպատակներ.

Իրավաչափ նպատակները ներառում են հետևյալը՝

- 2.4.1 ազգային կամ հանրային անվտանգության շահերից բխող գործողություններ,
- 2.4.2 հասարակական կարգի խանգարման կամ հանցագործության կանխում,
- 2.4.3 առողջության կամ բարոյականության պահպանում,
- 2.4.4 այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանություն:

2.5 Միացյալ Թագավորությունում վերոնշյալ հոդվածների կիրառումը և սահմանափակումը որոշվում է Անգլիայի և Ուելսի, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) ներքոհիշյալ նախադեպային իրավունքի շրջանակներում:

2.6 6-րդ մասի 1-ին կետով անօրինական են համարվում նաև կոնվենցիայով ամրագրված իրավունքներին հակասող պետական մարմինների գործողությունները (կամ անգործությունը,⁷⁸ ինչը համարժեք է նման գործողություններին):

⁷⁶ *Sunday Times v UK (No 2)* 14 EHRR 229.

⁷⁷ «Համաչափությունը» դասվում է ՄԻԵԿ-ի առանցքային հասկացությունների շարքին:

⁷⁸ Չի ներառում օրենսդրական նորմեր հաստատելու ձախողումը:

2.7 2004 թվականին Լորդերի պալատը հայտնել է, որ ահաբեկչության մեջ կասկածյալների անորոշ ժամկետով կալանավորումը չի համապատասխանում կոնվենցիայով ամրագրված ազատության իրավունքին:⁷⁹

3. ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Անգլիայի օրենսդրությունն ավանդաբար պաշտպանել է հավաքների և միավորման ազատությունն այլ ազատությունների նմանությամբ: Այսինքն՝ մարդիկ ազատ են իրենց գործողություններում այնքանով, որքանով իրենց վարքագիծը մնում է օրենքի սահմաններում: Ընդհանուր առմամբ, քաղաքական նպատակներով միավորումներ կազմելու (ներառյալ՝ քաղաքական կուսակցություններ, շահախմբեր կազմելը և այլն) անհատների իրավունքը որևէ կերպ չի սահմանափակվում: Այնուամենայնիվ, Միացյալ Թագավորությունում գործում են տարբեր օրենսդրական ակտեր, որոնք էապես սահմանափակում են անհատի ազատությունները, ներառյալ՝ բողոք արտահայտելու իրավունքը: Ստորև և թիվ 2 հավելվածում ներկայացված են առավել կիրառելի օրենսդրական ակտերը և իրավախախտումները:

«Հասարակական կարգի պահպանման մասին» օրենք (1986թ.)

3.2 Իրավախախտումներ

«Հասարակական կարգի պահպանման մասին» 1986թ.-ի օրենքով սահմանվում են քաղաքացիական անհնազանդության ընդվզումներից բխող մի շարք քրեական իրավախախտումներ: Նման իրավախախտումները, որոնք ենթադրում են զանգվածային անկարգություններ, հասարակական կարգի խանգարում բռնի միջոցներով և բռնության սադրանք, կիրառելի են միայն այն դեպքերում, երբ ցուցարարները գործադրում են կամ սպառնում են գործադրել բռնություն: Հատկանշական է, որ բռնություն խրախուսող կամ սպառնալից գրությունների կամ նյութերի տարածումը որոշ հանգամանքներում նույնպես համարվում է հանցավոր գործունեություն:

«Հասարակական կարգի պահպանման մասին» օրենքի համապատասխան մասերը և դրանցով նախատեսվող պատժամիջոցներն ավելի մանրամասն ներկայացված են թիվ 2 և 3 հավելվածներում: 2011 թ.⁸⁰ Լոնդոնում տեղ գտած զանգվածային անկարգությունների և 2010 թ.⁸¹ ուսանողների բողոքի ցույցերի մասնակիցներից շատերին է ներկայացվել հասարակական կարգի խանգարման մեղադրանքը:

⁷⁹ A v Home Secretary [2004] UKHL 56.

⁸⁰ <http://www.bbc.com/news/uk-england-london-15433404>.

⁸¹ <http://www.theguardian.com/education/2010/nov/10/student-protest-fees-violent>.

3.3 Երթերի և հավաքների առնչությամբ ուստիկանության կողմից պարտադրվող պայմանները

Ի լրումն քաղաքացիական անհնազանդության հետ կապված իրավախախտումներին՝ «Հասարակական կարգի պահպանման մասին» օրենքով հանրային երթերի և հավաքների կազմակերպիչներին ներկայացվում են որոշակի պահանջներ, իսկ ուստիկանության աշխատակիցներին շնորհվում են պետական քաղաքականության շահերից բխող պայմաններ առաջադրելու լիազորություններ:

3.4 Նախնական ծանուցում

«Հասարակական կարգի պահպանման մասին» օրենքի համաձայն՝ երթերի և (կամ) հավաքների կազմակերպիչները պարտավոր են նախնական գրավոր ծանուցում ներկայացնել ուստիկանություն, բացառությամբ այն դեպքերի, երբ բավարար հիմքեր կան նման ծանուցման նպատակահարմար չլինելու համար:

3.5 Ուստիկանության կողմից պարտադրվող պայմաններ

Ուստիկանության վերադաս պաշտոնյաները կարող են պարտադրել երթերի և (կամ) հավաքների անցկացման պայմանները: Նախապես պարտադրվող պայմանները պետք է ներկայացվեն գրավոր տեսքով, սակայն տվյալ ցույցին կամ երթին ներկա ուստիկանության վերադաս աշխատակիցը կարող է պայմաններ ներկայացնել նաև բանավոր:

Ուստիկանության աշխատակիցները կարող են պարտադրել հանրային երթերի և (կամ) հավաքների անցկացման որոշակի պայմաններ միայն այն դեպքերում, երբ հավատացած են, որ տվյալ երթը կամ հանրահավաքը.

3.5.1 այլոց ահաբեկելու նպատակն է հետապնդում կամ

3.5.2 կարող է հանգեցնել հասարակական կարգի խանգարման, գույքին կամ համայնքի ներկայացուցիչներին վնաս հասցնելուն:

Նպատակահարմարության չափանիշը ենթադրում է համապատասխան օբյեկտիվ հիմքերի առկայություն:

Կարող են պարտադրվել միայն 3.5.1 և 3.5.2 կետերով նախատեսված հնարավոր դեպքերի կանխմանն ուղղված պայմաններ: Հանրային երթերի և (կամ) հավաքների անցկացման պայմանները կարող են առնչվել դրանց երթուղուն կամ որոշ տարածքներ մուտք գործելու արգելքին: Ինչ վերաբերում է ցույցերին, ապա կարող են պարտադրվել միայն այնպիսի պայմաններ, որոնք առնչվում են դրանց անցկացման վայրին, տևողությանը և մասնակիցների առավելագույն քանակին:

Որոշ դեպքերում ոստիկանության պետը կարող է դիմել տվյալ վարչական շրջանի խորհրդին՝ երթն առհասարակ արգելելու հայցով:

2013 թվականին նավթի գտման գործարանի դեմ Բալքոմբում անցկացված բողոքի ցույցերի ժամանակ ձերբակալվել է 4 ակտիվիստ «Հասարակական կարգի պահպանման մասին» օրենքի շրջանակներում ոստիկանության կողմից պարտադրված պայմանը (այն է՝ հատկացված տարածքից դուրս բողոքի ակցիան չձավալելու պայմանը) խախտելու համար:⁸²

Նախնական ծանուցման պահանջների, ոստիկանության համապատասխան լիազորությունների գործածման հանգամանքների և օրենքի դրույթն անտեսելու վերաբերյալ լրացուցիչ մանրամասները ներկայացված են Թիվ 2 հավելվածում:

Ղիտավորյալ վնաս պատճառելու համար սահմանված պատասխանատվության մասին օրենք (1971թ.)

3.6 Իրավախախտում

Այն դեպքերում, երբ բողոքարարները կարգախոսներ են գրում պետական կամ մասնավոր գույքի վրա, ներառյալ՝ մայթերին կամ շենքերին, կամ երբ նրանք վնասում են գույքը, ոստիկանությունն իրավունք ունի նրանց ձերբակալելու և մեղադրանք ներկայացնելու Ղիտավորյալ վնաս պատճառելու համար:

3.7 Պաշտպանություն

Անձը կարող է պաշտպանվել գույքը վնասելու մասին մեղադրանքից, եթե այդ քայլին դիմել է իր սեփական կամ որևէ այլ անձի գույքը պաշտպանելու նպատակով և այդ պահին հավատացած է եղել, որ գույքն անմիջական պաշտպանության կարիք ուներ: Պաշտպանության միջոցները պետք է լինեն ողջամիտ:

2014 թվականի հունվարին Բերմենգեմի համալսարանի դեմ անցկացվող բողոքի ցույցի ժամանակ ձերբակալվել են մի խումբ ուսանողներ Ղիտավորյալ վնաս պատճառելու համար, այն է՝ շենքերը վնասելու համար:

Ճանապարհային երթևեկությունը խոչընդոտելու մասին թիվ S137 օրենք

3.8 Իրավախախտում

Անձը մեղավոր է համարվում ճանապարհային երթևեկությունը խոչընդոտելու համար, եթե նրա կողմից ճանապարհի որևէ հատված Ղիտավորյալ զբաղեցնելու հետևանքով խանգարվում է այլ անձանց կողմից ճանապարհի օգտագործումը, բացառությամբ հարգելի

⁸² <http://investigatingbalcombeandcuadrilla.com/2014/03/27/mps-arrest-at-balcombe-anti-fracking-protest-was-disproportionate/>

պատճառների: ՄԻԵԿ-ի վերոնշյալ 10-րդ և 11-րդ հոդվածներով նախատեսվում են «հարգելի պատճառների» հիմքերը:

3.9 Նախադեպային իրավունք

3.9.1 Westminster City Council v Haw [2002] EWHC 2073
Գործի հանգամանքներ՝ Խորհրդարանական հրապարակում անցկացվել է բողոքի ցույց:

Սկզբունք՝ Հիմք ընդունելով բողոք արտահայտելու իրավունքը՝ բողոքի ցույցը հարգելի պատճառ է համարվել ճանապարհը փակելու համար: Այդուհանդերձ, այդ նախադեպից հետո ներկայացվել է Խորհրդարանական հրապարակում անցկացվող բողոքի ցույցերը կարգավորող օրենք:

3.9.2 Birch v Director of Public Prosecutions [1999] All ER (D) 1431
Գործի հանգամանքներ՝ Ագրոքիմիական ռազմավարական վերլուծություն իրականացնող արտադրական գործարանի անիրավաչափ գործողությունների դեմ բողոքող անձը թռուցիկներ էր բաժանում և այնուհետև պառկել էր ճանապարհին՝ գործարան տարածք մտնելու փորձ անող ավտոմեքենաների առջև:

Սկզբունք՝ Թեև թռուցիկներ բաժանելը սովորաբար համարվում է ընդունելի, ճանապարհին պառկելը չի հանդիսանում և չի կարող հանդիսանալ հարգելի պատճառ ճանապարհը փակելու համար:⁸³

Ոստիկանության համակարգի բարեփոխումների և սոցիալական պատասխանատվության մասին օրենք (2011)

3.10 Ոստիկանության համակարգի բարեփոխումների և սոցիալական պատասխանատվության մասին 2011թ.-ի օրենքով հանցագործություն է համարվում Խորհրդարանական հրապարակում «արգելված գործողություններին» մասնակցելը, եթե ոստիկանության կամ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներն արգելել են տվյալ անձին մասնակցել նման գործողությունների:

3.11 Արգելված գործողությունը դադարեցնելու կամ առհասարակ չսկսելու մասին հրահանգը կարող է վավերական մնալ մինչև 90 օր:

3.12 Արգելված գործողությունները ներառում են՝

3.12.1 ձայնը ուժեղացնող և աղմուկ արձակող սարքավորումների (ինչպիսիք են՝ բարձրախոսը կամ ձայնի ուժեղացուցիչը) գործածումը, բացառությամբ Խորհրդից ստացված թույլտվություն ունենալու դեպքերի,

3.12.2 վրանի կամ քնելու համար նախատեսված այլ սարքի տեղակայումը կամ դրա մեջ քնելը,

⁸³ Հատուկ նշում. Այս գործով վճիռը կայացվել է նախքան Մարդու իրավունքների մասին օրենքի ուժի մեջ մտնելը, և վճռի մեջ որևէ անդրադարձ չի արվում ՄԻԵԿ-ին: Չեռևաբար, եթե տվյալ գործը վերանայվեր հիմա, կարող էր կայացվել այլ վճիռ:

3.12.3 քնելու նպատակով տարածքում ննջապարկ, ներքնակ կամ նմանօրինակ առարկաներ տեղադրելը կամ

3.12.4 քնելու համար նախատեսված ցանկացած առարկաների գործածում տարածքում գիշերը քնելու համար:

Հակաահաբեկչական օրենսդրություն

3.13 Ահաբեկչության վտանգը հանգեցրել է բազմաբնույթ հակաահաբեկչական օրենքների ընդունմանը:⁸⁴ Հակաահաբեկչական օրենքներում «ահաբեկչությունը» սահմանվում է լայն իմաստով՝ ներառելով ցանկացած գործողություն՝ որի նպատակն է որևէ երկրի կառավարության վրա ազդելու համար առաջ մղել որևէ քաղաքական հարց:⁸⁵ Քանի որ այս սահմանումը հստակ բնորոշում է բազում ահաբեկչական հանցագործություններ, վարքի մի շարք դրսևորումներ, ներառյալ՝ արգելված կազմակերպություններին անդամակցելը (օրինակ՝ Ալ Քաիդա կամ Համազ) և բողոքի ցույցերին մասնակցելը համարվում են պոտենցիալ քրեականացված կամ գտնվում են ոստիկանության հսկողության տակ:

3.14 Մարդկանց կանգնեցնելու և խուզարկելու լիազորություն

Ահաբեկչության մասին 2000թ.-ի օրենքի 44-րդ մասի դրույթներով ոստիկանության բաժանմունքի պետն իրավասու է ընտրել որոշակի տարածք, որտեղ կանգ են առնում անձինք և խուզարկել անձանց և նրանց մեքենաները՝ ահաբեկչության հետ կապված իրեր փնտրելու համար: Նախկինում բավականին երկար ժամանակ նման տարածք էր ընտրվում Մեծ Լոնդոն վարչական շրջանը:⁸⁶ Ընդ որում՝ անձանց կարելի է խուզարկել առանց նման իրերի մասին որևէ հիմքերի առկայության:

Կանգ չառնելու և (կամ) վերոնշյալ օրենքի 44-րդ մասի շրջանակներում գործող ոստիկանի աշխատանքը խոչընդոտելու փորձը համարվում է քրեական հանցագործություն:⁸⁷ Օրինակ՝ ոստիկանության աշխատակիցները կարող են կանգնեցնել անձանց Ոստիկանության և քրեական գործով ապացույցների մասին 1984թ.-ի օրենքի դրույթներով, եթե կասկածներ կան, որ տվյալ անձը կրում է գողացած իրեր, զենք կամ այնպիսի իրեր, որոնք կարող են գործածվել գույքին վնաս հասցնելու կամ այլ հանցանք գործելու համար:

Օրենքի այս մասի դրույթներով սահմանված քաղաքացիներին կանգնացնելու և խուզարկելու լիազորությունները գործածվել են 2005 թվականին՝ այն անձանց ձերբակալելու և քաղաքական կուսակցության համաժողովին նրանց մուտքը կանխելու համար, ովքեր

⁸⁴ Ահաբեկչության կանխման մասին օրենք (Հյուսիսային Իռլանդիա) 1974-89թթ., Ահաբեկչության մասին օրենք (2000թ.), Ահաբեկչության և հանցավորության դեմ պայքարելու և անվտանգություն պահպանելու մասին օրենք (2001թ.), Ահաբեկչության կանխման մասին օրենք (2005թ.), Ահաբեկչության մասին օրենք (2006թ.)

⁸⁵ Ահաբեկչության մասին օրենք (2000թ.)

⁸⁶ <http://www.liberty-human-rights.org.uk/human-rights/justice-and-fair-trials/stop-and-search/section-44-terrorism-act>

⁸⁷ Թմրամիջոցների առնչությամբ՝ Թմրամիջոցների չարաշահման մասին 1973թ.-ի օրենք. խուզարկում գողացած իրեր, զենք կամ այնպիսի իրեր գտնելու համար, որոնք կարող են գործածվել գույքին վնաս հասցնելու կամ այլ հանցանք գործելու համար:

նախկինում դուրս են նետվել ժողովի դահլիճից խոսնակին սուտասան անվանելու պատճառով:⁸⁸

3.15 Քրեական իրավախախտումներ

Գոյություն ունեն ահաբեկչության հետ կապված տարբեր խոսքային բնույթի իրավախախտումներ, ներառյալ՝ «ահաբեկչություն քարոզելը»: Քանի որ ահաբեկչության սահմանումը լայնիմաստ է, այս իրավախախտումը կարելի է վերագրել ցուցարարներին և կառավարության դեմ արտահայտվող անձանց: Այդուհանդերձ, գոյություն չունի ցուցարարներին իրավախախտում վերագրելու որևէ գրանցված դեպք: Ուշագրավ է, որ այս իրավախախտումն այնպես է ձևակերպված, որ հաշվի չի առնվում ահաբեկչություն քարոզելու տվյալ անձի մտադրությունը:

3.16 Նախնական կալանք

Ահաբեկչության հանցագործության կասկածով ձերբակալված անձանց կարելի է ոստիկանությունում կալանքի տակ պահել առանց մեղադրանք ներկայացնելու մինչև 14 օր (Ահաբեկչության մասին 2006թ.-ի օրենք):

4. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԽԱՆԳԱՐՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ՍՈՎՈՐՈՒԹՅՅՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐ

4.1 Բողոքի ցույցերի ժամանակ ոստիկանության աշխատակիցները հաճախ դիմում են սովորույթային իրավունքով ամրագրված «հասարակական կարգի խանգարումը» կանխելու կամ դադարեցնելու նպատակով ողջամիտ գործողություն ձեռնարկելու մասին դրույթին: Ընդ որում, հասարակական կարգի խախտումն ըստ էության քրեական հանցագործություն չի հանդիսանում, քանի որ տվյալ անձանց մեղադրանք չի ներկայացվում, նրանք չեն դատապարտվում կամ պատժվում հասարակական կարգը խախտելու համար:

4.2 Այդուհանդերձ, ոստիկանության աշխատակիցներն իրավասու են ձերբակալել նման անձանց՝ հասարակական կարգի խախտումը դադարեցնելու կամ կանխելու համար: Հասարակական կարգի խախտման առավել տարածված սահմանումն արձանագրվել է «R v Howell» գործում, [1982] QB 416, որտեղ հասարակական կարգի խախտումը բնորոշվում է որպես արդեն կատարված կամ սպառնացող այնպիսի գործողություն, որը.

4.2.1 վնասակար է որևէ անձի համար,

4.2.2 վնասակար է որևէ անձի գույքի համար նրա ներկայությամբ,

4.2.3 կարող է վնաս պատճառել և տվյալ անձին, և նրա գույքին կամ

4.2.4 որևէ մեկի մոտ մտավախություն է առաջացնում վերոնշյալի կապակցությամբ:

⁸⁸ http://news.bbc.co.uk/1/hi/uk_politics/4292342.stm

4.3 Ոստիկանության աշխատակիցները մեծամասամբ հղում են կատարում հասարակական կարգի խախտման պարագայում իրենց լիազորություններին, թեև ունեն այլ նմանօրինակ ավելի հստակ սահմանված լիազորություններ: Օրինակ, 2010 թվականին ուսման վարձերի բարձրացման դեմ ուղղված բողոքի ցույցերի ժամանակ 7 անձ ձերբակալվել էր առանց ծանրացնող հանգամանքների հարձակման, դիտավորյալ վնաս պատճառելու կամ հասարակական կարգը խանգարելու համար, մինչդեռ մնացած 146 անձանց մեղադրանք էր առաջադրվել ոստիկանի՝ ցրվելու մասին հրամանը չկատարելուց հետո հասարակական կարգը խախտելու համար:

Ոստիկանների վրա հարձակվելու/նրանց դիմադրություն ցուցաբերելու կամ իրենց մասնագիտական պարտականությունների կատարմանը խոչընդոտելու մասին Ոստիկանության օրենքի 89-րդ մասի 2-րդ կետ

4.4 Ոստիկանության աշխատակիցը կարող է նշված օրենքի մասով ամրագրված լիազորությունների շրջանակներում ձերբակալել յուրաքանչյուր անձի, ով հարձակվի իր վրա, դիմադրի կամ խոչընդոտի սովորությանին իրավունքով նախատեսված՝ հասարակական կարգի խախտումը կամ դրա վերահաս վտանգը կանխելու համար իր մասնագիտական պարտականությունների կատարմանը:

4.5 Անգլիայի իրավունքի շրջանակներում արձանագրված են ոստիկանների վրա հարձակման հետևյալ օրինակները՝ հրելը, հարվածելը, թքելը, որևէ մեկին որևէ մեկի վրա նետելը, հրացան հանելը, իսկ որոշ դեպքերում նաև՝ միայն խոսքային միջոցները:

4.6 «Խոչընդոտում» է համարվում ցանկացած դիտավորյալ գործողություն, որը դժվարացնում է ոստիկանի կողմից իր պարտականությունների կատարումը: Նման գործողությունների թվին են դասվում որևէ շենք ոստիկանի մուտքը խանգարելը կամ ապատեղեկատվությունը:

4.7 Ստորև դիտարկվում է հասարակական կարգի խախտման սկզբունքի և հիմնարար իրավունքների առանցքային լարումն ընդգծող նախադեպային իրավունքը:

4.8 Նախքան բողոքի ցույցը ոստիկանների գործողությունները

R (Laporte) v CC of Gloucestershire [2006] UKHL 55

Սկզբունքներ. 1) Ոստիկանները պետք է միջոցներ ձեռնարկեն միայն «անմիջական» վտանգի պարագայում, 2) Ոստիկանները չպետք է անխտիր ձեռնարկեն բոլոր միջոցները:

Գործի հանգամանքներ. Ցուցարարներն ավտոբուսներով մեկնում էին դեպի օդային բազա՝ իրաքյան պատերազմի դեմ իրենց բողոքն արտահայտելու համար: Ոստիկանները ետ ուղարկեցին բոլոր ավտոբուսները, քանի որ ոստիկանության հետախուզական ծառայությունը բացահայտել էր, որ մի խումբ ուղևորներ պատրաստվում էին բռնություն գործադրել, սակայն ոստիկանները չկարողացան հայտնաբերել նման մտադրություն ունեցող ուղևորների:

Վճիռ՝ Ոստիկանների գործողություններն անիրավաչափ էին, քանի որ նրանք գործել են վաղաժամ և ոչ համաչափ:

4.9 Ցույցերի ընթացքում ոստիկանների ձեռնարկած գործողություններ

Վերջին տարիներին ոստիկանները որդեգրել են այնպիսի մարտավարություն, որով մեծ խմբերով ցուցարարներ են կալանավորվում երկար ժամկետով, մինչ վերանա բռնության վտանգը: Նման մարտավարության կիրառմամբ ոստիկանները գործում են հասարակական կարգի խախտումը կանխելու համար սովորության իրավունքով իրենց լիազորությունների շրջանակներում:

4.10 Անժամկետ կալանավորում

Անժամկետ կալանավորումից բխում են հետևյալ հիմնական իրավական հարցերը.

4.10.1 այն մասնավորապես ներառում է անձանց երկարաժամկետ կալանավորում իրենց կամքին հակառակ, հաճախ անհարմար պայմաններում և առանց բավարար սննդի կամ ջրի,

4.10.2 անմեղ անցորդներ, ովքեր ցույցին մասնակցելու նպատակ անգամ չունենին անխուսափելիորեն հայտնվել են ոստիկանների կազմած մեծ շղթայում:

Անժամկետ կալանավորման մարտավարությունը կարող է խախտել ՄԻԵԿ-ի 11-րդ հոդվածը (հավաքների և միավորման ազատություն) և 5-րդ հոդվածը (ազատության իրավունք):

4.11 Նախադեպային իրավունք

Վերջերս Անգլիայի դատարաններն ուսումնասիրել են ոստիկանության՝ անժամկետ կալանքի մարտավարության օրինականության հարցը նախադեպային իրավունքի տեսակետից:

Austin v Metropolitan Police Office (2009) UKHL 5

Գործի հանգամանքներ. Գլոբալացման դեմ ցուցարարների մի մեծ խումբ, ում մեջ կային մի քանի ագրեսիվ անձինք, շարժվեցին դեպի Կենտրոնական Լոնդոնի վարչական շրջան: Ոստիկանները շղթա կազմեցին՝ և հազարավոր մարդկանց մինչև 7 ժամ պահեցին շղթային մեջ:

Սկզբունք՝ Լորդերի պալատը, իսկ հետագայում նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռել են, որ ոստիկաններն իրավունք ունենին շղթա կազմելու և որևէ կերպ չեն խախտել ցուցարարների ազատության իրավունքը:

Հիմնավորում. Երկու դատարաններն էլ վճռել են, որ սահմանափակման նպատակը, համաչափությունը և հանգամանքները էական գործոններ են հանդիսանում ազատության սահմանափակման համար սահմանված շեմի պահպանումը որոշելու համար:

Նման մոտեցումը ենթարկվել է քննադատության, քանի որ նշված գործոնները, որպես, կանոն քննարկվում են բացառման փուլում՝ 5-րդ հոդվածի խախտումը հիմնավորելու համար, այլ ոչ թե խախտման փաստն առաջնահերթ կարգով հաստատելու համար:⁸⁹ Այդուհանդերձ, ոստիկանների կողմից շղթայի կազմումը հավանաբար չէր արդարացվի հակառակն ապացուցելու համար լուրջ հիմքերի առկայության պարագայում, այն է՝ ազատության սահմանափակում 5-րդ հոդվածով նախատեսված բացառությունների խիստ նեղ շրջանակի բերումով (օրինակ, նշված բացառությունների կիզակետում է դատարանի կողմից դատապարտվելուն հաջորդող կալանավորումը և բանտարկումը):

Ավելի ուշ, հասարակական կարգի խախտման սկզբունքով շղթա կազմելու ոստիկանների լիազորության կենսագործումը կրկին համարվել է իրավաչափ, այս անգամ՝ 2009 թ. Լոնդոնում Մեծ քսանյակի դեմ ուղղված բողոքի ցույցերի համատեքստում «R (on the application of Hannah McClure and Joshua Moos) v The Commissioner of Police of the Metropolis» գործ [2012] EWCA Civ 12):

5. ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐ

Բռնակալությունից Միացյալ Թագավորության քաղաքացիների պաշտպանվածությունը հասկանալու համար՝ օգտակար կլինեն նախ ծանոթանալ Բրիտանիայի սահմանադրական տեսությանը:

5.1 Իշխանության ճյուղերի տարանջատման սկզբունք

Բրիտանիայի սահմանադրական տեսության մեջ պետության գործառույթներն ավանդաբար բաժանվել են երեք ճյուղերի միջև՝ օրենսդիր, գործադիր և դատական:

5.1.1 Օրենսդիր իշխանության գործառույթ

Օրենսդիր գործառույթը ներառում է այնպիսի կանոնների ընդունում, որոնցով սահմանվում են պետական մարմինների կառուցվածքը և լիազորությունները, կարգավորվում է մասնավոր կազմակերպությունների և քաղաքացիներին վարքագիծը: Միացյալ Թագավորությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է «Թագուհի Խորհրդարանը»: Կառավարությունն առաջարկում է նոր օրենքներ, Խորհրդարանը

⁸⁹ Mead, ‘The Right To Protest Contained By Strasbourg: An Analysis of Austin v. UK & The Constitutional Pluralist Issues it Throws Up’ (16 March 2012); Hamilton, ‘“Kettling” and Article 5(1) ECHR: Austin and Others v UK (2012)’ (23 March 2012); Fenwick, ‘An appeasement approach in the European Court of Human Rights?’ (5 April 2012)

հաստատում է դրանք, իսկ թագուհին տալիս է իր հավանությունը: Կառավարության որոշումների և խորհրդարանի որոշումներին թագուհու համաձայնությունը գործնականում կրում է գուտ ձևական բնույթ:

5.1.2 Գործադիր իշխանության գործառույթ

Գործադիր իշխանության գործառույթն է կառավարման լիազորությունը: Կառավարումը ներառում է օրենսդրական նախաձեռնությունների ներկայացում, կարգուկանոնի պահպանում, սոցիալական և տնտեսական բարեկեցության խթանում, պետական ծառայությունների համակարգում և պետության արտաքին հարաբերությունների կարգավորում:

5.1.3 Դատական իշխանության գործառույթ

Դատարաններում վճռվում են իրավական վեճերը Խորհրդարանում ընդունվող և դատարաններում մեկնաբանվող օրենքներին համապատասխան: Դատարաններն ունեն նաև նոր օրենքներ կազմելու լիազորություն, եթե տվյալ ոլորտում գոյություն չունի Խորհրդարանի կողմից ընդունված որևէ օրենք:

5.1.4 Արդյոք Միացյալ Թագավորությունում գործում է իշխանությունների տարանջատման սկզբունքը

Մի շարք երկրների սահմանադրությունների հիմքում ընկած է այն տեսությունը, որ օրենքի, ազատության և ժողովրդավարության հիմնական արժեքներն առավել արդյունավետ պահպանելու համար անհրաժեշտ է, որպեսզի օրենքի ուժով գործող պետության կառավարման երեք հիմնական գործառույթները կատարեն տարբեր հաստատություններ:

Ընդհանուր առմամբ, Միացյալ Թագավորությունում գործում է իշխանության տարանջատման սկզբունքը, սակայն որոշ հարցերով այդ երեք գործառույթները համընկնում են.

5.1.4.1 Այսպես, գործադիր իշխանությունը հանդիսանում է օրենսդիր իշխանության ենթախումբը, այսինքն՝ կառավարության նախարարները հանդիսանում են նաև Խորհրդարանի անդամ, և

5.1.4.2 նախադեպային սկզբունքը, որը հանդիսանում է օրենքներ հռչակելու և կիրառելու դատական իշխանության գործառույթի հիմքը, ունի օրենսդրական կարգավորող դերակատարում (ինչպես սովորության իրավունքի, այնպես էլ օրենքով սահմանված իրավունքների մեկնաբանությամբ), թեև դատական մարմնի որոշմամբ օրենք կազմելու շրջանակը շատ ավելի նեղ է՝ Խորհրդարանի օրենսդիր իրավասության համեմատ:

5.2 Խորհրդարանական գերակայություն և (կամ) ինքնիշխանություն

Խորհրդարանական ինքնիշխանության ավանդական ընկալումը ենթադրում է, որ Խորհրդարանն իրավասու է ընդունել կամ չեղյալ հայտարարել ցանկացած օրենք: Դա նշանակում է, որ Խորհրդարանը ոչ մի դեպքում չի կարող որևէ պարտավորություն դնել իրեն հաջորդող խորհրդարանի վրա, և ոչ մի այլ պետական մարմին իրավասու չէ չեղյալ հայտարարել Խորհրդարանի ընդունած որևէ օրենք: Իսկ դա էլ նշանակում է, որ տեսականորեն խորհրդարանը չի կարող որևէ օրենքով ամրագրել այնպիսի իրավունքներ, որոնք ուժը կորցրած կամ անվավեր չեն համարվի հաջորդ խորհրդարանի կողմից: Այդուհանդերձ, այս սկզբունքը ենթակա է մասնագիտական և գործնական դիտարկման:⁹⁰

5.3 Նախադեպային իրավունք

R (Jackson) v Attorney General [2005] UKHL 56

Սկզբունք՝ Որոշ իրավիճակներում դատարանները կարող են հրաժարվել Խորհրդարանի օրենքները սատարելուց: Ստորև ներկայացվում են նման դեպքերի օրինակներ.

5.1.3 Եթե փորձ է արվում կենսագործել մի օրենք, որն «այն աստիճան անհեթեթ կամ անընդունելի է, որ մարդկանց լայն զանգվածները հրաժարվում են այն ճանաչել որպես օրենք» կամ

5.1.4 դատական հսկողությունը վերացնելու փորձ (կառավարության գործողությունների նկատմամբ իրավական բացարկ ներկայացնելու ձև, օրինակ եթե կառավարությունը չարաշահում է իր լիազորությունները):

Պատմական աղբյուրներ

Ուիլյամ Բլեքստոունն «Անգլիայի իրավունքի մեկնաբանություն» աշխատությունում ճանաչում է «պետական ճնշման դեմ ընդվզելու» սահմանադրական իրավունքը, այսինքն՝ Ջոն Լոքի՝ հեղափոխություն կատարելու իրավունքից բխող ընդվզելու իրավունքը: Ժամանակակից Բրիտանիայում ընդվզելու իրավունքն աստիճանաբար կորցնում է իր իրավական ուժը:

Այդուհանդերձ, չի կարելի ասել, որ նշված մեկնաբանությունը չի գործում Միացյալ Թագավորության քաղաքացիների նկատմամբ խիստ ճնշում գործադրելու դեպքերում:

⁹⁰ Որոշ մասնագետներ պնդում են, որ օրենսդիր մասնի գերակայության հիմքերը կարգավորվում են սովորութային իրավունքով, ուստի և չի կարելի պնդել, որ դրանք չեն կարող որևէ փոփոխության ենթարկվել համապատասխան դատական որոշմամբ (Bradley and Ewing, Constitutional and Administrative Law, Eleventh Edition):

6. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՔԱՂԱՔԱԿԱՆ և ԴՍՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

6.1 Գլխահարկ՝ 1989/1990թթ.

6.1.1 Հարցի էությունը.

1989 թվականին Միացյալ Թագավորության կառավարությունը ներդրեց ժողովրդի հավանությանը չարժանացած գլխահարկը՝ տեղական ինքնակառավարման մարմինների համար միջոցներ հավաքելու նպատակով:

6.1.2 Քաղաքացիական անհնազանդություն

Ծավալվեցին գլխահարկի դեմ ուղղված արշավներ և կազմվեցին միությունների համագգային ցանցեր՝ ճնշմանը դիմադրելու մի շարք միջոցների գործադրմամբ: Կիրառված միջոցներից էին.

6.1.2.1 Գլխահարկի վճարման համար գրանցման մերժում,

6.1.2.2 Հարկային պարտավորության մասին կարգադրությունների վիճարկում (իրավական համակարգը արգելափակելու համար),

6.1.2.2 Հարկ վճարելու մերժում,

6.1.2.2 Անցկացվել են նաև զանգվածային բողոքի ցույցեր, որոնցից մի քանիսն ուղեկցվել են բռնությամբ:

6.1.3 Հետևանքներ

Իրավական

Տեղական խորհուրդները դիմել են հարկադրական միջոցների, սակայն հանրության լայն զանգվածների կողմից հարկերի չվճարման պատճառով նման միջոցները որևէ արդյունք չտվեցին: Այդուհանդերձ, գլխահարկից խուսափելը ոմանց համար ավարտվել է ազատազրկմամբ: 1990 թվականի մարտի 31-ի զանգվածային անկարգությունների ժամանակ ձերբակալվել է մոտ 339 մարդ: Քրեական գործերով դատաքննության արդյունքում ցուցարարներից շատերի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ, քանի որ տեսանյութերով ակնհայտ էր դարձել որոշ մեղադրանքների անհիմն լինելը:⁹¹

⁹¹ <http://www.independent.co.uk/news/uk/crime/revealed-how-police-panic-played-into-the-hands-of-the-poll-tax-rioters-523918.html>

Քաղաքական

Նշված հարկի նկատմամբ ժողովրդի արտահայտած դժգոհությունը և դրա արդյունքում բախումները հանդիսացել են վարչապետ Մարգարեթ Թետչերի հրաժարականի հիմնական գործոնը: Գլխահարկը վերացրել է Թեյչերին վարչապետի պաշտոնում փոխարինած Ջոն Մեջորը:

6.2 Ուսանողների բողոքի ցույց 2010թ.

6.2.1 Հարցի էությունը.

Միացյալ Թագավորության կառավարությունն առաջարկել է բարձրացնել ուսման վճարները:

6.2.2 Քաղաքացիական անհնազանդություն

Բազում բողոքի ցույցեր անցկացվեցին Լոնդոնում և ողջ երկրի տարածքում: Որոշ տեղեկությունների համաձայն՝ ցուցարարները ջարդում էին շենքերի լուսամուտները, ձու էին նետում ոստիկանների վրա և կարգախոսներ գրում գույք հանդիսացող առարկաների վրա: Ոստիկանները շղթայի մեջ առան Լոնդոնի ցուցարարներին՝ փորձելով վերահսկել զանգվածային անկարգություններով ուղեկցվող ցույցը:

6.2.3 Հետևանքներ

Իրավական

Բազում ցուցարարներ ձերբակալվել են հասարակական կարգը խախտելու և այլ մեղադրանքներով:

Քաղաքական

Թեև Ուելսի Ազգային ժողովը չհաստատեց Ուելսի կրթական հաստատությունների ուսանողների համար ուսման վճարների բարձրացումը, ուսման վարձերի բարձրացման այլիքը շարունակվեց Անգլիայում:

6.3 Ընդհանուր իրավասության մոտեցում

6.3.1 Director of Public Prosecutions v Jones (Margaret) [1999] 2 AC 240

Գործի հանգամանքներ. Գործով պատասխանողները խաղաղ հանրահավաքի շրջանակներում հավաքվել էին ճամփեզրին՝ խախտելով Հասարակական կարգի մասին օրենքով նախատեսված արգելող դրույթը:

Համապատասխանությունը. Իր ելույթում Լորդ Հոֆմենն անդրադարձավ Միացյալ Թագավորությունում քաղաքացիական անհնազանդության նկատմամբ վերաբերմունքին.

«Գիտակցական հիմքերով քաղաքացիական անհնազանդությունը երկար և պատվարժան պատմություն ունի այս երկրում: Նրանք, ովքեր խախտում են օրենքը կառավարության գործունեության կամ օրենքի անարդարության մասին իրենց համոզմունքներն ամրապնդելու նպատակով, երբեմն պաշտպանվում են պատմության ընթացքում: Անմիջապես մտքիս եկավ սուֆրաժիստուհիների (տղամարդկանց համահավասար ընտրական իրավունք ունենալու համար պայքարող կանանց) օրինակը: Նման բողոքների դրսևորումների և ցույցերի հանդուրժումը վկայում է մեր հասարակության քաղաքակիրթ լինելու մասին: Սակայն գոյություն ունեն որոշակի կարգավորող նորմեր, որոնք որպես կանոն, տարբեր կերպ են ընկալվում օրենսդիրների և իրավախախտների կողմից: Յուրաքանչյուրը ձեռնարկում են համաչափ գործողություններ և չափից ավելի վնաս կամ անհարմարություն չեն պատճառում: Եվ նրանք, այդուհանդերձ, հաստատում են իրենց համոզմունքները՝ ընդունելով օրենքով նախատեսված պատժամիջոցները:

Մյուս կողմից, ոստիկանության և դատախազության աշխատակիցները զսպված մոտեցում են դրսևորում, իսկ դատավորները վճիռ կայացնելիս հաշվի են առնում ցուցարարների գիտակցված դրդապատճառները:

Դատավորների կողմից կայացրած արդարացման վճիռները մարմնավորում են նրանց ուշադիր վերաբերմունքը նման կարգավորող նորմերի նկատմամբ»:

6.3.2 Chandler v DPP [1964] AC 763

Գործի հանգամանքներ. Ուն Դ.-ն նախատեսել էր ներխուժել Միացյալ Թագավորության ռազմաօդային ուժերի կայան և 6 ժամով կանգնացնել դրա աշխատանքը՝ միջուկային զենքի նկատմամբ իր բողոքն արտահայտելու համար:

Սկզբունք. Վարքի հանցավոր բնույթի վերաբերյալ որոշում կայացնելիս քաղաքական դրդապատճառներն էական դերակատարում չունեն:

7. ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄԱՍ

7.1 Միացյալ Թագավորությունում գործում են բազում օրենքներ, որոնցով կարգավորվում են բողոքի ցույցերին և մասնավորապես՝ քաղաքացիական անհնազանդության դրսևորումներին առնչվող ոստիկանության լիազորությունները և իրավախախտումների արդյունքում առաջացող հարաբերությունները: Այդուհանդերձ, ոստիկանները շարունակում են հղում կատարել «հասարակական կարգի խախտման» դեպքերում նախատեսված իրենց լիազորություններին, թեև ունեն այլ նմանօրինակ ավելի հստակ սահմանված լիազորություններ:

7.2 Բողոքի ցույցերին և քաղաքացիական անհնազանդությանն առնչվող իրենց լիազորությունները կենսագործելիս ոստիկանները պետք է հաշվի առնեն Միացյալ Թագավորությունում կիրառվող Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայից բխող իրավունքները:

7.3 Միացյալ Թագավորության սահմանադրական սկզբունքները նույնպես միտված են բռնակալությունից և ճնշումից քաղաքացիների պաշտպանությանը՝ նվազեցնելով բոլոր պետական լիազորություններով օժտված մեկ պետական մարմնի կամ խմբի կազմման հավանականությունը: Պատմության տարբեր փուլերում քաղաքացիական անհնազանդության տարբեր տեսակները գործածվել են որպես պետական քաղաքականության վրա ազդեցություն գործելու միջոց և հասել են հաջողության տարբեր աստիճանների: Այդուհանդերձ, նման ցուցարարները չունեն օրենքով սահմանված պատժամիջոցներից անձեռնմխելիություն, որքան էլ որ նշանակալի լինի նրանց գործը:

Հավելվածներ

Հավելված 1

Հարցեր բռնակալությունից սահմանադրական պաշտպանության վերաբերյալ.

1. Ինչպե՞ս է սահմանադրությունում ճանաչվում բռնակալության և ճնշումների ժամանակ անհատի՝ քաղաքացիական անհնազանդության իրավունքը: Որտե՞ղ է բռնակալության և ճնշման սահմանագիծը:

Գոյություն ունեն մի քանի հատուկ դրույթներ բռնակալության ժամանակ քաղաքացիական անհնազանդության ծավալի կամ ճնշման սահմանագծի վերաբերյալ: Այդուհանդերձ, գոյություն ունեն բազում օրինակներ ընդհանուր առմամբ քաղաքացիական անհնազանդության կարևորության վերաբերյալ: Օրինակ, վերոնշյալ 6.3.1 կետում դիտարկված «DPP V Jones (Margaret)» [1999]2 AC 240 գործով կայացրած դատավճռում նշվում է, որ Միացյալ Թագավորությունն ընդունում է ողջամիտ սահմաններում արտահայտված քաղաքացիական անհնազանդությունը: Այդուհանդերձ, քաղաքացիական անհնազանդությունը սատարելու փաստը չի նշանակում, որ այդ միջոցին դիմող անձինք կլիսուսափեն պատժից: Թեև «Sepet v. Secretary of State for the Home Department» գործով⁹² վճռում նշվել է, որ քաղաքացիական անհնազանդությունը պատվարժան ավանդություն է, սակայն այդ պատվարժանության և համոզմունքների ուժի հիմքում ընկած է օրենքով սահմանված պատիժը կրելու պատրաստակամությունը: Դրա նպատակն է ուշադրություն հրավիրել տվյալ հարցին:

2. Որո՞նք են սահմանադրական կարգը փոփոխելու փորձի ընդունելի միջոցները: Մեծ Բրիտանիայի սահմանադրական իրավունքով հավանաբար ամբողջովս է ընդվզելու իրավունքը, սակայն այն պատմական բնույթ է կրում և անորոշ է: Թեև բողոքի ապօրինի և բռնի ձևերն անօրինական են համարվում, Միացյալ Թագավորության պատմության մեջ հայտնի են շատ դեպքեր, երբ բողոքի ապօրինի ձևերն ի վերջո ճանաչվել են որպես խիստ նշանակալի փոփոխություն կատարելու համար պայքարում, օրինակ՝ վերոնշյալ 6.3.1 կետում նշված սուֆրաժիստուհիների օրինակը:

3. Ինչպիսի՞ միջոցներ են գործադրվում, որպեսզի պետությունը չվերածվի բռնապետության: Արդյո՞ք քաղաքացիական անհնազանդությունն ընդունելի միջոց է:

- Իշխանության ճյուղերի տարանջատում (մաս 5.1)
- Զսպումների և հակակշիռների համակարգ, ինչպես օրինակ՝ գործադիր մարմնի աշխատանքի դատական վերահսկում (կառավարության կողմից իր լիազորությունների չարաշահումը կանխելու նպատակով),
- Դատարանների պաշտպանություն (մաս 5.3)
- Թեև հեղափոխություն անելու կամ ընդվզելու անորոշ սահմանադրական իրավունքն առկա է, այն դարեր շարունակ չի կիրառվել և չի քննարկվել (մաս 5.4):

⁹² (Կետեր՝ 32-36) [2003] UKHL 15/[2003] 1 W.L.R. 856

- Խաղաղ բողոքի ցույցի իրավունք,
- Ամեն դեպքում, քաղաքացիական անհնազանդությունը պետք է կրի համաչափ բնույթ, և նման գործողություններին մասնակցող անձինք կարող են պատժվել օրենքի շրջանակներում:

4. Որտե՞ղ է անցնում բռնի և ոչ բռնի միջոցներով բողոքի դրսևորման սահմանագիծը: Արդյո՞ք թույլատրելի է բռնի միջոցով բողոքի որևէ դրսևորում:

Բողոքի բռնի դրսևորման վերաբերյալ որոշում կայացնելից ոստիկանները որպես կանոն գործածում են սովորության իրավունքով իրենց վերապահված լիազորությունները՝ հասարակական կարգի խախտումը կամ դրա վերահաս վտանգը կանխելու համար (մաս 4):

5. Արդյո՞ք թույլատրվում է բողոքի ցույցի ժամանակ գործածել հրազեն կամ որևէ այլ զենք:

- Հասարակական վայրերում հրազեն կամ դրա նմանակ զենք պահելը հանցագործություն է (Հրազենի մասին 1968թ.-ի օրենք, մաս 19): Միացյալ Թագավորությունում խիստ վերահսկվում է նաև հրազենի ձեռքբերումը: Այսպես, ատրճանակ և ավտոմատ զենք պահելն արգելված է, իսկ հրազենի այլ տեսակներ պահելու համար հարկավոր է հատուկ արտոնագիր:

- Հասարակական վայրերում դանակ պահելը հանցագործություն է (Քրեական արդարադատության մասին 1988թ.-ի օրենք, բաժին 139): Այս բաժինն ունի բացառություններ, սակայն դրանք շատ քիչ են և չեն արդարացնում ինքնապաշտպանության նպատակներով դանակ կրելը:

- Հասարակական վայրերում «հարձակողական զենք» պահելը հանցագործություն է (Հանցագործության կանխման մասին 1953 թ.-ի օրենք, բաժին 1): «Հարձակողական զենք» ասելով՝ հասկանում ենք զենք, որը նախատեսված է կամ այն կրող անձի կողմից հարմարեցված է մեկ այլ անձի դեմ այն կիրառելու համար: Ուշագրավ է, որ նման հարձակման զենք է համարվում նաև կոտրված շիշը:

Հավելված 2

Ա. «Հասարակական կարգի պահպանման մասին» օրենք (1986թ.)՝ իրավախախտումներ

Բաժին 1՝ Ընդվզում

Իրավախախտման տարրերն են՝

- 12 կամ ավելի թվով մարդիկ,
- Բռլոր մասնակիցները սպառնում են գործադրել անիրավաչափ բռնություն ընդհանուր նպատակին հասնելու համար,
- Այդ անձանց միասնական պահվածքի ազդեցությամբ նորմալ մարդու մոտ կարող է մտավախություն առաջանալ իր անձնական անվտանգության համար (Կարևոր նշում. նման անձի առկայությունը տվյալ տարածքում պարտադիր պայման չի հանդիսանում):

Բաժին 2՝ Բռնի միջոցներով անկարգություններ

Իրավախախտման տարրերն են՝

- կամ ավելի թվով մարդիկ,
- Գործադրում են կամ սպառնում են գործադրել անիրավաչափ բռնություն.
- Այդ անձանց միասնական պահվածքի ազդեցությամբ նորմալ մարդու մոտ կարող է մտավախություն առաջանալ իր անձնական անվտանգության համար (Կարևոր նշում. նման անձի առկայությունը տվյալ տարածքում պարտադիր պայման չի հանդիսանում).

Բաժին 3՝ Խռովություն

Իրավախախտման տարրերը նույնն են, ինչ բռնի միջոցներով անկարգությունների պարագայում, բացառությամբ նրա, որ խռովություններում կարող են ընդգրկված լինել 1 կամ 2 հոգի:

Բաժին 4՝ Բռնության սադրանքի մտավախություն

Իրավախախտման տարրերն են՝

- Սպառնալի, վիրավորական կամ անպարկեշտ խոսքեր կամ վարք, ԿԱՄ սպառնալի, վիրավորական կամ անպարկեշտ նշաններ:
- ինչի արդյունքում մեկ այլ անձ հավատում է, որ իր կամ որևէ այլ անձի վերաբերյալ գործադրվելու է ապօրինի բռնություն,
- ԿԱՄ նման բռնություն սադրելու նպատակով
- ԿԱՄ հավակն է վերոնշյալ հետևանքներից մեկնումեկը:

Բ. Հասարակական կարգի պահպանման մասին 1986թ.-ի օրենք՝ Հանրահավաքների և երթերի օրենքով նախատեսված սահմանափակումներ

Բաժին 11՝ Նախնական ծանուցում երթերի մասին

Քրեական պատասխանատվությունից և տուգանքներից խուսափելու համար՝ երթերի կազմակերպիչները պետք է նախապես ծանուցեն ոստիկանությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ բավարար հիմքեր կան նման ծանուցման նպատակահարմար չլինելու համար:

Ծանուցման տարրեր՝

- ծանուցման մեջ պետք է նշվի ամսաթիվը, ժամը և առաջարկվող երթուղին,
- պետք է նշվի երթի կազմակերպչի անունը և բնակության հասցեն,
- ծանուցումը պետք է ներկայացվի այն տարածքի ոստիկանության բաժանմունք, որտեղ անցկացվելու է երթը,
- պետք է ներկայացվի երթի անցկացման օրվանից առնվազն 6 օր շուտ,
- երթի անցկացման օրվանից առնվազն 6 օր շուտ ծանուցումը ներկայացնելու անհնարինության դեպքում այն պետք է ներկայացվի հնարավորինս շուտ:

Եթե երթի անցկացման ամսաթիվը, ժամը կամ երթուղին տարբերվի ծանուցման մեջ նշված տվյալներից, երթի կազմակերպիչը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության, բացառությամբ դեպքերի, երբ նա չէր կարող կանխատեսել նման փոփոխությունը:

Բաժին 12՝ Երթերի անցկացման վերաբերյալ պայմաններ պարտադրելու լիազորություն

Ոստիկանության վերադաս աշխատակիցը կարող է որոշակի պայմաններ պարտադրել այնպիսի երթերի անցկացման համար, որոնք իր կարծիքով ուղղված են այլ անձանց ահաբեկմանը կամ կարող են հանգեցնել հանրային անկարգություններին կամ համայնքի ներկայացուցիչների գույքի վնասմանը: Օրինակ, ոստիկանության աշխատակիցը կարող է արգելել երթի մասնակիցներին անցնել որոշակի փողոցով: Երթի կազմակերպիչը կենթարկվի քրեական պատասխանատվության, եթե գիտակցաբար խախտի ներկայացված պայմանները, բացի այն դեպքերից, երբ նման խախտումն իր վերահսկողությունից դուրս է: Նշված պայմանները խախտող երթի ցանկացած մասնակից կարող ենթարկվել պատասխանատվության:

Բաժին 13՝ Երթերի անցկացումն արգելելու լիազորություն

Ոստիկանության պետը կարող է դիմել տվյալ վարչական շրջանի խորհուրդ, եթե ինքը հավատացած է, որ վերոնշյալ 12-րդ մասով ամրագրված լիազորությունները կարող են անբավարար լինել զանգվածային անկարգությունները դադարեցնելու համար: Երթի անցկացումը կարող է արգելվել մինչև 3 ամիս ժամկետով, և այդ արգելքը կարող է վերաբերել ինչպես բոլոր հանրային երթերին, այնպես էլ որոշակի մարդկանց կատեգորիաների կողմից կազմակերպվող երթերին:

Ներքին գործերի նախարարի համաձայնությամբ Խորհուրդը կարող է համապատասխան հրաման արձակել (նստիկանապետի ներկայացրած պայմաններով կամ այլ պայմաններով): Արգելված երթին գիտակցաբար մասնակցող անձինք ենթարկվում են քրեական պատասխանատվության (մինչև 3 ամիս ազատազրկում), իսկ այլ անձանց մասնակցել խրախուսող անձինք՝ տուգանքի:

Բաժին 14՝ Հանրահավաքների անցկացման վերաբերյալ պայմաններ պարտադրելու լիազորություն

Ոստիկանության պետը կարող է դիմել տվյալ վարչական շրջանի խորհուրդ, եթե ինքը հավատացած է, որ վերոնշյալ 12-րդ մասով ամրագրված լիազորությունները կարող են անբավարար լինել զանգվածային անկարգությունները դադարեցնելու համար: Երթի անցկացումը կարող է արգելվել մինչև 3 ամիս ժամկետով, և այդ արգելքը կարող է վերաբերել ինչպես բոլոր հանրային երթերին, այնպես էլ որոշակի մարդկանց կատեգորիաների կողմից կազմակերպվող երթերին: Ներքին գործերի նախարարի համաձայնությամբ Խորհուրդը կարող է համապատասխան հրաման արձակել (նստիկանապետի ներկայացրած պայմաններով կամ այլ պայմաններով): Արգելված երթին գիտակցաբար մասնակցող անձինք ենթարկվում են քրեական պատասխանատվության (մինչև 3 ամիս ազատազրկում), իսկ այլ անձանց մասնակցել խրախուսող անձինք՝ տուգանքի: Ոստիկանության վերադաս աշխատակիցը կարող է որոշակի պայմաններ պարտադրել այնպիսի հանրահավաքների անցկացման համար, որոնք իր կարծիքով ուղղված են այլ անձանց ահաբեկմանը կամ կարող են հանգեցնել հանրային անկարգություններին կամ համայնքի ներկայացուցիչների կյանքի սպառնալիքի կամ գույքի վնասմանը: Նման ցուցումները կարող են վերաբերել հանրահավաքի անցկացման վայրին, դրա առավելագույն տևողությանը կամ մասնակիցների առավելագույն թվին, եթե նման ցուցումներն անհրաժեշտ են զանգվածային անկարգություններից, վնասից կամ ահաբեկումից խուսափելու համար:

Նշված պայմանները գիտակցաբար խախտող կամ այլոց մոտ նման կոչ անող անձինք ենթարկվում են քրեական պատասխանատվության, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավիճակն իրենց հսկողությունից դուրս է:

Բաժին 14Ա՝ Արգելված վայրում անցկացվող հավաքներն արգելելու լիազորություն

Ոստիկանության վերադաս պաշտոնյան կարող է դիմել տվյալ վարչական շրջանի խորհրդին՝ արգելված վայրում հավաքի անցկացումն արգելելու հայցով այն դեպքերում, եթե նա.

- ողջամիտ հիմքեր ունի կարծելու, որ հավաքը նախատեսվում է անցկացնել որոշակի նկատառումներով հանրության համար արգելված տարածքում (օրինակ՝ բանուկ ճանապարհ),

- հավաքը հավանաբար նախատեսվում է անցկացնել առանց տվյալ տարածքի սեփականատիրոջ կամ այն զբաղեցնող անձի համաձայնության,
- հավաքը կարող է հանգեցնել համայնքի բնականոն կյանքի խանգարմանը,
- ինչպես նաև կարող է հանգեցնել տարածքի կամ պատմական, ճարտարագիտական կամ հնէաբանական նշանակության կամ գիտական տեսանկյունից արժեքավոր շենքերի վնասմանը:

Ներքին գործերի նախարարի համաձայնությամբ Խորհուրդը կարող է համապատասխան հրաման արձակել:

Կարևոր նշում. Օրենքի սույն մասի շրջանակներում ընդունված որևէ հրամանով չի կարելի սահմանափակել հավաքների անցկացումը 4 օրը գերազանցող ժամկետով և տվյալ տարածքը 5 մդեն շառավղով շրջապատող տարածքի սահմաններից դուրս:

Գ. Օրենքով նախատեսված պատժամիջոցներ

Օրենք	Իրավախախտում	Առավելագույն պատժամիջոց
Հասարակական կարգի պահպանման մասին օրենք	Ընդվզում	10 տարի ազատազրկում
Հասարակական կարգի պահպանման մասին օրենք	Բռնի միջոցների գործադրմամբ անկարգություններ	3 տարի ազատազրկում
Հասարակական կարգի պահպանման մասին օրենք	Խռովություններ	3 տարի ազատազրկում
Հասարակական կարգի պահպանման մասին օրենք	Բռնության մտավախության առաջացում կամ սադրանք	3 ամիս ազատազրկում
Հասարակական կարգի պահպանման մասին օրենք	Արգելված երթին մասնակցելը	3 ամիս ազատազրկում
Հասարակական կարգի պահպանման մասին օրենք	Երթի կամ հավաքի անցկացման պայմանի խախտում	3 ամիս ազատազրկում
Դիտավորյալ վնաս	Դիտավորյալ վնաս	10 տարի ազատազրկում`

<p>պատճառելու համար սահմանված պատասխանատվության մասին օրենք</p>	<p>պատճառելը</p>	<p>5.000 ֆունտ ստերլինգը գերազանցող վնասի գումարի պարագայում</p> <p>3 ամիս ազատազրկում և (կամ) 2.500 ֆունտ ստերլինգին հավասար տուգանք, եթե վնասի գումարը կազմում է 5.000 կամ դրանից պակաս</p> <p>Հանցավոր տար պարունակով հրդեհի պարագայում նշանակվում է ցմահ ազատազրկման առավելագույն ծանր պատժամիջոցը</p>
<p>Ոստիկանության մասին օրենք, 1996թ.</p>	<p>Ոստիկանների վրա հարձակվելու/նրանց դիմադրություն ցուցաբերելու կամ իրենց մասնագիտական պարտականությունների կատարմանը խոչընդոտում</p>	<p>Հարձակվելու պարագայում՝ 6 ամիս ազատազրկում և (կամ) տուգանք 5.000 ֆունտ ստերլինգի չափով</p> <p>Դիմադրություն ցուցաբերելու կամ մասնագիտական պարտականությունների կատարմանը խոչընդոտելու պարագայում՝ 1 ամիս ազատազրկում և (կամ) տուգանք 1.000 ֆունտ ստերլինգի չափով</p>

Հավելված 6/Ֆրանսիա

Քաղաքացիական անհնազանդությունը Ֆրանսիայի օրենսդրության շրջանակներում

2014թ. սեպտեմբերի 3

Սույն աշխատության նպատակն է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակին (ՀՔԱՎ) ընդհանուր տեղեկություններ տրամադրել Ֆրանսիայի օրենսդրության շրջանակներում «քաղաքացիական անհնազանդություն» հասկացության և այն կարգավորող իրավական դաշտի վերաբերյալ:

Մենք գիտակցում ենք, որ սույն աշխատության մեջ ամփոփված տեղեկությունները կծառայեն բազում նպատակների իրագործմանը, այդ թվում՝ ինդրոտ առարկա հարցի շուրջ օրենսդրության համեմատական ուսումնասիրության հրապարակմանը և, հավանաբար, նաև Հայաստանում ընթացող քրեական դատավարության շրջանակներում Շանթ Հարությունյանի (ում շահերը ներկայացնում է ՀՔԱՎ-ը) պաշտպանությանը:

Այդ կապակցությամբ ստորև ներկայացնում ենք ՀՔԱՎ-ի հետևյալ հարցերի պատասխանները.

1. Քաղաքացիական անհնազանդության ինչպիսի՞ դրսևորումներ են ճանաչվում Ֆրանսիայում (Սահմանադրությամբ և այլ օրենքներով): Ինչպե՞ս են նման դրսևորումները դիտարկվում նշված պետության օրենսդրության շրջանակներում:

2. Ճնշումներից և բռնապետությունից պաշտպանության սահմանադրական երաշխիքներ. ո՞րն է բողոքի խաղաղ ու բռնի ձևերի սահմանագիծը: Սահմանադրությամբ ամրագրված է արդյո՞ք բռնություն գործադրելու իրավունքը, և եթե այո՞, ապա ինչպե՞ս է այն կարգավորվում օրենսդրությամբ:

3. Արդյո՞ք Սահմանադրությամբ կամ օրենքներով ճանաչվում է ապստամբելու իրավունքը, եթե տվյալ պետությունը վերածվում է բռնապետության կամ ճնշումներ է գործադրում:

4. Ե՞րբ կարելի է խոսել բռնապետության և/կամ ճնշումների մասին: Ո՞րն է սահմանագիծը:

5. Քաղաքացիական անհնազանդության ո՞ր միջոցները կամ ձևերն են ընդունելի այն պարագայում, երբ փորձ է արվում փոխել սահմանադրական կարգը:

6. Ըստ համապատասխան օրենսդրության՝ ի՞նչ է իրենից ներկայացնում ժողովրդավարական երկրի սահմանադրական կարգը:

7. Եթե Սահմանադրությամբ նախատեսված են կառավարության՝ բռնապետության կամ ավտորիտար պետության վերածումը կանխելու համար անհրաժեշտ կառուցակարգերը

(մեխանիզմները), ապա ինչպիսի՞ միջոցներ են ամրագրված Սահմանադրությամբ: Արդյո՞ք քաղաքացիական անհնազանդությունը, որպես այդպիսին, ընդունելի միջոց է, թե՞ ոչ:

8. Արդյո՞ք անձինք իրավունք ունեն ձեռք բերել, պահել և գործածել հրազեն կամ գործածել այլ տեսակի զենք կամ այլ միջոցներ:

Ստորև հերթով անդրադառնում ենք այս հարցերին:

I. Բողոքի և քաղաքացիական անհնազանդության դրսևորումները կարգավորող իրավական դաշտ: Քաղաքացիական անհնազանդության ինչպիսի՞ դրսևորումներ են ճանաչվում Ֆրանսիայում (Սահմանադրությամբ և այլ օրենքներով): Ինչպե՞ս են նման դրսևորումները դիտարկվում նշված պետության օրենսդրության շրջանակներում:

Թեև քաղաքացիական անհնազանդությունը (1.1.) հստակ չի ճանաչվում Ֆրանսիայի օրենսդրությամբ, սակայն ճանաչվում են տարբեր մեխանիզմներ, որոնք կարող են համարվել քաղաքացիական անհնազանդությանը (1.2.):

1.1. Քաղաքացիական անհնազանդությունը կարգավորող իրավական դաշտ

Ֆրանսիայի դատարանները հրաժարվում են ճանաչել քաղաքացիական անհնազանդությունը՝ որպես այդպիսին (ա): Այդուհանդերձ, Ֆրանսիայի օրենսդրությամբ ճանաչվում են քաղաքացիական անհնազանդությանն առնչվող մի քանի հասկացություններ (բ):

(ա) Ֆրանսիայի դատարանները հրաժարվում են ճանաչել քաղաքացիական անհնազանդությունը

Քաղաքացիական անհնազանդությունը կարելի է սահմանել որպես ապօրինի արարք, որն ուղղված է քաղաքական, բարոյական և իրավական օրինականության հաստատմանը: «Քաղաքացիական անհնազանդություն» հասկացությունն արդի ընկալմամբ նպատակ ունի ոչ թե պարզապես հակառակվել օրենքին, այլ նպաստել դրա բարեփոխմանը՝ ապահովելով հիմնարար իրավունքների նոր մեկնաբանությունը:

«Քաղաքացիական անհնազանդություն» հասկացությունը Ֆրանսիայի դատարաններում վկայակոչվել է երկու առիթով: Երկու դեպքում էլ դատարանները հրաժարվել են կիրառել այն: Այդուհանդերձ, դատարանները որոշակի ճկունություն են ցուցաբերել տվյալ դեպքերը դիտարկելիս:

Առաջին օրինակը «Déboulonneurs» գործն է:¹ Այս գործով պատասխանողները զիտակցաբար վնասել են գովազդային վահանակները՝ «տեսողական աղտոտումը» դատապարտելու նկատառումներով: Պատասխանողներին ձերբակալելուց հետո ոստիկանները հրահանգեցին նրանց ԴՆԹ տվյալները գրանցել ԴՆԹ տվյալների ազգային բազայում, սակայն պատասխանողները հրաժարվեցին: Տվյալ դեպքում քաղաքացիական անհնազանդությունն ունեցել է կրկնակի դրսևորում: Այն դրսևորվել է ինչպես ԴՆԹ տվյալների բազայում գրանցվելուց հրաժարվելու, այնպես էլ գովազդային վահանակները վնասելու մեջ: Ֆրանսիայի Գերագույն դատարանը (Վճռաբեկ դատարան) դատապարտել է նրանց 1 եվրո չափով խորհրդանշական տուգանքի և վճռել է, որ նրանց տվյալները ԴՆԹ բազայում գրանցելու կարիք չկա:

«Faucheurs volontaires» (թարգ.՝ «Կամավոր հնձողներ») շարժման դեմ հարուցված գործով, Փարիզի վերաքննիչ դատարանը որոշել է չկիրառել «քաղաքացիական անհնազանդություն» հասկացությունը՝ նախընտրելով ավելի ճկուն մոտեցում: Տվյալ գործով պատասխանող մի խումբ անձինք ոչնչացրել են գենետիկորեն ձևափոխված մշակաբույսերը՝ գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների կիրառումը դատապարտելու նպատակով և այնուհետև պնդել, որ նրանք գործել են հօգուտ հանրային շահի: Պատասխանողները պնդել են նաև, որ իրենց գործողությունները հանդիսացել են քաղաքացիական անհնազանդություն, և այդ իսկ պատճառով նրանք չպետք է պատժվեն: Դատարանը վճռել է, որ նրանք խախտել են օրենքը, սակայն դատապարտել է նրանց միայն 9000 եվրո տուգանքի, յուրաքանչյուրին համապատասխանաբար՝ 1000 եվրոյի չափով:²

(բ) Արարքներ, որոնք կարող են ճանաչվել որպես քաղաքացիական անհնազանդություն

Թեև քաղաքացիական անհնազանդությունը որպես այդպիսին Ֆրանսիայի նախադեպային իրավունքով չի ճանաչվում, դրանով ընդունվում են քաղաքացիական անհնազանդության հետ կապված մի քանի հասկացություններ՝ համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց կարգավիճակ (i), անհրաժեշտության առկայություն (ii) և համերաշխության նպատակով կատարված խախտում (iii):

(i) Համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց կարգավիճակ

Ֆրանսիայի օրենսդրության համաձայն՝ «համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվող անձինք» հանդիսանում են նրանք, ովքեր հրաժարվում են պահպանել օրենքի որոշակի դրույթները:

¹ <http://blogs.mediapart.fr/blog/la-rotative/260313/deboulonneurs-la-desobeissance-civile-justifiee-par-le-tribunal-de-paris> [Հավելված 1. **Déboulonneurs, La désobéissance civile justifiée par le tribunal de Paris (Mediapart)** [*Ֆրանսերեն*]]:

² Գերագույն դատարանի Քրեական պալատ, 2008թ. մարտի 27 [Հավելված 2. **Վճռաբեկ դատարանի Քրեական պալատ, 2008թ. մարտի 27** [*Ֆրանսերեն*]]:

Այն ժամանակ, երբ զինվորական ծառայությունը դեռևս պարտադիր էր, հնարավոր էր կարծիքի ազատությունը (ինչպես սահմանվում է 1798 թվականի Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի (ՄՔԻՀ) 10-րդ հոդվածում) վկայակոչելու միջոցով հակադրվել զինվորական ծառայությանը կրոնական կամ քաղաքական պատճառներով: Ընդհանուր առմամբ, այդ կարգավիճակը դարձել է անիմաստ, քանի որ զինվորական ծառայությունն այլևս պարտադիր չէ: Այդուհանդերձ, համոզմունքների հիմնավորմամբ զինծառայությունից հրաժարվողների հարցը շարունակում է մնալ կարևոր, քանի որ զինվորներին չի թույլատրվում հրաժարական տալ կամ բողոք դրսևորել:³

(ii) Անհրաժեշտության առկայության (ֆրանս.՝ «état de nécessité») ճանաչում

Ֆրանսիական օրենսդրությամբ ամրագրված է, որ տվյալ անձին, որևէ այլ անձի կամ գույքի սպառնացող առկա կամ մոտալուտ վտանգի պարագայում անձանց կամ գույքը պաշտպանելու նպատակով որևէ իրավախախտում կատարած անձը կարող է վկայակոչել անհրաժեշտության առկայության սկզբունքը:⁴ Այդուհանդերձ, պաշտպանությունը պետք է համաչափ լինի սպառնալիքին: Այս սկզբունքը կիրառվում է այն պարագայում, երբ անձը ապօրինի արարք է գործում հանուն գերագույն շահի պաշտպանության:

Հաշվի առնելով նշված դրույթի հնարավոր հետևանքները՝ այն կարող է վկայակոչվել միայն որոշ պայմանների առկայության դեպքում: Առաջին, իրավախախտումը պետք է արդարացված լինի առկա կամ մոտալուտ վտանգից խուսափելու անհրաժեշտությամբ: Գերագույն դատարանի կարծիքով՝ էլեկտրաէներգիայի մատակարարման հարցում ընտանիքին օգնելը ենթադրում է անհրաժեշտության առկայություն:⁵ Երկրորդ, անձը կարող է վկայակոչել այս դրույթը միայն այն դեպքում, եթե ինքը չի նպաստել տվյալ իրավիճակի առաջացմանը: Երրորդ, կատարված իրավախախտումը պետք է լինի նշված դրույթը վկայակոչող անձին վնասից պաշտպանելու միակ և նվազագույնս վտանգավոր լուծումը: Չորրորդ, պաշտպանվող շահը պետք է ավելի արժեքավոր կամ առնվազն համարժեք լինի՝ իրավախախտման արդյունքում խախտված շահի համեմատ: Եվ վերջապես, կատարված իրավախախտումը չպետք է ուղղված լինի օրենքով թույլատրելի որևէ արարքի կանխմանը:

Հատկանշական է, որ նշված դրույթի կիրառման պարագայում իրավախախտները կարող են ենթարկվել միմիայն քաղաքացիական, այլ ոչ թե քրեական պատասխանատվության:

Այս դրույթը հազվադեպ է կիրառվում Ֆրանսիայի օրենսդրության մեջ: Այն վկայակոչելու դեպքերում Գերագույն դատարանը հավելել է ևս մեկ չափանիշ՝ բարոյականության զսպող ուժը (բարոյական սահմանափակում, հոգեկան հարկադրանք) (ֆրանս.՝ «contrainte morale»): Գործնականում դատարանը ճանաչում է անհրաժեշտության առկայությունը միայն այն

³ http://www.lexpress.fr/actualite/societe/greve-des-policiers-les-paroles-de-hollande-doivent-etre-suivies-d-effets_1299314.html [Հավելված 3. *Greve des policiers les paroles de Hollande doivent être suivies d'effets (L'Express)* [ֆրանսերեն]]:

⁴ Ըստ Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 122-7 հոդվածների [Հավելված 4. *Քրեական օրենսգրքի 122-7 հոդվածներ* [անգլերեն]]:

⁵ Գերագույն դատարանի Քրեական պալատ, 1956թ. հունվարի 4 [Հավելված 5. *Վճարելի դատարանի Քրեական պալատ, 1956թ. հունվարի 4* [ֆրանսերեն]]:

պարագայում, եթե կատարված արարքն անկանխատեսելի էր և անհաղթահարելի: Դատարանը միշտ նախընտրում է իրավիճակի խիստ վերահսկման տարբերակը, որը սահմանափակում է սույն դրույթի կիրառումը:

(iii) Համերաշխության նպատակով կատարված իրավախախտում (ֆրանս.՝ «*délit de solidarité*»)

2003թ. նոյեմբերի 23-ի թիվ 2003-1119 օրենքի ընդունումից ի վեր ներգաղթյալներին անօրինական մուտքի և բնակության գործում աջակցությունը համարվում է հանցագործություն:⁶ Ֆրանսիայում ապօրինի բնակություն հաստատելու գործում որևէ մեկին աջակցող յուրաքանչյուր ոք կարող է դատապարտվել 5 տարվա ազատազրկման և տուգանվել 30.000 եվրոի չափով:

Բազում հասարակական կազմակերպություններ դատապարտել են այս դրույթը՝ որակելով այն որպես անարդար:⁷ Հատկանշական է, որ երկու հոգի պատասխանատվության են ենթարկվել ներգաղթյալներին անօրինական օգնություն ցուցաբերելու համար, սակայն չեն տուգանվել և ազատազրկման չեն դատապարտվել:⁸

3. Ճնշումներից և բռնապետությունից պաշտպանության սահմանադրական երաշխիքներ. ո՞րն է բողոքի խաղաղ ու բռնի ձևերի սահմանագիծը: Սահմանադրությամբ ամրագրված է արդյո՞ք բռնություն գործադրելու իրավունքը, և եթե այո՞, ապա ինչպե՞ս է այն կարգավորվում օրենսդրությամբ:

Բողոք արտահայտելու իրավունքը Ֆրանսիայի օրենսդրությամբ ճանաչվում է որպես հիմնարար ազատություն և հաճախ է իրացվում գործնականում (4.1): Այդուհանդերձ, այն կարգավորվում է շատ խիստ օրենքներով, որով չի ճանաչվում բողոք արտահայտելու ընթացքում բռնություն գործադրելու որևէ հնարավորություն (4.2):

2.1. Բողոք արտահայտելու իրավունքը և այն կարգավորող իրավական դաշտը

Ինչպես արդեն նշվել է, քաղաքացիական անհնազանդությունը Ֆրանսիայի օրենսդրությամբ որպես այնպիսին չի ճանաչվում: Այդուհանդերձ, օրենսդրությամբ ամրագրված է բողոք արտահայտելու իրավունքը, որը հանդիսանում է հիմնարար իրավունք և կարող է որոշ դեպքերում համարվել քաղաքացիական անհնազանդություն:

⁶ Ֆրանսիայի՝ Արտասահմանցիների մուտքի և բնակության և (քաղաքական) ապաստանի իրավունքի վերաբերյալ օրենսգրքի հոդված L.622-1 սահմանվում է այս արգելքը և ներկայացվում է հարցի կարգավորման օրինական շրջանակը [Հավելված 6. Արտասահմանցիների մուտքի և բնակության և (քաղաքական) ապաստանի իրավունքի վերաբերյալ օրենսգրքի L622-1 հոդված [ֆրանսերեն]]:

⁷ http://www.lemonde.fr/societe/article/2012/09/28/le-delit-de-solidarite-outil-d-intimidation-des-benevoles-est-supprime_1767173_3224.html [Հավելված 7. Le délit de solidarité, outil d'intimidation des bénévoles, va être supprimé (Le Monde) [ֆրանսերեն]]:

⁸ http://www.liberation.fr/societe/2004/08/19/sangatte-la-solidarite-sur-le-banc-des-accuses_489620 [Հավելված 8. Sangatte, la solidarité sur le banc des accusés (Libération) [ֆրանսերեն]]:

Բողոք արտահայտելու իրավունքի սահմանադրական արժեքը ճանաչվել է Ֆրանսիայի սահմանադրության մաս կազմող երկու հիմնարար հատվածներում: Այս իրավունքն առաջին անգամ ամրագրվել է 1789 թվականի Ֆրանսիական հեղափոխությունից հետո ընդունված ՄՔԻՀ-ում,⁹ իսկ այնուհետև վերահաստատվել է 1946 թվականին ընդունված Սահմանադրության Նախաբանում:¹⁰

Նշված հիմնարար սկզբունքը կրկնակի նշանակություն ունի, քանի որ այն վերաբերում է ինչպես գործադրուլին,¹¹ այնպես էլ հասարակական կամ քաղաքական կյանքում իրադարձությունների վերաբերյալ որևէ մեկի կարծիքի արտահայտմամբ ուղեկցվող բողոքի ցանկացած այլ դրսևորումներին: ՄՔԻՀ-ի 11-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրենքի շրջանակներում կարծիք և բողոք արտահայտելու իրավունք, այսինքն՝ կարծիքի կամ բողոքի արտահայտությունը չպետք է խախտի ընդունված իրավակարգը:

Զանգվածային անկարգությունները կանխելու համար՝ օրենսդիրն ամրագրել է տվյալ հիմնարար իրավունքի սահմանափակման մի քանի պայման:¹² Ցանկացած ցույց անցկացնելուց առաջ ցույցի կազմակերպիչներից երեք հոգի պետք է ցույցի անցկացման նախանշված ամսաթվից առնվազն երեք օր առաջ համապատասխան ծանուցում ներկայացնեն քաղաքապետարան կամ այլ վարչական մարմին (պրեֆեկտուրա): Ծանուցումը պետք է պարունակի տարբեր տեղեկություններ, ներառյալ՝ կազմակերպիչների անունները և հասցեները, ինչպես նաև ցույցի անցկացման օրը, ժամը և երթուղին:

Եթե վերոնշյալ պաշտոնական պահանջը կատարելուց հետո բողոքի ակցիան արգելվի, կազմակերպիչները կարող են դիմել վարչական դատարան: Վարչական դատարանն ամենայն խստությամբ կստուգի ոստիկանության որոշումումների ճշտությունը՝ պարզելու, թե արդյոք սահմանափակումներն անհրաժեշտ էին հասարակական կարգը պահպանելու համար, թե՛ ոչ:

Վերջերս Փարիզում արգելվել է բողոքի ակցիաների անցկացումը՝ դրանց հետևանքով հասարակական կարգի հնարավոր խախտումից խուսափելու համար: Նման բողոքի ակցիաները վերաբերել են իսրայելապաղեստինյան հակամարտությանը և կազմակերպվել

⁹ 1789 թվականի օգոստոսին ընդունված Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի 10-րդ հոդվածում ասվում է, որ «ոչ ոք չի կարող հետապնդումների ենթարկվել իր համոզմունքների, անգամ կրոնական համոզմունքների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց արտահայտումը խախտում է ընդունված օրենքները և հասարակական կարգը», իսկ 11-րդ հոդվածով ամրագրված է, որ «կարծիքների և հայացքների ազատ արտահայտումը մարդու առավել արժեքավոր իրավունքներից է: Ուստի, յուրաքանչյուր քաղաքացի կարող է ազատ խոսել, գրել, նյութեր հրատարակել՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նրա կարծիքները, հայացքները կամ հրատարակվող նյութերը համարժեք են օրենքով նախատեսված ազատության չարաշահմանը» [Հավելված 9. Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիր *[անգլերեն]*]:

¹⁰ 1958 թվականին ընդունված Ֆրանսիայի Սահմանադրություն, որը ներառում է 1946թ. Ֆրանսիայի սահմանադրության նախաբանի 7-րդ կետը. «գործադրուլի իրավունքը պետք է իրացվի այն կարգավորող օրենքների շրջանակներում» [Հավելված 10. Ֆրանսիայի սահմանադրություն *[անգլերեն]*]:

¹¹ Սույն աշխատության մեջ որոշել ենք մեր ուշադրությունը կենտրոնացնել բողոք արտահայտելու ընդհանուր իրավունքի վրա, քանի որ այն ավելի շատ է համապատասխանում պրն Հարությունյանի գործին: Սակայն անհրաժեշտության դեպքում կարող ենք լրացուցիչ տեղեկություններ հաղորդել բողոքի իրավունքի վերաբերյալ:

¹² 1935թ. հոկտեմբերի 23-ի կանոնակարգ [Հավելված 11. 1935թ. հոկտեմբերի 23-ի կանոնակարգ հասարակական կարգի պահպանման վերաբերյալ *[ֆրանսերեն]*]:

են կասկածելի համարվող կազմակերպության կողմից:¹³ Բողոքի ակցիաների անցկացման արգելքն առաջ է բերել բռնության գործադրմամբ մի շարք միջադեպեր, որոնց արդյունքում հանրությունը հարցականի տակ է առել նման արգելքի նշանակությունը և արդյունավետությունը: Կազմակերպության իրավաբանը և մեծ թվով քաղաքացիներ քննադատել են այդ արգելքը և դիմել են Վարչական դատարան:¹⁴ Այդուհանդերձ, Պետական խորհուրդը (ֆրանս.՝ «Conseil d'Etat») հաստատել է այդ արգելքը՝ այն համարելով անհրաժեշտ և համաչափ միջոց:¹⁵

2.2. Բողոքի արտահայտման խաղաղ ու բռնի ձևերի սահմանագիծը. բռնություն գործադրելու սահմանադրական իրավունքի բացակայություն

Ֆրանսիայի սահմանադրությամբ ամրագրված չէ բռնության գործադրմամբ բողոք արտահայտելու իրավունքը: Ընդհակառակը, սահմանադրությամբ ամրագրված են բռնության գործադրման կանխմանն ուղղված կառուցակարգեր: Ինչպես արդեն նշվել է, բողոք արտահայտելու իրավունքը կարգավորվում է խիստ օրենքներով, որոնց նպատակն է կարգավորել բողոքի արտահայտման ձևերը և կանխել բողոքի դրսևորման բռնի ձևերը: Այդ իսկ պատճառով բռնության գործադրմամբ ուղեկցվող ցանկացած բողոքի դրսևորում կարող է արգելվել:

Երկու օրինագծերի ընդունման առնչությամբ վերջերս Ֆրանսիայում կազմակերպված բողոքի ակցիաները զուգորդվել են բռնությամբ: Բողոքի ակցիաների մի մասը վերաբերել է համասեռամուլների ամուսնանալու իրավունքին և կազմակերպվել են կասկածելի գործունեություն ծավալող «La Manif pour Tous» («Բողոք բոլորի անունից») խմբի կողմից, որը սերտ կապերի է հաստատել ծայրահեղ աջ կուսակցությունների հետ: Արգելված մյուս բողոքի ակցիաները կազմակերպել է «Les Bonnets Rouges» («Կարմիր գդակներ») շարժումը, որը դեմ է ավտոճանապարհների նոր սարքավորումների տեղադրմանը և պայքարում է բեռնատարների վարորդների համար նախատեսված հարկերի կրճատման համար:¹⁶ Երկու դեպքում էլ բողոքի ակցիաների կազմակերպման վերաբերյալ ներկայացվել են համապատասխան ծանուցումներ, և դրանք համարվել են օրինական: Այդուհանդերձ, բողոքի ակցիաների ընթացքում արձանագրվել են որոշ բռնի միջադեպեր, ինչի արդյունքում

¹³ http://www.lemonde.fr/societe/Article/2014/07/25/derriere-les-manifestations-un-collectif-de-jeunes-propalestiniens-radicaux_4462725_3224.html [Հավելված 12. **Derriere manifestations interdites, un collectif de pro palestiniens radicaux (Le Monde)** *[ֆրանսերեն]*]:

¹⁴ <http://www.lefigaro.fr/politique/le-scan/citations/2014/07/25/25002-20140725ARTFIG00155-une-nouvelle-manifestation-propalestinienne-interdite-a-paris-samedi.php> [Հավելված 13. **L'interdiction de la manifestation pro palestinienne f Paris confirmée (Le Figaro)** *[ֆրանսերեն]*]:

¹⁵ http://www.lemonde.fr/societe/article/2014/07/26/a-la-mosquee-d-evry-manuel-valls-appelle-a-l-apaisement-en-france_4463182_3224.html [Հավելված 14. **Manifestation pro palestinienne f Paris, le Conseil d'Etat confirme l'interdiction (Le Monde)** *[ֆրանսերեն]*]:

¹⁶ http://www.liberation.fr/societe/2013/11/18/trois-bonnets-rouges-en-jugement-a-quimper_947760 [Հավելված 15. **Trois Bonnets rouges en jugement f Quimper (Libération)** *[ֆրանսերեն]*]:

նասիականության ծառայողները ստիպված էին միջամտել և ձերբակալել նշված ակցիաների բազմաթիվ մասնակիցներին:¹⁷

3. Արդյո՞ք Սահմանադրությամբ կամ օրենքներով ճանաչվում է ապստամբելու իրավունքը, եթե տվյալ պետությունը վերածվում է բռնապետության կամ ճնշումներ է գործադրում:

Ֆրանսիական հեղափոխությունից ի վեր՝ Ֆրանսիայի օրենսդրությամբ որպես հիմնարար իրավունք ամրագրվել է բռնապետությանը և ճնշումներին դիմակայելու իրավունքը: ՄՔԻՀ-ի 2-րդ հոդվածի համաձայն՝ «ցանկացած քաղաքական միավորման նպատակն է պաշտպանել Մարդու բնական և անօտարելի իրավունքները: Այդ իրավունքներն են Ազատության իրավունքը, Սեփականության իրավունքը, Անվտանգության իրավունքը և Ճնշումներին դիմակայելու իրավունքը»:

Ընդհանուր առմամբ, դիմադրության իրավունքը կարող է սահմանվել որպես որևէ կազմակերպված խմբի ապօրինի գործողություն, որն ուղղված է իրենց երկրում ֆաշիստական վարչակարգի հաստատումից ազգի ազատության և մարդկային արժանապատվության պաշտպանությանը: Այդուհանդերձ, ապստամբությունը բնորոշվում է որպես պետական կառավարման մարմինների կողմից իշխանությամբ օժտված որևէ մեկի հրամաններին ենթարկվելուց հրաժարվելը:

Ճնշումներին դիմադրելու իրավունքի առնչությամբ հարկավոր է նշել, որ յուրահատուկ պատմության բերումով Ֆրանսիայի օրենսդրության մեջ այդ իրավունքի հայեցակարգը կողմնորոշված է դեպի իշխանության չարաշահումը: Այն հիմնականում վերաբերում է պետության և ժողովրդի փոխհարաբերություններին: Դիմադրության իրավունքի դրսևորման վաղ օրինակ կարող է ծառայել 1940թ. հունիսի 18-ին գեներալ դե Գոլի՝ բոլոր քաղաքացիներին ուղղված դիմադրելու և Ֆրանսիայի Ազատ կառավարությանը միանալու կոչը:

Ֆրանսիայի օրենսդրությամբ ամրագրված դիմադրություն հասկացության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրան բնորոշ է իշխանություններին հստակ հակադրվելը, մինչդեռ, օրինակ, քաղաքացիական անհնազանդությունն ուղղված չէ իշխանությունների դեմ:

Այդուհանդերձ, ճնշումներին դիմադրությունը գործնականում գրեթե չի ընդունվում Ֆրանսիայի դատարանների կողմից: Մասնավորապես, Գերագույն դատարանը հայտարարել է, որ բանակի ծառայողներին հասարակ դիմադրություն ցուցաբերելն ապստամբություն է հանդիսանում, որը չի կարող արդարացվել բանակի գործողությունների օրինական հիմքերի բացակայությամբ:¹⁸ Երկրորդ Համաշխարհային պատերազմի ժամանակ պատժելի արարք

¹⁷ <http://tempsreel.nouvelobs.com/mariage-gay-lesbienne/20130527.OBS0756/violences-lors-de-la-manif-pour-tous-ce-que-l-on-sait.html> [Հավելված 16. *Violences lors de la Manif pour tous ce que l'on sait (Nouvel Observateur)* /Ֆրանսերեն]:

¹⁸ Գերագույն դատարան, 1844թ.:

Էին համարվում ինչպես ապստամբությունը, այնպես էլ դիմադրությունը ճնշումներին, քանի որ դրանք կասկածի տակ են առնում պետական իշխանությունը:

Այդուհանդերձ, 1944 թվականին՝ Վիշիի վարչակարգի ավարտին, Գերագույն դատարանը սկսել է ընդունել նման հասկացությունները: 1944 թվականին ընդունված որոշման մեջ Գերագույն դատարանը վճռել է, որ այն քաղաքացիական ծառայողները, ովքեր կենթարկվեն ապօրինի և առանց հիմքի գործող իշխանություններին, պատասխանատվություն կենթարկվեն պետական դավաճանության համար:¹⁹ Ավելի կարևոր է, որ դատարանն ընդունելի է համարել դիմադրությունը այն դեպքերում, երբ այն ուղղված է հանրային շահի լուրջ խախտման դիմակայմանը: Այսպիսով, դիմադրությունը կիրառելի է միայն համընդհանուր շահը պաշտպանելու համար:²⁰ Այսօրվա դրությամբ Ֆրանսիայի քրեական օրենսգրքով դեռևս արգելվում է դիմադրություն ցուցաբերել քաղաքացիական ծառայողին:²¹ Գերագույն դատարանի կարծիքով՝ նման դեպքերում ապստամբությունը չի կարող արդարացվել քաղաքացիական ծառայողի անօրինական գործողությամբ:²² Ավելին, դատարանը դիմադրությունը նույնացնում է ապստամբության հետ: Գործնականում դատավորները չեն ընդունում այդ սկզբունքի որևէ սահմանափակում:

Ամեն դեպքում Ֆրանսիայի Սահմանադրական դատարանը (Սահմանադրական խորհուրդ) հայտարարել է, որ ճնշումներին դիմադրելու իրավունքը հանդիսանում է «լիարժեք սահմանադրական իրավունք»՝ այդպիսով ընդգծելով դրա նշանակությունը:²³ Մասնավորապես, քաղաքացիական ծառայողներին թույլատրվում է օրինական միջոցներով չենթարկվել վերադասի կողմից տրված հրամաններին, եթե դրանք անօրինական են և կարող են խախտել հանրային շահը:²⁴

Ընդհանուր առմամբ, նշված իրավունքի արդյունավետությունն արտահայտվում է տարբեր դրսևորումներով: Այն հատկապես արդյունավետ է դառնում բողոքելու իրավունքի և սահմանադրական ու պայմանագրային վերահսկողության միջոցների շնորհիվ, որոնք երաշխավորում են օրենքների համապատասխանությունը Սահմանադրությանը:

4. Ե՞րբ կարելի է խոսել բռնապետության և/կամ ճնշումների մասին: Ո՞րն է սահմանագիծը:

¹⁹ Տվյալ դեպքում քաղաքացիական ծառայողն առաջնորդվել է հրեական համայնքին գործազրկության նպաստից զրկող օրենքով:
²⁰ Օրինակ, դատարանը արդարացված դիմադրություն է համարել այն փաստը, որ անձը որոշ նրբանկատ տվյալները պաշտպանում է նացիստներից:

²¹ Ֆրանսիայի Քրեական օրենսգրքի հոդված 433-6. «*խոչընդոտել նշանակում է բռնի դիմադրությամբ հակադրվել մի անձի, ով օժտված է պետական իշխանությամբ կամ կատարում է պետական ծառայությամբ իր վրա դրված որևէ հանձնարարություն՝ գործելով իր լիազորությունների սահմաններում օրենքների, պետական մարմինների հրամանների, դատական որոշումների կամ կարգադրությունների կատարման համար*» [Հավելված 17. Քրեական օրենսգրքի հոդված 433-6 [անգլերեն]:

²² Գերագույն դատարանի քրեական պալատ, 1995թ. փետրվարի 7 [Հավելված 18. Վճռաբեկ դատարանի քրեական պալատ, 1995թ. փետրվարի 7 [ֆրանսերեն]:

²³ Սահմանադրական դատարան, 1982թ. հունվարի 16 (թիվ 81-132 DC) [Հավելված 19. Սահմանադրական խորհուրդ, 1982թ. հունվարի 16, 81-132 DC [ֆրանսերեն]:

²⁴ 1983թ. հուլիսի 13-ի թիվ 83-634 օրենքի 28 հոդված [Հավելված 20. 1983թ. հուլիսի 13-ի թիվ 83-634 օրենք քաղաքացիական ծառայողների պարտավորությունների վերաբերյալ [ֆրանսերեն]:

Բռնակալությունը կամ ճնշումների վրա հիմնված վարչակարգը կարելի է բնութագրել որպես գերագույն իշխանությամբ օժտված միապետի, մեկ անձի կամ մի խումբ անձանց կամայական կամ բացարձակ իշխանություն: Բռնակալությունը բնութագրվում է ճնշողական, անարդար և բռնապետական կառավարմամբ:²⁵

Ֆրանսիայի օրենսդրությամբ պաշտպանվում է ճնշումներից զերծ լինելու անհատի իրավունքը, սակայն բռնապետությունը կամ ճնշումները որպես այդպիսին հատուկ չեն սահմանվում: Այդուհանդերձ, օրենսդրությամբ նախատեսվում են այն մեխանիզմները և սկզբունքները, որոնք ուղղված են կառավարության նման վարչակարգերի վերափոխման կանխմանը:

Մահմանագիծը նախանշվում է բացառապես իրավական դաշտի շրջանակներում, որը թույլ է տալիս սահմանել ժամանակավոր վարչակարգ՝ հատուկ լիազորություններով օժտելով պետության նախագահին և կառավարությանը արտակարգ իրավիճակներում:

Մահմանադրությամբ ամրագրված են ճնշումների կամ բռնապետության կանխմանն ուղղված մեխանիզմները, այսինքն՝ օրենսդրության հետ մեկտեղ՝ սահմանադրությամբ նույնպես նախատեսվում են ճնշումների կամ բռնապետության կարգավորման հատուկ մեխանիզմներ: Մասնավորապես, առանձնացվում է երեք մեխանիզմ, որոնց միջոցով անհրաժեշտության դեպքում կարգավորվում է իշխանության կենտրոնացումը: Այդ մեխանիզմներն են՝ 16-րդ հոդվածով ամրագրված վարչակարգը (4.1), պաշարման իրավիճակ (4.2) և արտակարգ իրավիճակների վարչակարգ (4.3):

4.1. Ֆրանսիայի Մահմանադրության 16-րդ հոդված

Մահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ լուրջ ինստիտուցիոնալ ճգնաժամի պարագայում Նախագահը կարող է իրավասու լինել ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ այդպիսով իրականացնելով գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների լիազորությունները:²⁶ Նշված վարչակարգը գործածվում է բացառիկ դեպքերում՝ երկու պայմանների առկայության պարագայում. առաջին, պետք է վտանգված

²⁵ Բ. Շանտրո «Մահմանադրական իրավունք», Սիրեյի համալսարան, 25-րդ հրատարակություն, էջեր՝ 256-258:

²⁶ 1958 թվականի Ֆրանսիայի Մահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «Այն դեպքերում, երբ հանրապետության ինստիտուտներին, պետական անկախությանը, պետության տարածքային ամբողջականությանը կամ պետության կողմից միջազգային պարտավորությունների կատարմանը լուրջ կամ մոտալուտ վտանգ է սպառնում և սահմանադրական պետական հաստատությունների գործունեությունը դադարեցված է, հանրապետության նախագահը պետք է ձեռնարկի հանգամանքներով թելադրվող միջոցներ՝ վարչապետի, խորհրդարանի պալատների նախագահների և Մահմանադրական խորհրդի հետ դրանք նախապես համաձայնեցնելուց հետո: Նախագահը պետք է նման միջոցների մասին տեղեկացնի ժողովրդին: Նշված դեպքերում ձեռնարկվող միջոցների նպատակն է հնարավորինս շուտ սահմանադրական պետական իշխանություններին ապահովել իրենց պարտականությունները կատարելու համար անհրաժեշտ միջոցներով: Նման միջոցների կիրառման վերաբերյալ հարկավոր է խորհրդակցել Մահմանադրական խորհրդի հետ: Խորհրդարանը պետք է նիստեր գումարի իրեն վերապահված իրավունքին համապատասխան: Նման արտակարգ լիազորությունների կիրառման պարագայում չի կարելի ազատ արձակել Ազգային ժողովը: Նման արտակարգ լիազորությունների իրականացումից երեսուն օր անց Ազգային ժողովի նախագահը, Սենատի նախագահը, Ազգային ժողովի վաթսուն անդամները կամ վաթսուն սենատորները կարող են դիմել Մահմանադրական խորհուրդ, որպեսզի այն որոշի՝ արդյոք առաջին կետով ամրագրված պայմանները դեռևս առկա են, թե՞ ոչ: Մահմանադրական դատարանը պետք է հնարավորինս շուտ հրապարակի իր որոշումը: Խորհուրդը պետք է իրեն վերապահված իրավունքով անցկացնի նման հետաքննություն և նույն կարգով որոշում կայացնի արտակարգ լիազորությունների իրականացումից վաթսուն օր անց կամ ցանկացած պահի դրանից հետո» [Հավելված 10. Ֆրանսիայի Մահմանադրություն [անգլերեն]:

լինեն ինստիտուտները, և երկրորդ, պետք է խանգարված լինի պետական ծառայությունների կանոնավոր աշխատանքը: Թեև հանրապետության նախագահը պետք է իր գործողությունները համաձայնեցնի վարչապետի, խորհրդարանի երկու պալատների և Սահմանադրական դատարանի նախագահների հետ, նման խորհրդատվությունը պարզապես ձևական բնույթ են կրում: Ուստի, պետության նախագահը հանդիսանում է միակ պատասխանատուն, ով որոշում է՝ արդյոք նշված երկու պայմանները առկա են, թե ոչ:

Այս վարչակարգը գործել է միայն մեկ անգամ, Ալժիրի պատերազմի ընթացքում 1961 թվականին պետական հեղաշրջման չհաջողված փորձի ժամանակ, որի նպատակն էր տապալել գործող կառավարությունը:

4.2. Պաշարման իրավիճակ

Պաշարման իրավիճակի համաձայն՝ պատերազմից կամ զինված ապստամբությունից բխող մոտալուտ վտանգի առկայության պայմաններում հանրապետության նախագահը կարող է 12 օրով հաստատել պաշարման վարչակարգ, իսկ հետո երկարացնել այն օրենքով սահմանված կարգով:

Այս օրենքի հիմնական նպատակն է ոստիկանության լիազորությունները փոխանցել բանակին, ընդլայնել զինվորականների լիազորությունները և քաղաքացիական հայցերը քննելու լիազորությունը փոխանցել զինվորական դատական ատյաններին:

Այս վարչակարգը գործել է Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ գերմանական ուժերը գավթել էին Ֆրանսիան:

4.3. Արտակարգ իրավիճակների վարչակարգ (անհետաձգելի իրավիճակ)

Այս պարագայում արտակարգ իրավիճակի վարչակարգը ժամանակավորապես դադարեցնում է ժողովրդավարական ինստիտուտների և օրենքի իշխանության սկզբունքի գործողությունը՝ նպատակ ունենալով պաշտպանելու պետական կարգը, թեպետև հնարավոր է, որ այդ նպատակն իրագործելու համար խախտվեն հիմնարար իրավունքները:²⁷

Սա արտակարգ իրավիճակներում կիրառվող ամենախիստ վարչակարգն է: Նշված վարչակարգը հաստատվում է այն պարագայում, եթե առկա է հասարակական կարգի կամ հասարակական անդորրի խախտման մոտալուտ վտանգի սպառնալիք: Վարչակարգի կիրառման հետևանքները շատ խիստ են, քանի որ դրանցով սահմանափակվում են բոլոր անհատական (օրինակ՝ տեղաշարժման ազատությունը և գույքային իրավունքները) և կոլեկտիվ ազատությունները (օրինակ՝ բողոքներ, ցույցեր և այլն), ինչպես նաև կարծիքի

²⁷ Այս օրենքն ընդունվել է ի պատասխան դեռևս Ֆրանսիայի գաղութ լինելու ժամանակահատվածում Ալժիրում տեղի ունեցած խռովությունների: Մասնավորապես, այս վարչակարգը հաստատվել է պետության պաշարման վարչակարգից խուսափելու համար, քանի որ «այն պատերազմի կհանգեցնեք Ֆրանսիայի և դրա գաղութի միջև» (Էդգար Ֆոր):

ազատությունը (օրինակ՝ մամուլի և ներկայացումների ազատության իրավունքը): Վերջերս նշված արտակարգ վարչակարգը հաստատվել է արվարձաններում 2005 թվականի քաղաքական անկարգությունների ժամանակ՝ երկու ոստիկանի պատճառով երկու երիտասարդի պատահական մահից հետո:²⁸ Նշված վարչակարգի շրջանակներում Ֆրանսիայի տարբեր քաղաքներում սահմանվել է պարետային ժամ՝ բռնության տարածումից խուսափելու և բնակչությունը պաշտպանելու համար:

5. Քաղաքացիական անհնազանդության ո՞ր միջոցները կամ ձևերն են ընդունելի այն պարագայում, երբ փորձ է արվում փոխել սահմանադրական կարգը:

Ֆրանսիան հանդիսանում է ժողովրդավարական նախագահական հանրապետություն, ինչը նշանակում է, որ նախագահն ընտրվում է համընդհանուր քվեարկության արդյունքում: Սահմանադրությամբ ամրագրված են մի շարք մեխանիզմներ, որոնք ուղղված են հեղաշրջումների և հասարակական խռովությունների կանխմանը, մասնավորապես՝ իշխանությունների ճյուղերի հավասարակշռման համակարգի միջոցով:

Սահմանադրությամբ հստակ ամրագրված են իշխանության ճյուղերից յուրաքանչյուրի (այն է՝ դատական, օրենսդիր և գործադիր) լիազորությունները և սահմանափակումները՝ մեկ անձի ձեռքերում իշխանության կենտրոնացումը կանխելու համար: Սահմանադրությամբ և առհասարակ՝ օրենսդրությամբ նախատեսված չէ սահմանադրական կարգը փոփոխելու փորձը կարգավորող իրավական դաշտ:

Այդուհանդերձ, հարկավոր է նշել, որ Ֆրանսիան իր պատմության ընթացքում բախվել է հեղաշրջումների և խռովությունների:

Առավել հայտնի է 1799 թվականի նոյեմբերի պետական հեղաշրջումը, որը Նապոլեոնը կազմակերպել է հեղափոխության ավարտին: Հեղաշրջման հիմնական նպատակն էր վերջ դնել Ֆրանսիական հեղափոխությանը և հաստատել նոր ավտորիտար համակարգ: Վերջերս հեղաշրջում է կազմակերպվել 1961 թվականին, երբ բանակի գեներալները դեմ դուրս եկան Ալժիրի վերաբերյալ կառավարության դիրքորոշմանը: Ալժիրը Ֆրանսիայի գաղութ էր, և այդ ժամանակ Ֆրանսիայի կառավարությունը որոշել էր ապագադրությացնել այն: Հեղաշրջումը կազմակերպած գեներալները դեմ էին ապագադրացմանը և մտադիր էին տապալել գործող կառավարությունը: Նրանց մտադրությունը բացահայտվել է, և նրանք ռազմական դատարանի կողմից դատապարտվել են 15 տարվա ազատազրկման:

Ներկայումս նման հեղաշրջման փորձերը գործնականում գրեթե անիրական են, քանի որ Սահմանադրությամբ ամրագրված է իշխանության բոլոր ճյուղերի անկախությունը: Բացի այդ, սահմանադրությամբ ամրագրված են նաև բնակչության՝ իր ընդդիմությունն արտահայտելու տարբեր իրավունքները: Եվ իսկապես, Սահմանադրության 49-րդ հոդվածի


²⁸ <http://tempsreel.nouvelobs.com/societe/20051108.OBS4536/banlieues-le-gouvernement-decrete-l-etat-d-urgence.html> [Հավելված 21. Banlieues, le gouvernement décrete l'état d'urgence 2005 (Nouvel Observateur) {ֆրանսերեն}:

համաձայն՝ Խորհրդարանը կարող է ընտրել մի քանի տարբերակ՝ Կառավարությանն իր անվստահությունը հայտնելու համար: Վստահության միջնորդության (հոդված 49.1) միջոցով վարչապետը կարող է խորհրդարանի դատին հանձնել իր կառավարությունը վստահության քվեի միջոցով: Ի լրումն նշվածի՝ անվստահության քվեն կամ քննադատությունը (հոդված 49.2) հանդիսանում է մի գործընթաց, որի միջոցով խորհրդարանը կարող է իր իսկ նախաձեռնությամբ հարկադրել կառավարությանը հրաժարական տալ: Եվ վերջապես, վստահության քվեի (հոդված 49.3) միջոցով կառավարությունը կարող է պարտադրել խորհրդարանին անմիջապես և առանց քվեարկության ընդունել իր առաջադրած օրինագիծը: Խորհրդարանը կարող է հրաժարվել օրինագիծն ընդունելուց միայն կառավարությանն անվստահություն հայտնելու և այդպիսով այն տապալելու միջոցով:

6. Ըստ համապատասխան օրենսդրության՝ ի՞նչ է իրենից ներկայացնում ժողովրդավարական երկրի սահմանադրական կարգը:

Ֆրանսիայի Սահմանադրությամբ իրավական նորմերի աստիճանակարգմամբ (6.1) խստիվ ամրագրված է սահմանադրական կարգը: Սահմանադրությամբ նախատեսվում են նաև տարբեր մեխանիզմներ, որոնք ուղղված են ժողովրդավարության արդյունավետության բարձրացմանը (6.2):

6.1. Իրավական նորմերի աստիճանակարգման սկզբունքի կարևորությունը



Իրավական նորմերի աստիճանակարգման սկզբունքը բուրգային համակարգ է, որը մշակվել է Հանս ֆելսենի կողմից: Ամեն մի գերադաս նորմից համակարգված ձևով բխում է համապատասխան ստորադաս նորմը: Նման աստիճանակարգման պահպանումը հիմնարար նշանակություն ունի՝ երաշխավորելով հիմնարար իրավունքների արդյունավետությունը:

Առաջին մակարդակը ներառում է սահմանադրական նշանակություն ունեցող իրավական ակտերի շարքը՝ «սահմանադրականության կազմը», որոնք ընդգրկված են Ֆրանսիայի Սահմանադրության մեջ:²⁹ Այդ իրավական ակտերն ունեն սահմանադրական արժեք և համապատասխանում են բոլոր հիմնարար իրավունքներին և սկզբունքներին: Նման ակտերը գերակայում են դրանց և ավելի ստորադաս իրավական նորմերի միջև հակասությունների պարագայում:

Երկրորդ մակարդակը ներառում է Ֆրանսիայի միջազգային պարտավորություններից բխող միջազգային նորմերը: Դրանք գերակայում են բոլոր այլ իրավական նորմերի նկատմամբ, բացառությամբ՝ սահմանադրական նորմերի:³⁰ Այս մակարդակի իրավական նորմերը հիմնականում եվրոպական իրավունքի նորմերն են: Այսպիսով, միջազգային կամ եվրոպական կանոններին կամ հանձնարարականներին չհամապատասխանող ցանկացած ազգային օրենք ենթակա է գրաքննության: Նշված իրավական նորմերի գերակայությունը կարգավորվում է Սահմանադրության 55-րդ հոդվածով, որի համաձայն՝ միջազգային իրավունքը պետք է միշտ գերակայի: Բացի այդ, բարձրագույն Պետական խորհուրդը հաստատել է 88-1 հոդվածով ամրագրված կարգով Սահմանադրությունը չխախտող բոլոր եվրոպական կամ միջազգային պարտավորությունները կատարելու սահմանադրական պարտավորությունը:

Եվ վերջապես, երրորդ մակարդակը ներառում է տարբեր նախարարությունների կողմից հաստատված այլ ազգային կանոնակարգերը:

6.2. Ժողովրդավարության արդյունավետությունը երաշխավորող տարբեր ինստիտուտներ և մեխանիզմներ

Ի լրումն իրավական նորմերի աստիճանակարգմանը՝ Սահմանադրությամբ հստակ ամրագրված է նաև տարբեր ինստիտուտների գործունեությունը: Մասնավորապես, նախատեսված է հիմնել երկու հիմնարար հաստատություն, այն է՝ Ֆրանսիայի Սահմանադրական դատարանը (Սահմանադրական խորհուրդ) և Պետական խորհուրդը:

²⁹ *Սահմանադրականության կազմը* ներառում է 1958թ. Ֆրանսիայի Սահմանադրությունը [Հավելված 10. Ֆրանսիայի Սահմանադրություն *[անգլերեն]*] և սահմանադրական արժեք ունեցող այլ նորմեր: Մասնավորապես, այն ներառում է նաև 1789 թվականին ընդունված ՄՔԻՀ-ը [Հավելված 9. Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիր *[անգլերեն]*], 1946 թվականի Սահմանադրության նախաբանը, որտեղ ընդգրկված են նաև քաղաքական, տնտեսական և սոցիալական սկզբունքները [Հավելված 10. Ֆրանսիայի Սահմանադրություն *[անգլերեն]*] և Սահմանադրական դատարանով ճանաչված այլ սկզբունքներ:

³⁰ Պետական խորհուրդ, 1998թ. հոկտեմբերի 30, Sarran, Levacher and others, n°200286 [Հավելված 22. Պետական խորհուրդ, 1998թ. հոկտեմբերի 30, Sarran, Levacher and others *[ֆրանսերեն]*]:

Սահմանադրական դատարանը պատասխանատվություն է կրում որոշումների և իրավական ակտերի սահմանադրականությունը հաստատելու համար: Ինչպես արդեն նշվել է, Սահմանադրությունը հանդիսանում է գերագույն իրավական նորմը: 2008 թվականի սահմանադրական բարեփոխումներից հետո Սահմանադրական դատարանին նոր լիազորություն է վերապահվել, այն է՝ առաջնային նախնական որոշումներ կայացնել այս կամ այն իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ: Դատաքննության յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի պնդելու, որ այս կամ այն օրենքի դրույթով խախտվում են իր՝ սահմանադրությամբ երաշխավորված իրավունքները և ազատությունները: Եթե նման դիմումները համապատասխանում են ընդունելիության պայմաններին, ապա Պետական խորհուրդը կամ Գերագույն դատարանը դրանք ներկայացնում է Սահմանադրական դատարան, որն էլ անմիջապես որոշում է կայացնում: Անհրաժեշտության դեպքում Սահմանադրական դատարանը կարող է չեղյալ հայտարարել վիճարկվող օրենսդրական դրույթը: Մինչև նշված բարեփոխումները անհնար էր վիճարկել օրենսդրական ակտի սահմանադրականությունը: Այս նոր հնարավորությունը մեծացնում է ժողովրդավարության արդյունավետությունը, քանի որ այս պարագայում բարձրանում է քաղաքացիների ներգրավվածության աստիճանը: Պետական խորհուրդը կատարում է վարչական իրավասությանն առնչվող լիազորություններ՝ դրանով իսկ նպաստելով բնակչության և տարբեր դատարանների միջև փոխհարաբերությունների բարելավմանը:

Եվ վերջապես, Սահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի ունի ժողովրդական հանրաքվեի իրավունք՝ Խորհրդարանի անդամների թվի առնվազն 1/5-ի աջակցությամբ: Նման հանրաքվեի նպատակն է քաղաքացիներին հնարավորություն տալ բարեփոխելու Ֆրանսիայի տնտեսական, սոցիալական և բնապահպանական քաղաքականությունները կարգավորող օրենսդրությունը: Այնուհետև այդ որոշումը պետք է ներկայացվի Սահմանադրական դատարան: Հանրաքվեով հաստատվելու պարագայում օրենքը պետք է ընդունվի հանրապետության Նախագահի կողմից:

Ամփոփելով՝ հարկավոր է նշել, որ համապատասխան հաստատություններին վերապահված տարբեր լիազորությունները, ինչպես նաև Սահմանադրությամբ ամրագրված տարբեր մեխանիզմները սահմանադրական կարգի մաս են կազմում և, անշուշտ, քաղաքացիների անմիջական ներգրավմամբ նպաստում են ժողովրդավարության արդյունավետության բարձրացմանը:

7. Եթե Սահմանադրությամբ նախատեսված են կառավարության՝ բռնապետության կամ ավտորիտար պետության վերածումը կանխելու համար անհրաժեշտ կառուցակարգերը, ապա ինչպիսի՞ միջոցներ են ամրագրված Սահմանադրությամբ: Արդյո՞ք քաղաքացիական անհնազանդությունը, որպես այդպիսին, ընդունելի միջոց է, թե՞ ոչ:

Սահմանադրությամբ ամրագրված են քաղաքացիներին ճնշումներ գործադրող վարչակարգերից և բռնապետությունից պաշտպանելու տարբեր մեխանիզմներ (7.1):

Սահմանադրությամբ նախատեսվում են նաև մի շարք երաշխիքներ, որոնք ուղղված են տարբեր հիմնարար իրավունքների պաշտպանությանը, որոնք կարող են խախտվել բռնապետության կամ ճնշումների պարագայում (7.2):

7.1. Սահմանադրական պաշտպանությունը ճնշումներից և բռնապետությունից

Ֆրանսիայի Սահմանադրությամբ հստակ ամրագրված է իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի բաժանման սկզբունքը: Այդ երեք ճյուղերի լիազորությունները չեն կարող իրականացվել նույն անձի կողմից:

- Օրենսդիր իշխանությունն իրականացնում է Խորհրդարանը: Այն ներառում է օրենքների կազմումը և վավերացումը, ինչպես նաև գործադիր իշխանության աշխատանքի վերահսկումը:

- Գործադիր իշխանությունն իրականացնում են Նախագահը և Կառավարությունը՝ գործադրելով օրենքները և վարելով պետական քաղաքականությունը: Այդ նպատակով գործադիր իշխանության մարմիններն իրավասու են նաև մշակել իրավական նորմեր և պատասխանատու են բանակի համար, իսկ խիստ առանձնահատուկ դեպքերում կարող են նույնիսկ ազատ արձակել Խորհրդարանը:

- Դատական իշխանության մարմիններն օրենքներ կիրառելու միջոցով կարգավորում են քաղաքացիների և (կամ) քաղաքացիների և պետության միջև ծագած վեճերը: Դատական մարմինների անկախությունը հիմնարար նշանակություն ունի, քանի որ այն հանդիսանում է դրանց անկողմնակալության երաշխիքը:

Սահմանադրությամբ ամրագրված են իշխանության երեք ճյուղերից յուրաքանչյուրի գործունեությունը կարգավորող կանոններ, ինչպես նաև դրանց միջև առկա փոխհարաբերությունները կարգավորող մի շարք մեխանիզմներ և դրույթներ:

Սահմանադրությամբ ձևակերպված իշխանության ճյուղերի բաժանման այդ հստակ սկզբունքով երաշխավորվում է պաշտպանությունը բռնապետությունից և ճնշումներից:

7.2. Սահմանադրական երաշխիքներ

Ֆրանսիայի օրենսդրությամբ ամրագրված է հետևյալ չորս հիմնական երաշխիքների պաշտպանությունը՝³¹ կամայական կալանավորման արգելք (ա), իրավական

³¹ Հատկանշական է, որ Ֆրանսիայի օրենսդրությամբ ավելի շուտ ամրագրված է ճնշումների գործադրման վրա հիմնված հնարավոր վարչակարգի արգելքը, քան դրանից խուսափելու միջոցները:

պաշտպանության իրավունք (բ), անմեղության կանխավարկած և անհամաչափ պատժամիջոցների արգելք (գ) և վերջապես, ազատ արտահայտվելու իրավունք (դ):

(ա) Կամայական կալանավորման արգելք

ՄՔԻՀ-ի 7-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող մեղադրվել, բերման ենթարկվել կամ կալանավորվել՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով: Բոլոր նրանք, ովքեր հրահրում, նպաստում, կատարում կամ օժանդակում են կամայական հրամանների կատարմանը, պետք է պատժի ենթարկվեն, իսկ օրենքով սահմանված կարգով ոստիկանություն կամ դատարան կանչվող կամ ձերբակալված յուրաքանչյուր ոք պետք է անմիջապես ենթարկի իշխանություններին, հակառակ դեպքում՝ դիմադրություն ցուցաբերելու պարագայում նա կհամարվի մեղավոր:

Այս իրավունքը, որպես այդպիսին, ճանաչվում է անվտանգության իրավունքի («droit à la sureté») ընդհանուր հասկացության շրջանակներում: Այն ունի տարբեր դրսևորումներ և երկու հիմնական հայեցակետ. այն վերաբերվում է ցանկացած տեսակի քրեական կալանավորմանը դատաքննությանը ինչպես նախորդող (i), այնպես էլ հաջորդող (ii) փուլերում:

(i) Քրեական կալանավորում դատաքննությանը նախորդող փուլում

Կամայական կալանքի արգելքը հիմնարար նշանակություն ունի այն պարագայում, եթե որևէ մեկը կալանավորվում է նախքան դատաքննությունը: Այդ իսկ պատճառով Ֆրանսիայի օրենսդրությամբ նախատեսված է եռակի պաշտպանություն.

(1) Ոստիկանության բաժնում կալանքը (ձերբակալություն) հստակ կարգավորվում է համապատասխան օրենսդրությամբ, որը, սակայն, գործնականում աշխույժ բանավեճի տեղիք է տալիս: Դա խափանման միջոց է՝ ուղղված հետախուզման գործընթացի պարզեցմանը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) վերջերս քննադատել է Ֆրանսիային կալանավորման ընթացակարգի կապակցությամբ: Արդյունքում, 2011թ. ապրիլի 14-ին շրջանառության մեջ է մտել նոր օրենքը, որով ամրագրվել են հետևյալ փոփոխությունները.

Վերջերս կատարված փոփոխությունների համաձայն՝ անձին թույլատրվում է կալանքի տակ պահել ոստիկանության բաժնում միմիայն այն դեպքում, եթե նա ապօրինի արարք է գործել և կարող է որոշ ժամանակով ազատագրվել: Այդ հնարավորությունը սահմանափակվում է այնպիսի իրավիճակներով, երբ տվյալ անձը չի կարող անմիջապես ներկայանալ պետական մեղադրողի առաջ, կամ երբ կարող են անհայտանալ ապացույցները:

Այժմ այդ ընթացակարգի տևողությունը սահմանափակվում է 24 ժամով և Հանրապետության պետական մեղադրողի (հանրապետական մեղադրող) հավանությամբ կարող է երկարացվել ևս 24 ժամով: Կալանքի ժամկետի երկարացումը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ այդ պահանջը հիմնավոր արդարացվում է ոստիկանության աշխատակիցների կողմից: Ամեն դեպքում, կալանքի ժամկետը կարող է երկարացվել միայն է այն դեպքում, եթե անձն իր կատարած իրավախախտման համար կարող է դատապարտվել առնվազն մեկ տարվա ազատազրկման: Եթե իրավախախտումը կապված է կազմակերպված հանցագործության հետ, ապա ոստիկանության բաժնում կալանքի ժամկետը կարող է երկարացվել մինչև 4 օր:

Կալանքի տակ գտնվող անձն ունի որոշ իրավունքներ.

Առաջին, Քրեական դատավարության օրենսգրքի 63-1 հոդվածի համաձայն՝ անձին պետք է իրեն հասկանալի լեզվով տեղեկացնել իր իրավունքների մասին: Մասնավորապես, նա պետք է իմանա այդ ընթացակարգին հանգեցրած պատճառը. նման տեղեկացման հարցում ցանկացած ուշացման պարագայում ամբողջ ընթացակարգն անվավեր է դառնում: Բացի այդ, կալանքի տակ պահվող անձը պետք է տեղյակ լինի ցուցմունք չտալու իր իրավունքի մասին:

Երկրորդ, կալանավորն իրավունք ունի երեք ժամվա ընթացքում իր հայեցողությամբ երկու հոգու տեղեկացնել իր կարգավիճակի մասին: Նա իրավունք ունի նաև բուժզննում անցնել բժշկի կողմից՝ իր առողջական վիճակը ստուգելու համար, և այդ բուժզննման արդյունքները պետք է գաղտնի պահվեն մասնագիտական գաղտնիքի և անձի արժանապատվության նկատմամբ հարգանքի շրջանակներում: Ֆրանսիայի Գերագույն դատարանի Քրեական պալատը հայտարարել է, որ այս իրավունքի ցանկացած խախտում հանդիսանում է նաև կասկածյալի իրավունքների խախտում, և նման խախտման պարագայում ոստիկանության բաժնում նրան կալանքի տակ պահելու մասին որոշումը պետք է չեղյալ հայտարարվի:³²

Եվ վերջապես, կասկածյալը կարող է պահանջել փաստաբանի հետ 30 րոպե ժամանակահատվածում գաղտնի զրույց ունենալու իր իրավունքի իրացումը, ինչպես նաև իրավունք ունի դատաքննության ողջ ընթացքում օգտվել փաստաբանի օգնությունից: Ավելին, փաստաբանին պետք է հասանելի լինեն բոլոր դատավարական փաստաթղթերը: Փաստաբանին տեղեկացնելու պահից 30 րոպեով ոստիկանության աշխատակիցը պետք է դադարեցնի գործի քննությունը:

(2) Կանխարգելիչ կալանքը (նախնական կալանք) ենթադրում է հանցավոր արարքի համար մեղադրվող անձի ազատազրկում, որը կարող է երկարացվել մինչև վճռի կայացումը: Նման խափանման միջոցն ընտրվում է միայն երկու դատավորի որոշմամբ: Հաշվի առնելով անմեղ անձանց վրա նման խափանման միջոցի գործած ազդեցությունը՝ այն կարելի է կիրառել միայն հետևյալ մի քանի պայմանների առկայության պարագայում.

³² Գերագույն դատարանի քրեական պալատ, 2009թ. հոկտեմբերի 27 [Հավելված 23. Վճռաբեկ դատարանի քրեական պալատ, 2009թ. հոկտեմբերի 27 [ֆրանսերեն]:

Անձի ազատագրկման ժամկետը պետք է լինի առնվազն 3 տարի:³³

Այս ընթացակարգը հիմնավորված է համարվում միայն նպատակների սպառիչ ցանկի առկայության պարագայում:³⁴

Խափանման միջոցի տևողությունը պետք է լինի ողջամիտ (4 ամիս՝ քրեական հանցագործությունների պարագայում) և կարող է երկարացվել առնվազն մինչև մեկուկես տարի:³⁵ Ինչևէ, կանխարգելիչ կալանքի խափանման միջոցի կիրառման յուրաքանչյուր դեպքում տվյալ անձն իրավունք ունի օգտվելու ՔՂՕ 1871-րդ հոդվածով նախատեսված հրատապ խափանման միջոցների ընթացակարգից, որի համաձայն՝ դատավորը պետք է 3 աշխատանքային օրվա ընթացքում որոշում կայացնի խափանման տվյալ միջոցը պահպանելու նպատակահարմարության վերաբերյալ:

(ii) Քրեական կալանավորում դատաքննությանը հաջորդող փուլում

Դատական քննության ավարտից և անձի՝ ազատագրկման դատապարտվելուց հետո նրա շահերը պաշտպանելու համար՝ հարկավոր է ապահովել բազում այլ հիմնարար իրավունքների իրացումը:

(1) Արժանապատվության իրավունք. համապատասխան հաստատությունների գործող ղեկավար մարմինները պետք է երաշխավորեն բոլոր կալանավորված անձանց արժանապատվության նկատմամբ հարգանքի իրավունքը: Այդուհանդերձ, Ֆրանսիայի բանտերի գերծանրաբեռնվածության ցուցանիշը Եվրոպական Միության համանման ամենաբարձր ցուցանիշներից է՝ հասնելով 119 տոկոսի և այդպիսով գերազանցելով 102 տոկոս կազմող ԵՄ միջին ցուցանիշը: ՄԻԵԴ-ը դատապարտել է Ֆրանսիային այդ բարձր ցուցանիշի պատճառով՝ համարելով որ նման իրավիճակը հանգեցնում է մարդու իրավունքների խախտմանը (տե՛ս, օրինակ, Քանալին ընդդեմ Ֆրանսիայի գործով 2013թ. ապրիլի 25-ի վճիռը): Այնուամենայնիվ, Քրեակատարողական հաստատությունների մասին 2009թ. նոյեմբերի 24-ի օրենքի համաձայն՝ համապատասխան մարմինները պետք է երաշխավորեն յուրաքանչյուր կալանավորի արժանապատվության նկատմամբ հարգանքը և այլ իրավունքների պաշտպանությունը: Ավելին, գործող ղեկավար մարմինները պետք է երաշխավորեն կալանավորների անվտանգությունը և իրավաչափ շահերի պաշտպանությունը՝ իրավախախտումների կրկնությունը կանխող բոլոր միջոցների հետ մեկտեղ: Մասնավորապես, օրենսդիրն ավելացրել է մի նոր դրույթ, որով թույլատրվում է անձնական խուզարկություն կատարել միմիայն այն արդարացնող որոշակի պայմանների

³³ ՔՂՕ 143-1 հոդված [Հավելված 24. ՔՂՕ հոդվածներ 143-1, 144 և 145-2 [անգլերեն]:

³⁴ Ըստ ՔՂՕ 144 հոդվածի՝ այդ նպատակները հետևյալն են. պահպանել ցանկացած իրեղեն ապացույց, կանխել վկաների կամ նրանց ընտանիքների անդամների վրա ճնշման գործադրման որևէ փորձ, կանխել կասկածյալների միջև ցանկացած բնույթի խարդախ հաղորդակցումը, պաշտպանել խափանման մասին որոշման մեջ նշված անձին, ապահովել կասկածյալի ներկայացումը դատավորին, վերջ դնել իրավախախտմանը կամ կանխել որևէ այլ իրավախախտում, վերջ դնել իրավախախտման բնույթի, հանգամանքների կամ հետևանքների լրջությունից բխող հասարակական կարգի խախտմանը [Հավելված 24. ՔՂՕ հոդվածներ 143-1, 144 և 145-2 [անգլերեն]:

³⁵ ՔՂՕ 145-2 հոդված [Հավելված 24. ՔՂՕ հոդվածներ 143-1, 144 և 145-2 [անգլերեն]:

անկայության պարագայում: Ամեն դեպքում, նման ընթացակարգ կարող է իրականացնել միայն կողմնակի՝ չեզոք բժիշկը: Այդ առումով օրենքի 44-րդ և 58-րդ հոդվածների համաձայն՝ ղեկավար մարմինները պարտավոր են երաշխավորել, որպեսզի յուրաքանչյուր ոք օգտվի իր անձի անձեռնմխելիության իրավունքի արդյունավետ պաշտպանությունից. անհրաժեշտության դեպքում նման ընթացակարգը կարող է իրականացվել էլեկտրոնային հսկողության միջոցով:

(2) Մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք.³⁶ այս իրավունքը պետք է պահպանել կալանավորների՝ հաղորդակցության իրավունքի միջոցով: Այդ կապակցությամբ Քրեակատարողական հաստատությունների մասին 2009թ. նոյեմբերի 24-ի օրենքի 39-րդ հոդվածով թույլատրվում է օգտվել հեռախոսից, իսկ 42-րդ հոդվածով ճանաչվում է բոլոր անձնական փաստաթղթերի գաղտնիությունը: Ինչ վերաբերում է ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքին, ապա նշված օրենքով ներմուծվել է «ընտանեկան կյանքի միասնություն» անվամբ հայտնի նոր յուրահատուկ հասկացությունը, որի շրջանակներում ցանկացած կալանավոր հնարավորություն ունի հանդիպել իր ընտանիքի անդամներին: Ավելին, օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ այն անձինք, ում ազատագրկման ժամկետն ավարտին է մոտենում, ունեն ընտանեկան վերամիավորման հնարավորություն:

(3) Կրոնի ազատության իրավունք.³⁷ Բանտերում կրոնի ազատության իրավունքի վերաբերյալ 2011թ. մարտի 24-ի իր կարծիքում օրենսդիրն ընդգծել է, որ Սահմանադրությամբ ամրագրված այս իրավունքը պետք է պաշտպանվի նաև բանտերում: Այդ նպատակով նշված կարծիքում կարևորվում է բանտերում կրոնական միավորումներ կազմելու նշանակությունը՝ բանտարկյալներին դավանանքի և պաշտամունքի ազատության իրավունքն իրացնելու հնարավորություն տալու համար:

(4) Ազատ արտահայտվելու իրավունք. հարկավոր է պաշտպանել նաև այս իրավունքը, այնքանով, որքանով այն չհանգեցնի այդ իրավունքի չարաշահմանը: Այսպիսով, կալանավորը չի կարող իր կարծիքներն արտահայտել սպառնալիքների կամ որևէ իրավունքի չարաշահման տեսքով, ինչը պատժելի է, սակայն նրան պետք է թույլատրել ազատ արտահայտվել նշվածից բացի այլ միջոցներով և իր ձայնը լսելի դարձնել քրեակատարողական հաստատության ղեկավարությանը: Այդ առումով Պետական Խորհրդի կողմից «Մարիի» գործով որոշման կայացումից ի վեր հստակ սահմանվել է նաև կալանավորների դատավարական իրավունքները կարգավորող իրավական դաշտը:

Ի լրումն նշված կանխարգելիչ միջոցների՝ Ֆրանսիայի Քրեական օրենսգրքով սահմանվում է նաև, որ այն բոլոր քաղաքացիական ծառայողները, ում կամայական արարքների արդյունքում կարող է սահմանափակվել անձի ազատությունը, ենթակա են 7 տարի ազատագրկման և տուգանվում են 100.000 եվրոյի չափով:

³⁶ [Հավելված 25. Թիվ 2009-1436 օրենք քրեակատարողական հաստատությունների մասին /Ֆրանսերեն/:

³⁷ [Հավելված 26. Օրենսդիրի կարծիքը բանտերում կրոնի ազատության իրավունքի վերաբերյալ /Ֆրանսերեն/:

(բ) Իրավական պաշտպանության իրավունք

Գործնականում իրավական պաշտպանության իրավունքը բազմաբովանդակ է, քանի որ այն ներառում է մրցունակության սկզբունքը, որի համաձայն՝ դատավարության բոլոր կողմերը հավասար են օրենքի առաջ, ուստիս պետք է հարգել բոլոր ընթացակարգային հայեցակարգերը ինչպես դատաքննությանը նախորդող, այնպես էլ հաջորդող փուլերում: Օրինակ, դատաքննության ընթացքում յուրաքանչյուր կողմ ունի ցանկացած օգտակար փաստաթուղթ ներկայացնելու և ազատ արտահայտվելու հնարավորություն: Ազատ արտահայտվելու հնարավորությունը, սակայն, սահմանափակվում է օրինապահության և գաղտնիության պահպանման պարտավորություններով:

Թեև Գերագույն դատարանը բնորոշել է իրավական պաշտպանությանն առնչվող իրավունքները որպես դատաքննության ընթացքում յուրաքանչյուր անձին վերապահված իրավունքներ ինչպես բնական իրավունքի, այնպես էլ իրավունքի ընդհանուր սկզբունքի տեսքով, Ֆրանսիան արժանացել է ՄԻԵԴ-ի քննադատությանը:³⁸ Փաստորեն, ՄԻԵԴ-ը դատապարտել է Ֆրանսիային իրավական պաշտպանության իրավունքը խախտելու համար:³⁹ Իրականում այդ սկզբունքը նշանակում է, որ դատավարության կողմերը պետք է ունենան հավասար իրավունքներ, մասնավորապես՝ ապացույցների և դատավորի անկողմնակալության և անկախության առումով: Նշված գործով ՄԻԵԴ-ի վճռի կայացումից հետո Ֆրանսիան բարեփոխել է իր իրավական դաշտը՝ հատկապես թույլատրելով փաստաբաններին աջակցություն ցուցաբերել իրենց պաշտպանյալներին ոստիկանական բաժնում կալանքի տակ գտնվելու ողջ ընթացքում և նրանց համար հասանելի դարձնելով իրենց պաշտպանյալների գործերը:⁴⁰

(գ) Անմեղության կանխավարկած և համաչափ պատժամիջոցների պահանջ

(i) Անմեղության կանխավարկած

ՄՔԻՀ-ի 9-րդ հոդվածի համաձայն՝ «Քանի որ մինչև մեղավոր ճանաչվելը յուրաքանչյուր ոք համարվում է անմեղ, նրան ձերբակալելու անհրաժեշտության պարագայում նրա անձի պաշտպանության համար անհրաժեշտություն չներկայացնող ցանկացած անտեղի դաժան միջոցի գործածում խստորեն սանձվում է Օրենքով»: Նշված իրավունքը սահմանադրական նշանակություն ունի Ֆրանսիայի օրենսդրության շրջանակներում:

³⁸ Պետական Խորհուրդ, 1944թ., *Trompier Gravier* [Հավելված 27. *Պետական Խորհուրդ, մաս, 1944թ. մայիսի 5, Trompier Gravier* [ֆրանսերեն]]; Պետական Խորհուրդ *Rassemblement des nouveaux avocats de France*, 1979թ. [Հավելված 28. *Պետական Խորհուրդ, 1979թ. հոկտեմբերի 12, Rassemblement des nouveaux avocats de France* [ֆրանսերեն]]:

³⁹ ՄԻԵԴ, 1992թ. Սադդին ընդդեմ Ֆրանսիայի գործի համառոտ նկարագիր. Ֆրանսիայում մի տղամարդ է ձերբակալվել թմրամիջոցներ պահելու և գործածելու համար: ՄԻԵԴ-ը դատապարտել է Ֆրանսիային՝ հանցագործության ականատես դարձած վկաներին ներգրավելու և ինքն իրեն պաշտպանելու հնարավորությունից նրան զրկելու համար, ինչը հանգեցրել է իր պաշտպանության իրավունքի խախտմանը [Հավելված 29. ՄԻԵԴ, Սադդին ընդդեմ Ֆրանսիայի գործով վճիռ [անգլերեն]]:

⁴⁰ http://www.lemonde.fr/societe/article/2014/05/06/justice-avancee-dans-le-respect-des-droits-de-la-defense_4412229_3224.html [Հավելված 30. *Avancée dans le respect des droits de la défense (Le Monde)* [ֆրանսերեն]]:

Գործնականում, այս սկզբունքի իմաստն այն է, որ մեղադրյալը չպետք է կրի ապացույցի բեռը:⁴¹ Մեղադրյալն իրավունք ունի չնպաստել իր մեղսագրմանը՝ դրանով իսկ չընդունելով իր մեղքը:⁴² Եվ վերջապես, հարկ է նշել, որ անգամ ապացույցների բացակայությունը միշտ դիտարկվում է հոգուտ մեղադրյալի:⁴³

Ի լրումն վերոնշյալի՝ գործող օրենսդրությամբ կանխվում է դատից առաջ անմեղության կանխավարկածի ցանկացած խախտում: Առաջին, դատավարության մեջ ներգրավված որևէ անձին պաշտպանելու համար կարելի է արտահերթ լումներ պահանջել Ֆրանսիայի Քաղաքացիական օրենսգրքի 9-1 հոդվածներով նախատեսված կարգով: Երկրորդ, Ֆրանսիական օրենսդրությամբ կարգավորվում է նաև հրապարակայնության և արժանապատվության իրավունքների պաշտպանությունը: Սակայն ընթացակարգային հրահանգները կատարելու նպատակով դատավորը կարող է որոշում կայացնել որոշ տեղեկություններ բացահայտելու վերաբերյալ:

(ii) Համաչափ պատժամիջոցների պահանջ

ՄՔԻՀ-ի 8-րդ հոդվածի համաձայն՝ «Օրենքով պետք է նախատեսվեն միայն ակնհայտորեն անհրաժեշտ պատժամիջոցները, և յուրաքանչյուր ոք պետք է պատժվի միայն իր կատարած իրավախախտումից առաջ ընդունված, հրապարակված և ուժի մեջ մտած օրենքով»:

Թեև այդ սկզբունքը խիստ կարևոր նշանակություն ունի, գործնականում, սակայն, Սահմանադրական դատարանն իրավասու է արգելել միայն ակնհայտ անհամաչափ պատիժ նշանակելու դեպքերը՝ այդպիսով չմիջամտելով անհամաչափ պատժամիջոցների նշանակման հնարավոր դեպքերին:⁴⁴

(դ) Սեփական կարծիքն արտահայտելու իրավունքը՝ ազատության չարաշահման շրջանակներում

ՄՔԻՀ-ի 11-րդ հոդվածի համաձայն՝ «Գաղափարներ և կարծիքներ ազատ արտահայտելու իրավունքը մարդու առավել արժեքավոր իրավունքներից է: Ուստի, յուրաքանչյուր քաղաքացի կարող է ազատ խոսել, գրել և նյութեր հրապարակել՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, որոնք համարժեք են այս ազատության խախտմանը»:

⁴¹ Այդուհանդերձ, հարկավոր է հաշվի առնել այս սկզբունքի սահմանափակումները: Իսկապես, որոշ դեպքերում պարզվել է, որ անմեղության կանխավարկածը պարզեցրել է ապացույցի բեռի ընթացակարգը: Այդուհանդերձ, Ֆրանսիայում նման կանխավարկածն ընդունելի է միայն իրավական պաշտպանության իրավունքների պաշտպանության և փաստերի ողջամիտ վերագրելիության պարագայում:

⁴² Գերագույն դատարանի քրեական պալատ, 2008թ. հոկտեմբերի 1 [Հավելված 31. *Վճռաբեկ դատարան, քրեական պալատ, 2008թ. հոկտեմբերի 1* [ֆրանսերեն]]:

⁴³ Սահմանադրական դատարան, 1989թ. հուլիսի 8 [Հավելված 32. *Սահմանադրական խորհուրդ, 1989թ. հուլիսի 8* [ֆրանսերեն]]:

⁴⁴ Սահմանադրական դատարան, թիվ 87-237 DC, 1987թ. դեկտեմբերի 30 [Հավելված 33. *Սահմանադրական խորհուրդ, 87-237, 1987թ. դեկտեմբերի 30* [ֆրանսերեն]]:

Ֆրանսիական օրենսդրության համաձայն՝ ազատ արտահայտվելու իրավունքը պաշտպանվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ այն վերածվում է ատելություն պարունակող խոսքի:⁴⁵

8. Արդյո՞ք անձինք իրավունք ունեն ձեռք բերել, պահել և գործածել հրազեն կամ գործածել այլ տեսակի զենք կամ այլ միջոցներ:

Ֆրանսիայի օրենսդրությամբ ամրագրված չէ հրազեն պահելու և գործածելու իրավունքը: Ավելին, Ֆրանսիայի օրենսդրությամբ նման հարցերը շատ խիստ են կարգավորվում: Ֆրանսիայի Ազգային անվտանգության օրենսգրքում զենքը դասակարգվում է չորս խմբի՝ Դ-Ա՝ կախված վտանգավորության աստիճանից: Ռազմական խմբին դասվող բոլոր զենքն արգելված է: Այդուհանդերձ, հատուկ թույլտվության առկայության պարագայում թույլատրվում է այլ տեսակի զենքերի տեղափոխումը:

Նշված օրենսգրքի L.311-1 հոդվածի համաձայն՝ սկզբունքային է զենք պահելու և գործածելու արգելքը:

Որոշ հանգամանքներում կարելի է զենք պահելու կամ գործածելու թույլտվություն ստանալ մարզական, հավաքածուն լրացնելու կամ մասնագիտական գործունեության նպատակներով:⁴⁶

⁴⁵Գործնականում ազատ արտահայտվելու իրավունքը երբեմն սահմանափակվել է այն դեպքերում, երբ այն կարող էր վնասակար ազդեցություն գործել: Օրինակ, 2007 թվականին Գերագույն դատարանը դատապարտման վճիռ է կայացրել այն անձի հանդեպ, ով տարածել էր հրեական համայնքը քննադատող բովանդակությամբ նյութեր՝ համարելով, որ ազատ արտահայտվելու իրավունքը տվյալ դեպքում հանդիսացել է ոչ թե կրոնի ընդունելի քննադատություն, այլ՝ մի խումբ անձանց խտրական վիրավորանք նրանց ծագման հիմքով:

⁴⁶ Օրինակ՝ ոստիկանության ծառայողները և անվտանգության աշխատակիցները կարող են հրազեն կրել իրենց մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում:

Հավելված 7/Ղազախստան

Բողոքի արտահայտման և քաղաքացիական անհնազանդության իրավունքը կարգավորող իրավական շրջանակ

2014թ. հոկտեմբերի 17

1. Բողոքի արտահայտման և քաղաքացիական անհնազանդության իրավունքը կարգավորող իրավական դաշտ. քաղաքացիական անհնազանդության ինչպիսի՞ դրսևորումներն են արդարադատության շրջանակներում (սահմանադրություն և այլ օրենքներ) ճանաչվում որպես իրավունքներ: Ինչպե՞ս են քաղաքացիական անհնազանդության նման դրսևորումները դիտարկվում տվյալ երկրի օրենքով:

Քաղաքացիների անհնազանդության իրավունքը Ղազախստանի Սահմանադրությամբ ճանաչվում է շատ սահմանափակ իմաստով: Այսպիսով, Սահմանադրության համաձայն՝ Ղազախստանի Հանրապետության քաղաքացիներն իրավունք ունեն կազմակերպելու խաղաղ և անզեն հավաքներ, հանրահավաքներ, ցույցեր, երթեր և ուղեկալումներ (պիկետներ): Այս իրավունքը սահմանափակվում է Սահմանադրության հետևյալ դրույթներով.

(i) հետևյալ գործողություններն անթույլատրելի են ցանկացած հանգամանքներում. հետևյալ քարոզչությունը կամ կոչերը՝ (i) բռնի ուժով սահմանադրական կարգի փոփոխում, (ii) Ղազախստանի Հանրապետության ամբողջականության խախտում, (iii) պետական անվտանգության խափանում, (iv) պատերազմ, (v) սոցիալական, ռասայական, ազգային, կրոնական, դասային կամ գենդերային գերազանցություն, ինչպես նաև (vi) ոճրագործության և բռնության պաշտամունք, և

(ii) մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրացումը չպետք է խախտի այլոց իրավունքները և ազատությունները, սահմանադրական կարգը և հասարակության բարոյականության սկզբունքները:

Սահմանադրությամբ ամրագրված է նաև, որ քաղաքացիների խաղաղ հավաքների և այլ իրավունքները կարող են սահմանափակվել պետական անվտանգության, հասարակական կարգի, հանրային առողջության պահպանման, կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության նկատառումներով ընդունված օրենքներով (այսինքն՝ խորհրդարանի ընդունած օրենսդրական ակտեր): Այս կապակցությամբ հարկավոր է նշել, որ «Ղազախստանի Հանրապետությունում խաղաղ հավաքների, հանրահավաքների, երթերի, ուղեկալումների և ցույցերի կազմակերպման և անցկացման մասին» Ղազախստանի Հանրապետության օրենքն («Բողոքի դրսևորման մասին» օրենք) ընդունվել է 1995թ. մարտի

17-ին: Օրենքը փոփոխվել է ժամանակ առ ժամանակ, ինչի արդյունքում բողոքի օրինական դրսևորումների ցանկը փոքր-ինչ ընդլայնվել է: Այդուհանդերձ, օրենքով ներկայացվում է նաև այն պահանջը, որ համապատասխան միջոցառումների կազմակերպիչները պետք է նախևառաջ ստանան տեղական գործադիր իշխանությունների համաձայնությունը: Օրինական ցույց անցկացնելու դիմումը պետք է ներկայացվի միջոցառման անցկացման նախատեսվող ամսաթվից 10 օր առաջ և պետք է ընդունվի և գրանցվի տեղական գործադիր մարմնի կողմից: Տեղական գործադիր մարմինը պետք է կազմակերպիչներին տեղեկացնի իր որոշման վերաբերյալ նախատեսվող միջոցառումից առնվազն հինգ օր առաջ: Տեղական գործադիր մարմինը կարող է մերժել նման միջոցառումների անցկացումը միայն մի քանի դեպքերում, եթե կարծում է, որ տվյալ հավաքը, երթը կամ այլ միջոցառումն ուղղված է սոցիալական, ռասայական կամ այլ անհանդուրժողականության բորբոքմանը կամ բռնի ուժով սահմանադրական կարգի փոփոխությանը կամ հասարակական կարգի խախտմանը: Բացի այդ, հասարակական անվտանգության, հանրային տրանսպորտի և ենթակառուցվածքների անխափան աշխատանքի, բուսականության, հասարակական կառույցների և շինությունների պահպանման նպատակով տեղական գործադիր մարմինները կարող են փոփոխել տվյալ միջոցառման անցկացման ժամը և վայրը: Պետական մարմինները, հասարակական միավորումները կամ առանձին քաղաքացիներ չպետք է միջամտեն Սահմանադրությամբ, վերոնշյալ օրենքով և հասարակական կարգի վերաբերյալ այլ ընդհանուր օրենքներով սահմանված ընթացակարգին համապատասխան կազմակերպված հավաքների, երթերի կամ այլ միջոցառումների անցկացմանը: Նման միջոցառումների կազմակերպիչները պատասխանատու են այդ միջոցառումների ընթացքում իրավական պահանջների պահպանման համար և պետք է համոզվեն, որ դրանց մասնակիցները չեն կրում սառը զենք, հրազեն, այլ տեսակի զենք կամ այլ առարկաներ, որոնք կարող են վտանգ ներկայացնել մարդկանց առողջության և կյանքի համար կամ գործածվել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց ունեցվածքը վնասելու համար:

2. Ճնշումներից և բռնապետությունից պաշտպանության սահմանադրական երաշխիքներ, բողոքի արտահայտման խաղաղ և բռնի ձևերի միջև սահմանագիծը: Արդյո՞ք բողոքի բռնի ձևերին դիմելու իրավունքն ամրագրված է Սահմանադրությամբ և ինչպե՞ս է այն կարգավորվում օրենսդրական դաշտում /եթե նման կարգավորում առհասարակ գոյություն ունի/

Ղազախստանի Սահմանադրության մեջ հստակ նշվում է, որ թույլատրելի են բողոքի արտահայտման միայն խաղաղ ձևերը: Սահմանադրության նշված դրույթներին համապատասխան՝ «Բողոքի դրսևորման մասին» օրենքով բողոքի ակցիաների մասնակիցներին հստակ արգելում է կրել սառը զենք, հրազեն կամ այլ տեսակի զենք կամ այլ տեսակի առարկաներ, որոնք կարող են վնասել մարդկանց առողջությունը կամ վտանգ ներկայացնել նրանց կյանքի համար կամ վնասել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքը:

Այսպիսով, թեև բողոքի խաղաղ և բռնի դրսևորումների միջև հստակ սահմանագիծ գոյություն չունի, «Բողոքի դրսևորման մասին» օրենքից հետևում է, որ զենք և հրազեն կրելը համարվում է բողոքի բռնի դրսևորում:

Բողոքի բռնի դրսևորումներին առնչվող որևէ իրավունք ամրագրված չէ Սահմանադրությամբ:

Բացի այդ, Սահմանադրությամբ ամրագրված չէ ճնշումներից և բռնապետությունից պաշտպանության որևէ հստակ դրույթ: Խոսքի ազատության, մարդու իրավունքների պաշտպանության, խոշտանգումների անթույլատրելիության, խաղաղ բողոքի ցույցերի իրավունքի և երկրի նախագահի, խորհրդարանի պատգամավորների և կառավարության անդամների լիազորությունների սահմանափակման վերաբերյալ սահմանադրական դրույթները կարելի է մեկնաբանել որպես ճնշումներից և բռնապետությունից պաշտպանության դրույթներ: Բացի այդ, ներքոհիշյալ երրորդ հարցի պատասխանում դիտարկված վարչական և քրեական պատասխանատվությունից ազատվելու հատուկ հիմքերը կարող են ծառայել որպես ճնշումների կամ բռնապետության դեմ ուղղված բռնի գործողությունների արդարացում:

3. Արդյո՞ք Սահմանադրությամբ և օրենքներով ճանաչվում է կառավարման՝ բռնապետության վերածվելու կամ ճնշումների պարագայում անձի ապստամբելու իրավունքը, և ինչպե՞ս է արտահայտվում այդ իրավունքի ճանաչումը:

Ղազախաստանի օրենսդրության մեջ նման դրույթներ որպես այդպիսին գոյություն չունեն, սակայն դրանք, հավանաբար, կարող են բխել այն փաստից, որ բռնապետության կամ ճնշումների վրա խարսխված ցանկացած վարչակարգ հակասում է սահմանադրական կարգին և խախտում է սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքները և ազատությունները և որոշ դեպքերում կարող է հանգեցնել սեփական շահերի պաշտպանության իրավունքի իրացմանը:

Բացի այդ, անձը կարող է վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկվել սահմանադրական կարգի բռնի փոփոխության կոչեր անելու, բռնությամբ և պայթյուններով ուղեկցվող զանգվածային անկարգություններ կազմակերպելու, անօրինական ճանապարհով զինամթերք կամ պայթուցիկ նյութեր ձեռքբերելու և կրելու, հավաքների, երթերի և այլ միջոցառումների անցկացման կարգը խախտելու համար: Անձը կարող է ազատվել վերոնշյալ երկու տեսակի պատասխանատվությունից ստորև ներկայացվող հանգամանքներում.

(i) ինքնապաշտպանություն, որը ներառում է ողջամիտ սահմաններում ինչպես անհատական, այնպես էլ հանրային կամ պետական շահերի պաշտպանությունը իրավախախտների գործողություններից: Քրեական պատասխանատվության իմաստով ինքնապաշտպանության իրավունքը չի սահմանափակվում այլ անձանց կամ պետական մարմինների օգնությանը դիմելու կարողությամբ, և

(ii) ծայրահեղ անհրաժեշտություն, այսինքն, երբ մարդկանց կյանքին կամ իրավունքներին կամ հասարակության և պետության շահերին սպառնացող վտանգը վերացնելու համար անհրաժեշտ է ձեռնարկել որոշակի անօրինական գործողություններ, ընդ որում՝ եթե այդ վտանգն անհնար է վերացնել որևէ այլ կերպ:

Վերոնշյալից բացի՝ անձը կարող է ազատվել վարչական պատասխանատվությունից արդարացված ռիսկի՝ սպառնալիքի առկայության պարագայում, այսինքն՝ հանրության համար օգտակար որոշակի նպատակներ իրականացնելու համար, եթե նշված նպատակները չի կարելի իրագործել որևէ այլ միջոցով:

4. Ե՞րբ կարելի է խոսել բռնապետություն և/կամ ճնշումների մասին. ո՞րն է սահմանագիծը

Ղազախստանի օրենսդրությամբ ամրագրված չեն բռնապետության կամ ճնշման որևէ չափանիշներ կամ սահմանագծեր: Ստորև բերված նյութից պարզ կդառնա նաև, որ Ղազախստանի օրենսդրությամբ հստակ ամրագրված չեն նաև ժողովրդավարական վարչակարգի չափանիշները: Նշված կարգերը և դրանց սահմանումներն առկա են միայն իրավագիտական և հասարակագիտական գրքերում և հետազոտություններում:

5. Որո՞նք են սահմանադրական կարգի փոփոխման փորձի պայմաններում քաղաքացիական անհնազանդության ընդունելի միջոցները կամ ձևերը

Անհնազանդության ոչ մի դրսևորում միանշանակ ընդունելի չէ, անգամ սահմանադրական կարգի փոփոխման փորձին դիմակայելու պարագայում: Ամենայն հավանականությամբ գործնականում այս հարցը կարող է լուծվել միայն ոչ լեգիտիմ պաշտոնյաների կամ իշխանությունների հրամանների նկատմամբ անհնազանդություն արտահայտելու կամ վերոնշյալ 3-րդ կետում դիտարկված հիմքերով վարչական և քրեական պատասխանատվությունից ազատվելու միջոցով:

6. Ըստ համապատասխան օրենսդրության՝ ի՞նչ է իրենից ներկայացնում սահմանադրական կարգը ժողովրդավարական երկրում

Ժողովրդավարությունը կամ ժողովրդավարական երկրում սահմանադրական կարգի չափանիշները Ղազախստանի օրենսդրությամբ հստակ չեն սահմանվում: Ժողովրդավարությունը կամ դրա չափանիշները սահմանելու փորձեր են արվում միայն տեսական իրավագիտական հետազոտությունների և գրականության մեջ: Իրավագետները համակարծիք են, որ ժողովրդավարության մեկ միասնական ըմբռնում գոյություն չունի, և որ արդի աշխարհում կան տարբեր տեսակի ժողովրդավարական պետություններ, որոնցից յուրաքանչյուրը տարբերվում է մյուսներից: Այդուհանդերձ, իրավագիտական հետազոտություններում ժողովրդավարությունը խիստ ընդհանուր իմաստով սահմանվում է

որպես հետևյալ սկզբունքների վրա հիմնված քաղաքական համակարգ և հասարակական կենսակերպ. (i) իշխանության աղբյուրը ժողովուրդն է, (ii) ժողովուրդն իրավունք ունի մասնակցելու պետական և հանրային նշանակության հարցերի կարգավորմանը, և (iii) մարդիկ պետք է, ըստ էության, ունենան իրավունքների և ազատությունների լայն շրջանակ: Ստորև ներկայացվում են ժողովրդավարական քաղաքական վարչակարգին առավել բնորոշ համարվող հատկանիշները՝ (i) կենտրոնական և տեղական կառավարման ներկայացուցչական մարմինների ընտրություն հավասար, ուղղակի և գաղտնի քվեարկությամբ, (ii) համազգային օրենքներ ընդունելու իրավունքը վերապահված է միայն խորհրդարանին, (iii) իշխանությունների՝ օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի տարանջատման սկզբունք, (iv) հակակշիռների և զսպումների համակարգի առկայություն, (v) բազմակուսակցական համակարգ և ինչպես գործող վարչակարգը սատարող, այնպես էլ ընդդիմադիր քաղաքական կուսակցությունների առկայություն, որոնք գործում են սահմանադրության շրջանակներում, (vi) քաղաքական որոշումները կայացվում են քվեների մեծամասնությամբ՝ պայմանով, որ հաշվի են առնվում նաև փոքրամասնությունների շահերն ու իրավունքները, և (vii) ոչ մի կուսակցություն չպետք է ունենա պետական կամ իշխանական կարգավիճակ: Սահմանադրության հիմնական դրույթներին նվիրված հաջորդ պարբերություններում փորձ է արվել ցույց տալ, որ վերոնշյալ հատկանիշները արտացոլվում են Ղազախստանի Սահմանադրության մեջ, և ներկայացնել վարչակարգի բռնի փոփոխության վերաբերյալ դրույթները:

Սահմանադրությունն օժտված է գերագույն ուժով: Բոլոր օրենքները և կանոնակարգերը պետք է համապատասխանեն սահմանադրությանը, իսկ ցանկացած չհամապատասխանող դրույթ պետք է համարվի անվավեր: Սահմանադրությամբ նաև ամրագրված է, որ Ղազախստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային համաձայնագրերը գերակայում են Ղազախստանի օրենքների և կանոնակարգերի (բացի Սահմանադրությունից) նկատմամբ: Ղազախստանի Հանրապետությունը Միավորված ազգերի կազմակերպության անդամ է, ընդունել և վավերացրել է մարդու իրավունքների ու ազատությունների վերաբերյալ ՄԱԿ-ի և բազմաթիվ այլ միջազգային համաձայնագրեր, որոնք, ինչպես արդեն նշվել է, գերակայում են Ղազախստանի օրենքների և կանոնակարգերի նկատմամբ: Այստեղից հետևում է, որ Ղազախստանը հանդիսանում է ժողովրդավարական երկիր, որի հիմքում ընկած է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի Սահմանափակման և շեղման մասին դրույթների վերաբերյալ Սիրակուզայի սկզբունքներում նշված «ժողովրդավարական հասարակություն» հասկացության մեկնաբանությունը:

Ղազախստանի Սահմանադրության հիմնական դրույթները

Սահմանադրության առաջին հոդվածներում ամրագրված է, որ Ղազախստանում իշխանության միակ աղբյուրը ժողովուրդն է, որն իր իշխանությունն իրականացնում հանրապետական հանրաքվեի և ազատ ընտրությունների միջոցով: Ղազախստանում ոչ ոք չի

կարող անհիմն կերպով յուրացնել կամ զավթել իշխանությունը: Բշխանության զավթումը հետապնդվում է օրենքով: Միայն նախագահը և խորհրդարանի անդամներն իրավունք ունեն խոսել ժողովրդի անունից և միայն իրենց սահմանադրական լիազորությունների շրջանակներում: Յուրաքանչյուր ոք պետք է պահպանի Ղազախստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, ինչպես նաև հարգի այլ անձանց իրավունքները, ազատությունները, պատիվը և արժանապատվությունը: Սահմանադրական կարգի բռնի փոփոխման նպատակով ցանկացած հասարակական միավորումների և ռազմականացված ստորաբաժանումների հիմնումն արգելված են: Ղազախստանի քաղաքացիներն ունեն միավորումներ հիմնելու ազատության իրավունք: Նման միավորումների գործունեությունը պետք է կարգավորվի օրենքով: Զինժառայողները ազգային անվտանգության մարմինների և իրավապահ մարմինների աշխատակիցները և դատավորները չպետք է անդամակցեն որևէ կուսակցության կամ արհմիությանը և չպետք է սատարեն որևէ քաղաքական կուսակցությանը:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի պաշտպանելու իր իրավունքները և ազատությունները Ղազախստանի օրենսդրությամբ թույլատրելի համարվող բոլոր միջոցներով, այդ թվում՝ հանգամանքներով արդարացված ինքնապաշտպանությամբ: Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները դատական կարգով պաշտպանելու իրավունք: Անձը կարող է ձերբակալվել կամ կալանավորվել միայն Ղազախստանի օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և դատարանի սանկցիայով: Ձերբակալված անձն իրավունք ունի բողոքարկելու ձերբակալությունը, և ձերբակալությունը պետք է հաստատվի դատարանի կողմից: Առանց դատարանի հաստատման անձը կարող է ձերբակալվել ոչ ավելի, քան յոթանասուներկու ժամով: Յուրաքանչյուր ձերբակալված, կալանավորված կամ հանցագործություն կատարելու համար մեղադրվող անձ իրավունք ունի ձերբակալման, կալանավորման կամ մեղադրանքի ներկայացման պահից ունենալ իրեն ներկայացնող փաստաբան (դատապաշտպան): Մարդկային արժանապատվությունն անձեռնմխելի է: Ոչ ոքի չպետք է ենթարկել խոշտանգումների կամ դաժան կամ այլ տեսակի նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Քաղաքացիներն ունեն պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների անդամներ ընտրելու և այդ պաշտոններում ընտրվելու իրավունք: Նախագահն ընտրվում է բոլոր չափահաս մարդկանց կողմից գաղտնի քվեարկությամբ: Նույն անձը չի կարող նախագահի պաշտոնում ընտրվել ավելի, քան երկու անգամ անընդմեջ, բացառություն է կազմել Ղազախստանի առաջին նախագահը: Նախագահության ժամկետը հինգ տարի է: Վարչապետը նշանակվում է նախագահի առաջարկով և խորհրդարանի ստորին պալատի հաստատմամբ: Նախագահը պատասխանատվության է կանչվում իր գործողությունների համար միայն դավաճանության պարագայում: Նախագահին մեղադրանք ներկայացնելու և հետաքննություն սկսելու որոշումը պետք է ընդունվի խորհրդարանի ստորին պալատի անդամների մեծամասնության կողմից՝ նրանց առնվազն մեկ երրորդի առաջարկով:

Խորհրդարանը հանդիսանում է ամենաբարձր ներկայացուցչական մարմինը: Խորհրդարանի անդամներն ընտրվում են վեց տարի ժամկետով: Խորհրդարանի ստորին

պալատի անդամների մեծամասնությունն ընտրվում է ամբողջ ժողովրդի կողմից՝ գաղտնի քվեարկությամբ: Խորհրդարանի անդամները կարող են զրկվել իրենց կարգավիճակից միայն սահմանափակ թվով դեպքերում, օրինակ՝ այլ երկրում բնակություն հաստատելու նպատակով Ղազախստանից հեռանալու դեպքում, կամ եթե ուժի մեջ է մտնում նրանց դեմ հարուցված քրեական գործով դատական որոշումը: Խորհրդարանի անդամը չի կարող ձերբակալվել, դատարան կամ այլ մարմիններ բերվել իրավապահների ուղեկցությամբ կամ ենթարկվել դատարանի կողմից սահմանված վարչական պատժամիջոցների և չի կարող դատվել քրեական մեղադրանքով՝ առանց համապատասխան պալատի համաձայնության, բացառությամբ հանցանքի վայրում ձերբակալվելու կամ այլ ծանր հանցագործությունների դեպքերի: Սահմանադրությունը կարող է փոփոխվել խորհրդարանի երկու պալատների համատեղ նիստում կայացրած որոշման հիման վրա՝ երկրի նախագահի առաջարկությամբ: Սահմանադրությունում որևէ փոփոխություն կատարելու համար անհրաժեշտ է ստանալ խորհրդարանի յուրաքանչյուր պալատի քվեների ընդհանուր թվի երեք քառորդի դրական քվե: Կառավարության անդամները չեն կարող լինել ներկայացուցչական մարմինների⁹³ անդամ կամ զբաղեցնել որևէ պաշտոն՝ բացառությամբ գիտական, մանկավարժական կամ նմանօրինակ ոլորտների: Խորհրդարանը պետք է ընդունի այն բոլոր օրենքները, որոնցով կարգավորվում են մարդու իրավունքներին, ազատություններին և պարտավորություններին, ինչպես նաև դատարաններին և դատական ընթացակարգերին առնչվող կարևորագույն սկզբունքները և կանոնները:

Արդարադատությունը կարող են իրականացնել միայն դատարանները: Անթույլատրելի է որևէ կերպ միջամտել դատարանների աշխատանքին: Գերագույն դատարանի նախագահի և դատավորների և գլխավոր դատախազի ընտրությունը, պաշտոնից ազատումը և անձեռնմխելիությունից զրկումը կատարում է բացառապես խորհրդարանի վերին պալատը՝ երկրի նախագահի առաջարկությամբ:

7. Արդյո՞ք Սահմանադրությամբ երաշխավորվում են բավարար մեխանիզմներ կառավարության՝ բռնապետության կամ ավտորիտար պետության վերածումը կանխելու համար, և որո՞նք են Սահմանադրությամբ ամրագրված միջոցները: Արդյո՞ք քաղաքացիական անհնազանդությունը որպես այդպիսին համարվում է ընդունելի միջոց

Դժվար է ասել, թե արդյոք Սահմանադրությամբ ամրագրված են բավարար մեխանիզմներ՝ կառավարության՝ բռնապետության կամ ավտորիտար պետության վերածումը կամ ճնշումները կանխելու համար: Թեև Սահմանադրությամբ ամրագրված է իշխանությունների տարանջատման սկզբունքը, զսպումների և հակակշիռների որոշակի համակարգը և բնակչության ընտրական իրավունքները, հնարավոր չէ պարզել, թե արդյոք

⁹³ Դա նշանակում է, որ պետական մարմինների աշխատակիցները չեն կարող անդամակցել կենտրոնական կամ տարածքային խորհրդարաններին: Այլ կերպ ասած՝ գործադիր իշխանությունը պետք է գործի օրենսդիր իշխանությունից անջատ և անկախ, և հակառակը:

նման մեխանիզմները բավարար են: Միննույն ժամանակ, ինչպես արդեն նշվել է, քաղաքացիական անհնազանդությունը ոչ մի պարագայում ընդունելի միջոց չի համարվում:

8. Կցանկանայինք անդրադառնալ նաև հրազեն ունենալու, պահելու և գործածելու, ինչպես նաև տարբեր տեսակի զենք ու զինամթերք գործածելու իրավունքին

Ղազախստանի քաղաքացիները և Ղազախստանի Հանրապետությունում գտնվող օտարերկրացիները կարող են ունենալ և ձեռք բերել զենք: Այդուհանդերձ, այս իրավունքները զգալիորեն սահմանափակվում են օրենքով: Ղազախստանի օրենսդրության համաձայն՝ երկրի քաղաքացիները կամ օտարերկրացիները կարող են ձեռք բերել, պահել կամ գործածել միայն որոշ տեսակի զենք, որը սահմանվում է որպես քաղաքացիական զենք: Քաղաքացիական զենքը ներառում է այն զենքը, որը կարող է գործածվել ինքնապաշտպանության, սպորտով և որսորդությամբ զբաղվելու նպատակներով: Քաղաքացիական զենք կարող են ձեռք բերել միայն 18 տարին լրացած քաղաքացիները՝ համապատասխան թույլտվություն ստանալուց հետո: Սպորտի և որսորդության նպատակներով զենք կարող են ձեռքբերել և պահել միայն մարզիկները և համապատասխան որսորդական արտոնագիր ունեցող անձինք: Հեռահար սպորտային զենքը⁹⁴ կարող են ձեռքբերել, պահել և կրել միայն 16 տարին լրացած քաղաքացիները միայն որոշակի մարզաձևով զբաղվելու նպատակով: Ազդանշանային զենքը⁹⁵, մեխանիկական սփրեյները և արցունքաբեր ու գրգռիչ նյութերով այլ սարքերը գրանցելու կամ դրանց համար թույլտվություն ստանալու կարիք չկա:

Ի լրումն վերոնշյալի՝ քաղաքացիները կարող են ինքնապաշտպանական զենք ձեռք բերել և պահել միայն բժշկական փորձաքննության և զենքի պահպանման և օգտագործման անվտանգության վերաբերյալ դասընթաց անցնելուց համար: Ինքնապաշտպանական զենքը ներառում է հետևյալը՝ (i) ողորկափող երկարափող հրազեն, որը կարելի է գնել ինքնապաշտպանության նպատակներով, սակայն չի կարելի կրել, (ii) գազային սփրեյ զենք և էլեկտրական զենք, որը կարելի է գնել և կրել ներքին գործերի մարմինների թույլտվությամբ:

Վերոնշյալից բացի՝ «Որոշ տեսակի զենքի շրջանառության նկատմամբ պետական վերահսկողության» մասին 1998թ. դեկտեմբերի 30-ի թիվ 339-1 օրենքով հստակ ամրագրված է, որ հավաքների, երթերի, ցույցերի, ուղեկալումների և այլ հասարակական միջոցառումների մասնակիցներին արգելվում է կրել որևէ զենք կամ զինամթերք: Արգելվում է հասարակական վայրերում կրել բաց, այսինքն՝ առանց պատյանի զենք, ինչպես նաև՝ առանց հատուկ թույլտվության ազգային տարազի մաս կազմող զենք:

⁹⁴ Այլընտրանքային թարգմանություն՝ հեռահար զենք, օրինակ՝ տեղերի կամ դասակների նետման մարզաձևերով զբաղվելու համար նախատեսված զենք:

⁹⁵ Օրինակ՝ լուսարձակ ատրճանակի կամ վթարային լուսարձակման համար:

Հավելված 8/Ռուսաստանի Դաշնություն

Քաղաքացիական անհնազանդություն

2014թ. հոկտեմբերի 27

1. ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

1.1 Սույն աշխատությունը պատրաստվել է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակին (ՀՔԱՎ) խնդրանքով: Սույն աշխատության մեջ ներկայացվում են Ռուսաստանի Դաշնությունում քաղաքացիական անհնազանդության և բողոքի դրսևորումները կարգավորող իրավական դաշտը և ՀՔԱՎ-ի կողմից բարձրացված հարցերի պատասխանները: Հասկանալի է, որ այս հանձնարարությունն առնչվում է ընդհանուր տեղեկատվական նպատակներով ՀՔԱՎ-ի նախաձեռնած իրավական դաշտի համընդհանուր հետազոտություններին:

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2.1 Իրավունքի աղբյուրները Ռուսաստանի Դաշնությունում

Ռուսաստանի Դաշնությունը (Ռուսաստան) հանդիսանում է օրենքի գերակայությամբ առաջնորդվող դաշնային ժողովրդավարական պետություն՝ կառավարման հանրապետական ձևով: Ռուսաստանում իրավունքի հիմնական աղբյուրներն են (աստիճանակարգով)՝ (i) միջազգային իրավունքի ընդհանուր ճանաչված սկզբունքները (jus cogens), (ii) միջազգային պայմանագրերը, (iii) Սահմանադրությունը, (iv) դաշնային սահմանադրական իրավունքը, (v) Դաշնային օրենքների ուժ ունեցող օրենսգրքերը, (vi) Դաշնային օրենքները և (vii) ենթաօրենսդրական ակտերը:

Ռուսաստանյան օրենսդրության և միջազգային պայմանագրերի միջև հակասությունների պարագայում գերակայում և անմիջականորեն կիրառվում է միջազգային պայմանագիրը (Սահմանադրության 15-րդ հոդվածի 4-րդ մաս):

Դատական որոշումները նախադեպային ուժ չունեն և Ռուսաստանում իրավունքի աղբյուր չեն հանդիսանում: Սակայն դրանք կենսական դերակատարում ունեն օրենքի մեկնաբանության գործում: Դատական որոշումների աստիճանակարգում գերագույն ուժով օժտված են Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի (Սահմանադրական դատարան) որոշումները, քանի որ Սահմանադրական դատարանը լիազորված է որպես հակասահմանադրական ճանաչել ներպետական օրենքները և/կամ պետական իշխանությունների կողմից դրանց մեկնաբանությունը:

2.2 Մարդու իրավունքների կոնվենցիաներ

Ռուսաստանը միացել է 1948թ. դեկտեմբերի 10-ի Մարդու իրավունքների և ազատությունների համընդհանուր հռչակագրի (ՄԻՀՀ) վրա հիմնված 1966թ. դեկտեմբերի 16-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին (Իրավունքների միջազգային դաշնագիր) և 1950թ. նոյեմբերի 4-ի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (Եվրոպական կոնվենցիա):

Ռուսաստանի կողմից ենթադրյալ խախտումներ պարունակող գործերով կայացրած Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) վճիռները պաշտոնապես պարտադիր են Ռուսաստանի համար, իսկ ՄԻԵԴ-ի՝ Ռուսաստանին չառնչվող վճիռները՝ պարտադիր չեն: Այդուհանդերձ, գործնականում նման չառնչվող վճիռները կարող են հաշվի առնել ռուսաստանյան դատարանները, հատկապես՝ Սահմանադրական դատարանը, Ռուսաստանի դաշնության Գերագույն դատարանը և որոշ այլ պետական մարմիններ (Մարդու իրավունքների հանձնակատար և այլն):

Մենք նկատել ենք, որ Ռուսաստանի պետական իշխանությունները կատարում են ՄԻԵԴ-ի՝ ֆինանսական գործերով կայացրած վճիռները՝ անտեսելով այլ վճիռները, օրինակ՝ գործով նոր դատաքննություն կամ հետաքննություն անցկացնելու պահանջի վերաբերյալ կամ օրենսդրությունը բարեփոխելու առաջարկները:

2.3 Վերլուծության շրջանակ

Մեր հետազոտությունը սահմանափակվում է միայն Ռուսաստանի օրենսդրության ուսումնասիրությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռուսաստանյան իրավունքն անմիջականորեն չի արտացոլում որոշ հարցեր կամ եզրույթներ, դիմել ենք նաև ռուս իրավաբանների և ռուս ու արտասահմանյան քաղաքագետների օգնությանը:

3. ԲՈՂՈՔԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ

3.1 Բողոքի սահմանումը Ռուսաստանի օրենսդրության մեջ

Ռուսաստանի օրենսդրության մեջ «բողոք» հասկացությունը միանշանակ սահմանում չունի: Իրավագետներն առաջարկում են նշված եզրույթի մի շարք տարբեր սահմանումներ: Այսպես, քաղաքագիտության բնագավառում, Ա. Տրոիցկայան «բողոք» հասկացությունը սահմանել է որպես «իշխանությունների վարած քաղաքականության ընդհանուր ուղղության, կամ նրանց առանձին որոշումների և գործողությունների առնչությամբ հասարակական անհամաձայնության արտահայտում, որին հաջորդում է սահմանադրական և իրավական

հարաբերությունների սուբյեկտի կողմից որոշակի պահանջների ներկայացումը:¹ Մյուսների կարծիքով՝ իշխանության գործողությունների հետ անհամաձայնությունը և/կամ հասարակության լայն զանգվածներին ուղղված ցանկացած ուղերձ իր իսկ էությամբ անպայման վերածվում է բողոքի:² Գիտնականներից ոմանց կարծիքով՝ բողոքը կարող է դրսևորվել միայն խաղաղ եղանակով և որպես այդպիսին՝ բողոք արտահայտելու իրավունքը ժողովրդավարական պետությունում բնակվող յուրաքանչյուր անհատի համընդհանուր իրավունքն է:³

3.2 Բողոք արտահայտելու իրավունք

ՌԴ Սահմանադրությամբ բողոք արտահայտելու իրավունք (խաղաղ կամ բռնի) որպես այդպիսին արձանագրված չէ: Այդուհանդերձ, Սահմանադրությամբ հստակ նախատեսվում են այնպիսի իրավունքներ, որոնք որոշակի հանգամանքներում կիրառվելուց հետո, կարող են դիտարկվել որպես բողոք արտահայտելու իրավունքի բնույթի իրավունքներ, օրինակ՝ հավաքների ազատության իրավունք (31-րդ հոդված), մտքի և խոսքի ազատություն (29-րդ հոդված), գործադուլի իրավունք (37-րդ հոդված) և այլն: Ուստի, կարելի է ասել, որ բողոքի իրավունքը երաշխավորվում է մի շարք այնպիսի սահմանադրական իրավունքների և ազատությունների իրացման հնարավորությամբ, ինչպիսիք են՝ միավորումներ կազմելու ազատությունը, խոսքի ազատությունը, մամուլի ազատությունը, պետական գործերի կառավարմանը մասնակցելու իրավունքը, պետական իշխանություններին դիմելու իրավունքը, ազատության և անձի անձեռնմխելիության իրավունքը և այլն:

Սահմանադրության 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որևէ հիմնարար իրավունքի արտահայտված վկայակոչման բացակայությունը չի նշանակում, որ տվյալ իրավունքը մարդու իրավունքները կարգավորող ռուսաստանյան օրենսդրության մաս չի կազմում: Մենք նկատել ենք, որ «Նոսովը և այլք ընդդեմ Ռուսաստանի» գործով 2014թ. փետրվարի 20-ին կայացրած վճռի 55-րդ կետում (դիմումներ թիվ 9117/04 և 10441/04) ՄԻԵԴ-ը նշել է հետևյալը. «Դատարանը ճանաչել է, որ 11-րդ հոդվածում արձանագրված խաղաղ հավաքների ազատության իրավունքը ժողովրդավարական պետությունների հիմնարար իրավունքներից է և ազատ արտահայտվելու իրավունքի հետ մեկտեղ հանդիսանում է հասարակության հիմքերից մեկը: Հավաքների ազատության իրավունքի նպատակներից է հարթակ ապահովել հասարակական քննարկումների և բողոքի հրապարակային արտահայտման համար»: Վերոնշյալից եզրակացնում ենք, որ բողոքի իրավունքը համարվում է հիմնարար իրավունք, ուստի կարող է պաշտպանվել սահմանադրությամբ:

3.3 Բողոք արտահայտելու իրավունքի սահմանափակումները

¹ Ա. Տրոյցկայա. «Բողոք արտահայտելու իրավունքի բովանդակային էությունը և իրացման արդյունավետությունը» // Համեմատական սահմանադրական տեսություն, 2012թ. թիվ 5, էջ 8:

² Տե՛ս, օրինակ՝ Գ. Ռ. Սալիխով. «Բողոքին առնչվող իրավահարաբերությունները սահմանադրական իրավունքում. տեսություն» // Սահմանադրական և ներպետական իրավունք, 2014թ., թիվ 1, էջ 2:

³ Տե՛ս, օրինակ՝ Բ. Պանտելեն. «Գործադուլ անցկացնելու համար քվեարկություն. ոչ՝ ապագային», EJ-Jurist, 2011թ., թիվ 44, էջ 1:

Մարդու և քաղաքացիական որոշ իրավունքներ սահմանափակվում են Սահմանադրությամբ: Օրինակ, Սահմանադրության 29-րդ հոդվածով սահմանափակվում է խոսքի ազատությունը. արգելված է սոցիալական, ռասայական, ազգային կամ կրոնական ատելության և թշնամանքի քարոզչությունն արգելվում է: Այլ իրավունքները կարգավորվում են Սահմանադրության 55-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված ընդհանուր կանոնով, որի համաձայն՝ իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել դաշնային օրենքներով, սակայն միայն այնքանով, որքան անհրաժեշտ է սահմանադրական համակարգի և բարոյականության հիմնարար սկզբունքները, ինչպես նաև՝ այլ անձանց առողջությունը, իրավունքները և օրինական շահերը պաշտպանելու և պետական անվտանգությունն ապահովելու համար:

Որոշ դեպքերում բողոքի արտահայտման իրավունքի բնույթ կրող իրավունքների սահմանափակումները անհրաժեշտ են և արդարացված: Օրինակ, քաղաքացիական ավիացիայի անձնակազմի (Ռուսաստանի Դաշնության Օդային օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ին կետ) կամ միջուկային կայանների և պահեստների աշխատողների («Միջուկային էներգիայի օգտագործման մասին» 1995թ. նոյեմբերի 21-ի թիվ 170-ՖՁ ՌԴ օրենքի 39-րդ հոդված) գործադուլի արգելքի նպատակն է ապահովել քաղաքացիների անվտանգությունը, իսկ ռազմական դրության ժամանակ հավաքների և ցույցերի արգելքն («Ռազմական դրության մասին» 2002թ. հունվարի 30-ի թիվ 1-ՖԿՁ ՌԴ սահմանադրական օրենքի 7.9 հոդված) ուղղված է հենց իրենց՝ բողոքի ցույցի մասնակիցների անվտանգությունն ապահովմանը:

Բողոքի արտահայտման հետ կապված իրավունքները բացարձակ չեն և պետք է համապատասխանեցվեն տարբեր պատժելի իրավախախտումների հետ առնչվող այլ կանոնների հետ: Օրինակ, Ռուսաստանի Դաշնության Վարչական խախտումների մասին օրենսգրքի (Ռուսաստանի Վարչական օրենսգրք) 20-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանվում է պատասխանատվություն՝ տուգանքի կամ 15-օրյա վարչական կալանքի տեսքով հասարակական վայրերում այնպիսի զանգվածային հանդիպումներ (օրինակ՝ ֆլեշմոբ)⁴ կազմակերպելու կամ նման հանդիպումներին մասնակցելու հասարակական կոչերի համար, որոնք (i) վնաս են պատճառում մշակված հողին, (ii) խոչընդոտում են հետիոտների շարժին կամ տրանսպորտի երթևեկությանը կամ (iii) արգելափակում են տներ մուտքը կամ տրանսպորտի ճանապարհը կամ սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտներ և այլ շենքերի մուտքը, և նման դեպքերում ոստիկանությանը թույլատրվում է ձերբակալել մայթով, փողոցով, պուրակով, կանաչապատ տարածքով կամ բնակելի շենքերի մոտ կանգնած կամ շարժվող մարդկանց ցանկացած խմբին: Նման դեպքերում ձերբակալության հիմք են հանդիսանում քաղաքի իշխանություններից, հետիոտնից կամ բնակչից պաշտոնական կարգով ոստիկանության ստացած բողոքները: Ռուսաստանյան դատարանների վճիռներով մարդկանց խմբեր պատասխանատվության են ենթարկվել Ռուսաստանի Վարչական օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով «պուրակի ծառուղիներով և մայթերով վազվզելու և հետիոտների

⁴ «Հավաքների մասին» օրենքի համաձայն՝ ֆլեշմոբը տարբերվում է հասարակական հավաքներից:

ճանապարհը խոչընդոտելու համար»:⁵ Ուշագրավ է, որ Ռուսաստանի Վարչական օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետն ընդունվել է 2012թ. հունիսի 8-ին՝ Մոսկվայի Չիստիյե Պրուդի հրապարակում՝ Աբայ Կունանբանի արձանի մոտ ընդդիմության ճամբարի և «Գրավի՛ր Աբայը» շարժման ժողովրդական «զբոսահանդեսի» (փառատոնի) կազմակերպումից հետո:

2004թ. հունիսի 19-ի թիվ 54-ՖԶ «Հավաքների, հանրահավաքների, ցույցերի, երթերի և ուղեկալումների (պիկետ) մասին» («Հավաքների մասին» օրենք) Դաշնային օրենքի (լրամշակված) 5.3.(1) հոդվածի համաձայն՝ պետական իշխանությունները չեն կարող մերժել հավաք կազմակերպելու վերաբերյալ դիմումը, սակայն կարող են «համակարգել» այդ գործընթացը՝ ցուցարարներին առաջարկելով հավաքի անցկացման այլ ժամանակ և վայր: Հավաքները «համակարգելու» իրավունքն անսահմանափակ է, ինչը երբեմն կարող է հանգեցնել խաղաղ հավաքների ազատության իրավունքի խախտմանը: 2007 թ. պետական իշխանությունները «չեն համակարգել» ցույցերի և հավաքների անցկացման մի քանի դիմում մի շարք տարբեր պատճառներով, այդ թվում՝ հավաքների անցկացման համար նախատեսված վայրերում ճանապարհների հանկարծակի վերանորոգման պատճառով: Նման գործերով մի քանի դատավարություն է ընթացել, և ի վերջո դրանք քննվել են Սահմանադրական դատարանում: 2009թ. ապրիլի 9-ի թիվ 484-ՕՊ որոշմամբ Սահմանադրական դատարանը գտել է, որ համակարգման նշված կարգը չի հակասում Սահմանադրությանը: Ուշագրավ է, որ Սահմանադրական դատարանի դատավոր պարոն Ա. Կոնոնովը հատուկ կարծիքում նշել է, որ պետական իշխանությունների՝ «Հավաքների մասին» օրենքով նախատեսված միջոցառումների անցկացման վայրը և ժամը փոփոխելու անսահմանափակ իրավունքով արգելափակվում է քաղաքացիների կողմից իրենց հավաքների ազատության իրավունքի իրացումը:

Առանց պետական իշխանությունների համաձայնության անցկացված հավաքը կամ հանրահավաքը համարվում է չարտոնված/անօրինական գործողություն: Չարտոնված հավաքների կամ հանրահավաքների կազմակերպիչները կարող են ենթարկվել վարչական պատասխանատվության՝ Ռուսաստանի Վարչական օրենսգրքի 20-րդ հոդվածի 2 մասի 2-րդ կետի համաձայն, որով նախատեսում է տուգանք՝ սկսած 20.000 ռուսական ռուբլիից (մոտ՝ 550 ԱՄՆ դոլար) մինչև 30.000 ռուսական ռուբլի (մոտ՝ 750 ԱՄՆ դոլար) չափով կամ մինչև 10 օր տևողությամբ վարչական կալանք: Եթե չարտոնված հավաքները խոչընդոտում են հետիոտների կամ տրանսպորտի երթևեկությանը կամ քաղաքացիների ճանապարհը դեպի բնակելի շենքեր կամ տրանսպորտի երթուղին դեպի սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտներ և այլ շենքեր, հավաքի ցանկացած մասնակից կարող է տուգանվել 10.000 ռուսական ռուբլիից (մոտ՝ 275 ԱՄՆ դոլար) մինչև 20.000 ռուսական ռուբլի (մոտ՝ 550 ԱՄՆ դոլար) չափով կամ ենթարկվի մինչև 15 օր տևողությամբ վարչական կալանքի:

⁵ Թիվ 4ա-411/2014 գործով Սամարա քաղաքի Պրոմիշլեննիյ շրջանի դատարանի 2012թ. դեկտեմբերի 17-ին կայացրած որոշումը:

180 օրվա ընթացքում Ռուսաստանի Վարչական օրենսգրքի 20-րդ հոդվածի 2 մասով երկու անգամ պատասխանատվության ենթարկված անձը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել Ռուսաստանի Դաշնության Քրեական օրենսգրքի (Ռուսաստանի Քրեական օրենսգիրք) 212.1 հոդվածով, որով նախատեսվում է տուգանք 600.000 ռուսական ռուբլիից (մոտ՝ 15.500 ԱՄՆ դոլար) մինչև 1.000.000 ռուսական ռուբլի (մոտ՝ 25.500 ԱՄՆ դոլար) չափով կամ երկու կամ երեք տարվա աշխատավարձի չափով, կամ մինչև 480 ժամ պարտադիր աշխատանք կամ մինչև 5 տարի ուղղիչ աշխատանք կամ մինչև 5 տարի ազատազրկում:

Ինչպես պարզվել է, բողոքի արտահայտման միակ ձևը, որը չի կարող համարվել «չարտոնված» կամ «անօրինական», մեկ անձի ուղեկալումն է: «Հավաքների» մասին օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է ուղեկալումներ կազմակերպել Ռուսաստանի նախագահի նստավայրի, դատարանների շենքերի և բանտերի հարակից տարածքներում:

3.4 Բողոքի արտահայտման ձևեր

Տեսաբանների կողմից «բողոք» եզրույթի ընկալման իմաստով (տե՛ս՝ կետ 3.1)՝ ցանկացած անձ կամ մարդկանց խումբ, ողջ հասարակությունը կամ պետական մարմինները կարող են բողոք արտահայտել: Օրինակ, նախագահը կարող է բողոք արտահայտել խորհրդարանի առաջարկած օրինագծի դեմ արգելքի կամ վետոյի իրավունքի (ներհամակարգային բողոք) միջոցով, կամ ժողովուրդը կարող է բողոքել կառավարության քաղաքականության դեմ (բողոք համակարգի դեմ): Ռուսաստանում պատմականորեն ամենատարածված բողոքի ձևերն են՝ կարծիքի արտահայտում ԶԼՄ-ում, հավաքներ, գործադուլներ, բոյկոտներ և այլն: Հացադուլները շատ տարածված են բանտարկյալների շրջանում՝ իրենց իրավունքների խախտմանը ուշադրություն հրավիրելու համար: Օրինակ, 2006 թ. մեկուսի բանտարկությունից հետո պարոն Միխայիլ Խոդորկովսկին դիմել է «չորուցամաք» հացադուլի, իսկ 2013 թ. հոկտեմբերին «Փուսի Ռայոթ» խմբի անդամ Նադեժդա Տոլկոննիկովան՝ բանտում դիմել է հացադուլի՝ իր բողոքն արտահայտելով ծանր աշխատանքային պայմանների դեմ:

Ներկայումս ավելի ու ավելի տարածվող բողոքի արտահայտման ժամանակակից ձևերն են՝

(i) Ժողովրդական «գրոսահանդես» (փառատոն)

Ընդդիմությունը դիմել է ժողովրդական «գրոսահանդեսներին» (փառատոն) 2012 թ. գարնանը՝ Ռուսաստանի նախագահի երդմնակալության արարողությունից հետո:

(ii) Համընդհանուր գործադուլ (աշխատանքային գործընթացների դանդաղեցում)

2012 թ. ամռանը՝ «Հավաքների» մասին օրենքի ամրապնդմանն ուղղված լրամշակումների վերաբերյալ խորհրդարանական քննարկումների ժամանակ, փոքրամասնություն կազմող «Արդար Ռուսաստան» կուսակցության պատգամավորները հայտարարեցին օրենքի

լրամշակման համար մոտավորապես 100 ձևական առաջարկների մասին՝ դրա ընդունումն ուշացնելու նպատակով:

(iii) Ավտովագք

2010 թ. գարնանը Մոսկվայում ավտովագք է անցկացրել «Կապույտ դույլեր» ոչ պաշտոնական միությունը, որի ընթացքում մոտ 300 մասնակիցներ կապույտ դույլեր են տեղադրել իրենց մեքենաների տանիքներին՝ արտահայտելով իրենց բողոքը պետական պաշտոնյաների կողմից կապույտ շշակ ազդանշանների կիրառման դեմ՝ բողոքելով շշակների հետ կապված վարորդների արտոնությունների դեմ:

(iv) Ֆլեշմոբ

2012 թ. փետրվարին Մոսկվայում անցկացվեց «Արդյո՞ք պատրաստ ես վաղը մահանալ» խորագրով ֆլեշմոբը, որի մասնակիցները սպիտակ հագուստով պարկել էին ԱՄՆ դեսպանատան դիմացի փողոցում՝ բողոքելով կառավարության ենթադրյալ աջակցությամբ իրականացվող «նարնջագույն» հեղափոխությունների դեմ:

(v) Արվեստի միջոցառումներ

2011 թ. «Պատերազմ» արվեստագետների խումբը հանդես է եկել «Համբուրի՛ր ոստիկանին» նախաձեռնությամբ, որի ժամանակ մասնակիցները համբուրում էին Մոսկվայի փողոցներում իրենց պատահած ոստիկաններին՝ բողոքելով «Ոստիկանության մասին» օրենքի դեմ:

Բողոքները կարող են արտահայտվել ի պաշտպանություն գործող իշխանությունների կամ նրանց դեմ, կարող են լինել անհատական կամ խմբակային, ակտիվ կամ պասիվ, արտոնված (օրինական) կամ չարտոնված (ապօրինի):

3.5 Ի՞նչն է համարվում քաղաքացիական անհնազանդության դրսևորում

Համակարգի դեմ ուղղված չարտոնված (անօրինական) բողոքները սովորաբար բնութագրվում են որպես քաղաքացիական անհնազանդության դրսևորումներ: Քաղաքացիական անհնազանդություն դրսևորելիս ցուցարարները ձևականորեն խախտում են օրենքը և պատրաստակամ են ընդունելու նման խախտման հետևանքները: Ռուսաստանյան օրենսդրությունը քաղաքացիական անհնազանդության դրսևորումների որևէ բնութագիր կամ սահմանում չի պարունակում: Այդ պատճառով որոշ ռուս քաղաքագետներ հիմք են ընդունում Ջ. Ռոուլզի սահմանումը, համաձայն որի՝ քաղաքացիական անհնազանդությունը հրապարակայնորեն արտահայտված քաղաքական գործողություն է՝ ուղղված օրենքի միտումնավոր խախտմանը՝ օրենսդրության կամ կառավարության վարած քաղաքականության մեջ փոփոխություններ կատարելու նպատակով:⁶ Մեկ այլ սահմանման համաձայն՝

⁶ Ջ. Ռոուլզ. «Արդարադատության տեսություն», 1995թ. Նովոսիբիրսկ, էջ 321:

քաղաքացիական անհնազանդությունը համարվում է անարդարության հանդեպ հակաօրինական ճանապարհով քաղաքացիների դրսևորած դիմադրությունը, որը սակայն ուղղված է օրենքի և կարգուկանոնի վերականգնմանը:⁷

4. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ԻՆՉՊԻՄՐ՝ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ (ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԱՅԼ ՕՐԵՆՔՆԵՐՈՎ) ՃԱՆԱԶՎՈՒՄ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ: ԻՆՉՊԵՍ ԵՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՅՌ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՄԵԿՆԱԲԱՆՎՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՄԲ:

Քաղաքացիական անհնազանդության դրսևորումները Ռուսաստանում իրավունք չեն համարվում: Ո՛չ Սահմանադրությամբ, ո՛չ էլ որևէ այլ օրենքով չի նախատեսվում անձի՝ քաղաքացիական անհնազանդության որևէ դրսևորման մեջ ներգրավվելու իրավունքը: Համաձայն վերոնշյալ 3.5 կետում ներկայացված բացատրությանը՝ քաղաքացիական անհնազանդության ցանկացած դրսևորում ձևականորեն խախտում է օրենքը: Այդ իսկ պատճառով Ռուսաստանում քաղաքացիական անհնազանդության ցանկացած դրսևորման մասնակիցները կարող են ենթարկվել պատասխանատվության:

5. ՃՆՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԲՈՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ, ԽԱՂԱՂ ԵՎ ԲՈՆԻ ԲՈՂՈՔԻ ՑՈՒՅՑԵՐԻ ԲԱԺԱՆԱՐԱՐ ԳԻԾԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

5.1 Ի՞նչ են իրենցից ներկայացնում ճնշումները և բռնապետությունը

Խիստ կարևոր է, որ ՄԻՀՀ-ի Նախաբանի 3-րդ կետի համաձայն՝ եթե մարդկանց չի թույլատրվում որպես ծայրահեղ միջոց՝ ապստամբել բռնապետության և ճնշման դեմ, մարդու իրավունքները պետք է պաշտպանվեն օրենքի գերակայությամբ:

Ռուսաստանի ներպետական օրենսդրությամբ բռնապետության և ճնշումների դեմ ապստամբելու իրավունքը որպես այդպիսին չի սահմանվում: Այս թեմային անդրադարձել են միայն մի քանի ռուս իրավագետներ: Նրանցից ոմանց կարծիքով՝ որևէ այլ միջոցի բացակայության պայմաններում սահմանադրական կարգը խախտելու փորձ անող որևէ անձին դիմակայելու իրավունքի հիմքը բխում է ռուս ժողովրդի ինքնիշխան բնույթից:

Մ. Բեզլեյի համաձայն՝ դաշնային կառավարման իշխանությունների վրա ազդելու մեխանիզմների բացակայության դեպքում, քաղաքացիները ստիպված են պայքարել այդ իշխանությունների կողմից ազգային ինքնիշխանության խախտման դեմ հանրային ցույցերի միջոցով, իսկ անտեսման դեպքում՝ քաղաքացիական անհնազանդության միջոցով: Այդպիսով

⁷ Մ. Ռ. Դեմեթրաձե. «Քաղաքացիական անհնազանդության քաղաքական և իրավական կողմերը», «Բիբլիոտեկա», «Ռուսաստանյան քաղաքացիական հասարակությունը», էջ 4:

«կարտահայտվի հետևյալ կանոնը, որը նախատեսված է հենց Սահմանադրությամբ⁸ և առհասարակ օրենքով. կառավարման սահմանադրական ձևի ցանկացած մերժում հոգուտ գաղափարային նպատակահարմարության հանդիսանում է հեղաշրջում, որը հիմք է նախապատրաստում ժողովրդի համար իրացնելու դիմադրելու իր իրավունքը»:⁹

Ինչպես երևում է, որ կառավարության կողմից բռնապետությանը և ճնշմանը դիմադրելու իրավունքի իրացումը կարող է դրսևորվել որպես բողոքի արտահայտման ծայրահեղ և բռնի ձև, որը հրապարակայնորեն և/կամ զանգվածաբար երբեք չի կիրառվել ժողովրդավարական Ռուսաստանի պատմությունում: Որոշ ռուս քաղաքագետների կարծիքով՝ այդ իրավունքի կիրառումը, ընդհանուր առմամբ, պետության և հասարակության զարգացման քայքայիչ ձև է:¹⁰

Պատմության մեջ նման տեսակի գործողությունների վերջին օրինակն են հանդիսանում 1991 թ. օգոստոսի դեպքերը, երբ ԽՍՀՄ-ի քաղաքացիները մեկնարկեցին քաղաքացիական անհնազանդության արշավ Արտակարգ իրավիճակների կարգավորման պետական կոմիտեի դեմ¹¹, ինչն արտահայտվեց արտակարգ իրավիճակների կանխմանն ուղղված նոր որոշումների դեմ բոյկոտներով, զանգվածային ցույցերով և ոստիկանության ու բանակի հետ բախումներով:

5.2 Ճնշումներից և բռնապետությունից պաշտպանության սահմանադրական երաշխիքներ

Կարծում ենք՝ ճնշումներից և բռնապետությունից պաշտպանության հիմնական սահմանադրական երաշխիքները բխում են Սահմանադրության 1-ին Գլխում ձևակերպված ժողովրդավարական սկզբունքներից: Այդ սկզբունքներն ընդհանուր են ժողովրդավարական պետություններում, և տեսականորեն վերածվում են այն բնական կարգավորումների, որոնք պետք է Ռուսաստանի ժողովրդին պաշտպանեն ճնշումներից կամ բռնապետությունից:

⁸ Հասկանալի է, որ այստեղ Մ. Բեգելը նկատի ունի Սահմանադրությամբ ամրագրված բոլոր իրավունքները:

⁹ Մ. Վ. Բեգել. «Ռուսաստանի Դաշնության սահմանադրական իրավունք», Մոսկվա, 2001թ.:

¹⁰ Տե՛ս՝ օրինակ՝ Դ. Ռ. Սալիխով. «Բողոքի արտահայտման հետ կապված իրավահարաբերությունները սահմանադրական իրավունքում. տեսություն» // Սահմանադրական և ներպետական իրավունք, 2014թ., թիվ 1, Ս. Ա. Ավագյան. «Ժողովրդավարական բողոքի արտահայտման հետ կապված իրավահարաբերությունները. սահմանադրական և իրավական կողմ», սահմանադրական և ներպետական իրավունք, 2012թ., թիվ 1:

¹¹ Արտակարգ իրավիճակների կարգավորման պետական կոմիտեն (ԱԻՊԿ, ԳԿԶՊ) կազմավորել են ԽՍՀՄ-ի փոխնախագահը, ԽՍՀՄ-ի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի մի խումբ ղեկավարներ, Խորհրդային կառավարությունը, բանակը և Պետական անվտանգության կոմիտեն՝ ԽՍՀՄ-ի՝ ինքնիշխան պետությունների միություն հանդիսացող դաշնության ձևափոխմանը դիմադրելու և խորհրդային արժեքները վերակենդանացնելու համար: Այն ժամանակ, երբ ԽՍՀՄ նախագահ պրն. Գորբաչովը ճանապարհորդում էր Ֆորոսում (Ղրիմ), ԳԿԶՊ-ն հռչակել է երկիրը ղեկավարելու իր իշխանությունը և ձգտել է արտակարգ դրություն հայտարարել, որի ժամանակ կայացրած բոլոր որոշումները պարտադիր իրավաբանական ուժ կունենային: ԳԿԶՊ-ի գործողությունների ծավալման ընթացքում Մոսկվայում արտակարգ դրության է հայտարարվել, քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային շարժումների գործունեությունը կասեցվել է, ինչը խոչընդոտել է իրավիճակի կարգավորմանը, արգելվել են նաև հավաքները, երթերը, ցույցերը և գործադուլները, ԶԼՄ-ների վրա սահմանվել է վերահսկողություն, ժամանակավորապես կասեցվել է հասարակական և քաղաքական աշխատությունների հրապարակումը: ԳԿԶՊ-ին դիմադրելու գործում գլխավոր և վճռական դերը կատարեց պրն. Ելցինը, ով այդ ժամանակ Ռուսաստանի Խորհրդային Դաշնային Սոցիալիստական Հանրապետության նախագահն էր: ԳԿԶՊ-ն գոյություն ունեցավ 4 օր՝ 1991թ. օգոստոսի 18-ից օգոստոսի 21-ը: 1991թ. օգոստոսի 21-ին ԳԿԶՊ-ի բոլոր անդամները ձերբակալվել են, և նրանց մեղադրանք է առաջադրվել «հայրենիքը դավաճանելու» համար: 1994 թվականին նրանց ներում է շնորհվել Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի կողմից:

Այդ սկզբունքներն ընդգրկում են (i) մարդու իրավունքների և ազատությունների բարձրագույն արժեքը (2-րդ հոդված), (ii) Ռուսաստանի ժողովուրդը՝ որպես ինքնիշխանության և իշխանության աղբյուրի միակ տերերը (3-րդ հոդվածի 1-ին մաս), (iii) իշխանության բարձրագույն արտահայտություն ազգային հանրաքվեի և ազատ ընտրությունների միջոցով (3-րդ հոդվածի 3-րդ մաս), (iv) որևէ մեկի կողմից իշխանությունը որևէ կերպ գրավելու և/կամ յուրացնելու արգելքը (3-րդ հոդվածի 4-րդ մաս), (v) օրենքի գերակայությունը (4-րդ հոդված), (vi) իշխանությունների բաժանման սկզբունք (10-րդ հոդված), (vii) բազմակուսակցական համակարգ (13-րդ հոդվածի 3-րդ մաս), (ix) գաղափարային բազմազանություն (13-րդ հոդվածի 1-ին մաս), (x) միջազգային իրավունքի առաջնություն (15-րդ հոդվածի 4-րդ մաս), (xi) տնտեսական ազատություն (8-րդ հոդված) և այլն:

Այդ սկզբունքները համարվում են Ռուսաստանի սահմանադրական կարգի հիմքը: Սահմանադրության ոչ մի դրույթ չի կարող հակասել դրանց: Այդ սկզբունքները կարող են փոփոխվել միայն նոր Սահմանադրության ընդունմամբ:

5.3 Ո՞րն է սահմանագիծը Ռուսաստանում բողոքի արտահայտման խաղաղ և բռնի ձևերի միջև

Բողոքի արտահայտման բռնի ձևերի իրավունքը, մասնավորապես՝ խաղաղության պայմաններում, ռուսաստանյան օրենսդրությամբ ամրագրված չէ: Ինչ վերաբերում է հավաքների (որոնք կարող են բողոքի բնույթ կրել) ազատության իրավունքին, ապա Սահմանադրությամբ շեշտվում է, որ նման հավաքները պետք է լինեն խաղաղ և անզեն (Հոդված 31):

Մեր կարծիքով՝ քանի որ բողոքի իրավունքը կարող է համարվել յուրաքանչյուր անհատի հիմնարար, համընդհանուր ճանաչում ստացած իրավունք և որպես այդպիսին պաշտպանված է Սահմանադրությամբ, այն համապատասխանաբար հավասարակշռվում է այլոց իրավունքներն ու ազատությունները չխախտելու պարտավորությամբ (17-րդ հոդվածի 3-րդ մաս): Այդ պարտավորությունը բխում է նաև մի շարք միջազգային կոնվենցիաներից (Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մաս և 11-րդ հոդվածի 2-րդ մաս, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 19-րդ և 21-րդ հոդվածներ):

Այդ դիրքորոշումը հաստատվել է ռուսաստանյան դատարանների կայացրած մի շարք որոշումներում: Օրինակ, թիվ 4q/8-6316/12 գործով 2012թ. օգոստոսի 16-ի վճռում Մոսկվայի Քաղաքային դատարանը, վկայակոչելով վերոնշյալ կանոնները, օրինաչափ է համարել Մոսկվայի իշխանությունների կողմից Մոսկվայում համասեռամուլների շքերթի անցկացման թույլտվության մերժումը, քանի որ «Ռուսաստանի օրենքներով սահմանված չէ, որ իշխանությունները պետք է անվերապահորեն անփոփոխ թողնեն հավաքի անցկացման ժամը և վայրը՝ առանց գնահատելու քաղաքացիների անվտանգության համար հնարավոր ռիսկերը և

սպառնալիքները... Նման հավաքները կարող են առաջ բերել քաղաքացիների և Մոսկվայի հյուրերի, տարբեր կրոններ դավանողների բացասական արձագանքը, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել բողոքի ակցիաների և հասարակական կարգի զանգվածային խախտումների»:

Մեկ այլ գործով որոշում կայացնելիս Մոսկվայի քաղաքային դատարանը դիտարկել է «Էսքվայր» ամսագրին տրված հարցազրույցի ժամանակ ռուսաստանյան ընդդիմության ակտիվիստ Ալեքսեյ Նավալնու հետևյալ հայտարարությունը. «Եթե Դուք անդամակցում եք «Միասնական Ռուսաստան» կուսակցությանը, ապա Դուք գող եք»: Դատարանը գտել է, որ «մտքի և խոսքի ազատությունը չի կարող վերածվել այլոց պատվի և արժանապատվության վարկաբեկման գործիքի»:¹² Բողոքի իրավունքը վերջանում է անմիջապես այնտեղ, որտեղ սկսվում են այլոց իրավունքներն ու ազատությունները: Այլոց իրավունքների և ազատությունների նկատմամբ հարգանքը հանդիսանում է ակնհայտ անհրաժեշտություն, քանի որ հակառակ մոտեցումը կհակասեր բոլոր քաղաքացիների հավասարության հայեցակարգին (Սահմանադրության 19-րդ հոդվածի 2-րդ մաս): Այս դիրքորոշումն արտահայտված է Ռուսաստանի Սահմանադրական դատարանի և այլ դատարանների գերակշիռ գործելակերպում: Սահմանադրական դատարանի վերջերս կայացրած որոշմամբ,¹³ որով մերժվել է Նադեժդա Տոլոկոննիկովայի¹⁴ Ռուսաստանի Քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածը (Խուլիգանություն) ազատ արտահայտվելու իրավունքին (Սահմանադրության 55-րդ հոդված) ոչ համապատասխան ճանաչելու մասին դիմումը, Դատարանը գտել է. «Եթե տեղեկատվության տարածման միջոցները նշված տարածման ժամանակի և վայրի տեսանկյունից հիմնված են որոշակի վայրերում, այդ թվում՝ կրոնի հետ կապված վայրերում, հասարակության կողմից ընդունված վարքի ընկալման նկատմամբ ցուցադրական և կոպիտ արհամարհանքի վրա, բարոյագուրկ են կամ զուրկ արվեստագիտական արժեքներից, ապա Սահմանադրությամբ երաշխավորված ազատ արտահայտվելու իրավունքը նման գործողությունների վրա չի տարածվում»:

6. ԵԹԵ ԿԱ ԲՈՒՆԻ ԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, ԱՊԱ ԻՆՉՊԵՄ Է ԱՅՆ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՒՄ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ. ԱՐՅՈ՞Ք ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԱՌՀԱՄԱՐԱԿ ԿԱՆ ՆՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Ռուսաստանում գոյություն չունի բռնի գործողություններ կատարելու սահմանադրական կամ կարգավորող իրավունք: Այդուհանդերձ, ռուսաստանյան օրենսդրության համաձայն՝ զենք գործածելու կամ բռնի գործողություն կատարելու համար անձը կարող է ազատվել պատասխանատվությունից, եթե նա նման արարքի է դիմել «հանգամանքներով արդարացված պաշտպանության» նպատակով կամ «արտակարգ անհրաժեշտության» պարագայում:

¹² Թիվ 11-22489 գործով 2012թ. հոկտեմբերի 10-ի որոշում: Ուշագրավ է, որ այս որոշմամբ հաստատվել է Մոսկվա քաղաքի Լյուբլինսկի շրջանի դատարանի 2012թ. հունիսի 4-ի վճիռը, որի համաձայն՝ պրն. Նավալնին պետք է փոխհատուցեր «Միասնական Ռուսաստան» կուսակցությունը ներկայացնող պատգամավորներից մեկին պատճառած բարոյական վնասը 30,000 ռուսական ռուբլիի չափով (մոտ՝ 750 ԱՄՆ դոլար):

¹³ Թիվ 1873-Օ, 2014 թ. սեպտեմբերի 25-ի որոշում:

¹⁴ «Փուսի Ռայոթ» խմբի անդամ:

Ռուսաստանի Քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ հանգամանքներով արդարացված ինքնապաշտպանությունն ի հայտ է գալիս բռնի հարձակման ժամանակ, որը կարող է վտանգել պատասխանողի և/կամ այլ անձի կյանքը, կամ առնչվում է նման բռնության վտանգի հետ: Հանգամանքներով արդարացված պաշտպանության սահմանները որոշելիս անհրաժեշտ է պարզել՝ արդյոք պատասխանողը ուներ բավականաչափ ժամանակ իրեն սպառնացող վտանգի աստիճանն օբյեկտիվորեն որոշելու համար: Եթե պատասխանողը նման հնարավորություն չի ունեցել, օրինակ՝ հարձակման հանկարծակիության պատճառով, ապա համարվում է, որ նա գործել է հանգամանքներով արդարացված պաշտպանության շրջանակներում և չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության:

Ռուսաստանի Քրեական օրենսգրքի 39-րդ հոդվածի համաձայն՝ արտակարգ անհրաժեշտությունն առկա է անհատի (անհատների) անհատականությունը կամ իրավունքները կամ հասարակության կամ պետության շահերն անմիջականորեն վտանգող իրավիճակում, եթե (i) այդ վտանգը հնարավոր չէր վերացնել այլ միջոցներով, և (ii) հնարավոր վնասը համապատասխանում է սպառնացող վտանգի աստիճանին և բնույթին:

Այլ դեպքերում քաղաքացիական բնակչության կողմից բռնի միջոցների կիրառումն անօրինական է և պատժելի:

7. ԻՆՉՊԵՐՄ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՍ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՄԲ ՃԱՆԱԶՎՈՒՄ ԱՆՁԻ ԱՊՍՏԱՄԲԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԲՈՒՆԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ ԿԱՍ ՃՆՇՈՒՄՆԵՐԻ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ

Ինչպես արդեն նշվել է 5.1 կետում, անձի՝ բռնապետության կամ ճնշումների դեմ ապստամբելու իրավունքը հստակ ամրագրված չէ ո՛չ Սահմանադրությամբ, ո՛չ էլ այլ օրենքներով: Այնուամենայնիվ, սահմանադրական իրավունքի որոշ մասնագետների կարծիքով՝ այդ իրավունքը բխում է Ռուսաստանի ժողովրդի ինքնիշխանությունից:

8. ԻՆՉՆ Է ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԲՈՒՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ/ԿԱՍ ՃՆՇՈՒՄՆԵՐԻ ՄԿՁԲՆԱԿԵՏ: ՈՐՆ Է սԱՀՄԱՆԱԳԻԾԸ

Քանի որ «բռնապետություն» կամ «ճնշումներ» եզրույթները չեն հստակեցվում կամ նշվում Սահմանադրությունում կամ ներպետական օրենքներում և երբեք չեն վերլուծվել ռուսական դատարաններում, գոյություն չունի որևէ իրավական սահմանում, ուստի՝ սահմանագիծ: Թեև ՄԻՀՀ-ի Նախաբանը վկայակոչելիս իրավապաշտպանության ոլորտի տարբեր մասնագետներ թուցիկ ձևով նշում են երկու եզրույթներն էլ, այդ եզրույթների բովանդակության բացատրությանը կամ քննարկմանը նվիրված իրավաբանական աշխատություն գոյություն չունի:

9. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԸ ՓՈՒՆԵԼՈՒ ՓՈՐՁԻ ԺԱՄԱՆԱԿ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ Ո՞Ր ՄԻՋՈՑՆԵՐԸ/ՁԵՎԵՐՆ ԵՆ ԸՆԴՈՒՆԵԼԻ

Ինչպես արդեն նշվել է, Ռուսաստանի օրենսդրությամբ քաղաքացիական անհնազանդության բոլոր դրսևորումներն անընդունելի են: Այդուհանդերձ, քաղաքացիական անհնազանդությունը կարող է ընդունելի համարվել մարդու իրավունքների ընդհանուր սկզբունքների պաշտպանության պարագայում: Հաշվի առնելով, որ սահմանադրական կարգը հանդիսանում է հիմնական ժողովրդավարական սկզբունքների և արժեքների շարք (տե՛ս վերոնշյալ 5.2 կետը)՝ կարելի է փաստել, որ Ռուսաստանի ժողովուրդը, լինելով ինքնիշխանության և իրավունքի միակ աղբյուրը, կարող է չհնազանդվել նրանց, ովքեր փորձում են փոփոխել սահմանադրական կարգը: Հնարավոր է, որ իրավիճակից կախված՝ անգամ բռնի միջոցներով դրսևորված քաղաքացիական անհնազանդությունը համարվի հանգամանքներով արդարացված պաշտպանություն կամ արտակարգ անհրաժեշտություն:

Այդ կապակցությամբ հարկավոր է նշել, որ Ռուսաստանի Քրեական օրենսգրքի 278-րդ հոդվածի համաձայն՝ Ռուսաստանի սահմանադրական կարգի բռնի փոփոխմանն ուղղած գործողությունները պատժելի են 12-20 տարվա ազատազրկմամբ: Ավելին, սահմանադրական կարգի բռնի փոփոխությունը համարվում է ծայրահեղական արարք և արգելվում է 2002թ. հուլիսի 25-ի թիվ 114-ՖՁ (լրամշակված) «Ծայրահեղական գործունեության մասին» դաշնային օրենքով:

10. Ի՞նչ է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԶԱՅՆ

Ինչպես նշվել է վերոնշյալ 5.2 կետում, Ռուսաստանի սահմանադրական կարգը ներառում է Սահմանադրության 1-ին Գլխի սկզբունքները:

11. ԱՐԴՅՈ՞Ք ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ ԵՆ ԲԱՎԱՐԱՐ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ՝ ԲՈՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՍ ԱՎՏՈՐԻՏԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՈՒՄԸ ԿԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԵՎ ԻՆՉՊԻՍԻ՞ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՆ ՆԱԽՏԵՄՎՈՒՄ ՆՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐՈՎ: ԱՐԴՅՈ՞Ք ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱՅԴՊԻՄԻՆ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ Է ԸՆԴՈՒՆԵԼԻ ՄԻՋՈՑ:

Այս հարցերին պատասխանել ենք սույն փաստաթղթի 4-րդ և 5-րդ կետերում:

12. ԱՐԴՅՈ՞Ք ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ Է ՀՐԱԶԵՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ, ԿՐԵԼՈՒ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԲԵՐ ՏԵՍԱԿԻ ԶԵՆՔ ԵՎ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

13. Ռուսաստանում զենք կրելու իրավունքի կարգավորումը

Ռուսաստանում զենք կրելու իրավունքը կարգավորվում է տարբեր օրենքներով:

- Ձենքի շրջանառությունը և օգտագործումը կարգավորվում է 1996թ. դեկտեմբերի 13-ի «Ձենքի մասին» (լրամշակված) թիվ 150-ՖՁ դաշնային օրենքով («Ձենքի մասին օրենք»):
- Ծառայողական և ռազմական զենքի շրջանառությունը կարգավորվում է նաև 2011թ. փետրվարի 7-ի «Ռուստիկանության մասին» թիվ 3-ՖՁ դաշնային օրենքով (լրամշակված):
- Ծառայողական զենքերի օգտագործումը կարգավորվում է 1992թ. մարտի 11-ի «Ռուսաստանի Դաշնությունում մասնավոր դետեկտիվների և թիկնապահների գործունեության մասին» թիվ 2487-1 դաշնային օրենքով (լրամշակված):
- Ռազմական զենքի մատակարարումը կարգավորվում է 1998թ. հուլիսի 19-ի «Ռուսաստանի Դաշնության այլ օտարերկրյա պետությունների հետ ռազմատեխնիկական համագործակցության մասին» թիվ 114-ՖՁ դաշնային օրենքով:
- Ռուսաստանի Քրեական և Վարչական օրենսգրքերով պատասխանատվություն է նախատեսվում Ռուսաստանում զենքի ապօրինի շրջանառության համար:

12.2 «Ձենքի» / «Հրազենի» սահմանումը

«Ձենքի մասին» օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ «զենք» նշանակում է ցանկացած սարք և/կամ առարկա, որը նախատեսված է կենդանի էակին կամ անշունչ առարկային հարված հասցնելու կամ ազդանշան տալու համար: «Հրազենը» նշանակում է ցանկացած սարք և/կամ առարկա, որը կարող է օգտագործվել վառողով կամ այլ կերպ գործարկվող զենքով թիրախը տարածության վրա ինքնաբերաբար հարվածելու համար: «Ձենք» սահմանմանը չհամապատասխանող ցանկացած առարկա, օրինակ՝ խոհանոցային դանակները, փայտերը, մուրճերը, քարերը և այլն, չեն համարվում «զենք», քանի որ դրանք նախատեսված չեն կենդանի կամ էակներին կամ այլ առարկաները հարվածելու կամ ազդանշան տալու համար և դրանք կրելու համար արտոնագիր և/կամ թույլտվություն չի պահանջվում: Այդուհանդերձ, Ռուսաստանի Քրեական օրենսգրքի համաձայն՝ ցանկացած սարք կամ առարկա, որը գործածվում է կյանքին կամ առողջությանը վնասելու համար, համարվում է «այլ առարկա, որը կարող են գործածվել որպես զենք»: Կյանքին կամ առողջությանը վնասելու ելքով հանցագործություն գործելու նպատակով նման առարկաների կիրառումը կարող է առաջացնել նույն պատասխանատվությունը, ինչ զինված հանցագործությամբ համար:

12.3 Ձենքերի տեսակներ

«Ձենքի մասին» օրենքի 3-5-րդ հոդվածների համաձայն՝ առանձնացվում են զենքի հետևյալ տեսակները՝ ա) քաղաքացիական՝ ոչ ռազմական զենքեր, բ) ծառայողական զենքեր և գ) ռազմական զենքեր: Քանի որ ծառայողական և ռազմական զենքերը դուրս են այս աշխատության շրջանակից, ստորև ներկայացնում ենք միայն քաղաքացիական զենքին առնչվող դրույթները:

Քաղաքացիական է համարվում այն զենքը, որը կարող է գործածվել Ռուսաստանի քաղաքացիների կողմից ինքնապաշտպանության, սպորտի, որսի, ինչպես նաև մշակութային և կրթական նպատակներով: Քաղաքացիական հրազեն չի համարվում այն զենքը, որով

հնարավոր է կրակահերթ արձակել, և որի պահեստատուփը նախատեսված է տասից ավել փամփուշտ համար: Քաղաքացիական զենքը բաժանվում է հետևյալ ենթախմբերի՝ ըստ օգտագործման նպատակների՝ (i) ինքնապաշտպանության զենքեր (օրինակ՝ հարթափող երկարափող հրազեն, տրավմատիկ փամփուշտներով սահմանափակ վնաս հասցնող հրազեններ, գազային սփրեյով զենքեր, էլեկտրաշոկեր և այլն), (ii) սպորտային զենք, (iii) որսորդական զենք, (iv) ազդանշանային զենք, (v) ազգային տարազի մաս կազմող սառը զենք և (vi) մշակութային և կրթական նպատակներով գործածվող զենք:

12.4 Ձենք ձեռքբերելու և կրելու իրավունք

Ռուսաստանի օրենսդրությամբ արգելվում է ձեռք բերել ծառայողական և/կամ ռազմական զենք մասնագիտական կամ ռազմական ծառայությունից բացի այլ դեպքերում: Ծառայողական կամ ռազմական զենք կրող անհատները պարտավոր են վերադարձնել դրանք պետությանը թոշակի անցնելուց կամ պաշտոնից արձակվելուց հետո: Քաղաքացու համար ռազմական զենք ձեռք բերելու միակ օրինական միջոցն է ստանալ այն որպես պարգև ռազմական ծառայությունն ավարտելուց հետո կամ նվեր ստանալ այն պետությունից: Ռազմական զենք պահելու և կրելու իրավունքը հաստատվում է ոստիկանության կողմից: «Ձենքի մասին» օրենքի համաձայն՝ զենք ձեռք բերելու համար հիմնականում անհրաժեշտ է համապատասխան արտոնագիր և/կամ թույլտվություն:¹⁵ Ձենք ձեռք բերելու թույլտվությունը տրվում էն ոստիկանության կողմից համապատասխան դիմումի հիման վրա մինչև 6 (վեց) ամիս ժամկետով: Թույլտվություն/արտոնագիրը պահանջվում է յուրաքանչյուր զենքի համար: Ձենք ձեռքբերելու համար հատուկ թույլտվություն չունեցող անհատը չի կարող միաժամանակ ունենալ 5-ից ավել զենք:

Արտոնագիր ստանալու համար դիմողը պետք է համապատասխանի մի շարք պահանջներին. արտոնագիրը տրվում է միայն Ռուսաստանի քաղաքացիներին: Ռուսաստանի քաղաքացին պետք է (i) լինի 18 տարեկանից բարձր (կամ 21՝ հրազենի պարագայում) տարիքի, (ii) չունենա բժշկական հակացուցումներ, (iii) չլինի դատված, (iv) մեկ տարվա ընթացքում կատարած չլինի մի քանի վարչական իրավախախտում կապված զենքի, հասարակական կարգի և այլնի հետ, (v) ունենա բնակության մշտական վայր, (vi) անցնի զենքի գործածման ուսուցում, (vii) դատարանի կողմից զրկված չլինի զենք ձեռք բերելու իրավունքից և (viii) գրանցված չլինի հանրային առողջապահության հաստատություններում որպես հոգեկան հիվանդությունից, ալկոհոլիզմից կամ թմրամոլությամբ տառապող անձ: Դիմողը պետք է ոստիկանություն ներկայացնի վերոնշյալ պահանջներին համապատասխանությունը հաստատող փաստաթղթեր:

Արտոնագիր ձեռք բերելուց հետո հարկավոր է յուրաքանչյուր զենք գրանցել ստացողի բնակության վայրի ոստիկանությունում, ինչից հետո ոստիկանությունը տրամադրում է զենք

¹⁵ Արտոնագիր անհրաժեշտ չէ Ռուսաստանում արտադրված արցունքաբեր կամ զրգող նյութեր պարունակող մեխանիկական սփրեյների, աերոզոլների և այլ սարքերի, էլեկտրաշոկի սարքերի և կայծապարպիչների համար, ինչպես նաև 7.5 Ջ էներգիան չգերազանցող 4.5 տրամաչափի օդամղիչ զենքերի, երկարափող միափող հնագույն հրազենի, երկարափող միափող հնագույն հրազենի կրկնօրինակների, հնագույն սառը զենքի և մասնամարված (ամորտիզացիոն) զենքի համար: Նշված զենքը կարելի է պահել և/կամ կրել առանց ոստիկանության թույլտվության:

պահելու և/կամ կրելու անձնական թույլտվությունը: Նման թույլտվությունը որպես կանոն տրամադրվում է 5 տարի ժամկետով՝ երկարացնելու հնարավորությամբ:

Ձենք կրելու իրավունք

Ձենք կրելը նշանակում է, որ քաղաքացն իր մարմնի վրա կամ հագուստի մեջ կամ պայուսակում ունի զենք: Անհատը կարող է զենք կրել համապատասխան թույլտվության առկայության կամ դրա անհրաժեշտության բացակայության պայմաններում: Ինչ վերաբերում է զենքի հատուկ տեսակներին, օրինակ՝ որսի կամ սպորտի համար հրազեն, ապա դրանք կարելի է կրել միայն հատուկ տարածքներում (որսորդական տարածքներ, սպորտային հաստատություններ և այլն): Ռուսաստանում չի թույլատրվում կրել որոշ զենքեր, օրինակ՝ երկարափող հրազենը և սառը զենքը:

«Ձենքի մասին» օրենքի 24-րդ հոդվածով խստիվ արգելվում է ցանկացած տեսակի զենք կրել հավաքների, հանրահավաքների և ցույցերի, երթերի և ուղեկալումների ժամանակ: Բացի այդ, «Հավաքների մասին» օրենքի 6.4 հոդվածի համաձայն՝ ցանկացած հասարակական միջոցառման (հավաքներ, ցույցեր և այլն) մասնակիցներին արգելվում է կրել «այլ առարկաներ, որոնք կարող են գործածվել որպես զենք»:

Ձենք գործածելու իրավունք

«Ձենքի մասին» օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ հանգամանքներով արդարացված պաշտպանության կամ արտակարգ անհրաժեշտության պարագայում (տե՛ս վերոնշյալ 6-րդ կետը) Ռուսաստանի քաղաքացին կարող է գործածել իրեն օրենքով պատկանող ցանկացած տեսակի զենք՝ կյանքը, առողջությունը և գույքը պաշտպանելու համար: Ձենքի գործածմանը պետք է նախորդի պարզ արտահայտված նախազգուշացում այն անձի կողմից, ում դեմ գործածվելու է զենքը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նախազգուշացման պատճառով զենքի ուշ կիրառումը կարող է անմիջական վտանգ առաջացնել մարդկանց կյանքի համար կամ հանգեցնել այլ լուրջ հետևանքների: Ամեն անգամ զենք օգտագործելից քաղաքացին պետք է մեկ օրվա ընթացքում այդ մասին տեղյակ պահի ոստիկանությանը:

Արգելվում է զենք գործածել (i) կանանց, (ii) հաշմանդամության ակնհայտ նշաններով անձանց և (iii) անչափահասների դեմ, եթե վերջիններիս տարիքն ակնհայտ է կամ հայտնի է: Այդուհանդերձ, այս արգելքն ունի մեկ բացառություն՝ վերոնշյալ կարգի անձանց կողմից զինված հարձակման կամ խմբային հարձակման պարագայում, երբ զենքը կարող է գործածվել որպես հանգամանքներով արդարացված պաշտպանության կամ արտակարգ անհրաժեշտության դեպքում (տե՛ս վերոնշյալ 6-րդ կետը):

Հավելված 9/Ճապոնիա

Քաղաքացիական անհնազանդության դրսևորումների աղյուսակ

Սույն աղյուսակում գործածվելու է «քաղաքացիական անհնազանդության» հետևյալ սահմանումը՝ բողոքարար անձանց կողմից անարդար համարվող որոշակի օրենքների պահանջների կատարման գիտակցված, միտումնավոր և բռնություն չպարունակող մերժում խաղաղ քաղաքական բողոքի տեսքով, որի նպատակն է ազդեցություն գործել կամ փոփոխել օրենսդրությունը կամ քաղաքականությունը կամ հասնել որոշակի քաղաքական նպատակների իրագործմանը: Ուստիև, վերոնշյալ սահմանման և սույն աղյուսակի շրջանակներում «քաղաքացիական անհնազանդությունը» չի ենթադրում բռնություն պարունակող բողոքի արտահայտման այն ձևերը, որոնք կարող են վտանգել կամ վնասել բողոքարարներին կամ այլ անձանց, կամ եթե բողոքը ծավալվում է որևէ գույքի շուրջ, անուղղելի վնաս հասցնել կամ ոչնչացնել թիրախային կամ շրջակա գույքը:

ԳՈՐԾՈՂՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ	ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
<p>1. Ինչպե՞ս են դիտարկվում բողոքի արտահայտման հետևյալ ձևերը տվյալ երկրի դատական համակարգում.</p> <p>ա) երթեր,</p> <p>բ) հանրահավաք ներ,</p> <p>գ) ցույցեր,</p>	<p>1.</p> <p>Ճապոնիայի սահմանադրություն</p> <p>Պետական անվտանգության վերաբերյալ կարգադրություններ</p> <p>Օրենք ճանապարհային երթևեկության մասին</p>	<p>1.</p> <p>(ա)-(գ) Երթեր, հանրահավաքներ և ցույցեր կազմակերպելու իրավունքը պաշտպանված է Ճապոնիայի սահմանադրությամբ որպես խոսքի ազատության դրսևորման ձև: Թեև նշված գործողությունները համարվում են սահմանադրությամբ պաշտպանված խոսքի ազատության իրավունքի դրսևորումներ, հանրային վայրերում բողոքի ակցիա անցկացնելուց առաջ կազմակերպիչները պետք է նախապես թույլտվություն ստանան Պետական անվտանգության հանձնաժողովի տեղական ներկայացուցչությունից (եթե տվյալ վարչական շրջանում գործում է նման ներկայացուցչություն): Բացի այդ, եթե նախատեսվող</p>

<p>դ) պաստառների փակցում (այսինքն՝ անձանց պատկերներով պաստառներ) հանրային/մասնավոր գույքի վրա,</p> <p>ե) պետական դրոշմ հարգելուց կամ պետական օրհներգը երգելուց հրաժարվելը</p>	<p>Օրենք աննշան և իրավախախտումների զանցանքների մասին</p> <p>Օրենք արտաքին գովազդի մասին</p> <p>Օրենք լանդշաֆտի (երկրապատկերի) մասին</p>	<p>ցույցն անցկացվելու է հանրային օգտագործման երթուղիների ճանապարհի հատվածում, ապա կազմակերպիչները պետք է թույլտվություն ստանան նաև ոստիկանությունից «Ճանապարհային երթուղության մասին» օրենքով սահմանված կարգով:</p> <p>(դ) Որպես խոսքի ազատության դրսևորում Ճապոնիայի սահմանադրությամբ պաշտպանվում է նաև հանրային/մասնավոր գույքի վրա պաստառների փակցումը, սակայն նման գործողությունների համար կարող է պատիժ նախատեսվել «Զանցանքների մասին» օրենքի շրջանակներում, եթե այդ գործողությունները չունեն «պատշաճ հիմնավորում»: «Պատշաճ հիմնավորում» հասկացությունը բավականին անորոշ է, և Ճապոնիայի գերագույն դատարանի որոշմամբ՝ «պատշաճ հիմնավորում» ասելով՝ պետք է հասկանալ գործողության հիմքում ընկած այնպիսի պատճառ, որը կարող է պատշաճ համարվել ընդհանուր հասարակական պատկերացումներով: «Արտաքին գովազդի մասին» օրենքով և «Լանդշաֆտի մասին» օրենքով արգելվում է պաստառներ փակցնել որոշակի գույքի վրա և որոշակի տարածքներում:</p> <p>(ե) Ճապոնիայի օրենսդրությամբ չի արգելվում պետական դրոշմ հարգելուց կամ պետական օրհներգը երգելուց հրաժարվելը: Այնուհանդերձ, արձանագրվել է մի քանի դեպք, երբ ուսուցիչների նկատմամբ կարգապահական պատժամիջոցներ են կիրառվել դպրոցական միջոցառումներին պետական օրհներգի կատարման ժամանակ ոտքի չկանգնելու պատճառով: Ճապոնիայի գերագույն դատարանը որոշ դեպքերում անփոփոխ է թողել կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումները, որոշ դեպքերում էլ անվավեր է ճանաչել դրանք՝ համարելով դրանցով նախատեսված պատժատեսակը չափազանց խիստ:</p>
---	---	--

<p>2. Ինչպե՞ս են դիտարկվում քաղաքացիական անհնազանդության արտահայտման հետևյալ ձևերը տվյալ երկրի դատական համակարգում.</p> <p>ա) պետական կամ մասնավոր հաստատությունների աշխատակիցների նստացույցներ,</p> <p>բ) պետական կամ մասնավոր սեփականություն հանդիսացող տարածք զբաղեցնելը,</p> <p>գ) հանրային սեփականություն հանդիսացող տարածք զբաղեցնելը,</p> <p>դ) երթևեկության արգելափակում կամ խոչընդոտում,</p> <p>ե) պետական կամ մասնավոր կազմակերպությունների սեփականություն հանդիսացող կամ օգտագործվող շենքերի մուտքի արգելափակում,</p> <p>զ) պետական կամ մասնավոր անցանկալի կառույցների ոչնչացում</p>	<p>2. Քրեական օրենսգիրք</p> <p>Օրենք ճանապարհային երթևեկության մասին</p> <p>Օրենք աննշան իրավախախտումների և զանցանքների մասին</p> <p>Պետական հարկերի գանձման մասին օրենք</p> <p>Պետական ծառայության մասին օրենք</p> <p>Օրենք ինքնապաշտպանության ուժերի մասին</p> <p>Օրենք խիստ կարևոր նշանակություն ունեցող գաղտնիքների պահպանման մասին (դեռևս ուժի մեջ չի մտել)</p> <p>Օրենք քաղաքացիական նախաձեռնությունների պաշտպանության մասին</p>	<p>2. (ա) - (զ) Թեև Ճապոնիայի սահմանադրությամբ, ընդհանուր առմամբ, պաշտպանվում է «խոսքի ազատությունը», սակայն ազատ արտահայտվելու իրավունքը սահմանափակվում է «հասարակության բարեկեցության վտանգում» հասկացությամբ: Պետական կամ մասնավոր կառույցների աշխատողների նստացույցները որևէ օրենքով չեն արգելվում: Այդուհանդերձ, այն դեպքերում, երբ բողոքարարներն անտեսում են տվյալ տարածքից հեռանալու խնդրանքը, նրանք կարող են ձերբակալվել և պատժի ենթարկվել: Ընդհանուր առմամբ, նման զանցանքի համար բողոքարարները կարող են ենթարկվել տույժի մինչև 100 000 ճապոնական յեն գումարի սահմաններում կամ մինչև 3 տարի ազատազրկման Քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածով նախատեսված կարգով (http://www.japaneselawtranslation.go.jp/law/detail/?id=1960&vm&re): Նմանօրինակ դեպքերում Ճապոնիայի քրեական օրենսգրքով պատիժ է նախատեսվում նաև պետական, մասնավոր կամ հանրային սեփականություն հանդիսացող տարածքների զբաղեցման համար:</p> <p>(դ) Ինչպես արդեն նշվել է, ազատ արտահայտվելու և հավաքներ անցկացնելու իրավունքը կարգավորվում և սահմանափակվում է «հասարակության բարեկեցության» հասկացությանը համապատասխան: Այս առումով երթևեկության արգելափակումը կամ խոչընդոտումը կհամարվի «ճանապարհային երթևեկության մասին» օրենքի խախտում, որը պատժվում է մինչև 50 000 իեն գումարի չափով կամ երեք ամիս ազատազրկմամբ:</p> <p>(ե) Պետական կամ մասնավոր կազմակերպությունների սեփականություն հանդիսացող կամ օգտագործվող շենքերի մուտքի արգելափակվելու համար կարող են կիրառվել «Հիմնարկի աշխատանքի բռնի խոչընդոտման» դեպքերում Քրեական օրենսգրքի 234-րդ հոդվածով</p>
---	--	--

<p>է) հարկ վճարելուց հրաժարվելը,</p> <p>ը) գաղտնի տեղեկատվության, որևէ կազմակերպության սեփականություն համարվող աշխատանքային գաղտնի տեղեկությունների կամ պետության կողմից գաղտնիացված տեղեկությունների բացահայտում</p> <p>թ) ռազմական օբյեկտներ կամ այլ խիստ կարևոր ենթակառուցվածքային տարածք առանց թույլտվության մուտք գործելը (օրինակ՝ ատոմակայան)</p>		<p>նախատեսված պատժատեսակները: Նշված պատժատեսակները ենթադրում են՝ տույժ մինչև 500 000 իեն գումարի չափով կամ մինչև երեք տարի ազատազրկում:</p> <p>(գ) Ճապոնիայի սահմանադրության դրույթներով ամրագրված խոսքի ազատությունը չի տարածվում պետական կամ մասնավոր անպետք կառույցների ոչնչացման վրա: Նման գործողությունների կատարողների համար նախատեսված պատժամիջոցներն են՝ տույժ մինչև 300 000 իեն գումարի չափով կամ մինչև երեք տարի ազատազրկում Քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածով նախատեսված կարգով:</p> <p>(ե) Այն դեպքերում, երբ քաղաքացին որպես քաղաքացիական անհնազանդություն արտահայտելու միջոց հրաժարվում է հարկ վճարելուց մասամբ կամ ամբողջապես, հարկային մարմինները կարող են առգրավել նրա գույքը՝ «Հարկերի գանձման մասին» օրենքով սահմանված կարգով: Այդուհանդերձ, հարկային մարմինները կարող են քրեական մեղադրանք առաջադրել միայն այն դեպքում, եթե տվյալ հարկատուն չարամտորեն կամ այլ անօրինական հիմքով է խուսափում հարկերը վճարելուց:</p> <p>(ը) Այն դեպքերում, երբ պետական պաշտոնյան կամ պետական ծառայողը բացահայտում է ի պաշտոնե ստանձնած իր պարտականություններից բերումով իրեն հայտնի դարձած որևէ գաղտնի տեղեկություն, ապա նրա նկատմամբ կիրառվում են հետևյալ պատժատեսակները՝ մինչև 500 000 իեն չափով տույժ կամ մինչև մեկ տարի ազատազրկում՝ «Պետական ծառայության մասին» օրենքով: Այն անձինք, ովքեր անմիջապես են առնչվում ազգային անվտանգության հետ կապված գաղտնիքներին իրենց պարտականությունների կատարման ընթացքում, ենթարկվում են պատասխանատվության «Ինքնապաշտպանության ուժերի մասին» օրենքով, իսկ ռազմական գաղտնիքների բացահայտումը պատժվում է մինչև հինգ տարի</p>
---	--	--

		<p>ազատագրվեցին: Բացի այդ, 2013 թ. Ճապոնիայի խորհրդարանն ընդունել է «Խիստ կարևոր նշանակություն ունեցող գաղտնիքների պահպանման մասին» օրենքը:</p> <p>Նշված օրենքով ավելի խիստ պատժամիջոցներ են նախատեսվում կարևոր նշանակություն ունեցող գաղտնիքները (այդ թվում՝ անվտանգության, արտաքին գործերի, վնասակար գործունեության և ահաբեկչության կանխման վերաբերյալ գաղտնի տեղեկություններ) բացահայտելու համար (http://www.kantei.go.jp/jp/topics/2013/headline/houritu_gaiyou_e.pdf):</p> <p>Ճապոնիայում գործում է «Քաղաքացիական նախաձեռնությունների պաշտպանության մասին» օրենքը, որն աշխատողներին պաշտպանում է անբարյացակամ վերաբերմունքի դրսևորումներից, օրինակ՝ աշխատանքից ազատելը, պաշտոնի իջեցում կամ աշխատավարձի նվազեցում և այլն:</p> <p>(http://www.cas.go.jp/jp/seisaku/hourei/data/WPA_2.pdf).</p> <p>Մակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Խիստ կարևոր նշանակություն ունեցող գաղտնիքների պահպանման մասին» օրենքը միայն վերջերս է ընդունվել, դեռևս պարզ չէ, թե արդյոք «Քաղաքացիական նախաձեռնությունների պաշտպանության մասին» օրենքը կիրառելի կլինի խիստ կարևոր գաղտնիք բացահայտած պետական ծառայողների պարագայում, թե ոչ:</p> <p>(թ) Ռազմական օբյեկտներ կամ այլ խիստ կարևոր ենթակառուցվածքների տարածք առանց թույլտվության մուտք գործելու համար նախատեսվում է տույժ մինչև 100.000 իենի չափով կամ ազատագրվում մինչև երեք տարի՝ Քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածով նախատեսված կարգով: Անգամ եթե բողոքարարները պնդում են, որ իրենց սահմանադրական իրավունքների իրացման մասին, նրանք չեն ազատվում Քրեական օրենսգրքով նախատեսվող քրեական պատասխանատվությունից:</p>
--	--	---

<p>3. Արդյո՞ք օրենքի մեկնաբանությամբ տվյալ երկրի դատական համակարգն ընդունում կամ կիրառում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի նախաբանում ամրագրված դրույթները:</p>	<p>Կիրառելի չէ:</p>	<p>ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի նախաբանում ամրագրված դրույթները մինչ օրս չեն ընդունվել և չեն կիրառվել Ճապոնիայի դատարաններում:</p>
<p>4. Արդյո՞ք տվյալ պետության դատական համակարգում գործում են պետության ղեկավարին վիրավորելու համար պատիժ նախատեսող օրենքներ (lèse-majesté), որոնք ազդում են խոսքի ազատության և մասնավորապես՝ քաղաքացիական անհնազանդության մասին օրենքների մեկնաբանության վրա:</p>	<p>Կիրառելի չէ:</p>	<p>Կիրառելի չէ:</p>
<p>5. Արդյո՞ք գործում են որևէ այլ օրենքներ, որոնցով սահմանափակվում կամ ճնշվում է քաղաքական բողոքներ անցկացնելու կամ քաղաքացիական անհնազանդություն արտահայտելու հնարավորությունը:</p>	<p>Կիրառելի չէ:</p>	<p>Կիրառելի չէ:</p>

Հավելված 10/ Չինաստանի ժողովրդական հանրապետություն

Քաղաքացիական անհնազանդության դրսևորումների աղյուսակ

Սույն աղյուսակում գործածվելու է «քաղաքացիական անհնազանդության» հետևյալ սահմանումը՝ բողոքի ակցիաների մասնակիցների կողմից անարդար համարվող որոշակի օրենքների պահանջների կատարման գիտակցված, միտումնավոր և բռնություն չպարունակող մերժում խաղաղ քաղաքական բողոքի տեսքով, որի նպատակն է ազդեցություն գործել կամ փոփոխել օրենսդրությունը կամ քաղաքականությունը կամ հասնել որոշակի քաղաքական նպատակների իրագործմանը: Ուստիև, վերոնշյալ սահմանման և սույն աղյուսակի շրջանակներում «քաղաքացիական անհնազանդությունը» չի ենթադրում բռնություն պարունակող բողոքի արտահայտման այն ձևերը, որոնք կարող են վտանգել կամ վնասել բողոքարարներին կամ այլ անձանց, կամ եթե բողոքը ծավալվում է որևէ գույքի շուրջ, անուղղելի վնաս հասցնել կամ ոչնչացնել թիրախային կամ շրջակա գույքը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
<p>1. Ինչպե՞ս են դիտարկվում բողոքի արտահայտման հետևյալ ձևերը տվյալ երկրի դատական համակարգում.</p> <p>(ա) երթեր</p> <p>(բ) հանրահավաքներ</p> <p>(գ) պաստառների փակցում (այսինքն՝ անձանց</p>	<p>Բողոքի արտահայտման ձևերի առնչությամբ՝</p> <p>Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված է հետևյալը.</p> <p>Հոդված 35. Չինաստանի Ժողովրդական Հանրապետության քաղաքացիներն ունեն խոսքի,</p>	<p>Երթեր, հանրահավաքներ և ցույցեր.</p> <p>Անշուշտ, խաղաղ՝ առանց բռնության գործադրման երթեր, հանրահավաքներ և (կամ) ցույցեր անցկացնելու իրավունքը Չինաստանի սահմանադրությամբ ամրագրված իրավունքներից է:</p> <p>Չինաստանում գործում է այդ իրավունքի հետ կապված հարցերը կարգավորող օրենք:</p> <p>«Հավաքների, երթերի և ցույցերի մասին» ՉԺՀ օրենքի («Ցույցերի մասին» օրենք) 3-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ և 21-րդ հոդվածները հանդիսանում են այդ ոլորտում առաջընթացի երաշխիքներ՝</p>

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
<p>պատկերներով պաստառներ) հանրային/մասնավոր գույքի վրա (դ) ցույցեր (ե) պետական դրոշմ հարգելուց կամ պետական օրհներգը երգելուց հրաժարվելը 2. Ինչպե՞ս են դիտարկվում քաղաքացիական անհնազանդության դրսևորման հետևյալ ձևերը տվյալ երկրի դատական համակարգում:</p> <p>(ա) նստացույցեր պետական կամ մասնավոր հաստատություններում,</p> <p>(բ) պետական կամ մասնավոր սեփականություն հանդիսացող տարածք զբաղեցնելը,</p> <p>(գ) հանրային սեփականություն հանդիսացող տարածք զբաղեցնելը,</p> <p>(դ) երթևեկության արգելափակում կամ խոչընդոտում,</p>	<p>մամուլի, հավաքների, միավորումների, երթերի և ցույցերի ազատություն:</p> <p>Չինաստանի Ժողովրդական Հանրապետության «Հավաքների, երթերի և ցույցերի մասին» օրենքով ամրագրված են երթերի, հանրահավաքների և (կամ) ցույցերի անցկացման երաշխիքները և սահմանափակումները</p> <p>Չինաստանի Ժողովրդական Հանրապետության «Պետական դրոշի մասին» օրենքով կարգավորվում են պետական դրոշի հետ կապված հարցերը:</p> <p>Ապօրինի հանրային հավաքները, շքերթները, ցույցերը կամ պետական դրոշի նկատմամբ դիտավորյալ դրսևորված անարգանքը համարվում են «Քրեական հանցագործությունների մասին»</p>	<p>պահանջելով, որ ոստիկանության աշխատակիցներն աջակցեն առաջընթացի ապահովման գործում:</p> <p>Հավաքների անցկացման համար անհրաժեշտ է ներկայացնել դիմում և ստանալ թույլտվություն՝ «Ցույցերի մասին» օրենքի 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներով սահմանված կարգով:</p> <p>«Ցույցերի մասին» օրենքից հետևում է, որ օրենքով նախատեսվում են երթերի, հանրահավաքների և (կամ) ցույցերի անցկացման իրավունքի սահմանափակումներ: Այսպես, օրենքը պարունակում է նման սահմանափակումները նշող 12 արտահայտություն, որոնք կարելի է դասակարգել չորս խմբի:</p> <p>Սահմանափակումներ կազմակերպիչների և մասնակիցների առումով (Հոդված 15. Քաղաքացին իրավունք չունի իր բնակավայրից դուրս նախաձեռնել կամ կազմակերպել հանրային հավաք, երթ կամ ցույց կամ մասնակցել տեղացիների կողմից անցկացվող հանրային հավաքների, երթերի կամ ցույցերի, Հոդված 34. Չինաստանի տարածքում գտնվող օտարերկրացիներն իրավունք ունեն մասնակցելու Չինաստանի քաղաքացիների կողմից անցկացվող հանրային հավաքների, երթերի կամ ցույցերի միայն իրավասու մարմինների թույլտվությամբ):</p> <p>Սահմանափակումներ անցկացման վայրի առումով (կարգավորվում են 23-րդ հոդվածով):</p> <p>Սահմանափակումներ անցկացման ժամանակի առումով (միայն ժամը 6:00-ից-22:00-ն ընկած ժամանակահատվածում՝ 24-</p>

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
<p>(ե) պետական կամ մասնավոր կազմակերպությունների սեփականություն հանդիսացող կամ նրանց կողմից օգտագործվող շենքերի մուտքի արգելափակում,</p> <p>(զ) պետական կամ մասնավոր անցանկալի կառույցների ոչնչացում,</p> <p>(է) հարկերից խուսափելը,</p> <p>(ը) գաղտնի տեղեկատվության, որևէ կազմակերպության սեփականությունը համարվող աշխատանքային գաղտնի տեղեկությունների կամ պետության կողմից գաղտնիացված տեղեկությունների բացահայտում</p> <p>(թ) ռազմական օբյեկտներ կամ այլ խիստ կարևոր ենթակառույցների տարածք առանց թույլտվության մուտք գործելը (օրինակ՝ ատոմակայան)</p>	<p>օրենքի խախտում:</p> <p>Քաղաքացիական անհնազանդության դրսևորման ձևերի առնչությամբ՝</p> <p>«Ցույց» հասկացությունը կարող է տարածվել նաև նատացույցի վրա: Ցույցերի հետ կապված հարցերը թերևս կարգավորվում են «Ցույցերի մասին» օրենքով:</p> <p>«Ցույցերի մասին» օրենքով սահմանված կարգով իրավասու մարմինների թույլտվության բացակայության պայմաններում (ա) և (ե) կետերում և 2-րդ մասում թվարկված բոլոր այլ գործողությունների ձեռնարկումը Չինաստանում կարող է ԽՍՀՖ ԱՐԳԵԼՎԵԼ, իսկ կազմակերպիչները պատասխանատվության ենթարկվել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության «Հանրային անվտանգության</p>	<p>րդ հողվածով սահմանված կարգով):</p> <p>Սահմանափակումներ անցկացման ձևի առումով (խաղաղ և իրավաչափ՝ 4-րդ, 5-րդ, 25-րդ և 26-րդ հողվածներին համապատասխան)</p> <p>Պաստառների փակցում</p> <p>Հանրային հավաքի, երթի կամ ցույցի ժամանակ գործածվող պաստառների բովանդակության մասին պետք է նախապես ծանուցվի իրավասու մարմինը՝ «Ցույցերի մասին» օրենքի 8-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:</p> <p>Պետական դրոշմ հարգելուց կամ պետական օրհներգը երգելուց հրաժարվելը</p> <p>Չինաստանի Ժողովրդական Հանրապետության «Պետական դրոշի մասին» օրենքը կիրառվում է Չինաստանում պետական դրոշի հետ կապված հարցերը կարգավորելու համար:</p> <p>«Պետական դրոշի մասին» օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Բոլոր քաղաքացիները և կազմակերպությունները պետք է հարգալից վերաբերմունք դրսևորեն պետական դրոշի նկատմամբ»:</p> <p>Չինաստանի Ժողովրդական Հանրապետության պետական դրոշն անարգող (հրապարակավ և դիտավորյալ այն վառելով, աղավաղելով, վրան խզրզելով, պղծելով կամ տրորելով) անձինք օրենքով սահմանված կարգով («Քրեական հանցագործությունների մասին» 299-րդ հոդված) ենթարկվում են քրեական</p>

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
	<p>խախտման համար նախատեսված պատժամիջոցների մասին» օրենքով (աննշան իրավախախտումների պարագայում) կամ «Քրեական հանցագործությունների մասին» օրենքով (քրեական հանցագործության պարագայում):</p>	<p>պատասխանատվության. եթե իրավախախտումը համեմատաբար աննշան է, նման անձինք կալանավորվում են մինչև 15 օրով հանրային անվտանգության մարմնի կողմից՝ Հանրային անվտանգության խախտման համար նախատեսված վարչական պատժամիջոցների մասին կանոնակարգի դրույթներին համապատասխան:</p> <p>Քաղաքացիական անհնազանդության դրսևորումներ</p> <p>Թվարկված դրսևորումներից շատերը թերևս խախտում են «Քրեական հանցագործությունների մասին» օրենքի հոդվածները, ներառյալ սակայն չսահմանափակվելով հետևյալով՝ Գլուխ 5. Ոտնձգություններ գույքի նկատմամբ, Գլուխ 6. Սոցիալական կառավարման կարգը խախտող հանցագործություններ, Գլուխ 7. Հանրային անվտանգության պաշտպանությունից բխող շահերը վտանգող հանցագործություններ և այլն:</p> <p>Կառավարության տարածքներ կամ շենքեր զբաղեցնելը կարող է համարվել քրեական հանցագործություն (առնվազն, սակայն չսահմանափակվելով) 277-րդ, 290-րդ և այլ հոդվածներով:</p> <p>Պետական կամ մասնավոր սեփականություն հանդիսացող տարածք զբաղեցնելը կարող է քրեական հանցագործություն համարվել (առնվազն, սակայն չսահմանափակվելով) 264-րդ, 268-րդ, 271-րդ, 276-րդ և այլ հոդվածներով:</p> <p>Շենքերի մուտքի արգելափակումը կարող է քրեական</p>

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
		<p>հանցագործություն համարվել (առնվազն, սակայն չսահմանափակվելով) 277-րդ, 290-րդ, 291-րդ և այլ հոդվածներով:</p> <p>Պետական կամ մասնավոր անցանկալի կառույցների ոչնչացումը («Ընկերությունների մասին» ՉԺՀ օրենքով ամրագրված իրավական ընթացակարգերի և այլ խախտումներով) կարող է համարվել քրեական հանցագործություն (առնվազն, սակայն չսահմանափակվելով) 276-րդ, 290-րդ, 105-րդ և այլ հոդվածներով:</p> <p>Հարկերից խուսափելը կարող է համարվել քրեական հանցագործություն (առնվազն, սակայն չսահմանափակվելով) 201-րդ, 202-րդ, 203-րդ և այլ հոդվածներով:</p> <p>Որևէ կազմակերպության սեփականությունը համարվող աշխատանքային գաղտնի տեղեկությունների կամ պետության կողմից գաղտնիացված տեղեկությունների բացահայտումը կարող է համարվել քրեական հանցագործություն (առնվազն, սակայն չսահմանափակվելով) 282-րդ և այլ հոդվածներով:</p> <p>Ռազմական օբյեկտներ առանց թույլտվության մուտք գործելը կարող է քրեական հանցագործություն համարվել (առնվազն, սակայն չսահմանափակվելով) 371-րդ և այլ հոդվածներով:</p> <p>Վերոնշյալ որոշ արարքների արդյունքում գործած աննշան իրավախախտումները, որոնք կարող են չհամարվել քրեական հանցագործություն, համարվում են «Հանրային անվտանգության խախտման համար նախատեսված պատժամիջոցների մասին» օրենքի խախտում:</p>

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
		<p>(Ա) և (դ) կետերով արգելվող արարքները կարող են համարվել քրեական հանցագործություն կամ «Հանրային անվտանգության խախտման համար նախատեսված պատժամիջոցների մասին» օրենքի խախտում:</p>
<p>3. Արդյո՞ք օրենքի մեկնաբանությամբ տվյալ երկրի դատական համակարգն ընդունում կամ հաշվի է առնում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի նախաբանում ամրագրված դրույթները:</p>	<p>Կիրառելի չէ:</p>	<p>Ինչ վերաբերում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (այսուհետ նաև՝ Հռչակագիր) նախաբանի, հատկապես 3-րդ կետով ամրագրված դրույթին համապատասխանությանը՝ «Քանզի անհրաժեշտ է օրենքի իշխանությամբ պաշտպանել մարդու իրավունքները, որպեսզի նա, որպես վերջին միջոց, հարկադրված չընդվզի բռնակալության ու ճնշման դեմ», հարկավոր է հաշվի առնել հետևյալը: Չինաստանին բնորոշ առանձնահատկություններով սոցիալիզմի պայմաններում օրենսդրական համակարգը վերջնականորեն ձևավորվել է 2010 թվականի տարեվերջին: Սահմանադրության վրա հիմնված այդ համակարգի անկյունաքարն են կազմում սահմանադրական, քաղաքացիական, առևտրային, վարչական, տնտեսական, սոցիալական, քրեական, ինչպես նաև դատավարական և ոչ դատավարական ընթացակարգային իրավունքի բազմաթիվ ճյուղերը կարգավորող օրենքները, ինչպես նաև՝ օրենսդրական ակտերի և տեղեկան վարչական կանոնների և կանոնակարգերի բազմաշերտ իրավական նորմերը: Այդ ժամանակից ի վեր Չինաստանը ձեռնամուխ է եղել մարդու իրավունքների վերաբերյալ իր օրենսդրության ամրապնդմանը: Այսպես,</p>

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
		<p>հրապարակվել է վեց նոր օրենք, այդ թվում՝ «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» օրենքը և «Հոգեկան առողջության մասին» օրենքը, ընդունվել են «Քրեական հանցագործությունների մասին» օրենքի փոփոխությունները և լրացումները (VIII), և փոփոխվել է 25 այլ օրենք, այդ թվում՝ «Քրեական դատավարության մասին» օրենքը, «Քաղաքացիական դատավարության մասին» օրենքը, «Իրավաբանների մասին» օրենքը, «Աշխատանքային պայմանագրի մասին» օրենքը և «Մասնագիտական հիվանդությունների կանխման և վերահսկման մասին» օրենքը: Այսպիսով, 1949 թվականից՝ իր հիմնադրումից մինչ 2012 թվականի տարեվերջ Չինաստանն ընդունել է Սահմանադրություն և մի շարք այլ օրենքներ, որից ներկայումս գործում է ընդհանուր թվով 243 օրենք: Այս ամենից հետևում է, որ Չինաստանին բնորոշ առանձնահատկություններով սոցիալիզմի պայմաններում մարդու իրավունքների վերաբերյալ օրենքների համակարգը շարունակաբար ընդլայնվել և կատարելագործվել է:</p> <p>Չինաստանը միացել է մարդու իրավունքների վերաբերյալ 26 միջազգային փաստաթղթերի և ստորագրել է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (ՔՔԻՄԴ), սակայն դեռևս չի վավերացրել այն:¹</p>

¹ Մարդու իրավունքների հարցերով ՄԱԿ-ի խորհրդի թիվ 16/21 բանաձևի հավելվածի 5-րդ կետին համապատասխան ներկայացված Չինաստանի ազգային զեկույց:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
<p>4. Արդյո՞ք տվյալ պետության դատական համակարգում գործում են պետության ղեկավարին վիրավորելու համար պատիժ նախատեսող օրենքներ (lèse-majesté), որոնք ազդում են խոսքի ազատության և մասնավորապես՝ քաղաքացիական անհնազանդության մասին օրենքների մեկնաբանության վրա:</p>	<p>Կիրառելի չէ:</p>	<p>Չինաստանում գոյություն չունի պետության ղեկավարին վիրավորելու համար պատիժ նախատեսող որևէ օրենք: Չինաստանի սահմանադրությամբ ամրագրված է, որ «Սահմանադրության և օրենքների դրույթները տարածվում են բոլոր կազմակերպությունների և անհատների վրա, և ոչ ոք չունի այլ անձանցից ավելի բարձր դասվելու առանձնաշնորհ»:</p> <p>Սահմանադրության 35-րդ հոդվածի համաձայն՝ «Չինաստանի Ժողովրդական Հանրապետության քաղաքացիներն ունեն խոսքի, մամուլի, հավաքների, միավորումների, երթերի և ցույցերի ազատություն»:</p> <p>Հարկ է նաև նշել, որ Չինաստանը ղեկավարում է Չինաստանի կոմունիստական կուսակցությունը, և այդ կուսակցության ընտրված քաղաքականությունը նույնպես ղեկավար սկզբունքի դեր է կատարում:</p>
<p>5. Արդյո՞ք գործում են այլ օրենքներ, որոնցով սահմանափակվում կամ ճնշվում է քաղաքական բողոքի ակցիաներ անցկացնելու կամ քաղաքացիական անհնազանդություն արտահայտելու հնարավորությունը:</p>	<p>Կիրառելի չէ:</p>	<p>Կիրառելի չէ:</p>

Հավելված 11/ Հոնկոնգ

Քաղաքացիական անհնազանդության դրսևորումների աղյուսակ

Սույն աղյուսակում գործածվելու է «քաղաքացիական անհնազանդության» հետևյալ սահմանումը՝ բողոքի ակցիաների մասնակիցների կողմից անարդար համարվող որոշակի օրենքների պահանջների կատարման գիտակցված, միտումնավոր և բռնություն չպարունակող մերժում խաղաղ քաղաքական բողոքի տեսքով, որի նպատակն է ազդեցություն գործել կամ փոփոխել օրենսդրությունը կամ քաղաքականությունը կամ հասնել որոշակի քաղաքական նպատակների իրագործմանը: Ուստիև, վերոնշյալ սահմանման և սույն աղյուսակի շրջանակներում «քաղաքացիական անհնազանդությունը» չի ենթադրում բռնություն պարունակող բողոքի արտահայտման այն ձևերը, որոնք կարող են վտանգել կամ վնասել բողոքարարներին կամ այլ անձանց, կամ եթե բողոքը ծավալվում է որևէ գույքի շուրջ, անուղղելի վնաս հասցնել կամ ոչնչացնել թիրախային կամ շրջակա գույքը:

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀՈՆԿՈՆԳԻ ՀԱՏՈՒԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
<p>1. Ինչպե՞ս են դիտարկվում բողոքի արտահայտման հետևյալ ձևերը տվյալ երկրի դատական համակարգում.</p> <p>(ա) երթեր</p> <p>(բ) հանրահավաքներ</p> <p>(գ) պաստառների փակցում (այսինքն՝ անձանց</p>	<ul style="list-style-type: none"> Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի հիմնական օրենք («Հիմնական օրենք») <p style="text-align: center;"><i>Հոդված 27. «Հոնկոնգի բնակիչներն ունեն խոսքի, մամուլի, միավորումների,</i></p> 	<p><u>Բողոքի արտահայտման ձևեր</u></p> <ul style="list-style-type: none"> Անշուշտ, Հոնկոնգի բնակիչներն ունեն բողոք արտահայտելու իրավունք, եթե դրա հետ կապված գործողություններով չեն խախտվում համապատասխան կանոնակարգերը: «Հասարակական կարգի պահպանման մասին» հրամանագիրը, թերևս, հանդիսանում է նման գործողությունները կարգավորող հատուկ օրենքը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
<p>պատկերներով պաստառներ) հանրային/մասնավոր գույքի վրա</p> <p>(դ) ցույցեր</p> <p>(ե) պետական դրոշը հարգելուց կամ պետական օրհներգը երգելուց հրաժարվելը</p> <p>2. Ինչպե՞ս են դիտարկվում քաղաքացիական անհնազանդության դրսևորման հետևյալ ձևերը տվյալ երկրի դատական համակարգում:</p> <p>(ա) նստացույցեր պետական կամ մասնավոր հաստատություններում</p> <p>(բ) պետական կամ մասնավոր սեփականություն հանդիսացող տարածք զբաղեցնելը</p> <p>(գ) հանրային սեփականություն հանդիսացող տարածք զբաղեցնելը</p> <p>(դ) երթևեկության արգելափակում կամ խոչընդոտում</p> <p>(ե) պետական կամ մասնավոր</p>	<p><i>հավաքների, երթերի և ցույցերի ազատություն, ինչպես նաև արհմիություններ կազմելու ու դրանց անդամակցելու և գործադուլ անելու իրավունք և ազատություն»:</i></p> <ul style="list-style-type: none"> «Հոնկոնգի հրամանագրի» («Հասարակական կարգի պահպանման մասին» հրամանագիր) 245-րդ գլուխը կոչված է փոփոխելու հասարակական կարգի պահպանման մասին օրենքը, ինչպես նաև ամրապնդելու կազմակերպությունների, հանրային հավաքների, երթերի, անօրինական հանրային հավաքների և զանգվածային անկարգությունների, դրանց անցկացման վայրերի, ծովային փոխադրամիջոցների և օդանավերի հսկողությունը, ինչպես նաև կարգավորելու դրանց հետ կապված հարցերը: 	<ul style="list-style-type: none"> Ինչ վերաբերում է պետական դրոշին և պաստառներին, «Հասարակական կարգի պահպանման մասին» հրամանագրի 3-րդ բաժնից թերևս հետևում է, որ «տեսուչի կամ ավելի բարձր աստիճան ունեցող ոստիկանության ցանկացած ծառայող, թերևս, կարող է արգելել հանրային հավաքի ժամանակ պետական դրոշի, կարգախոսներով պաստառների կամ պետության որևէ այլ խորհրդանիշի ցուցադրումը»: Բացի այդ, «Հոնկոնգի պետական դրոշի և պետական զինանշանի մասին» հրամանագրի համաձայն՝ «պետական դրոշի կամ զինանշանի անարգանքը (հրապարակավ և դիտավորյալ այրելը, աղավաղելը, վրան խզրզելը, պղծելը կամ տրորելը) համարվում է հանցանք, իսկ այն գործած և դատապարտված անձինք ենթարկվում են 5-րդ սանդղակով նախատեսված տուգանքի և ազատազրկվում 3 տարի ժամկետով»: «Նախնական ծանուցման մեխանիզմը» կարող է դասվել «Հասարակական կարգի պահպանման մասին» հրամանագրի 7-րդ բաժնով ամրագրված նման գործողությունների կարգավորման և վերահսկման հիմնական ձևերի շարքին: Ըստ հրամանագրի՝ «հանրահավաքի» անցկացման մասին հարկավոր է սահմանված կարգով նախապես ծանուցել ոստիկանության հանձնակատարին, ով չպետք է արգելի դրա անցկացումն ազգային անվտանգության պատրվակով: Այս հոդվածով ամրագրված է նաև «նախնական ծանուցման մեխանիզմի» երեք բացառություն: Նման գործողությունների սահմանափակումները կարելի է

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
<p>կազմակերպությունների սեփականություն հանդիսացող կամ նրանց կողմից օգտագործվող շենքերի մուտքի արգելափակում</p> <p>(զ) պետական կամ մասնավոր անցանկալի կառույցների ոչնչացում</p> <p>(ե) հարկերից խուսափելը</p> <p>(ը) գաղտնի տեղեկատվության, որևէ կազմակերպության սեփականությունը համարվող աշխատանքային գաղտնի տեղեկությունների կամ պետության կողմից գաղտնիացված տեղեկությունների բացահայտում</p> <p>(թ) ռազմական օբյեկտներ կամ այլ խիստ կարևոր ենթակառույցների տարածք առանց թույլտվության մուտք գործելը (օրինակ՝ ատոմակայան)</p>	<ul style="list-style-type: none"> «Հոնկոնգի հրամանագրի» 383-րդ գլուխը («Իրավունքների հայտարարագիր») հանդիսանում է Հոնկոնգի օրենսդրությամբ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի՝ Հոնկոնգի համար կիրառելի դրույթների ամրագրման և դրանց առնչվող այլ հարցերի կանոնակարգ: «Հոնկոնգի հատուկ վարչական շրջանում կայացող տեղակայելու մասին» Չինաստանի Ժողովրդական Հանրապետության օրենքը կարող է համարվել 2-րդ մասի (թ) ենթակետով նախատեսված հարցերի կարգավորման համար կիրառվող օրենք: «Հոնկոնգի հրամանագրի» 	<p>գտնել նախադեպային իրավունքում (<i>տե՛ս «Leung Kwok Hung & Others v. HKSAR» («Լեունգ Քվոք Հունը և այլք ընդդեմ Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի», HCAL 107/2005) գործը: «Հավաքների անցկացման մասին նախնական ծանուցման օրենսդրական պահանջը հակասահմանադրական չի համարվում: Պարզ է, որ հակառակ փաստարկն անհիմն կլիներ: Ի թիվս այլ պատճառների՝ ծանուցումն անհրաժեշտ է, որպեսզի ոստիկանությունը կարողանա կատարել կառավարությանը վերապահված դրական պարտավորությունը՝ օրինական ցույցերի խաղաղ ընթացքն ապահովելու համար ողջամիտ և համաչափ միջոցների ձեռնարկումը: Ուստի, ծանուցման օրենսդրական պահանջը սահմանադրական է: Ընդ որում, ծանուցում ներկայացնելու իրավաչափ պահանջն ամրագրված է աշխարհի մի շարք երկրների օրենսդրությամբ):</i></p> <p><u>Քաղաքացիական անհնազանդություն</u></p> <ul style="list-style-type: none"> (Ա), (դ) և (ե) կետերում թվարկված գործողությունները կարող են կազմել բողոքի արտահայտման վերոնշյալ ձևերի մի մասը: Ուստի, եթե այդ գործողությունները կատարվեն մասնավորապես՝ «Հասարակական կարգի պահպանման մասին» հրամանագրով ամրագրված կանոնակարգով, դրանք ընդունելի կլինեն: (Բ), (զ) և (զ) կետերում թվարկված գործողություններն արգելված են Հոնկոնգի մի շարք կանոնակարգերով՝ ներառյալ, սակայն չսահմանափակվելով հետևյալով:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
	<p>112-րդ գլխով («Ներքին եկամուտների մասին հրամանագիր») կարգավորվում են հարկերից խուսափելու հետ կապված հարցերը:</p> <ul style="list-style-type: none"> • «Հոնկոնգի հրամանագրի» 521-րդ գլխով («Պետական գաղտնիքի պահպանման մասին հրամանագիր») կարգավորվում են պետական կամ ծառայողական գաղտնիքի ապօրինի բացահայտման և հրապարակման հետ կապված հարցերը: 	<p>«Հասարակական կարգի պահպանման մասին» հրամանագրի 22-րդ բաժնի համաձայն՝ «Զանգվածային անկարգությունների ցանկացած մասնակից, ով ապօրինի և բռնի միջոցներով կանխում, խանգարում կամ խոչընդոտում է կամ փորձում է կանխել, խանգարել կամ խոչընդոտել որևէ մարդատար մեքենայի, տրամվայի, օդանավի, գնացքի կամ ծովային փոխադրամիջոցի բեռումը, բեռնաթափումը կամ ընթացքը կամ փորձում է ապօրինի և բռնի միջոցներով բեռնել որևէ մարդատար մեքենա, տրամվայ, օդանավ, գնացք կամ ծովային փոխադրամիջոց, կատարում է քրեապես պատժելի հանցանք և ենթարկվում է 2-րդ սանդղակով նախատեսված տուգանքի և 3 տարի ազատազրկման: (2) Անձը կարող է դատապարտվել սույն բաժնով նախատեսված հանցագործության համար՝ անկախ այն հանգամանքից, թե նրան մեղադրանք է առաջադրվել սույն մասով նախատեսված որևէ այլ հանցանքի համար, թե ոչ»:</p> <p>«Հասարակական կարգի պահպանման մասին» հրամանագրի 23-րդ բաժնի համաձայն՝ «(1) Ցանկացած անձ, ով բռնության գործադրմամբ մուտք է գործում որևէ տարածք, անկախ նրանից թե արդյոք նա իրավունք ունի մուտք գործել այդ տարածք, և արդյոք նա բռնություն է գործադրել որևէ մեկի հանդեպ, թե սահմանափակվել է սպառնալիքներով, կամ ներխուժել է որևէ շենք կամ բավականին մեծ թվով մարդ հավաքել, կատարում է քրեապես</p>

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
		<p>պատժելի հանցանք և ենթարկվում է 2-րդ սանդղակով նախատեսված տուգանքի և 2 տարի ազատազրկման: (2) Իր սեփականությունը հանդիսացող կամ իր ծառայողի կամ ներկայացուցչի ինամակալության տակ գտնվող տարածք մուտք գործած անձը հանցանք չի գործում՝ սույն բաժնով նախատեսված դրույթներին համապատասխան»:</p> <p>«Հասարակական կարգի պահպանման մասին» հրամանագրի 24-րդ բաժնի համաձայն՝ «Անօրինական հիմքերով որևէ գույքի սեփականատեր հանդիսացող անձը, ով այդ գույքի տնօրինմամբ կարող է խախտել հասարակական կարգը կամ որևէ մեկին այդ առումով ողջամիտ մտավախությունների տեղիք տալ, կատարում է քրեապես պատժելի հանցանք և ենթարկվում է 2-րդ սանդղակով նախատեսված տուգանքի և 2 տարի ազատազրկման»:</p> <ul style="list-style-type: none"> • (Բ), (գ) և (զ) կետերում թվարկված գործողությունները և (ա), (դ) և (ե) կետերում թվարկված օրենքի խախտմամբ կատարված գործողությունները կարող են խախտել այլ հատուկ հրամանագրերը, որոնք կարգավորում են հասարակական կարգը հատուկ նշանակության հաստատություններում (օրինակ՝ հիվանդանոցներում, դպրոցներում և այլն): • Հարկերից խուսափելը կարող է քրեապես պատժելի հանցանք համարվել «Ներքին եկամուտների մասին հրամանագրի» 82-րդ բաժնի շրջանակներում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
		<ul style="list-style-type: none"> • Հիմնական օրենքը և «Պետական գաղտնիքի պահպանման մասին հրամանագիրը» խստիվ արգելում են պետական կամ ծառայողական գաղտնիքի կամ պետության կողմից գաղտնիացված տեղեկությունների (պետական գաղտնիք, ծառայողական գաղտնիք և այլն) բացահայտումը: • «Հոնկոնգի հատուկ վարչական շրջանում կայազոր տեղակայելու մասին» Չինաստանի Ժողովրդական Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ «Որևէ անձ, մեքենա, նավ կամ օդանավ իրավունք չունի մուտք գործելու արգելված ռազմական տարածք առանց Հոնկոնգի կայազորի հրամանատարի կամ նրա կողմից լիազորված զինծառայողների թույլտվության: Նման տարածքների պահապաններն իրավունք ունեն օրենքով սահմանված կարգով կասեցնելու անօրինական մուտքի կամ ռազմական սարքավորումներին վնաս հասցնելու ցանկացած փորձ»:
<p>3. Արդյո՞ք օրենքի մեկնաբանությամբ տվյալ երկրի դատական համակարգն ընդունում կամ հաշվի է առնում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի նախաբանում ամրագրված դրույթները:</p>	<ul style="list-style-type: none"> • Հիմնական օրենքի 39-րդ հոդվածի համաձայն՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի և Աշխատանքի միջազգային 	<ul style="list-style-type: none"> • Հոնկոնգի «Իրավունքների հայտարարագիրը» կոչված է ապահովելու Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ՔՔԻՄԴ)՝ Հոնկոնգի համար կիրառելի դրույթների Հոնկոնգի օրենսդրության մեջ ներառումը և դրանից բխող հարցերի կարգավորումը: • Հոնկոնգը վավերացրել է մարդու իրավունքների վերաբերյալ մի շարք միջազգային փաստաթղթեր և դրանց դրույթների մեծ մասը ներմուծել է իր օրենսդրության մեջ, այդ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
	կոնվենցիաների՝ Հոնկոնգի համար կիրառելի դրույթներն ուժի մեջ են և կենսագործվում են Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի օրենքներով»:	<p>թվում՝ սահմանադրական իրավունքից բխող օրենքների, հիմնական օրենքի և մի քանի որոշումների մեջ:</p> <ul style="list-style-type: none"> • Բացի այդ, ՔՔԻՄԴ-ի շրջանակներում Հոնկոնգին ներկայացվել են երեք պարբերական զեկույցի վերաբերյալ դիտարկումներ: Անշուշտ, Հոնկոնգը ողջամիտ և շոշափելի ջանքեր է գործադրել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը կյանքի կոչելու ուղղությամբ:
<p>4. Արդյո՞ք տվյալ պետության դատական համակարգում գործում են պետության ղեկավարին վիրավորելու համար պատիժ նախատեսող օրենքներ (lèse-majesté), որոնք ազդում են խոսքի ազատության և մասնավորապես՝ քաղաքացիական անհնազանդության մասին օրենքների մեկնաբանության վրա:</p>	Կիրառելի չէ:	<ul style="list-style-type: none"> • Պետության ղեկավարին վիրավորելու համար պատիժ նախատեսող որևէ օրենք Հոնկոնգում գոյություն չունի: • Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի կառավարությունը հավատարմորեն նվիրված է խոսքի և մամուլի ազատության պաշտպանությանը, ինչպես նաև ազատ և գործունյա մամուլի աշխատանքի համար անհրաժեշտ նվազագույն պայմանների պահպանմանը:¹
<p>5. Արդյո՞ք գործում են այլ օրենքներ, որոնցով</p>	Կիրառելի չէ:	Կիրառելի չէ:

¹ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի շրջանակներում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի ներկայացրած երրորդ զեկույց

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
<p>սահմանափակվում կամ ճնշվում է քաղաքական բողոքի ակցիաներ անցկացնելու կամ քաղաքացիական անհնազանդություն արտահայտելու հնարավորությունը:</p>		

Հավելված 12/ Թաիլանդ

Քաղաքացիական անհնազանդության դրսևորումների աղյուսակ

Սույն աղյուսակում գործածվելու է «քաղաքացիական անհնազանդության» հետևյալ սահմանումը՝ բողոքարար անձանց կողմից անարդար համարվող որոշակի օրենքների պահանջների կատարման գիտակցված, միտումնավոր և բռնություն չպարունակող մերժում խաղաղ քաղաքական բողոքի տեսքով, որի նպատակն է ազդեցություն գործել կամ փոփոխել օրենսդրությունը կամ քաղաքականությունը կամ հասնել որոշակի քաղաքական նպատակների իրագործմանը: Ուստիև, վերոնշյալ սահմանման և սույն աղյուսակի շրջանակներում «քաղաքացիական անհնազանդությունը» չի ենթադրում բռնություն պարունակող բողոքի արտահայտման այն ձևերը, որոնք կարող են վտանգել կամ վնասել բողոքարարներին կամ այլ անձանց, կամ եթե բողոքը ծավալվում է որևէ գույքի շուրջ, անուղղելի վնաս հասցնել կամ ոչնչացնել թիրախային կամ շրջակա գույքը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
<p>1. Ինչպե՞ս են դիտարկվում բողոքի արտահայտման հետևյալ ձևերը տվյալ երկրի դատական համակարգում.</p>		<p>Խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքն ամրագրված է Թայլանդի սահմանադրությամբ և մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող միջազգային փաստաթղթերով, ներառյալ՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով:</p> <p>2011 թվականին Թայլանդի նախկին կառավարությունը փորձել է ընդունել «Հավաքների ազատության» մասին օրինագիծը, սակայն այն այդպես էլ չվերածվեց օրենքի և հավանաբար, մոտ ապագայում չի վերածվի:</p> <p>Մինչ նման օրենքի ընդունումը, խաղաղ հավաքներ անցկացնելու ազատության իրավունքը Թայլանդի Թագավորությունում կարգավորվելու է Սահմանադրությամբ և տարբեր օրենքներով, մասնավորապես՝ Քրեական օրենսգիրք 2499 (1956թ.), Բարձրախոսի (ձայնի ուժեղացուցիչի) միջոցով հանրային հայտարարությունների վերահսկման մասին» օրենք 2493 (1950թ.), «Ցամաքային երթևեկության մասին» օրենք 2522 (1979թ.), «Ճանապարհային երթևեկություն մասին» օրենք 2535 (1992թ.), «Հանրային</p>

		<p>առողջապահության մասին» օրենք 2535 (1992թ), Ռազմական դրության մասին օրենք 2457 (1914թ.), Արտակարգ հրամանագիր արտակարգ իրավիճակներում հանրային կառավարման մասին 2548 (2005թ.) և Ներքին անվտանգության մասին օրենք 2551 (2008թ.):</p> <p>Բողոքի արտահայտման ձևերը քննարկելուց առաջ հարկավոր է իմանալ հավաքների ազատության իրավունքի սկզբունքը</p> <p>Թայլանդում մարդիկ ունեն հավաքներ անցկացնելու օրինական իրավունք: Այդ իրավունքը կարելի է կենսագործել հանրահավաքների, ցույցերի, երթերի, շքերթների կամ հանրային վայրերում անցկացվող զանգվածային կամ կազմակերպված բողոքի ակցիաների միջոցով:</p> <p>:</p>
--	--	---

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
<p>ա) երթեր, բ) հանրահավաքներ, գ) ցույցեր, դ) պաստառների փակցում (այսինքն՝ անձանց պատկերներով պաստառներ) հանրային/մասնավոր գույքի վրա, ե) պետական դրոշմ հարգելուց կամ պետական օրհներգը երգելուց հրաժարվելը</p>		<p>Հավաքների ազատության իրավունքի առաջնային հատկանիշները ներկայացված են ստորև. ա) հավաքները պետք է անցկացվեն խաղաղ և բ) առանց որևէ զենքի կիրառման: Խաղաղ հավաքները կարելի է անցկացնել ցանկացած նպատակով, բացառությամբ հետևյալ նպատակների՝ ա) սահմանադրության կամ կառավարության փոփոխություն ուժի կիրառման կամ վնաս պատճառելու միջոցով, բ) հանրությանը համոզել կամ դրդել Թայլանդում հեղաշրջման կազմակերպմանը, գ) դրդել հանրությանը խախտել օրենքը, դ) այլ անձանց իրավունքների և ազատությունների խախտում կամ ե) սահմանադրությանը կամ բարոյականությանը հակասող գործողություններ:</p>

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
<p>ա) երթեր, բ) հանրահավաքներ,</p>	<p>Արտակարգ իրավիճակներում հանրային կառավարման մասին եր, օրինակ, այն դեպքում, երբ արտակարգ հրամանագիր, 2548 (2005թ.), շատուկ քննչական վարչության` ժողովրդավարական քաժին 9: Անհրաժեշտության դեպքում արտակարգ իրավիճակն անհապաղ ձերբակալության կարգադրություն արձակելու մասին հայցը` վերացնելու և վիճակի վատթարացումը վկայակոչելով Քաղաքացիական դատարանի որոշումն առ այն, որ կանխելու նպատակով վարչապետը արտակարգ հրամանագիրը չի կարելի կիրառել ժողովրդի և լիազորված է որոշումներ կայացնել վերոնշյալ կոմիտեն ներկայացնող բողոքարարների դեմ խաղաղ` հետևյալի շուրջ.</p> <p>արգելել ցանկացած անձի առնչվել Քաղաքացիական դատարանի այն վճռին, որ արտակարգ սահմանված ժամանակահատվածում իրավիճակի պատրվակով չի կարելի ճնշել հակակառավարական դուրս գալ իր բնակարանից, ցույցերը: Դատարանն արգելել է նաև խաղաղ ցույցերի բացառությամբ իրավասու մասնակիցների դեմ ուժի գործածումը, ինչը համահունչ է պաշտոնատար անձից թույլտվություն Մահմանադրական դատարանի նախորդ որոշմանը:</p> <p>ստանալու կամ նման արգելքից ազատված լինելու դեպքերի,</p> <p>արգելել ցանկացած վայրում նախատեսված հավաքը կամ հանրահավաքը կամ ցանկացած գործողություն, որը կարող է հանգեցնել խռովությունների:</p>	<p>- Ներկայումս գոյություն ունի դատական որոշում, որը կիրառվել է արտակարգ հրամանագիր, 2548 (2005թ.), շատուկ քննչական վարչության` ժողովրդավարական քաժին 9: Անհրաժեշտության դեպքում արտակարգ իրավիճակն անհապաղ ձերբակալության կարգադրություն արձակելու մասին հայցը` վերացնելու և վիճակի վատթարացումը վկայակոչելով Քաղաքացիական դատարանի որոշումն առ այն, որ կանխելու նպատակով վարչապետը արտակարգ հրամանագիրը չի կարելի կիրառել ժողովրդի և լիազորված է որոշումներ կայացնել վերոնշյալ կոմիտեն ներկայացնող բողոքարարների դեմ խաղաղ` առանց զենքի կիրառման հանրահավաք կազմակերպելու համար:</p> <p>- Վերջերս կայացված դատական որոշումը նույնպես կարող է արգելել ցանկացած անձի առնչվել Քաղաքացիական դատարանի այն վճռին, որ արտակարգ սահմանված ժամանակահատվածում իրավիճակի պատրվակով չի կարելի ճնշել հակակառավարական դուրս գալ իր բնակարանից, ցույցերը: Դատարանն արգելել է նաև խաղաղ ցույցերի բացառությամբ իրավասու մասնակիցների դեմ ուժի գործածումը, ինչը համահունչ է պաշտոնատար անձից թույլտվություն Մահմանադրական դատարանի նախորդ որոշմանը:</p> <p>ստանալու կամ նման արգելքից ազատված լինելու դեպքերի,</p> <p>արգելել ցանկացած վայրում նախատեսված հավաքը կամ հանրահավաքը կամ ցանկացած գործողություն, որը կարող է հանգեցնել խռովությունների:</p>

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴԵՐՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
<p>գ) պաստառների փակցում (այսինքն՝ անձանց պատկերներով պաստառներ) հանրային/մասնավոր գույքի վրա,</p>	<p>Թագավորական հրամանագիր ազգային մշակութային կանոնակարգի 2485, բաժին 4(2)՝ Ոչ պատշաճ բովանդակությամբ տեքստ գրելու կամ նկար փակցնելու արգելքի մասին</p>	<p>Սույն օրենքը կիրառելի է վերջերս դատարանում քննված հետևյալ դեպքերի առնչությամբ.</p> <p>Դեպք 1՝ Դատարանը վճռել է, որ թագավորին անարգող բոլոր գործողությունները քրեական հանցագործություններ են համարվում Թայլանդում նաև պետության ղեկավարին վիրավորանք հասցնելուն վերաբերող օրենսդրության շրջանակներով: Նման անարգող գործողությունների շարքին են դասվում, օրինակ, ինտերնետային կայքերում որևէ լուսանկար թագավորի լուսանկարներից բարձր տեղադրելը կամ կինոթատրոններում հնչող թագավորության օրհներգի կատարման ժամանակ ոտքի չկանգնելը:</p> <p>Դեպք 2՝ 2007թ. դատարանը 10 տարի ազատազրկման դատապարտեց շվեյցարացի Օլիվեր Ջուֆերին՝ Չիենգ Մեյ քաղաքում թագավոր Բհամիբոլի դիմանկարների վրա արբած վիճակում սև ներկ թափելու համար: Ջուֆերի դատապարտվելուց մոտ մեկ ամիս անց՝ 2007թ.ապրիլի 12-ին, թագավորը ներում շնորհեց նրան:</p> <p>Դեպք 3՝</p> <p>Դատարանը 20 տարի (հետագայում նվազեցնելով 10 տարվա) ազատազրկման դատապարտեց Սուվիչա Թաքորին՝ ինտերնետային կայքում նկար տեղադրելու համար, որը համարվել է վիրավորական թագավորի համար: Թաքորը դատապարտվեց Քրեական օրենսգրքի 112 բաժնի և Համակարգչային հանցագործությունների մասին 2007թ. օրենքի դրույթները խախտելու համար:</p>

<p>դ) ցույցեր</p>	<p>Արտակարգ իրավիճակներում հանրային կառավարման մասին արտակարգ հրամանագիր, 2548, բաժին 9</p>	<p>Թայլանդում գործում է կանոն, որի համաձայն՝ ցույցերի կազմակերպիչները պարտավոր են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու, որ հավաքն անցկացվի խաղաղ և առանց զենքի գործածման:</p> <p>Այսպես, կազմակերպիչները պետք է մասնակիցներին տեղեկացնեն ցույցի անցկացման թույլտվությամբ իրենց վրա դրված պարտավորությունների մասին, կանխեն հավաքի մասնակից չհանդիսացող որևէ մեկի միջամտությունը և/կամ/ հավաքի իրավաչափ գործողությունների խանգարումը,</p> <p>ապահովեն, որ մասնակիցներն իրենց գործողություններով չխախտեն հավաքին չմասնակցող անձանց իրավունքները,</p>
-------------------	---	---

		<p>դիմեն տեղական ինքնակառավարման և իրավապահ մարմիններին ապահովելու հավաքի խաղաղ ընթացքը, բարձրախոսների (ձայնի ուժեղացուցիչի) միջոցով կատարվող հայտարարությունները հնչեցնեն թայերեն լեզվով:</p> <p>Թայլանդում գործում է նաև կանոն, որն արգելում է որոշակի գործողություններ ձեռնարկել հավաքների ընթացքում:</p> <p>Արգելված գործողությունների օրինակներ՝ այլ անձանց իրավունքների և ազատությունների կամ բարոյականության սկզբունքների խախտում, խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրացման խոչընդոտում, խախտում կամ մերժում, հրազենի կամ որևէ այլ զինատեսակի անհարկի գործածում (այդ կետը վերաբերում է ինչպես իրավապահ մարմիններ կայացուցիչներին, այնպես էլ այլ անձանց)՝ հավաքը ցրելու նպատակով, եթե ցուցարարները չեն զբաղեցնում այն տարածքը, որտեղ կառավարությունը հայտարարել է արտակարգ կամ ռազմական դրություն:</p>
--	--	--

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
<p>ե) պետական դրոշմ հարգելուց կամ պետական օրհներգը երգելուց հրաժարվելը</p>	<p>Քրեական օրենսգրքի 118-րդ բաժնի համաձայն՝ պետական դրոշմ կամ պետության խորհրդանիշ հանդիսացող որևէ առարկա ծաղրելու նպատակով ձեռնարկված ցանկացած արարքն պատժվում է մինչև երկու տարի ազատազրկմամբ կամ մինչև չորս հազար բաթի չափով տուգանքով կամ միաժամանակ երկու պատժամիջոցներով:</p> <p>Ազգային մշակույթի մասին օրենքի (B.E. 2485) 15-րդ բաժնի համաձայն՝ 6-րդ բաժնում ամրագրված թագավորական հրամանագիրը խախտած անձինք տուգանվում են հարյուր բաթի սահմաններում կամ ազատազրկվում մինչև մեկ ամիս ժամկետով կամ ենթարկվում են միաժամանակ երկու</p>	<p>(ե) այս դեպքի կապակցությամբ կարելի է վկայակոչել հետևյալ գործով կայացված դատական որոշումը: 2008թ. ապրիլի 5-ի Փետրվարի 26 շրջանի ոստիկանությունը հարցաքննության է կանչել 26 տարեկան Չոթիզակ Օնսունգին և նրա ընկերոջը և նրանց մեղադրանք առաջադրել կինոթատրոնում թագավորական օրհներգի կատարման ժամանակ ոտքի կանգնելու համար:</p>

	<p>պատժատեսակի:</p> <p>Ազգային մշակութային կանոնակարգի (B.E. 2485) մասին թագավորական հրամանագրի 6-րդ բաժնի համաձայն՝ յուրաքանչյուր ոչ պետք է հարգի հետևյալ մշակութային կանոնները՝ (2) հարգանք պետական դրոշի նկատմամբ և (3) հարգանք պետական թագավորական օրհներգի նկատմամբ:</p>	
<p>ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p> <p>2. Ինչպե՞ս են դիտարկվում քաղաքացիական անհնազանդության արտահայտման հետևյալ ձևերը տվյալ երկրի դատական համակարգում:</p>	<p>ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴԵՐՈՒԹՅՈՒՆ</p>	<p>ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p> <p>ՀԱՎԱՔՆԵՐԸ ԿԱՐԵԼԻ Է ԱՆՅԿԱՑՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՎԱՅՐԵՐՈՒՄ</p> <p>Խաղաղ հավաքները կարելի է անցկացնել հանրային վայրերում: Հանրային վայրեր ասելով՝ հասկանում ենք այն բոլոր մայրուղիները, պողոտաները, ճանապարհները, փողոցները, կամուրջները կամ այլ անցուղիները, այգիները, հրապարակները, և/կամ հանրային սեփականություն հանդիսացող ցանկացած բացօթյա տարածք:</p>

		<p>Թեև տեղական պաշտոնյաներն իրավասու չեն որոշելու հավաքների անցկացման տարածքի սահմանները, կողմնակի անձանց մուտքն արգելող տարածքից դուրս անցկացվող հավաքի ընթացքում որևէ կառավարական շենք չհիմնավորված պատճառներով մուտք գործած անձինք կարող են ենթարկվել պատասխանատվության:</p> <p>ՆԱԽՔԱՆ ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏՆԱՆ ՈՐՈՇԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ</p> <p>Սահմանադրական դատարանի որոշման համաձայն՝ հանրային վայրերում խաղաղ հավաքներ անցկացնելու համար պետությունից գրավոր թույլտվություն հայցելու կարիք չկա, քանի որ հավաքներ անցկացնելու իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է:</p> <p>Այնուամենայնիվ, նշված որոշումը չի տարածվում որոշակի գործողությունների վրա, որոնք ձեռնարկելուց առաջ կազմակերպիչները պետք է ստանան ոստիկանությունից կամ տեղական վարչական մարմինների պաշտոնյաների թույլտվությունը: Նման գործողությունների շարքին են դասվում.</p> <ul style="list-style-type: none"> ա) երթեր և ցույցեր, որոնք հանգեցնում են երթևեկության խոչընդոտմանը կամ ճանապարհի փակմանը, բ) հանրային վայրերում թուուցիկների միջոցով հայտարարություններ տարածելը,
		<ul style="list-style-type: none"> գ) հանրային վայրերում ձայնի ուժեղացուցիչի միջոցով

		<p>հայտարարություններ տարածելը,</p> <p>3. Արձանագրվել է մեկ դեպք, երբ նման թույլտվության բացակայության պատճառով ոստիկանությունն առգրավեց խաղաղ հավաքի ընթացքում գործածվող սարքավորումները, թեև Մարդու իրավունքների հարցերով պետական հանձնաժողովը հայտարարել է, որ խաղաղ հավաքներ անցկացնելու համար թույլտվություն ստանալու պահանջը հակասում է օրենքին:</p> <p>ԱՅՆՈՒՀԵՏԵՎ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ՝ ՀԵՏԵՎՅԱԼ ՍԿԶՈՒՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ</p> <p>1. Հարկավոր է գրավոր դիմում ներկայացնել ոստիկանության տեղական բաժանմունք կամ տեղական ինքնակառավարման այն մարմնին, ում իրավագործության ներքո են կարգավորվում (ըստ 4.2 դրույթի) նախատեսված միջոցառումը: Օրենքով չի նախատեսվում, թե նման միջոցառման մեկնարկից որքան ժամանակ առաջ պետք է ներկայացվի դիմումը:</p> <p>2. Դիմումում հարկավոր է նշել հետևյալ տեղեկությունները (ըստ անհրաժեշտության).</p> <p>հավաքի ընթացքում գործածվող նյութեր, երթի կամ ցույցի նպատակը, նախատեսվող միջոցառումների անցկացման ամսաթիվը, ժամը, վայրը և տևողությունը,</p>
--	--	--

		մասնակիցների ակնկալվող թիվը
<p>ա) նաստացույցեր պետական կամ մասնավոր հաստատություններում,</p> <p>բ) պետական կամ մասնավոր սեփականություն հանդիսացող տարածքային կառուցվածքներ, գրադեցնելը,</p>	<p>Քրեական օրենսգրքի 362-րդ բաժին. Ուրիշի շինությունն (անշարժ գույք) ամբողջությամբ կամ մասամբ զավթելու կամ տվյալ անձի կողմից իր ունեցվածքի խաղաղ տնօրինմանը խոչընդոտելուն հանդիսացող տարածքային կառուցվածքները որևէ գործողություն կատարելու նպատակով այդ շինությունն ամուտք գործած անձը բանտարկվում է մինչև 1 տարի ժամկետով կամ տուգանվում՝ 2000 բաթի սահմաններում, կամ ենթարկվում է միաժամանակ նշված երկու պատժամիջոցի:</p>	<p>- 1994 թվականին դատական որոշում է կայացվել նման հանցավոր արարքի կապակցությամբ, երբ հայցվորն առանց թույլտվության արգելափակել է փողոցը, որով անցնում էր պատասխանողի անցուղին դեպի իր տարածք: Հայցվորն իրավունք չունի արգելափակելու այս փողոցը: Նա խախտել է Քրեական օրենսգրքի 362-րդ բաժինը:</p>
<p>գ) հանրային սեփականություն հանդիսացող տարածքային կառուցվածքներ, գրադեցնելը,</p>	<p>Քրեական օրենսգրքի 364-րդ բաժին. Ուրիշի սեփականություն հանդիսացող բնակարանում, պահեստում կամ գրասենյակում առանց ողջամիտ պատճառի թաքնվող կամ նման տարածք մուտքն արգելելու իրավունք ունեցող անձի՝ այդտեղից հեռանալու պահանջներին չենթարկվող անձինք բանտարկվում են մինչև 1 տարի ժամկետով կամ տուգանվում են մինչև 2000 բաթի սահմաններում կամ ենթարկվում են</p>	<p>- 1974 թվականին Քրեական դատարանը որոշում է կայացրել նման ապօրինի արարքի գործով: Գիշերը հայցվորն ապօրինի մուտք է գործել ոստիկանության բաժանմունք, որը հանդիսանում է պետության սեփականություն, իսկ հերթապահ ոստիկանության աշխատակիցը հրահանգել է նրան հեռանալ, սակայն հայցվորը չի ենթարկվել հրամանին: Հայցվորը խախտել է Քրեական օրենսգրքի 364 և 365 բաժիններով ամրագրված դրույթները:</p>

	միաժամանակ նշված երկու պատժամիջոցի:	
դ) երթևեկության արգելափակում կամ խոչընդոտում,	Քրեական օրենսգրքի 385-րդ բաժին. առանց թույլտվության անհրաժեշտության ճանապարհը որևէ առարկաներով արգելափակող կամ երթևեկության անվտանգությանը հարմարավետությանը որևէ կերպ խոչընդոտող անձինք տուգանվում են 500 բաթի սահմաններում:	Ստորև ներկայացվում է նշված հանցավոր արարքի օրինակ: 1976 թվականին հայցվորները մետաղալարեր են ձգել ողջ կամրջի երկայնքով՝ արգելափակելով անցնող տրանսպորտային միջոցների ճանապարհը և մտադիր էին կապել այն մարդկանց ձեռքերը, ովքեր դուրս էին գալիս մեքենաներից կամրջի մետաղալարերը կտրելու նպատակով: Հայցվորները խախտել են Քրեական օրենսգրքի 385-րդ բաժինը:

ե) պետական կամ մասնավոր կազմակերպությունների սեփականություն հանդիսացող կամ նրանց կողմից օգտագործվող շենքերի մուտքի արգելափակում,	Քրեական օրենսգրքի 362-րդ և 364-րդ բաժիններ	
զ) պետական կամ մասնավոր անցանկալի կառույցների ոչնչացում	Ուրիշի սեփականություն կամ համասեփականություն հանդիսացող մեկ կամ քան մի խումբ վնասող, ոչնչացնող կամ դրամաբեկ զրկմանը կամ տաճար, ոչնչացրել տաճարի ցուցանակը և ավիրել բոլոր անօգտակարությանը նպաստող անձրեղեկ տրակայան լամպերը, ապա տարել են ավիրված տաճարի որակավորվում է որպես վնասցուցանակը: Այս արարքի հիմքում ընկած էր դժգոհությունն առ	1999 թվականին Քրեական դատարանը որոշում է կայացրել մեկ այլ հետաքրքիր գործով: Որպես հայցվորներ հանդես եկող մի խումբ անձինք ներխուժել են «Ռանգ Մուանգ» բուդիստական տաճար, ոչնչացրել տաճարի ցուցանակը և ավիրել բոլոր անօգտակարությանը նպաստող անձրեղեկ տրակայան լամպերը, ապա տարել են ավիրված տաճարի որակավորվում է որպես վնասցուցանակը: Այս արարքի հիմքում ընկած էր դժգոհությունն առ

	<p>պատճառող անձ և բանտարկվում է այն, որ տաճարը բոլոր գյուղացիներին հրավիրում էր այցելելու մինչև երեք տարի ժամկետով կամ տաճարի տոնավաճառը, մինչդեռ մոտակայքում գտնվող «Թան տուգանվում՝ վեց հազար բաթի սինգ թո» տաճարը հոսանքազրկվել էր: Յուզանակի ոչնչացումը սահմաններում, կամ ենթարկվում է հանդիսանում է գույքի ոչնչացում, ինչը խախտում է Քրեական նշված երկու պատժամիջոցների:</p>	<p>որեն սագրքի 358-րդ բաժնում ամրագրված դրույթները:</p>
<p>է) հարկերից խուսափելը,</p>	<p>Հարկերի և եկամուտների օրենսգրքի բաժին 37/2. հարկերից խուսափելու կամ նման փորձ անելու նպատակով սույն դրույթով ամրագրված կարգով հարկային հայտարարագիր դիտավորյալ չներկայացնող անձը տուգանվում է 5000 բաթի սահմաններում կամ բանտարկվում առավելագույնը 6 ամիս ժամկետով կամ ենթարկվում է երկու պատժամիջոցների:</p>	
<p>(ը) գաղտնի տեղեկատվության, որևէ կազմակերպության սեփականությունը համարվող աշխատանքային տեղեկությունների պետության գաղտնիացված տեղեկությունների</p>	<p>Քրեական օրենսգրքի 322-րդ բաժին. ուրիշին պատկանող փակ նամակը, հեռագիրը կամ որևէ այլ փաստաթուղթ, դրա բովանդակությանը ծանոթանալու կամ այն հրապարակելու նպատակով, բացառությամբ կամ առևանգած անձինք բանտարկվում են առավելագույնը վեց ամիս ժամկետով կամ տուգանվում հազար բաթի սահմաններում կամ ենթարկվում են երկու</p>	

բացահայտում	պատժամիջոցների, եթե նրանց արարքը կարող է վնաս պատճառել որևէ մեկին:	
(թ) ռազմական օբյեկտներ կամ այլ խիստ կարևոր ենթակառուցների տարածք առանց թույլտվության մուտք գործելը (օրինակ՝ ատոմակայան)	Կիրառելի չէ:	
3. Արդյո՞ք օրենքի մեկնաբանությամբ տվյալ երկրի դատական համակարգն ընդունում կամ կիրառում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի	Կիրառելի չէ:	
4. Արդյո՞ք տվյալ պետության դատական համակարգում գործում են պետության ղեկավարին վիրավորելու համար կամ սպառնացող անձինք պատիժ նախատեսող օրենքներ (lèse-majesté), որոնք ազդում են խոսքի ազատության և մասնավորապես՝ քաղաքացիական	Քրեական օրենսգրքի 112-րդ բաժին. Թագավորին, թագուհուն, թագաժառանգին կամ երկրի ղեկավարին զրպարտող, վիրավորող անձինք պանտարկվում են 3-15 տարի ժամկետով:	Այսօրվա դրությամբ, նշված 112-րդ բաժնի դրույթները կիրառելի են ներքոհիշյալ դատական գործերի պարագայում: -Գործ N 1. քրեական դատարանը մեղադրական վճիռ է կայացրել վաթսումեկամյա Ամփոնի (ազգանունը անհայտ է նույնությամբ) գործով՝ դատապարտելով նրան բանտարկման քսան տարի ժամկետով՝ նախկին վարչապետ Աբխաթ Վեջաջիվայի անձնական քարտուղար Սոմքիաթ Քլոնգվաթանասակին չորս կարճ հաղորդագրություն ենթադրաբար ուղարկելու համար: Ըստ իշխանությունների՝ նշված չորս կարճ հաղորդագրությունները պարունակում էին

<p>անհնազանդության մասին օրենքների մեկնաբանության վրա:</p>		<p>գոեհիկ արտահայտություններ՝ ուղղված Թայլանդի թագուհու զրպարտմանը և միապետության պատվի անարգանքին: Ամփոնը դատապարտվել է հինգական տարվա ազատազրկման յուրաքանչյուր կարճ հաղորդագրության համար առաջադրված մեղադրանքով՝ պետության ղեկավարին վիրավորելու համար պատիժ նախատեսող օրենքի շրջանակներում:</p> <p>-Գործ N 2. Դատարանը 10 տարի ազատազրկման է դատապարտել Սոմյոթ Փրուեքսակասեմսուքին՝ կեղծանունով երկու հոդված հրապարակելու համար: Նա հոդվածները տպագրել էր իր այլևս չհրատարակվող հակաիշխանական «Voice of Taksin» (Թաքսինի ձայնը) ամսագրում, որը հիմնել է 2009 թվականին՝ քաղաքական նորությունները և առանձին գրողների հակաիշխանական հոդվածներն ի բերելու նպատակով:</p>
<p>5. Արդյո՞ք գործում են այլ օրենքներ, որոնցով սահմանափակվում կամ ճնշվում է քաղաքական բողոքի ակցիաների անցկացնելու կամ քաղաքացիական անհնազանդություն արտահայտելու հնարավորությունը:</p>	<p>«Բարձրախոսի (ձայնի միջոցով հանրային կայտարարությունների վերահսկման մասին» օրենք, 2493, «Ցամաքային երթևեկության մասին» օրենք, 2522), «Ներքին անվտանգության մասին» օրենք», 2551</p>	<p>ՆԵՐԿԱՅՈՒՄՍ ԹԱՅԼԱՆԴՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ Է ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ.</p> <p>Իրավապահ մարմինների աշխատակիցներն իրավունք չունեն գրելու հավաքները, քանի որ հավաքներ կազմակերպելը հանդիսանում է Թայլանդի քաղաքացիների հիմնարար իրավունքը, բացառությամբ որոշ դեպքերի, երբ հավաքները խոչընդոտում են պետական գործառույթների կատարմանը:</p>

		<p>Իրավապահ մարմինների աշխատակիցներն իրավունք ունեն</p>
--	--	---

	<p>ցրել հավաքները այն դեպքերում, երբ դրանց մասնակիցները բռնություն են գործադրում, և կառավարությունը հայտարարում է արտակարգ իրավիճակ կամ ռազմական դրություն:</p> <p>Իրավապահ մարմինների աշխատակիցներն իրավունք ունեն կրելու զենք, մահակներ, մականներ կամ վահաններ, հարվածադիմացկուն սաղավարտներ երեսկալով, հակազագային դիմակ, զինվորական կոշիկ կամ երկարաձիտ կոշիկ՝ սրունքակալներով միայն այն դեպքերում, երբ դա թելադրվում է հանգամանքներով, կամ երբ անհրաժեշտ է վերահսկել իրավիճակը:</p> <p>Այն դեպքերում, երբ իրավապահ մարմինների աշխատակիցները չեն կարողանում վերահսկել իրավիճակը, և կառավարությունն արտակարգ կամ ռազմական դրություն է հայտարարում, ոստիկանության աշխատակիցները կամ զինվորները ստանում են իրավիճակը վերահսկելու կամ տնօրինելու անսահմանափակ լիազորություններ՝ Թայլանդում խաղաղությունը վերականգնելու համար:</p>
	<p>ՄՏՈՐԵՎ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՒՄ Է ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՈՂՈՔԻ ԿԱՄ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՆՇԱՆԱԿՎՈՂ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՕՐԻՆԱԿ.</p> <p>Առանց անհրաժեշտ թույլտվության անցկացրած հավաքի մասնակիցները կարող են տուգանվել 500 բաթի սահմաններում:</p> <p>Ձայնի ուժեղացուցիչով օտար լեզվով հայտարարություններ</p>

	<p>անող անձինք կարող են բանտարկվել մինչև մեկ ամիս ժամկետով:</p> <p>Խաղաղ հավաքի ժամանակ առանց իրավասու մարմինների թույլտվության գործածվող նյութերն առգրավվում են:</p> <p>Ստորև ներկայացվում է նշված հանցավոր արարքի օրինակ: 1976 թվականին հայցվորները մետաղալարեր են ձգել ողջ կամրջի երկայնքով՝ արգելափակելով անցնող տրանսպորտային միջոցների ճանապարհը և մտադիր էին կապել այն մարդկանց ձեռքերը, ովքեր դուրս էին գալիս մեքենաներից կամրջի մետաղալարերը կտրելու համար: Հայցվորները խախտել են Քրեական օրենսգրքի 385-րդ բաժինը:</p> <p>1999 թվականին արձանագրվել է մի հետաքրքիր դեպք, երբ հայցվորը կայանել է կոտրված շասիով բեռնատար մեքենան ճամփեզրին: Բեռնատարի առջևի հատվածը 70 սմ-ով գտնվում էր ճանապարհի երթևեկելի հատվածում: Հայցվորը դուրս է եկել բեռնատարից հեռախոսով խոսելու և որևէ նշան չի դրել ճանապարհի հատված անցնող կայանումը նկատելի դարձնելու համար: Պատասխանողը, ով վարում էր մոտոցիկլետ, հարվածել է բեռնատարին և մահվան պատճառ դարձել: Հայցվորը խախտել է «Ցամաքային երթևեկության մասին» օրենքը (2522):</p>
--	--

Նշում* <http://asiancorrespondent.com/119764/thai-court-renders-emergency-decree-meaningless-limits-officials-powers/>

Այդուհանդերձ, դատարանը եզրակացրել է, որ բողոքի ցույցի ակցիաներն ընթանում էին «խաղաղ և առանց զենքի կիրառման» և հրահանգել է «Մահմանադրությամբ ամրագրված կարգով» պաշտպանել ցուցարարների իրավունքները և ազատությունները:

Այս որոշմամբ իշխանություններին արգելվում է ուժ կամ զենք գործադրել ցուցարարների դեմ:

Հավելված 13/Ավստրալիա

Քաղաքացիական անհնազանդության դրսևորումների աղյուսակ

Սույն աղյուսակում գործածվելու է «քաղաքացիական անհնազանդության» հետևյալ սահմանումը՝ բողոքարար անձանց կողմից անարդար համարվող որոշակի օրենքների պահանջների կատարման գիտակցված, միտումնավոր և բռնություն չպարունակող մերժում խաղաղ քաղաքական բողոքի տեսքով, որի նպատակն է ազդեցություն գործել կամ փոփոխել օրենսդրությունը կամ քաղաքականությունը կամ հասնել որոշակի քաղաքական նպատակների իրագործմանը: Ուստիև, վերոնշյալ սահմանման և սույն աղյուսակի շրջանակներում «քաղաքացիական անհնազանդությունը» չի ենթադրում բռնություն պարունակող բողոքի արտահայտման այն ձևերը, որոնք կարող են վտանգել կամ վնասել բողոքարարներին կամ այլ անձանց, կամ եթե բողոքը ծավալվում է որևէ գույքի շուրջ, անուղղելի վնաս հասցնել կամ ոչնչացնել թիրախային կամ շրջակա գույքը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
<p>1. Ինչպե՞ս են դիտարկվում բողոքի արտահայտման հետևյալ ձևերը տվյալ երկրի դատական համակարգում.</p> <p>ա) երթեր,</p> <p>բ) հանրահավաքներ,</p> <p>գ) ցույցեր,</p> <p>դ) պաստառների փակցում (այսինքն՝ անձանց պատկերներով պաստառներ) հանրային/մասնավոր գույքի</p>	<p>Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր</p> <p>Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր</p>	<p>Քաղաքացիական անհնազանդության վերոնշյալ սահմանումը վերցված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրից, որոնք ստորագրել է նաև Ավստրալիան: Նշված փաստաթղթերով ամրագրված իրավունքների մեծ մասը, հատկապես քաղաքացիական անհնազանդությանն առնչվող իրավունքները ներպետական օրենսդրության մեջ չեն ընդգրկվել: Բացառություն են կազմում Ավստրալիայի մայրաքաղաքային տարածքը (անգլ.՝ Australian Capital Territory, ACT) և Վիկտորիան, որոնք օրենքներով ամրագրել են մարդու իրավունքների պաշտպանությունը:</p>

<p>վրա, ե) պետական դրոշը հարգելուց կամ պետական օրհներգը երգելուց հրաժարվելը</p>		<p>Ընդհանուր առմամբ, Ավստրալիան բավականին հանդուրժողական է քաղաքացիական անհնազանդության արտահայտման կազմակերպված ձևերի նկատմամբ, այսինքն՝ թույլատրվում է անցկացնել հանրահավաքներ, երթեր, ցույցեր և այլն, թեև ոստիկանության աշխատակիցների և/կամ պաշտոնյաների վերահսկողությամբ: Այդուհանդերձ, ոստիկանության աշխատակիցներին իրավունք է վերապահվում քրեական պատասխանատվության ենթարկել նշված բողոքի ակցիաների մասնակիցներին այն դեպքերում, երբ քաղաքացիական անհնազանդության արտահայտումը վերածվում է կամ կարող է վերածվել բռնության:</p> <p>Ավստրալիայի տարբեր դատական ատյանների կողմից քրեական պատասխանատվություն է նախատեսվում արգելված տարածքներ մուտք գործելու, ճանապարհն արգելափակելու, հասարակական կարգը խանգարելու, վիրավորական պահվածքի և կարգադրություններին չենթարկվելու հետ կապված իրավախախտումների համար, որոնք ներկայացվում են ստորև: Այդուհանդերձ, պետական դրոշը հարգելուց կամ պետական օրհներգը երգելուց հրաժարվելու համար քրեական պատասխանատվություն չի նախատեսվում:</p>
---	--	---

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴԻՐՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
<p>2. Ինչպե՞ս են դիտարկվում քաղաքացիական անհնազանդության արտահայտման հետևյալ ձևերը տվյալ երկրի դատական համակարգում.</p> <p>ա) պետական կամ մասնավոր հաստատությունների աշխատակիցների նստացույցներ, բ) պետական կամ մասնավոր սեփականություն հանդիսացող տարածք զբաղեցնելը, գ) հանրային սեփականություն հանդիսացող տարածք զբաղեցնելը, դ) երթևեկության արգելափակում կամ</p>	<p>(ա)(բ)(գ) Աննշան իրավախախտումների՝ մասին 2005թ. օրենք, (Քվինսլենդ), Քրեական օրենսգրք (Արևմտյան Ավստրալիա), Ոստնագությունների մասին 1932թ. օրենք (Ավստրալիայի մայրաքաղաքային Ոստիկանության դատական ատյանում իրավախախտումների քննման կարգի մասին 1935թ. օրենք (Թասմանիա), Զանցանքների մասին 1966թ. օրենք (Վիկտորիա), Զանցանքների մասին 1953թ. օրենք (Հարավային Ավստրալիա) (դ) Հանրային վայրերում իրավախախտումների մասին օրենք, 1979թ. (Նոր Հարավային Ուելս), զանցանքների մասին օրենք 1966թ. (Վիկտորիա); զանցանքների մասին 1953թ. (Հարավային Ավստրալիա) (ե) տես վերոնշյալ (ա), (բ), (գ) (զ) Քվինսլենդի, Արևմտյան</p>	<p>(ա)(բ)(գ) Քրեական օրենսդրությամբ նման գործողությունները համարվում են ոստնագություն կամ առանց իրավաչափ հիմքերի տվյալ տարածքում գտնվելու իրավախախտում: «Հենշոուն ընդդեմ Մարկի» (Henshaw v Mark, 95 A Crim R 115, 1997) գործով կայացրած վճռում Ավստրալիայի մայրաքաղաքային տարածքի վերաբնիչ դատարանը ողջամիտ չի համարել, որ ցուցարարն իրավասու է մուտք գործելու որևէ այլ անձին պատկանող տարածք, ում ձեռնարկած իրավաչափ միջոցները չեն համապատասխանում իրավախախտի պատկերացումներին: Դատարանը հայտնեց նաև, որ «այլ որոշում կայացնելու պարագայում քաղաքացին չի ստանա օրենքով իրեն հասանելի պաշտպանությունը: Դա կնշանակեր, որ այլ հայացքներ ունեցող անձնավորությունը կարող է ազատ մուտք գործել հակառակորդի տարածք հանուն իր զաղափարների տարածման»:</p> <p>(դ) Նշված գործողությունները կարելի է որակել որպես իրավախախտում: «Ֆիջերալդն ընդդեմ Մոնտոյայի» (Fitzgerald v Montoya, 1989) 16 NSWLR 164) գործում Նոր Հարավային Ուելսի վերաբնիչ դատարանը հայտարարեց, որ նման գործողություններն իրավախախտում համարելու համար դրանք պետք է կատարվեն կանխամտածված, ինչպես նաև՝ այլ անձանց</p>

<p>խոչընդոտում, ե) պետական կամ մասնավոր կազմակերպությունների սեփականություն հանդիսացող օգտագործվող մուտքի արգելափակում, զ) պետական կամ մասնավոր անցանկալի կառույցների ոչնչացում, է) հարկ վճարելուց հրաժարվելը, ը) գաղտնի տեղեկատվության կազմակերպության սեփականություն համարվող աշխատանքային տեղեկությունների պետության գաղտնիացված տեղեկությունների բացահայտում</p>	<p>Ավստրալիայի, Թասմանիայի, Հյուսիսային տարածքի քրեական օրենսգրքեր, Նոր Հարավային Ուելսի, Վիկտորիայի և Ավստրալիայի մայրաքաղաքային տարածքի «Քրեական մատասխանատվության մասին» օրենք, «Քրեական օրենքների մասին» օրենք, 1935 (Հարավային Ավստրալիա) (է) «Հանցագործությունների (հարկային իրավախախտումների) մասին» օրենք, 1980թ. (Ավստրալիայի Միություն) (i) Տես վերոնշյալ (ա), (բ) և (գ) կետերը:</p>	<p>ազատ մուտքն առանց որևէ իրավաչափ հիմքի արգելափակելու հետևանքի հստակ գիտակցմամբ: (ե) Եթե նման գործողությունները կատարվում են այլոց սեփականություն հանդիսացող տարածքում, ապա, ինչպես արդեն նշվել է, դրանք կարող են համարվել ոտնձգություն կամ առանց իրավաչափ հիմքերի տվյալ տարածքում գտնվելու իրավախախտում: (զ) Նման արարքների հետևանքները համարվում են հանցագործությամբ պատճառված վնաս, որի դեպքում մեղադրող կողմը պետք է լինի հետևողական՝ առանց օրինական արդարացման հնարավորության: (է) Նման արարքները համարվում են քրեական հանցագործություն և դաշնության մակարդակով քննվում են Ավստրալիայի հարկային վարչության կողմից, իսկ տեղական մակարդակով՝ նահանգային կամ տարածքային պետական կարգավորող մարմինների կողմից: (ը) Պետական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների բացահայտման հետ կապված դրույթներն ամրագրված են Ավստրալիայի պետական ծառայողի վարքագծի կանոնակարգում կամ համապատասխան նահանգի կամ տարածքի համապատասխան օրենքներով: Նման իրավախախտումներին անդրադարձ է կատարվում նաև Ավստրալիայի Միության, ինչպես նաև առանձին նահանգների և</p>
--	--	--

		<p>տարածքների քրեական օրենսգրքերում և օրենքներում: Որոշ դեպքերում նման արարքները կարելի է արդարացնել, եթե տեղեկությունների բացահայտումը բխել է հանրային/պետական շահերից:</p> <p>(թ) Տես վերոնշյալ (ա), (բ) և (գ) կետերը:</p>
--	--	--

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
<p>թ) ռազմական օբյեկտներ կամ այլ խիստ կարևոր ենթակառույցների տարածք առանց թույլտվության մուտք գործելը (օրինակ՝ ատոմակայան)</p>		
<p>3.Արդյո՞ք օրենքի մեկնաբանությամբ տվյալ երկրի դատական համակարգն ընդունում կամ կիրառում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի նախաբանում ամրագրված դրույթները:</p>		<p>Թեև Ավստրալիան ստորագրել է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, մի շարք իրավունքներ դեռևս չեն ընդգրկվել ներպետական օրենսդրությունում (բացառությամբ՝ Ավստրալիայի մայրաքաղաքային տարածքի և Վիկտորիայի: Մասնավորապես, խոսքը գնում է քաղաքացիական անհնազանդության մասին: Այդ իսկ պատճառով, միայն Ավստրալիայի մայրաքաղաքային տարածքի և Վիկտորիայի օրենսդրությունն է քիչ թե շատ առնչվում Մարդու իրավունքների միջազգային հռչակագրին:</p>

<p>4. Արդյո՞ք տվյալ պետության ղատական համակարգում գործում են պետության ղեկավարին վիրավորելու կամ պետական ղավաճանության համար պատիժ նախատեսող օրենքներ (lèse-majesté), որոնք ազդում են խոսքի ազատության և մասնավորապես՝ քաղաքացիական անհնազանդության մասին օրենքների մեկնաբանության վրա:</p>	<p>Օրենք քրեական օրենսգրքի մասին, 1995թ (Ավստրալիայի միություն) Օրենք կայսերական օրենքների կիրառման կարգի մասին 1984թ. (Քվինսլենդ) Քրեական օրենսգիրք (Թասմանիա) Քրեական իրավախախտումների մասին օրենք 1900թ. (Նոր Հարավային Ուելս) Իրավախախտումների մասին օրենք, 1958թ. (Վիկտորիա) «Քրեական օրենքների համախմբման մասին» օրենք, 1935թ. (Հարավային Ավստրալիա)</p>	<p>Ըստ էության՝ նման օրենք չկա: Թեև Ավստրալիայի օրենսդրության մեջ դեռևս պահպանվել են դրույթներ, որոնցով պատիժ է նախատեսվում ղավաճանության համար, սակայն դրանց կիրառման արձանագրված դեպքերը քիչ են և հազվադեպ: Այդուհանդերձ, գոյություն ունեն ազգային անվտանգության հետ կապված հարցերը կարգավորող օրենքներ, որոնք կարող են ազդել խոսքի ազատության և մասնավորապես՝ քաղաքացիական անհնազանդության մասին օրենքների մեկնաբանության վրա:</p>
<p>5. Արդյո՞ք գործում են որևէ այլ օրենքներ, որոնցով սահմանափակվում կամ ճնշվում է քաղաքական բողոքներ անցկացնելու կամ քաղաքացիական անհնազանդություն արտահայտելու հնարավորությունը</p>		<p>Ոչ, բացառությամբ ազգային անվտանգության հետ կապված հարցերը կարգավորող օրենքների:</p>

